

613.8  
41-70

# ՄՏԵՐԻՄ ԶՐՈՅՑՆԵՐ

ՍԵՌԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՄԱՍԻՆ  
(ՄԱՍՆԱԻՐ՝ ՆԿԱՐՆԵՐՈՎ)

## ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ

Կազմեց  
Փ Ղ Շ Տ Ա Յ Ի

Ամուսնուրիւն  
 Սերնդագործում  
 Ծննդական գործարաններ  
 Կուսուրիւն  
 Գաւառ  
 Զուգաւորուրիւն  
 Սեռային ցանկուրիւն  
 Անկաւարդուրիւն  
 Գիշուրիւն  
 Ուրիւ մոլուրիւններ  
 Սեռային եխանդուրիւններ  
 Արգասաւորում  
 Յղուրիւն  
 Վիժում  
 Ամուրիւն  
 Ծննդաբերուրիւն  
 Զերմածիղուրիւն  
 Սիճիկիս

և ուրիւ հազարումէկ մանրամասնուրիւններ

Հրատարակուրիւն  
ԱՐՄԻ ԺՈՂՈՎ . ԳՐԱՎԱՅԱՌԱՆՈՅԻ

1913  
Ե. Պոլիս

MAY 2016

2860

### ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Ինչպէս բացատրած ենք առաջին հատորով, մենք այս գործին ձեռնարկած ենք լուրջ մտահոգութեամբ, զայն նկատելով տարրական անհրաժեշտութիւն մը՝ չափահաս հանրութեան համար:

Այս երկրորդ հատորին պատրաստութեան առեւ, այ մեզի առաջնորդ ունեցած ենք ո՛չ միայն Նախորդով յիշուած հեղինակները, (Պօթ, Կառնիէ, Պորէլ) այլ և ուրիշ կարգ մը՝ անգլիական և ամերիկեան հրատարակութիւններ, — ինչպէս Ուոչման-Գլինի համալսարանին մանկաբարձութեան փրօֆէսոր **A. F. King**, Իրլանտայի արքայական համալսարանին փրօֆէսոր և կանադի հիւանդութիւններու մասնագէտ **Տոքդ. Machnaughton-Jones**, ծննդամիջական գործընկերներու մասնագէտ **Morton**, ևն:

Մենք զգուշացած ենք այն բոլոր խրթիկներէն, որոնք միայն բժիշկը պիտի հետաքրքրէին. քանի որ, ամէն բանէ առաջ, այս «մտերիմ զրոյցները» կ'ըլլան հանրութեան հետ, և ա՛նոր համար: Այս պարագան շեշտած էինք այդէն առաջին հատորով, որուն անօրինակ յաջողութիւնը գերազանցեց մեր բոլոր ակնկալութիւնները:

×

Անոնք որ կը հետեին այս հրատարակութեան, ապահովարար զայն չեն նկատեր վայրկեանական հետաքրքրութեան առարկայ մը, — իբրև բաց գիրք



72-20/6

մը որ գրաւիչ բաներ կը պատմէ գոյ նիւթե-  
րու մասին : Սեռային զխտութիւնը այնպիսի  
հարց մըն է, որ կը պահանջէ կատարեալ լրջու-  
թիւն, առարկայական հասկացողութիւն : Բոլոր ա-  
նոնք որ, օրը օրին, պրակ — պրակ ծանօթութիւն-  
ներ կը ստանան ընտելեան գաղտնիքներու, մարդ-  
կային ստեղծագործութեան բւերագան արտայա-  
տութիւններու և հրաշալիքներու մասին, անոնք  
որ կը կարգան մէկը միւսէն զարմանալի — ընդհան-  
րապէս զազրկիլ — պատմութիւններ բարոյական,  
ֆիզիքական, ախտաբանական խաթարումներու  
մասին, յաճախ իրենց անձնական փորձառութեամբ  
լրացնելով զանոնք, անշուշտ կը զգան թէ այդ  
ընթերցումով պարտականութիւններ ունին ո՛չ  
միայն իրենք իրենց անձին, այլ և իրենց նմաննե-  
րուն հանդէպ, ըլլան անոնք պատանի թէ չափա-  
հաս, քոյր թէ եղբայր, դպրոցական թէ ար-  
հեստաւորի համետ աշկերտ մը :

Զարհուրելի մոլութիւններ կը ճարակին Արե-  
ւելքի մէջ — զազանիք չէ այս, — և Հայերն ալ,  
իբրև մէկ մասը Արեւելքի ժողովուրդներուն, ծնած  
ու սնած միւսնոյն միջավայրին մէջ, մեծ չափով ժա-  
ռանգած կամ տղիտարար իւրացուցած են հազար  
տեսակ խորշիլի, հիւանդոտ ունակութիւններ, ո-  
րոնք ո՛չ միայն կը սպառնան անհատին Ֆիզիքական  
առողջութեան, այլ և անոր նկարագրին, մտային  
ընդունակութիւններուն : Մէկ խօսքով, յաճախ կը  
պատրաստուին սերունդներ՝ զերի՛ անասնական  
կիրքերու, թաւալուն՝ անորակելի մոլութիւններու

մէջ, ամեղուկ՝ մարմնով ու հոգիով, անպէտ՝ թէ  
իրենք իրենց և թէ ընկերութեան համար : — Ան-  
հասնիրն են որ ժողովուրդը կը կազմեն, և ափսոս  
այն ժողովուրդին որուն անհասները չունին գաղա-  
փար անբնականի, ախտաւորի, խաթարուածի ու  
վտանգաւորի մասին, չունին արբնութիւն, կամեցո-  
ղութիւն՝ այդ բոլորը տեսնելու, անոնցմէ զգուշա-  
նալու :

Արեւելքի ժողովուրդներուն թմրութեան,  
հեղգութեան, դանդաղութեան, անկամ ու անկապ  
չարժուձեւերուն հոգեբանական սպառնալի ալ,  
չատ անգամ, պէտք է փնտուկ ուղղակի սեռային  
մոլութիւններու տիրապետութեան մէջ, որոնք  
զօրացնելով նախնական բնազդները, կը տկարա-  
ցրեն դատողութիւնը, մտիլ — և սրտի ալ — աշ-  
խոյժ գործունեութիւնը, կը սպաննեն աննատակա-  
նութիւնը՝ անհատին մէջ, զայն դարձնելով անգոյն  
և ճապուկ զանգուած մը, տրամադիր՝ չորս հովե-  
րէն չարժելու, կամ, աւելի գէշը, յաւէտ անչարժ  
և անխիրտ մնալու ինչպէս քարացած մարմին,  
պինդ կառչած նախապաշարումներու, տղիտու-  
թեան, ազտ ու կեղտին :

Անհրաժեշտ է զննում մը՝ մեր ամբողջ էութեան  
մէջ : Եւ ահա թէ ի՛նչու, զիտական այս հրատա-  
րակութեան մէջ, պարզելով հանդերձ Ծննդագոր-  
ծութեան մեծ խորհուրդը, սեռական կեանքի բո-  
լոր հրաշալիքներն ու գեղեցկութիւնները, մենք  
չվարանեցանք և՛ ամեն բան ըսել այնպէս ինչպէս որ  
է, պատշաճ մանրամասնութիւններով ներկայացնել

ամեն ինչ որ *սխտաւոր է, անբնական է, զազրելի է, և որ սակայն կայ ու կը հարակի սանձարձակ...*

*Մեր գոհունակութիւնը այն պիտի ըլլար որ ընթերցողները կարենային հասկնալ գէթ այսքանը, եթէ չօգտուէին իսկ բոլոր մանրամասնութիւններէն:*

9 Մայիս, 913

ՓՂՇՏԱՅԻ

ԾԱՆՈԹ.— Վերջին պահուն ինացայ թէ կարգ մը խաչագողներ, «Կիւրեղայէրկ Մասեմաւար», սպարան մը եւ գործակալութիւն մը «Մտերիմ Զրոյցներու խարդախ սպազութիւն մը հաներ են, իբրեւ երկրորդ մաս, գողնալով զբիւն անունն իսկ, եւ Փղշացին վերածելով Ղեսացիի եւն: Արժի ժողովարանի զբաւանաւանոցի վարչութեան ձգելով խաբէրաները նետապնդելու հոգը, կը փութամ յայտարարել թէ «Մտերիմ գրոյցները» եւ ինքն ծագագած, կազմած ու խմբագրած եւ, բաղելով կամ բարգրանելով բոլոր այն եւրոպական եւ ամերիկեան հեղինակութիւններէն որոնց մէկ մասին անունները յիշած եմ: Հանրութեան կը մնայ ջոկել ցորեմնն ու որովրդն:

## ՄՏԵՐԻՄ ԶՐՈՅՑՆԵՐ

ՍԵՌԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՄԱՍԻՆ

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Ա. ԱՐԳԱՍԱԻՈՐՈՒՄ

*Երբ կին մը արբունքի կը հասնի, այն ձուրիկները որ մանկութենէն ի վեր քնացած կը մնային իր ձուարաններուն մէջ, կը սկսին աճիլ մէկիկ մէկիկ: Երբ կատարեալ աճումի հասան, ձուրիկները պատրաստ կ'ըլլան ձուարանէն տրձակուելու: Այն ատեն ձուրիկները չըջապատուած են հեղուկ պարունակութեամբ փամփոշտիկով մը, որ կը կոչուի Կրաքի բուշտ կամ ձուապարկ: Դաշտանի միջոցին ձուրիկ մը, երբեմն երկու հատ—մէկ կամ միւս ձուարանէն—կ'արտաքսուին իրենց ձուապարկերէն:*

*Այս կերպով արտաքսուած ձուրիկը հասնելով փայլողական խողովակին բարձունքը, խիստ դանդաղօրէն կը շարժի այդ խողովակին մէջ և կամաց կամաց կը հասնի արգանդին խոռոչը:*

*Արգասաւորումը կամ բեղմաւորումը իգական սերմնարջիչին միացումն է արական սերմնարջիչին հետ:*

Սերմնային հեղուկը, ինչպէս բացատրած ենք արդէն, կը պարունակէ միլիոնաւոր թելանման տարրեր, որոնք կը կոչուին սերմնակենդան: Հաշիւ եղած է որ սերմնակենդանը կը շարժի եօթու կէս վայրկեանի մէջ մէկ ինչէզ արագութեամբ, — ոչոք մը զոր կրնայ պահել կնոջ ծննդական գործարաններուն մէջ մասնէ մինչև ութ-տասը օր ետք և որմէ կախում ունի գլխաւորաբար սերմին արգասաւորիչ կարողութիւնը:

Արդի գիտութիւնը հաստատած է որ սերմնակենդանները միայն գլուխ, մարմին և պոչ ունեցող — կամ այդպէս կոչուած — տարրեր չեն, այլ շատ աւելի բարդ շինուածքներ:

Ո՛չ մէկը տեսած է մարդկային ձուիկի մը եւ սերմնակենդանի մը հանդիպումը. բայց գիտունները կը հաւաստեն թէ միեւնոյն երեւոյթն է որ տեղի կ'ունենայ ինչպէս սանաւորներուն մէջ, որոնց այդ հանդիպումը դիտուած է: Զուգաւորութեան պահուն արգանդին խոռոչը, և թերևս փաղոպեան խողովակներն ալ կ'ընդունին արուին արձակած սերմնային հեղուկը: Ուրիշ խօսքով, հանդիպումը տեղի կ'ունենայ ձուաբեր խողովակներու վերի կողմը, և եթէ իրապէս արգասաւորում կայ, ձուիկը կ'երթայ կը տեղաւորուի արգանդին մէջ, ուր կը սաղմնաւորուի:


Սովորաբար միայն մէկ սերմնակենդան կը մտնէ ձուիկին մէջ, բնական յղացման ատեն: Ուրիշ անհամար սերմնակենդաններ կը չրջապատեն ձուիկը՝ որ կարծես քաշողական զօրութիւն մը կ'ունենայ

իրենց հանդէպ: Երբ մէկ սերմնակենդանը ձուիկին մէջ մտաւ — և առաջին անգամ գլուխով կը մտնէ — շարժական պոչը դուրսը կը մնայ: Գիտութիւնը տակաւին չէ ճշգրտ թէ արդիօք պոչին մէկ մասն ալ չի՞ մտնիր գլուխին հետ. բայց ինչ որ ալ ըլլայ, լրողութիւնն այն է որ գլուխէն դատ ամէն բան կ'անհետանայ անմիջապէս և գլուխը ինք, որ հարուստ է քրոմատային նիւթով. անսակ մը ցանց կը ձևացնէ իր ներսը, կարգ մը կենդանիներու մէջ կը ծածկուի թաղանթով մը, և այսպէս կը վերածուի կորիզանման մարմնի մը — արական նախակորիզը:

Երկու նախակորիզները — արական և իգական — գործօն շարժումներ կը ցուցնեն և երկուքն ալ կը գործեն զէպի ձուիկին կեղրոնը, ուր վերջապէս կը միանան, կը ձուլուին իրարու, և անա արգասաւորումը վերջնական կ'ըլլայ: Ծագարին և մուկին մէջ մէկ նախակորիզը կիսալուանի ձև կ'առնէ և կը զրկէ միւսը, ձուլումէն առաջ: Այսպէս ձուիկը, արական և իգական նախակորիզներու ձուլումէն յետոյ, կը կոչուի ձուասերմ (oosperme):

Սաղմնային զարգացման առաջին փուլերու մասին մարդիկ ծանօթութիւն ստացած են միւսիայն ուրիշ անասուններու վրայ կատարուած հետազօտութիւններով: Ո՛չ մէկը կրցած է տեսնել մարդկային յղացում ձուիկ մը՝ արգասաւորումն երրորդ օրէն առաջ: Վառեակի հաւկիթին մէջ, իբր մէկ օրուան թխտումէ ետք (27 ժամ), որոշապէս կը տեսնուին

այն նախնական հատամասերը որ պիտի կազմեն որդնոսկրի և արեան անօթներու մարմինները : Զուկի նմանող amphioxus կենդանիին մէջ զուգաւորումն ու ձուիկներու միացումը սերմին հետ՝ միշտ սեղի կ'ունենայ իրիկունը, ժամը 5էն 7 : Բայց ութը ժամէն, այսինքն յաջորդ առաւ ժամը 4—5ին, գեղնուցին թաղանթը կը պատուի, սաղմը խոյս կուտայ և կը դառնայ ազատ անկախ կենդանի մը, լողալով ջուրին վրայ :



**Մրեսուն սառեկան կնոջ մը ձուիկը, լիովին աճած, բայց դեռ չհասած.**


Կենդանութեանը բաշտում է, ձուարանի գործողութեան մը միջոցին

Կարելի չըլլալով մարդկային ձուիկն ալ ենթարկել այսպիսի քննութիւններու, գիտունները

ստիպուած են ենթադրել թէ մարդուն սաղմին և իր յարակից մասերու սկզբնական զարգացումն ալ աւելի կամ նուազ նման է միւս ստնաւորներու նոյն պահուն կրօմ փոփոխութեան :

×

Բոլոր բարձրագոյն ականի կենդանիներուն մէջ, հաշուելով որձուէզներն ալ, ծննդագործու-



**Զուիկը՝ իր ձուարանքով.**

Սերմնակենդան մը ներս մտած է, իսկ երկրորդ մը, որ յետոյ կը հասնի կամ ուր մնացած է, կ'արգիլուի ձուարանքին կողմէ : Մէջտեղի ամբողջ մասը՝ **դեղնուցը** կամ նախանիւթն է. իսկ աւելի փոքր գունձը՝ **կորիզը.**

Թեան այս բջիջները կամ սերմնակենդանները կը զանազանուին իրենց շարժունութեամբ : Անոնք ունին կծկելի նախահիւթ մը և խիստ պլլազան ձևեր,


համաձայն տեսակին: Իսկ իգական բջիջը բնդ-  
հակառակն անշարժ է և շատ աւելի խոշոր քան  
արականը: Երբ այս վերջինը, այս կամ այն գոր-  
ծողութեամբ (գուգաւորութիւն ևւն.) չարժման  
մէջ կը դրուի, կը նետուի դէպի իգական բջիջը  
կամ ձուիկը, և կը մտնէ անոր նախանիւթին մէջ:  
Այդ պահուն ձուիկի մակերեսին վրայ կը գոյանայ  
թանձրացում մը, մակարդում մը, որ բոլորովին  
կ'արգիլէ երկրորդ սերմնակենդանի մը մուտքը:

Թէ ձուիկը և թէ սերմնակենդանը երկուքն  
ալ կը բաղկանան նախանիւթէ որ կը ներփակէ կո-  
րիզ մը: Բայց, մինչ սերմնակենդանը միայն պղզ-  
տիկ կորիզ մը և չափազանց քիչ նախանիւթ ունի,  
ձուիկիը խոշոր կորիզ մը և չափազանց շատ արար-  
չահիւթ կամ նախահիւթ (protoplasma) կը պարու-  
նակէ: Կարգ մը տեսակներու մէջ, ձուիկի նախա-  
նիւթը մայրական կազմին մէջ կ'աճի անհամեմատ  
մեծ չափով, կազմելու համար ահագին պաշար մը  
դեղնուցի (vitellus) որ երկար շրջանի մը համար  
իբրև սնունդ կը ծառայէ սաղմի կեանքին: Այսպէս  
է պարագան թռչուններուն և սողուններուն մէջ:

Ինչպէս շատ մը կենդանիներու, մարդկային  
տեսակին մէջ ալ, ձուիկը այնպէս կազմուած է որ,  
կը կորսուի, եթէ տեղի չունենայ լծորդութիւն՝  
արական բջիջին հետ Պղտիկ սերմնակենդանը—բա-  
ցատրեցինք արդէն — կը լողայ իր պոչին օգնու-  
թեամբ, դիմաւորելու համար ձուիկը: Եւ երբ ա-  
նոր դպաւ, ներս կը մտնէ, և տեղի կ'ունենա)  
այն թանձրացումը զոր յիշեցինք: Այս մակարդու-

մը կը կազմէ ձուաթաղանթը (membrane vitelline)  
և կ'արգիլէ ուրիշ սերմնակենդաններու մուտքը:  
Եթէ, արտաբնական երևոյթներու հետեանքով,  
մէկէ աւելի սերմնակենդաններ մտնեն ձուիկէն  
ներս, յառաջ կուգայ հրէշալին արտադրութիւն մը:

Ներս մտած սերմնակենդանի գլուխը իր ա-  
րարչահիւթի պզտիկ պաշարին հետ մէկտեղ  
կը տանի մարմնիկ մը (centrosome) որուն  
շուրջը ճառագայթներ կը կազմուին: Միևնոյն  
ատեն, ձուիկի նախահիւթէն բխած կորիզային հե-  
ղուկ մը որչապէս կը կեդրոնանայ սերմնակեն-  
դանի գունաւորիչ նիւթին շուրջը (chromatine),  
մինչ ձուիկին կորիզը իր ակզը կը մնայ և չի փոխ-  
ւի: Իսկ սերմնակենդանի կորիզը կը սկսի աճիլ  
արագօրէն, գրեթէ կլանելով ձուիկին դեղնուցը:  
Յետոյ աստիճանաբար, ուրիշ կարգ մը գործողու-  
թիւններէ ետք, սերմնակենդանին կողմէ կազմուած  
կորիզը հետզհետէ կ'աճի, մինչև որ կը հասնի  
ձուիկի խոշորութեան և անոր կերպարանքին:



Սերմնակենդանի կորիզը կը հասնի  
ձուիկի կորիզին մեծութեան.



Այն ատեն է որ կը սկսի ձուլիկ կորիզին բուն գործունէութիւնը, ինչպէս և սերմնակենդանի կորիզին մէկ նոր գործունէութիւնը, և զանազան ձեւափոխութիւններէ յետոյ, երկուքը իրարու կը յօրորուին հաւասար մասերով, «ինչ որ կը խորհրդանշէ երկու սեռերուն ընկերային հաւասարութիւնը» — դիտել կուտայ Տոքթ. Փօրէլ: Զարգացման ընթացքին, երբ զուգորդուած կորիզները նորին երկու բջիջներու կը բաժնուին, այդ երկու բջիջներէն իւրաքանչիւրը գրեթէ ճիշդ նոյնքան հայրական քրոմատին կամ գունաւորիչ նիւթ կը պարունակէ որքան մայրական: Ծիւղ հաւասար չէ, որովհետեւ հայրական ազդեցութիւնը և մայրական ազդեցութիւնը երբեք հաւասար չափով չեն բաժնուիր սերունդներուն մէջ: Որովհետեւ սաղմնային կեանքի շարունակութեան մէջ, բջիջներու բաժանումը տեղի կ'ունենայ միեւնոյն եղանակով, կը հետեւի թէ իւրաքանչիւր բջիջ, կամ գոնէ երախային կազմաւորութեան իւրաքանչիւր կորիզը պիտի բովանդակէ՝ միջին հաշուով՝ կէս մը՝ հօր կողմի նիւթն ու ոյժը, կորովը, և կէս մըն ալ՝ մօր կողմի:

×

Ինչպէս դիտել ատիւնք. գիտութեան համար ալ դեռ մութ կը մնայ արգասաւորման բուն տեղը, այսինքն թէ ճիշդ ո՞ր իրարու կը հանդիպին սերմնակենդաններն ու ձուլիկը, կարգ մը գիտնականներ կը կարծեն թէ այդ գոր-

ծողութիւնը տեղի կ'ունենայ բուն իսկ ձուարանին վրայ, դէպի ուր կը բարձրանան սերմնակենդանները, իրենց յատուկ շարժումներով, անցնելով արգանդէն մինչև ձուարան երկուքով անցքը, ձուանցքի կամ փալլուպեան փողի նեղ ծակէն: Ընդհանուր կարծիք մը կը համարուի այս: Զուարանը կնոջ համար լլլալով ճիշդ այն ինչ որ է ամորձիքը տղամարդուն համար, անոնց հիւանդութիւնները կամ մալուճը՝ կտրտուածը հաւասարապէս ամբողջ կը պատճառեն թէ՛ մէկուն և թէ՛ միւսին: Զուարանը այն գործարանն է որ ամէնէն մեծ փոփոխութիւնները կը կրէ արրունքի պահուն. ինչպէս «արգասաւորիչ զուգաւորութենէ մը ետք: Ուրիշ բնախօսներ ալ հաւանական կը գտնեն որ արգասաւորումը աւելի յաճախ տեղի կ'ունենայ ձուանցքի վրանին մէջ, կամ անոր բարակ խողովակի միւս մասերուն մէջ, կամ նոյն իսկ երբեմն միայն արգանդին մէջ, թէև այս պարագան շատ հաւանական չէ: Կը պատահի նաև որ ողջ սերմնակենդաններ ճամբան դիմաւորեն վար իջնող ձուլիկը և յաճախ բազմաթիւ սերմնավար կենդաններ կը գտնուին ձուանցքին, նոյն իսկ որովայնին խստոյն մէջ: «Որովայնային յղացում» կը կոչուին այն արգասաւորումները երբ ձուանցքի վրանէն ձուլիկ մը կ'իջնայ փորին մէջ. իսկ ձուանցքի յղութիւնները անոնք են ուր ձուլիկ կանգ կ'առնէ փալլուպեան խողովակին մէջ:

Արգասաւորման համար անհրաժեշտ ինչ երկու էական պայմաններ, — բեղմն, որիլի ձուլիկ և բեղմ-

Նաւորիչ սերմ : Առասպելներ են բոլոր այն պատմութիւնները թէ առանց արգասաւորման ծննդաբերութիւն տեղի կ'ունենայ, թէ այս կամ ան այրին արգասաւորութիւն է առանց ո՛ր և է յարաբերութեան, բաղնիքին մէջ սերմ առած ըլլալով, ինչպէս կը հաւատան մեր մէջ միամիտներ. ինչպէս որ Եւրոպայի մէջ ալ բերնէ բերան գրուցեր են թէ կին մը յղացաւ զրկելով իր բարեկամունքներէն մէկը որ նոր կենակցած էր իր ամուսնին հետ : Ինչքան արտաւստ միամտութիւն ներ ունեցած է մարդկութիւնը, մինչև մեր օրերը :

Արգասաւորման համար ո՛չ միայն կենսական անհրաժեշտութիւն է սերմը. այլ և պայման է որ սերմը ցայտէ կամ արձակուի խոռոճային մէջ որոշ խորութեամբ : Ծիչը է. սերմը ամբողջովին չի ձգուիր արգանդէն, — ու չգիտենք ալ թէ ո՛րքան սերմ պէտք է արգասաւորման համար — սակայն անվիճելի է, որ կաթիլ մը, ո՛ր և է մաս մը կը բաւէ այդ նպատակին համար. միայն թէ բացարձակապէս անհրաժեշտ է որ սերմ ըլլայ : Միայն առնանդամի հպումով արգասաւորումները խնդրական են. ուրիշ հարց՝ եթէ արգանդի պարանոցը շատ ցած է իջեր :

Սերմնակենդանները արգասաւորման գործածոն ազդակներն են. Արական սերմին մէջ արբունքէն ետքն է միայն որ սերմնակենդան կը գտնուի, ինչպէս որ կինը ձուիկ չունենար այդ շրջանէն առաջ : Սերմնակենդանէ դուրիկ են ինչպէս ամուլ մարդիկը, նմանապէս ամուլ

կենդանիները, օրինակ՝ շորին :

Ինչպէս ըսինք անգամ մը որ սերմնակենդանը իր տեղը հասաւ և արգասաւորեց, ձուարանի փամփուշտը զգալապէս կ'ուռի քանի մը ժամուան մէջ, և անմիջապէս կը պտուռի, դուրս ձգելով ձուիկը, որ փալլոպեան խողովակէն կ'անցնի, ութը, երբեմն տասը օրուան մէջ : Այս արգասաւորում ձուիկն է որ կը հասնի արգանդի խոռոչին մէջ, և կը կազմէ նոր էակին կորիզը կամ սաղմը : Արգասաւորումը մէկ վայրկեանի գործ է. այնուհետև տեղի կ'ունենայ յղացումը կամ սաղմնաութիւնը, և երբ բերնաւորում ձուիկը արգանդ մտաւ, արդէն կը սկսի բուն յղութիւնը :

Երբ դաշտան չկայ, արգասաւորումն ալ գրեթէ բացարձակապէս անկարելի է, որովհետև կը նշանակէ թէ կամ կինը գուրկ է ձուարաններէ, և կամ անոնք անկատար են, և բանի չեն ծառայեր, չկարենալով ձուիկ արտագրել :

Ահա թէ ինչու, արգասաւորման հնարաւորութիւնները սահմանափակելու համար, լնդհանուր սովորութիւն, տեսակ մը անգիր դպրութիւն դարձեր է սեռային յարաբերութենէ զգուշանալ դաշտանի զաղարումէն տասնըորս օր ետք և անոր սկսումէն երեք կամ չորս օր առաջ որովհետև այնպէս համոզում կայ թէ արգասաւորումը տեղի կ'ունենայ գլխաւորաբար դաշտանին անմիջապէս յաջորդող կամ նախընթաց օրերու միջոցին : Հըռչակաւոր բժիշկ մը, ֆալիէլման էր որ, 1883ին իր «Կամաւոր Ամուլութիւն», առանց փնասելու բարո-

17-2016

«Մտերիմ Ձրոյցներ»--Փոշացի



յական օրէնքներու» անուն գործին մէջ այս սուսութիւնը կը պարզէր, վերակենդանացնելով հին դարերու կնախտարոյթին՝ Սողանոսի պատուէրը:

Շատ մը բնասումներու հետադասութեան համաձայն, ճիշդ է որ արգասաւորումները մեծամասնաբար տեղի կ'ունենան դաշտանային շրջանէն ետք առաջին քանի մը օրերու միջոցին. բայց սաղմնաբուութիւնը կրնայ պատահիլ դաշտանային շրջանի ուրիշ ո՛ր և է մէկ օրուան մէջ, թէև շատ հազուադէպ է:

Նմանապէս բնդհանուր կարծիք կայ թէ արգասաւորման համար առանձնապէս նպաստաւոր են տարուան կարգ մը եղանակները, մասնաւորապէս Մալիս և Յւնիս ամիսները. հետեւաբար այդ շրջանին պէտք է ժուժկալ մնան անոնք որ կը վախնան շատ զաւաճներ ունենալէ: Արդի գիտութիւնը բոլորովին անվստահելի կը հռչակէ այս տեսութիւնը, որովհետև միեւնոյն մայրը կ'ընայ յղանալ տարուան ո՛ր և է մէկ եղանակին մէջ: Այս ճշմարտութիւնը պէտք եղածէն աւելի ապացուցուած է ծնունդի թուակաճներուն անհաշուելի զանազանութիւններով:

×

Փորձեր եղած են արգասաւորումը խափանելու, սեռային գործողութեան ձևերը փոխելով: Որովհետև հիներուն մէջ այն հաւատքը կար թէ կնոջ կողմէ գործն մասնակցութիւն, ինչպէս և ուժգին վաւաչ և տախի անհրաժեշտ նախապայմաններ են յղացման, կը յանձնարարէին որ կ'ընր աւելի կրաւորական դիրք մը բռնէ, — միտքն ու

զգայարանքները չկեղբոնացնէ զուգաւորութեան վրայ, Չինացիներուն պէս, որոնք յաճախ այդ հնարքին կը դիմեն մերձաւորութեան պահուն (ֆունկիֆու):

Նոր գիտութիւնը խաբուսիկ կը գտնէ այս միջոցն ալ, որովհետև, կ'ընր որքան ալ իր կողմէ մասնաւոր գործունէութիւն կամ տախիանք չցուցնէ, ամէնէն աղաղան պայմաններու մէջ, դարձեալ արգասաւորում կրնայ պատահիլ:

Հայնօրէն տարածուած է նաև ուրիշ սովորութիւն մ, — բնդհատուած զուգաւորութիւն: Տղամարդը խոտոճպիւն կը քաշէ իր անդամը, ցայտումէն անմիջապէս առաջ, երբ զգաց թէ սերմը պիտի հոսի՝ և գործողութիւնը կը վերջացնէ այսպէս կամ այնպէս, ամէն պարագայի մէջ՝ բունոցէն դուրս: Համաձայն նորագոյն հեղի ակաւոր բժիշկներու յայտարարութեան, այս միջոց ո՛չ միայն կը խափանէ հաճոյքը, այլ և ցայտումն ալ, և ապահով չէ կրնայ լլլալ որ առնանգամը շատ ուշ ետ քաշի. յետոյ մանաւանդ եթէ սերմը տարածուի սրու քներուն միջև, կրնայ անկէ մասնիկ մը մանկ խոտոճ պիւ և շատ անգամ այդքանն իսկ կը բախէ արգասաւորում յաւալ բերելու:

Ատախճան մ աւելի ապահով, թէև ո՛չ բացարձակապէս վստահելի է արև սովորութիւնը. սրով զաւելի մը ծնունդէն ետք մայրեր արհեստակամօրէն կ'երկարաձգեն կաթնատուութեան շրջանը. քանի որ հանրասնօթ իրողութիւն մըն է թէ կաթնատուութ ան միջոցին դաշտանը յաճախ տեղի

չունենար և արգասաւորումը բացաւիկ է :

Այս յարաբերական ապահովութիւնը պատճառ եղած է որ շատ մը բժիշկներ ծայրայեղութեան երթան, բոլոր կիներու մէջ արհեստական կաթնատուութիւն ստեղծելու ատիճան... որպէս զի արգասաւորում կամ դաշտան տեղի չունենայ : Այդպիսիներուն խելքով կնոջ կաթը կենսատու օշարակ մը, լուսավրիւր մըն է ծերունիներուն համար . ճշմարիտ սպեղանի մը՝ անհունապէս կրկարելու կեանքը... Սնասնման կաթնատուութեամբ զաւակ չունենալու այս ձևը «ամուսնական երջանկութեան» իրագործումն է իրենց կարծիքով, դարմանը՝ այլասերած մարդկութեան բոլոր ախտերուն : Այս կարգէն է Րիխարտ Ֆունկ, որ «Բնութեան մէկ նոր յայանութիւնը» անուն մածաղղորդ տիտղոսով գրքի մը մէջ (1906), կը քարոզէ աղջիկներու և կիներուն .

— «Պէտք չէ անգործ թողուս կենսական ոյժերդ . պէտք չէ դաշտան ունենաս, մինչև որ հաստատապէս չկամենաս և չցանկաս յղի մնալ . պէտք է թոյլ տաս որ քու կենսական ոյժդ կաթի ձեւով հոսի քու կուրծքէդ, ուրիշ մարդկային էակներու բարիքին և վայելքին համար : »

Այս առթիւ, հետաքրքրութեան համար յիշենք թէ ուրիշ գիտնական մըն ալ, Քարլ Պիլթէնշտէտ, իր «Երջանկութիւնը Ամուսնութեան մէջ» անուն գիրքով կ'առաջարկէ որ աղամարդիկ ալ վարժուին կաթ տալու, որպէսզի երկու սեւերը կարենան իրենց արիւնը փոխանակել կուրծքերուն միջոցաւ... »

Կաթնատուական այս չքնաղ հովու երգութիւնը, որ ոչ միայն արտառոց, այլ և հակագիտական, հակարնական է, խտտօրէն կը դատապարտուի բազմաթիւ հեղինակութիւններու կողմէ : Արհեստական կաթնատուութիւնը, երբ շարունակուի երկար ատեն, ոչ միայն չափազանց վնասակար է, այլ և կրեւք ապահովութիւն չընծայի արգասաւորումն արգիլելու : Եւ արդէն զարմանալի պիտի բլլար որ անասնման կաթնատուութեան մը չըջանին յղութիւն չպատահէր . քանի որ ծննդական գործարանները պիտի թոյլատրեն զայն, տարբերութիւններ ունենալով ա՛յն կիներուն վրայ որոնք կաթ կուտան բնական պայմաններու մէջ, երկխայի մը ծրնունդէն ետք :

Մալթուսականութեան զանազան այլանդակումներն են ասոնք . խորհրդանշան ունենալով ֆրանսերէն շատ ծանօթ երգ մը .

Մ'հ, սկ'րը, սկ'րը,  
Մ'հկ օրուս վայլի՛ր  
Ինն անուսն վիշի հաւար...

Դեռ չենք խօսիր ուրիշ արհեստական-մեքենական միջոցներու մասին, որոնք հազար փորձանքներ կը բերեն իրենց հետ : Տօքթ . Պլօխ կը պատմէ թէ Իտալիոյ և Նոր Կուլինիոյ մէջ շատ մը կիներ, չափէն աւելի զաւակ չունենալու համար, սերմը կ'արտաքսեն խոռոճպէն, զուգաւորութենէն անմիջապէս ետք, միսնային ուժգին շարժումներով, մանաւանդ սրունքներուն լրարու միացած մասին վրայ : Իսկ Քիշ կ'աւելցնէ թէ Թրանսիլլանիոյ և

Յրանսայի մէջ կը տիրէ սովորութիւն մը, որուն համաձայն սեռային գործողութեան ատեն, կինը՝ արական սերմի դայտումն սկսած պահուն, իր մատով ուժգնօրէն կը սեղմէ առնանդամին արմատը, ճիշդ յագանակագեղձին առջև: Այս կերպով միգուկին անցքը պահ մը կը խցուի և սերմի ցայտումը կ'արգիլուի: Սերմը միգամանին մէջ մրդուելով, յետոյ դուրս կ'ելլէ մէզին հետ: Այս տղեղ վարժութիւնը չափազանց վնասակար է առողջութեան:

Սովորութիւն եղած է նաև հականիսիսի մէջ թաթխուած սպունգներ գործածել, զորս կինը կը դնէ խոռոճոսկին խորը, զուգաւորութենէն առաջ: Ասանց կցուած է մետաքսէ պղտիկ լար մը, աւելի դիւրաւ քաշելու համար, որովհետև սերմը դիւրաւ կը հոսի մէկ կողմէն և կրնայ մտնել արգանդը:

Ինչպէս արհեստական միջոցներ կը փորձուին արգասաւորումը կանխելու համար, նմանապէս փորձեր եղած են արհեստական արգասաւորումներ յառաջ բերելու: Առաջին անգամ Ժ.Ը. դարուն էր որ իտալացի բնախօս մը յաջողեցաւ արհեստական միջոցներով արգասաւորել, քանի մը տեսակ կենդանիներ, մանաւանդ էգ շուն մը, անոր արգանդին մէջ ներածելով արուէն առնուած մասնիկ մը սերմ: Այս միջոցը յանձնարարուած էր տղամարդու մը, որուն միգուկի ծակը փոխանակ առնանդամին ծայրն ըլլալու, տակը բացուած ըլլալով, չէր կրնար արգասաւորել իր կինը: Մարդը ուղղակի գրեխով ներարկեց իր սերմը, և փորձը յաջողեցաւ:

Նման փորձեր կատարուեցան 12 ամուլ կիներու վրայ, և շէ ներարկումներէ ետք, իրարու ետէէ տեղի ունեցան ութ յղութիւններ:

Հազուադէպ յաջողութիւններ են ասոնք, և արժէք ունին միայն իբրև գիտական փորձ:



## Բ. ՅՂՈՒԹԻՒՆ

Երբ արդէն ձուիկը բեղմնաւորեցաւ և արգանդը հասաւ, յղութիւնն է որ կը սկսի: Այնուհետև կնոջ վրայ աստիճանաբար տեղի կ'ունենան, փոփոխութիւններ, որոնք կը տեւեն ինն ամիս կամ աւելի ճիշդը 280 օր, (տասը լուսնական ամիս, իւրաքանչիւրը 28 օր հաշուելով) կամ քառասուն շաբաթ, այսինքն մինչև տղաբերք:

Յղութեան ատեն արգանդը մեծապէս կ'աճի, անցնելով չափահասի մը գլխուն խոշորութիւնը, և իր կողերուն մկանները կը բազմապատկուին ու կը զօրանան մեծ համեմատութեամբ, որպէս զի կարենան աւելի եաքը դուրս մղել երեխան:

Մինչ տղամարդու գործունէութիւնը կը դադրի արգասաւորման հետ, կնոջ գործունէութիւնը ճիճդ այդ պահուն է որ կը սկսի:

×

Զանազան նշաններ կան յղութիւնը ճշգրտելու, — կնիթադրական, հաւանական և դրական: Շատ մը կասկածելի պարագաներու մէջ, նոյն իսկ ամենէն ճարտար բժիշկները հազիւ կրնան բացարձակապէս դրական նշաններ գտնել, առաջին 16 շաբաթներու միջոցին: Կարելի չէ շատ վստահիլ կնոջ իսկ յայտարարութիւններուն, առանց գիտակցօրէն ստելու, ան կրնայ խաբուիլ իր ունեցած զգայութիւններէն, կամ նոյն իսկ մոլորեցնել մանկաբարձը: Ներկայ գիտութիւնը կարգ մը միջոցներ գտած է

— ինչպէս ամբողջ արգանդը դէպի վար հրել մատնելով — որոնց չնորհիւ կարելի կ'ըլլայ մինչև վեցերորդ կամ ութերորդ շաբաթէն հաստատել յղութիւնը, թէև մինչև հինգերորդ շաբաթէն ալ կանխատեսուած է:

Յղութեան միջոցին դաշտանը կը դադրի, որովհետև ինչ որ դաշտանի արիւն պիտի կազմէր յղութիւն չեղած ատեն, այնուհետև կը յատկացուի ձուիկի և արտադրիչ գործարաններու զարգացման: Այլևս ձուարտադրութիւն տեղի չունենար: Ստնքային գեղձերը աւելի կը պնդանան, կը խոչորնան, աւելի շարժուն կը դառնան: Իրենց կապոյտ երակները աւելի որոշ կը անսնուին և կինը ծանրութեան, կակիծի, մարմաջի և այլն զգայութիւններ կ'ունենայ: Ծծի պտուկները քիչ մը կը խոշորնան և աւելի ցայտուն կը դառնան: Պտուկը չըջապատող ծիրը աստիճանաբար մութ գոյն մը կ'առնէ, կնոջ գոյնին համաձայն, բաց թուխէն դառնալով սևի: Սև ծիրը անմիջապէս չըջապատող ձերմակ մորթին վրայ, երեւան կուգայ երկրորդական ծիրը, որ կը բաղկանայ սև կլոր, ոչ ցայտուն բիծերէ, մորթի մակերեսէն աւելի բաց գոյնով մը:

Կաթի հոսումը յղութիւնը հաստատելու զօրաւոր միջոց մըն է այն կիներուն համար, որոնք դեռ երբեք յղի չեն եղած: Բացառիկ պարագաներու մէջ, կաթը կը հոսի տղաբերքէն առաջ, և երբեմն կաթնարեր հեղուկ մը կրնայ քամուիլ պտուկէն մինչև յղութեան 12րդ շաբթուն:

Այսպէս կամ այնպէս, կուրծքի այս փոփո-

խութիւնները կը սկսին ճէն 12րդ շարթուն, և աւելի կը շեշտուին, քանի յղութիւնը կը յառաջանայ:

Յլի կինը սրտի խառնուք, յաճախ ալ փրսխում կ'ունենայ առտունները ելած ատեն, նախաձաշի պահուն կամ անկէ ետք:

Այս տկարութիւնը սովորաբար կը սկսի չորրորդ կամ հինգերորդ շարթուն, և կը տեւէ մինչև 11րդ շարթուան վերջը, կամ աւելի ուշ: Երբեմն սկիզբ կ'առնէ յղութենէն քանի մը օր ետք և կը չառնակուի ամբողջ տեւողութեան միջոցին: Պատճառը ապահովաբար այն է որ արգանդը չափազանց կը խռնուի, բնախօսական սահմանէն անցնելով:

Շատ մը յղի կիներ անսովոր փափաք մը կ'ունենան թթու խնձորի և ուրիշ թթու պտուղներու կամ րմպելիներու, քացախով պատրաստուած ազանգերներու կամ կը ցանկան նոյն իսկ անձաշակելի բաներու, — ինչպէս կաւիճ, մոխիր, կաւ, ածուխ, քարետախտակի զրիչ, նոյն իսկ հոտած միւս կամ սարդ: Երբեմն բոլորովին կը կորսնցնեն իրենց ախորժակը, կամ կը գանին այս ու այն տեսակէն: Սովորական երեւոյթներ են սրտի կամ ստամոքսի ալրում, փուք և անհաճոյ զգայաւորմանը (կէյիքս): Դժուարամարտութեան այս նշանները և ախտաւոր մարմաշները կը սկսին գրեթէ միւսնոյն ատեն, իսկ իրենց տեւողութիւնը անատոյգ կը մնայ:

Յղութեան առաջին ութ ամիսներուն փորը իրատէս աւելի տափակ է քան առաջ, և չափի յաւելում չի ցուցներ: Ահա թէ ինչու Յրանսացիները սովորութիւն ըրած են ըսել.

— Տափակ փորի մը մէջ, երեսայ մը կը խլրտի» (A ventre plat, enfant il y a):

12րդ շարթուն արգանդի յատակը կը սկսի բարձրանալ ցալքին վերեւը, ուր կրնայ զգացուիլ երբ ձեռքով շօշափեն ցալքը: Անկէ վերջն է որ փորին ցցուածքը կանոնաւորապէս կ'աւելնայ մինչև տղարեք, որովհետեւ փորը կը թուլնայ և կը ծածկուի թխորակ սպիներով, կինը դժուարութիւն կը քաշէ քարկու և գէպի ետ կը ծռի, իր հաւասարակչութիւնը պահելու համար:

Յղութեան ատեն փորի մեծնալը և ուրիշ տեսակ ուսոյցներ զանազանելու համար, կը բաւէ նկատել որ յղի որովայնը սովորաբար ձեւով համաչափ է, ունի առաձիգ, ամուր պնդութիւն մը. շրջագիծը ողորկ է և հարթ, աւելի երկայն է ուղղահայեաց կերպով և ոչ խտտորնակի, և կը կծկուի շօշափման տակ: Զգուշութեամբ ամուր մը սեղմուած ատեն, կը զգացուի որ ներսը կայ շարժելի, ծփուն պինդ մարմին մը, — սաղմը (foetus):

Կոյս արգանդի մը և յղի արգանդի մը տարբերութիւնները շատ յատկանշական են. սակայն արդէն քանի մը անգամ զաւակ ծնած կնոջ մը յղացած կամ ոչ-յղի արգանդին տարբերութիւնները շատ նշանակելի չեն:


×

Առաջին քանի մը շաբաթներու միջոցին գրեթէ ուրիշ փոփոխութիւն տեղի չունենար բայց միայն արգանդի տեղափոխութիւնը և փորի թութիւնը: Կոյս արգանդի մը պարանոցը աւելի

տողուն է: Յղուիեանն անմիջապէս ետք կը սկսի կակուղնալ և ընդլայնուիլ բոլորակի: Այս և ուրիշ յարակից փոփոխութիւններ կը սկսին յղութենէն անմիջապէս ետք, բայց հազիւ ճանաչելի են հինգերորդ կամ վեցերորդ շաբաթէն առաջ: Երեք ծննդաբերութենէ յետոյ, արգանդի պարանոցը երբեք չվերստանար իր կուսական պնդութիւնն և ողորկութիւնը: Յետոյ, առաջին յղութեան ատեն արգանդի պարանոցին բերանը կամ չլիները թող չեն տար որ մատի մը ծայրը ներս մտնէ. իսկ յաջորդ յղութեան մը միջոցին ընդհանրապէս կարելի է այդ փորձը:

Յղի կիները յաճախ միզարձակութիւն կ'ունենան, իբրև հետեւանք միզային փամփուշտի գրգռման: Այս երևոյթը շատ սովորական է յղութեան առաջին երեք ամիսներուն, և տեղի կ'ունենայ անոր համար որ ընական կարգով վար իջած արգանդը կը ճնշէ միզային փամփուշտին վրայ: Երբ, չորրորդ ամսուն, արգանդը կը բարձրանայ, այդ երևոյթն ալ սովորաբար կը դադրի: Կրնան սկիւմայ միզարձակութիւններ տեղի ունենալ, երբ հիւսնդը կը հազայ, կը խնդայ, կը փռնգտայ կամ կը փսիսէ:

Յղութեան ատեն ոչ միայն ծիծերը կամ փորը տեղ տեղ մտնի գոյնը կը ստանան — ինչպէս բացատրեցինք — այլ և թիտրակ ծիր մը կը կազմուի պորտին շուրջը, և կրնայ տարածուիլ իջնել մինչև ստամոքսը: Հազուադէպ պարագայերու մէջ այս գոյնը կը պատէ ամբողջ որովայնը կամ մարմինը:



Մտրդկային ստղ, խոտրցում՝ 2/3 անգամ

Պիւ Լէն 4: Տանդուբերոյ օրէն միջին 15րդ օրը.— 5-6՝ Տանդուբերոյ օրէն Բազմակիւնոյ օրը.— 7-12՝ Բազմակիւնոյ օրէն՝ Երեսները.— 13-17՝ Երեսակմկիւնոյ օրէն 34րդ օր:



Կանաչորակ անկանոն բիծեր կը գոյանան նաև  
դէմքին վրայ, մութ ծիրեր կազմելով աչքերուն  
բոլորափքը: Այս բիծերը կ'անհետանան տղաքերքէն  
և տք, երբևէն աւելի կանուխ:

Նշանակելի փոփոխութիւն մը տեղի կ'ունենայ  
կնոջ բնաւորութեան մէջ: Համակրելի, դիւրընտել  
կինը կը դառնայ նեղսիրտ, ցասկոտ, զուարթը՝  
մելամաղձոտ, կամ ճիշդ հակառակը: Կարգ մը կի-  
ներու բարոյական կարողութիւնը կը նուազի կամ  
կ'աւելնայ, իսկ մտային կարողութիւնն ալ փոփո-  
խութիւններ կը կրէ: Այս բոլորը աւանին նշաններ  
են, որոնց վրայ պէտք է աւելցնել նաև, — ակ-  
ռափի գաւ կամ դէմքի ջղացաւութիւն, կամ ակ-  
ռաներու իրական փտում՝ յաջորդական յղութիւն-  
ներու միջոցին, նուազելու ձգտում մը՝ աճապարհ  
կիներու վրայ որոնք ազատ էին նուազումէ երբ  
յղութիւն չկար: Շատ կիներ իրենց յղութեան  
թուականը կը հաշուեն սեռային մասնատր գոր-  
ծողութեան մը միջոցին իրենց զգացած անսովոր  
վայելքէն, և յաճախ շատ ճիշդ է այս հաշիւը, ինչ-  
պէս կը խոստովանին մասնագէտներ իսկ:



Ամէն յղի կին պէտք է մաքուր քարմ օդ չնչէ:  
Հետեւաբար, գիւղի օդը աւելի նպաստաւոր է քան  
բարձրադիրքի, խճողուն քաղաքի մը ապականած  
օդը: Եթէ օդը ներէ, լաւագոյն է կեանքը դուրսը  
անցնել քան ներսը՝ սենեակին մէջ փակուած մնալ:  
Սենեակի օդը պէտք է միշտ փոխել, մէկ կամ

երկու պատուհան բաց ձգելով, եթէ օդափոխներ  
չկան: Օդի ապականութիւնը սովորաբար դէպի  
առաստաղը կը կուտակուի: Այս տեսակետով թե-  
րևս աւելի նպաստաւոր են մեր Հայաստանի քո-  
րերը. որոնց խեղճուկ խրճիթին անիքը միայն  
բացուածք մը ունի, իրրև լուսամուտ . . .

Յղի կինը պիտի զգուշանայ խճողուն ափար-  
թըմաններէ, թատրոններէ և եկեղեցի երէ: Շատ  
մը յղի կիներ չափազանց կ'ազդուին անաս բժ-  
հոտերէ, կարծես բնութիւնը զիրենք օժտած լլլար  
ապականած օդին հոան առնելու և ալ կէ խուսա-  
փելու բնազդով: Ուրիշ բնախօսական պատճառներ  
ալ բացարձակապէս անհրաժեշտ կը դարձնեն մա-  
քուր օդը:

Տարաբաղդաբար — և մեր մէջ ալ բնդ ռա-  
ցած է այս յոռի ունակութիւնը — կանացի նեղ  
զգեստները և մասնաւորապէս ֆօքսէները կը գրժ-  
ւարացնեն շնչառութիւնը: Բոլոր բժիշկներն ի կը  
պատուիրեն որ ֆօքսէն բոլորովին մէկ կը մ ձգուի  
յղութեան վերջին ամիսներուն կամ գոնէ շատ  
թող. մեծ զգուշութեամբ կապուի: Պէտք է զգու-  
շանայ փորին վրայ գօտի են. կապել: Ծնրակա-  
պը, ծունկէն վեր կապուի թէ վար, կրնայ ու-  
ռեցքներ գոյացնել ոտքին կամ սրունքի վրայ:  
Զգուստեղէնի միւս անպատեհութիւններէն յիշենք  
նաև չափազանց բարձր ներդանով կոչիկն ը. ո  
րոնք կը դժուարացնեն շարժումները, քայլուածքը  
և սայթաքում կը պատճառեն, յաճախ աղիտայի  
հետեանքներ Բոլոր հագուստները պէտք է տաք

ըլլան, բարեխառն, հանգստաւէտ աստիճանով մը, մասնաւորապէս ցուրտին դէմ պէտք է պաշտպանել ստորին անդամները: Յուրորը և խոնաուութիւնը, մանաւանդ երբ չափազանց տաքութիւն ըլլայ, կրնան երիկամունքի բորբոքում պատճառել:

Առողջ յղի կնոջ մը համար լաւագոյն մարզանքն է. նոյն իսկ մինչև իր անկողին իյնալը, քալել բաց օդին մէջ: Յղութեան ոչ մէկ ատեն պէտք չէ արգելիլ այդ մարզանքը, կը բաւէ որ չափաւոր յագնութեան սահմանը չանցնեն: Այս բացօդեայ պրտոյաները կ'աւելցնեն շնչառութիւնը, փորժակը, մարսողութիւնը և հեշտ քուն մը կը բերեն: Պէտք է զգուշանալ ամէն տեսակ բուռն մարզանքներէ և մկանային ծանր ճիգերէ, մասնաւորապէս ծանրութիւն վերցնելէ: Չի նստիլ, կամ խորատրորոտ ճումբաներէ անցնիլ առանց զսպանակի կառքերով փնասակար են. իսկ օդտակար կրնան ըլլալ հարթ ճամբու վրայ հեշտօրէն ընթացող կառքի մէջ պրտոյաներ, որոնք տեսակ մը բացօդեայ մարզանքներ են, հանգստացնող օրօրումներ: Շատ բան ալ կնոջ կազմէն, խառնուածքէն կախում ունի: Մէկը կրնայ տոկալ ամէն տեսակ բիրտ ցնցումի, առանց որ և է փնաս կրելու. մինչդեռ ուրիշ մը — աւելի փափուկ, աւելի ջղային և աւելի դիւրագրգիւ — կը տուժէ, նոյն իսկ կանխահաս տղաբերք կամ վիժում ունենալով, հոգ չէ թէ թեթեւ խանգարում մը կրած ըլլայ: Ամէն պարագայի մէջ, բարձրակապէս զգոյշ շարժելու է: Ամէն պարագայի մէջ, երկաթուղի կամ կառք նստելէ պէտք է ըզ-

գուշանալ, ծանր ցնցումներ չկրելու համար: Յղութեան վերջին օրերուն բացօդեայ մարզանքներու մէկ մեծ առաւելութիւնն ալ այն է որ յղի կնոջ չի հարկադրուիր մատ փաթթել իր բաղքատարար աննշան տկարութիւնները և չափազանցելով լուրջ հիւանդութեան կերպարանք տալ անոնց: Իր միտքը ազատ կ'ըլլայ ճնշումէ, փոխանակ անփութօրէն փութելու անկողին մէջ, կազդուրում, խայտանք կը փնտռէ արեւին ու օդին մէջ, — անշուշտ պայմանաւ որ հանգիստ պահանջող վիճակ մը գոյութիւն չունենայ:

X

Արդի բժշկութիւնը պատճառ մը չի տեսներ որ քաջող յղի կին մը շատ մեծ փոփոխութեանց ենթարկէ իր ամենօրեայ ճաշացուցակը: Մաքուր թարմ օդ, մարզանք, մտքի անուշ թարթափանք, և ազատում՝ առանին սովորայինը մեքենական ճնշումէն, — այս բոլոր առաւելութիւնները կը նպաստեն իր մարսողութեան, կը արեն իր փորժակը՝ յղութեան շրջանի մեծագոյն մասին մէջ: Առաւուան թեթեւ անհանգստութիւնը կրնայ զինքը նեղել յղութեան առաջին օրերուն, ազդելով փորժակին վրայ, և սրգանդի աճումը կը ճնշէ ստամոքսի վրայ՝ վերջին ամիսներու միջոցին. բայց հակառակ այս անգատներութիւններուն, շատ կիներ կրնան բաւական մտունդ առնել, կնոջ ճաշակը կարելի է գոհացնել օգտակարապէս, մանաւանդ երբ ինչորք սովորական կերակուրներու մասին է: Գինի և ողելից ըմպելիներ, ինչպէս և թէյ — որ պլն-

զուժիւն կուտայ — և սուրճ պէտք չէ գործածել, կամ մեծ չափաւորութեամբ: Ամէն տեսակ հասուն պտուղներ և չոր միրգեր — մասնաւորապէս սաւոր — որոնց խնդ կըլլան յլի կիները, կը նպաստեն սնդուժիւնը քակելու: Կաթ և չօքօչա կարելի է տալ նրբ որ փափաք յաւանուի. բայց դիտելի է որ յլի կիները զանց կընեն կամ կը մերժեն գործածել պարզ ըմպելի մը որ այնքան կարեւոր է մարմնի գործունէութեան համար, — սովորական ջուրը:

Ջուրէն խորշելու սովորութիւնը կարելի է դարմանել առատօրէն գործածելով սովորական աղ, որ ծարաւ կը գրգռէ: Յղութեան վերջին օրերուն, երբ ա՛լ լայն տեղ չկայ լեցուն ստամոքսի մը համար, ճաշը կրնայ թեթեւ ըլլալ, բայց աւելի յաճախ ճաշեղէն վեաս մը չկայ:

Յգի կնոջ մորթը պէտք է մաքուր պահուի, բարեխառն, գաղջ լոգանքներով, որոնք պէտք է կատարուին շաբաթը առնուազն երեք անգամ, Մովալոգանքը վիճելի է, թէև կարգ մը կիներ զայն կը փորձեն առանց վեաս կրելու: Երբ, յղութեան չրջանի յառաջացման հետ, կիներ շատ կը ծանրանայ և կը խորշի լոգանքէ, արտաքին ծննդական գործարանները կարելի է օրը երկու անգամ լուալ գաղջ ջուրով, և մորթը չիկ թաց սրբիչով մը: Յղութեան վերջին շաբաթներուն, ստինքները պէտք է չափազանց մաքուր պահուին, ազատ՝ ճնշումէ, և կակուղցած՝ բորստային վաղէլինով և քաքաօի խղով:

Քուներ կարեւոր է: Եթէ մասնաւոր դժուարութիւն մը չկայ, յլի կին մը պէտք է կանուխ քաշուի, առանձին անկողին մը, և քնանայ ութ ժամ կամ աւելի: Սրգասաւորումէն յետոյ զուգաւորութիւն՝ արտառոց բան է բնախօսական տեսակէտով, և սակայն տեղի կ'ունենայ հակառակ ամէն արգելքի: Մասնաւոր եթէ սեռային գործողութիւնը զուգադիպի դաշտանային չրջանին, կրնայ վիժում պատճառել՝ վիժումի ընդունակ կիներուն: Եթէ ժուժկալութիւնը բացարձակապէս մերժուի, պէտք է գէթ չափաւորութիւն պահել, և չերկարել սեռային հաճոյքը: Ամէն պարագայի մէջ, կարեւոր է իրախտակ հիւանդը, որպէսզի անձկութեան և երկիւղի չմասնուի իր մօտապուտ երկունքին համար: Պէտք է աշխոյժ, զուարթ մթնոլորտ մը ստեղծել, փոխանակ ձգելու որ յլի կինը մասնուի թուլաստութեան և գլուխն առնէ մոմտայ: Անհրաժեշտ են նաև գեղեցիկ չրջապատ և հաճելի տպաւորութիւններ, որոնք խորապէս կ'աղբն, սաղմին զարգացման վրայ:

×

Սրգասաւորումէն ետք, առաջին երկու շաբաթներու միջոցին կնոջ ձուկը պարզապէս հաւկիթ կը կոչուի: Երկրորդ շաբթուան վերջէն մինչև հինգերորդին վերջը՝ կը կոչուի նախասաղմ (embryon), իսկ հինգերորդ շաբաթէն մինչև կատարեալ աճումը՝ սաղմ (foetus):

Առաջին անգամ, աճող նախասաղմը գրեթէ ամբողջովին կը բաղկանայ ջուրէ: Գիտնականներ

հաշուած են որ երկուքուկէս ամսուան նախասագ-  
մին մէջ ջուրի համեմատութիւնն է հարիւրին  
93,82, իսկ երրորդէն չորրորդ ամսուն՝ 89,95,  
եօթներորդ ամսուն՝ 84,75. — մնացորդն ըլլա-  
լով սպիտակուց, ազեր և ճարպեր: Զրային հե-  
ղուկներով լեցուած զանազան թաղանթները նա-  
խասագմը կը ներկայացնեն իբրև բշտիկներու բարդ  
կազմուածք մը, ուր չկայ ոչ մէկ դատարկութիւն:  
բոլոր տեղերը գրաւուած են այս կամ այն ջրային  
հեղուկով. զանազան խոռոչներու հեղուկները հա-  
ւանաբար կը տարբերին իրենց խտութեամբ և քի-  
միական ու ելեկտրական յատկութիւններով, որոնք  
ձշղուած չեն տակաւին:

Սաղմին գլխաւոր մասերն են այդ նոյն թա-  
ղանթները, որոնք իր պատեաններն կը կազմեն. ի-  
րենց պարունակած ջուրը, պլակինտ (placenta) և  
պորտի կապը, որ կը ծառայեն հաղորդակցութիւն  
հաստատելու սաղմին և մօր միջև, որպէս զի սաղ-  
մը կարենայ ապրիլ ինքնիրեն, քանի արգանդին  
մէջ է: Երեք տեսակ թաղանթ կայ, երեքն ալ  
համակեղրոն պատեաններ՝ ձուիկին համար: Ամէ-  
նէն արտաքին մաշկը (caduc), կը ծառայէ իբրև  
կապ արգանդին և ձուիկին միջև, դառնալով ա-  
նոր նախնական պատեանը, երկրորդը փառն է (cho-  
rion), աւելի սեղմ և տոկուն, կը կազմուի առա-  
ջին և երրորդ մաշկերուն միջև. իսկ այս վերջինը  
սաղմնամիզն (amnios) խիստ բարակ, թափանցիկ,  
փալլուն, առաձիգ և ճերմկորակ թաղանթ մըն  
է, որ ջուրը կը պարունակէ և ուր կը լողայ սաղ-

մը: Այս մաշկը կ'երևայ յղութեան ամբողջ տե-  
ւողութեան միջոցին: Իր պարունակած հեղուկը  
հակիրթի ճերմկուցին պէս է, յստակ և թափան-  
ցիկ՝ առաջին չորս ամիսներուն միջոցին, բայց կը  
պլտորի յղութեան վերջերը: Յետոյ կաթնային գոյն  
մը կը ստանայ որ երթալով կը շեշտուի: Այս հե-  
ղուկին քանակութիւնը կը տարբերի համաձայն  
յղութեան տարիքին, կ'աւելնայ երկրորդ ամիսէն  
մինչև վեցերորդը, յետոյ կայուն կը մնայ ու կը  
սկսի նուազիլ յղութեան վերջերը: Ծննդաբերու-  
թեան շրջանին իբր 500 կրամ հեղուկ կը գտնուի,  
անկէ առաջ տարուբրուելով 30՝էն 1500 կրամին  
միջև: Այդ քանակութիւնը խոտոր կը համեմատի  
սաղմին կենսունակութեան, մեծութեան և ուժին  
հետ: Այսպէս, երկու կամ երեք քիլօնոյ սաղմ մը  
կը լողայ մէկ-երկու լիտր հեղուկի մէջ, իսկ հա-  
զիւ քանի մը դգայ հեղուկ կը գտնուի չորս-հինգ  
քիլօ ծանրութեամբ սաղմի մը մէջ: Այս հեղուկին  
ծազումը դեռ անյայտ կը մնայ՝ թէև հաստատ-  
ուած է որ թէ՛ մայրը և թէ՛ սաղմը կը մասնակ-  
ցին անոր կազմութեան:

Այս հեղուկին պաշտօնն է սաղմը չեղոքայնել  
չըջապատող մարմիններէն և դիւրացնել անոր շար-  
ժումները. եթէ ոչ պիտի ճնշուի և չպիտի կրնայ ա-  
ճիլ: Այդ ջուրերն են որ սաղմը կը պաշտպանեն  
արտաքին բաղխումներու դէմ, մօր կրկիք հար-  
ուածներուն կտմ ցնյումներուն դէմ, զայն պահե-  
լով տեսակ մը գազ լողանքի մէջ: Այսպէս սաղմն  
ալ կը հետևի ծանրութեան օրէնքին, զլուխը դէպի

վար հակելով: Տղարերքի միջոցին, այդ ջուրերը դարձնալ սաղմը կը պաշտպանեն արգանդի ուժգին կծկումներուն դէմ, և իրենց կազմած ջուրի տուրակով կը դիւրացնեն արգանդի պարանոցին բնդլայնումը, լպրծուն, սահուն կը դարձնեն անցքը, օգնելով սղարերքի կասարման:

Փաւր կամ երկրորդ թաղանթը արտաքին մակերեսով կապուած է բուն արտաքին թաղանթին հետ, իսկ ներքինով՝ երրորդին հետ, — ան՝ որու մասին կը խօսէինք հիմա: Այս թաղանթը չաջորդաբար փոփոխութիւններ կը կրէ. առաջին երկու ամիսներու միջոցին մազոտ է ամբողջ շրջապատին վրայ երրորդ ամիսէն սկսած մազերը կ'անհետանան մէկ մասին վրայ, և այն ատեն երկու անջատ մասերէ կը բաղկանան, լերկ և մազոտ: Այս վերջինը յետոյ՝ հինգերորդ ամսուն, կը կազմէ պլակինտային մազոտ՝ սաղմնային մասը:

Բուն արտաքին մաշկը (caduc) ուրիշ բան չէ, բայց միայն արգանդային հուղաթաղանթը՝ որ կը կերպարանափոխուի յղութեան միջոցին:

Իր արտաքուսէն անմիջապէս ետք քննուելով՝ հաստատուած է թէ պլակինտը կը կամ հաւկթածու զանդուած մըն է, մածուցիկ թանձրութեամբ, ունենալով 16 սանթիմէզր լայնք, 18 սանթիմէզր երկայնք և 500 կրամ ծանրութիւն:

Պլակինտը կամ՝ փլասէնրաբ սահմանուած ըլլալով սաղմը յարաբերութեան մեջ դնել մօր հետ, կը բաղկանայ երկու որոշ տարրերէ, — սաղմնային և մայրական, որոնք ծայրերով իրարու կը միանան

և կը լծորդուին, կազմելով միակ գործարան մը:

Գլխաւորաբար կազմուած ըլլալով արեան անօթներէ, վլասէնթան իր արտաքին և կորնթարդ մակերեսով սերտօրէն կը կպի արգանդի հիւսուածին, անոր մէջ կը կապուի իր ըլթակներով, և այսպէս կը հաստատուի ուղղակի, անմիջական հաղորդակցութեան մը մօր և զուկին միջեւ, պորտի լարին միջոցաւ: Արդէն այս վերջինը այն գործարանն է որ սահմանուած է սաղմը միացնելու փլասէնթային: Իր արամագիծն է 10—12 միլիմէզր, կամ ճկոյթ մատի մը լայնքը, իսկ երկայնութիւնը՝ միջին հաշուով 50—60 սանթիմէզր: Իր արտաքին կերպարանքը խիստ յատկանշական է, — ողորկ, փայփլուն, անկանոն, անամար խորտուբորտութիւններով: Պորտի լարը սկիզբ կ'առնէ փլասէնթայի սաղմնային կամ ներքին մակերեսի կեղրոնէն: Իր արեան անօթները կը կազմեն երկու շնչերակ և մէկ երակ, որոնք երկխային կը փոխանցեն մօր արիւնը, կը կերակրեն և կ'ապրեցնեն զայն:

Մայրական և սաղմնային արիւնները երբևք իրարու չեն խառնուիր, այլ իւրաքանչիւրը կը վերադառնայ իր յատուկ անօթներով:

Գլխաւորներ կրցած են քննել լման փլասէնթաներ. բայց փլասէնթայի ածման առաջին օրերու միջոցին շատ քիչ մարդկային ձուկներ տեսնուած են: Ամէնէն մատաղ հաւկթիթը, որ քննուեցաւ դեռ 1899ին, երեք կամ վեց օրուան կեանք ունէր:

Փլասէնթան սովորաբար կը հաստատուի արգանդի յետասկողմը, դէպի վեր՝ ձուանցքի ընդա-

նին մօտերը : Բացառաբար , կը կապուի նաև արգանդի ս'ր և է մէկ մասին : Իսկ պորտի լարը ուժորաբար կցուած է փլատեկնային մէջտեղերը , բայց ս'չ ճիշդ կեղրոնը :

Փլատէնթան ս'չ միայն սնունդ կուտայ երեխային , այլ և սնոր շնչառական գործարանն է : Պորտի շնչերակները կապոյտ արիւն կը տանին փլատէնթային , ուր ածխային թթու կը արուի մայրական արիւնին և թթուածին կ'առնուի անիէ : այնպէս որ պորտի երակը նորէն հետը կարմիր արիւն կը բերէ սաղմին : Վերջերս գիտական փորձերով հաստատուեցաւ թէ փլատէնթան ընտրողական կայողութիւն մըն ալ ունի , — այսինքն կրնայ մայրական արիւնէն ընտրել զատկ ս'յն նիւթերը որ անհրաժեշտ են սաղմին , յղութեան զանազան շրջաններուն մէջ :

Շատ մը գիտուններու կարծիքով , փլատէնթան ճիշդ այն է սաղմին համար , ինչ որ է թօքը մարդուն համար , թէև կատարելագլխ ճշգուած չեն սաղմին սննդառութեան մանրամասնութիւնները : Կարգ մը գիտնականներ կը կարծեն թէ սաղմն ալ արգանդին մէջ կը սնանի այնպէս ինչպէս վառեակը հաւկիթին մէջ , հաւին թխտումով արտադրուած ջերմութեամբ : Ուրիշներ կ'ըսեն թէ սաղմը կը ծծէ զինքը շրջապատող ջուրը , ինչպէս մենք կը ծծենք օդը : Այսպէս կամ այնպէս , սնվիճելի իրողութիւն մըն է որ , սաղմը անմիջապէս կը մտնի , երբ պորտի լարը տափակցնեն , ճնշեն կամ արեան շրջանը ընդհատուի : Եւ յետոյ , յայտնի



Նկար 5. Սաղմը՝ երբորդ կամ չորրորդ ամսուն  
1. Երեխայ-սաղմը քցապատող մաշկերով , — 2. Պորտի լարը , — 3. Փլատէնթա կամ պլակինտ :

Բացառութիւններ կարգալ նիւթին մէջ

ճշմարտութիւն մըն է որ երեսան կրնայ ապրիլ առանց չնչիւր, որքան ատեն որ կապեր պահէ փլասէնթային հետ՝ պորտին ամբողջութեամբ: Իսկ երբ չնչիւ սկսած, երբ իր առաջին ճիշն արձակեց, պորտը կրնայ բամբուիլ, կտրուիլ. ա՛լ արիւն չի գար և փլասէնթան փրթկով կ'իշնայ անմիջապէս: Տղան փրկուած է, ա՛լ կրնայ առանձին շքնչել: Իր մօրը ծոցին մէջ շնչելուն համար իսկ, սաղմին արեան շրջանը շատ աւելի՛ բարդ է քան չափահասներուն քով: Սաղմ—երեսային թոքերը անջրանցիկ են և խիտ՝ ծնած պահուն, և այնքան ծանր որքան մկանուտ մտի մը կտորը: Տօքք. կառնիէ յիշելով այս պարագաները, զիտեղ կուտայ որ ատոնք կրնան փաստ ծառայել հաստատելու համար թէ նորածինը ծնունդէն առաջ մեռած է թէ կտքը: Եթէ թոքերը ջուրին յատակը իջնեն, կը նշանակէ թէ երեսան չէ շնչած. իսկ եթէ ջուրին երեսը լողան, մանկասպանութեան նշան մը կայ: Պարզապէս լսողութեան մայրուամեր են այն արգանդային ճիշերը որ իբրև թէ լսուած են յլի մօր փորին մէջ, ինչպէս կը պատմեն շատ կիներ կամ դայեակներ: Խիտ բացառիկ պարագաներու մէջ, միայն տղաբերքի պահուն կրնան այդպիսի ձայներ լսուիլ:

×

Սաղմը տեսանելի կը դառնայ միայն երրորդ շաբթուն (տես նախորդ պրակին պատկերը): Այդ միջոցին կը նմանի լպրծուն ճճիի մը, գորշ-ճերմակ կէս-անթափանց, զողոզուտ (ժէլաթինի պէս)

4—7 միլիմետր երկայնութեամբ և 10—15 սանթիկրամ ծանրութեամբ: Միայն կոճըր կազմուած է և որոշ, իսկ փորը կը կցուի ներքին երեսը ա՛յն թաղանթներուն ուր աւելի վերջը պիտի ձեւանան պորտն ու իր լարը: Հինգերորդէն վեցերորդ շաբթուն, սաղմը աւելի տոկուն կը դառնայ և իր զանազան մասերը աւելի որոշ ձև կ'առնեն: Այն ատեն մէկուկէս սանթիմետր երկայնութիւն ունի և իբր մէկ կրամ կը կշռէ: Իր գլուխն աւելի կ'աճի քան մարմնին մնացորդը: Երկու պզտիկ սև կէտեր աչքերուն տեղը կը ցուցնեն: Երկու կողերուն վրայ երկու պզտիկ բութ պտուկներ թեւերուն, իսկ աւելի վարը ուրիշ երկու կտոր պտուկներ՝ ստորին անդամներուն աճումը կ'աւետեն: Պորտի նախնական նշան մը կայ, իսկ սիրտը կը ճանչցուի իր բաբախումներով: Այս բոլոր մասերը կ'աճին արագօրէն: Վաթսուն օրէն, անդամները կ'երեւին, իսկ պորտի լարը 8—10 միլիմետր երկայնութիւն ունի: Կը տեսնուին նաև ծննդական գործարաններուն նախնական նշանները. թէև տակաւին դժուար է զանազանել սեռը: Ամբողջ մարմնին երկայնութիւնն է 3—4 սանդիմետր, իսկ ծանրութիւնը՝ 12—20 կրամ: Գլուխը կը կազմէ ամբողջութեան աւելի մէկ երրորդը, աչքերը ցայտուն են, քիթը կը տեսնուի, բերանը բաց է: Երրորդ ամսուան միջոցին, գանկն ու գլխուն զանազան մասերը ամչնէն մեծ աճումը կը ստանան, Վիզը որոշ է, կողերը կը կազմուին և կը ծածկեն սրտին բարախումները: Թեւերուն մասները որոշապէս կը կազմաւորուին և

այն ատեն նախասաղմբ արդէն կը կոչուի իսկ և իսկ սաղմ, ինչպէս բացատրեցինք քիչ անդին:

Չորրորդ ամսուն, ծանրութիւնն է 120—180 կրամ, երկայնութիւնը՝ 8—18 սանդիմեղր. գլուխը դարձեալ կը կազմէ ամբողջութեան մէկ-երրորդը: Արտեւանունքը, ուռնգերը, չրթները որոշապէս կը յայտնուին և այլեւս դիւրին է դանազանել սեռը: Թեթեւ աղուամազ մը կը ծածկէ վարդերանդ մորթը, քանի մը մազեր կ'երեւան, շարժումները կը սկսին: — Հինգերորդ ամսուն, երկայնութիւնն է 20—25 սանթիմէղր, գլուխը՝ հազիւ ամբողջին մէկ քառորդն է. ծանրութիւնը՝ 2—300 կրամ: Ընդհանուր աճումը կը շարունակուի, ինչպէս և բոլոր մասերուն համեմատութիւնը, մանաւանդ սեռային սնդամները: Շարժումները կը զգացուին մօր կողմէ, և արդէն կազմաւորուած սաղմը կրնայ ողջ դուրս հանուիլ:

Վեցերորդ ամսուն, բոլոր մասերը կը կանոնաւորուին. մաշկն ու վերնամաշկը այլեւս կը դանազանուին մորթին մէջ. եղունգները կը կազմուին, մազերը կ'աւելնան: Շարժումները աւելի զգալի և որոշ են և սաղմը բաւական աճած է շնչելու, ճըշալու և նոյն իսկ քանի մը ժամ ապրելու համար, եթէ դուրս հանուի:

Եօթներորդ ամսուն, մարմինն երկայնութիւնն է 30—32 սանթիմէղր. բոլոր մասերը աւելի սոսկուն են, աւելի խոշոր, իսկ չափերը աւելի համեմատական: Անորձիքները փոշտամաշկին մէջ կ'իջնեն, Արտեւանունքները կիսախուփ կը բացուին

և բրային թաղանթը կ'աննետանայ: Մազերը աւելի խոշոր են և նուազ բաց. գլուխը դէպի վար կ'ուղղուի:

Ութերորդ ամսուն, սաղմը կ'աճի աւելի ծաւալով քան երկայնութեամբ, ըլլալով 40—45 սանթիմէղր, մինչ ծանրութիւնն է 2—2ուկէս քիլո: Մորթը, որ շատ կարմիր է, ծածկուած է աղուամազով և ճարպանման ձեւիով մը: Ստորին ծնօտը կը հաւասարի վերի ծնօտին:

Աճումը կը լրանայ մինչև իններորդ ամիսը, և սաղմը պէտք եղած զարգացումը կ'ունենայ դուրսը ապրելու համար: Այն ատեն երկայնութիւնն է 50—60 սանդիմեղր, իսկ ծանրութիւնը՝  $3-3\frac{1}{2}$  քիլո, միջին հաշուով: Բոլորովին առողջ երեխաներ այդ չափէն քիչ մը պակաս կամ աւելի կը կշռեն. բայց  $2-2\frac{1}{2}$  էն շատ վարը՝ սովորաբար ակտուոր երեւոյթ միջն է: Միւս կողմէ,  $4\frac{1}{2}-5\frac{1}{2}$  քիլո ծանրութեամբ երեխաներ ալ անսովոր չեն, իսկ 8—9 քիլոն չափազանց հազուադէպ է:

Արգանդին մէջ սաղմը կորացած և ինքն իր վրայ կծկուած է դէպի յառաջ, գլուխը խոնարհած կուրծքին վրայ, սրունքները սերտօրէն ծռած, զիստերուն վրայ որոնք փակած են փորին: Մունկերը իրարմէ բացուած են, գորշապօրները՝ իրարու մօտեցած և կրթնած յետոյքին: Թեւերը լանջքն ի վար իջնելով, նախաբազուկները խաչաձեւուած և ծռած են կուրծքին առջև, կղակը երկու ձեռքերուն մէջ առնելու ձեւով: Այսպէս ինքն իր վրայ կծկուած, ամբողջութեամբ կը կազմէ ձուածեւ մը:



իրբ 28 սանդիմեղը տրամագծով, գլուխը դէպի վար: — Երկար ատեն կարծիք կար թէ այս դիրքին մէջ սաղմը ոտքի վրայ կեցած է արգանդին մէջ, և միայն եօթներորդ ամսուն գլխիվայր կը դառնայ, ինչպէս է սովորաբար իր դիրքը ծնած ատեն: Բայց որովհետեւ իր գլուխը միշտ ամէնէն ծանրն է, այսօր ամէնքն ալ կ'ընդունին թէ շարունակ դէպի վար ուղղուած է:

×

Յղութենէն անրաժան են շատ մը հիւանդութիւններ. որովհետեւ, կամ ծննդական գործարաններուն մէջ տեղի ունեցած ահագին փոփոխութիւններէն ուրիշ գործարաններ ալ կը խանգարուին, կամ յղի արգանդը ճնշելով յարակից մասերուն վրայ կը վնասէ անոնց. և կամ, արտահոսիչ գործարանները չեն կրնար կատարելապէս պարպել աւելորդութիւնները, և անոնց թոյնը ծնունդ կուտայ զանազան ախտերու:

Ամէնէն առաջ, չափազանց կ'աւելնայ ծննդականին լորձուցքը, գիշեր ցորեկ կաթկթելով, թէ և վնասակար հոտ չունի: Կը պատահի սովորաբար առաջին ամիսներուն. բայց կրնայ շարունակուիլ ամբողջ յղութեան միջոցին: Մեծապէս կը տարբերի թէ՛ տեւողութեամբ և թէ՛ աստիճանով: Լորձուցքին ջուրը կ'աւելնայ, իսկ հաստատուն մասերը կը նուազին. հետեւաբար մարսողութիւնն ալ կը խանգարուի: Յաճախ ծամելու գործողութիւնն ալ ցաւառիթ կը դառնայ: Բայց ծանր հետեւանք մը չունի այս տկարութիւնը, այլ միայն հոգ և սրտնեղութիւն կը պատճառէ:

Թէ բժիշկներուն և թէ հանրութեան մէջ ընդհանրացած համոզում մը կայ թէ յղութիւնը իրապէս պատճառ կ'ըլլայ որ ախտանք փոխի: Ահա թէ ինչու Անգլիոյ մէջ առածի կարգ անցեր է սախօսքը.

— «Իրաքանչիւր երեխայ մէկ ախտայ կ'արժէ»:

Այս խանգարման գլխաւոր պատճառներէն մէկը այն է որ ո՛չ միայն բերանը կը թիթուի, այլ և ախտանքը կը զրկուին իրենց սնունդի մէկ մասէն, անոր կարգ մը բաղադրիչ տարրերը սահմանուած ըլլալով սաղմի սննդառութեան: Այսպիսի պարագաներու մէջ, ախտայ քաշելու են. գործողութիւններ կատարելէ առաջ, պէտք է նկատողութեան առնել գործողութեան հետեւանքները, — որովհետեւ ցնցում մը, ֆիզիքական ցաւը կամ ջլաշին յուզում մը կրնան վիժում յառաջ բերել:

Ստամոքսը կը խանգարուի, և, ինչպէս յիշեցինք արդէն, փսխելու տրամադրութիւնը կ'աւելնայ թէ ծանրութեամբ, թէ տեւողութեամբ և թէ յաճախադիպութեամբ: Փսխում կրնայ պատահիլ ամէն ժամանակ, գիշեր թէ ցորեկ: Փսխելու շարունակական ճիգերէն ցաւեր յառաջ կուգան ստամոքսին մէջ, Այս վիճակը կրնայ շարաթններ, նոյն իսկ ամիսներ տեւել, հակառակ ամէն դարմանի: Յետոյ յառաջ կուգան կազմական ախտանշաններ, — տենդ, կամ սովորականէն վար տաքութիւն, նիհարութիւն, անհանգստութիւն, ուժասպառութիւն, իսկ աւելի ետք՝ գարշահոտ չունչ. լեզուն կը չորնայ. գորշ գոյն մը կ'առնէ. բազկերակը

տկար և յաճախակի դարկ մը կ'ուճենայ, գիշերա-  
յին քրտինք կամ անքնութիւն կը պատահին: Իսկ  
ամէնէն դէշ պարագաներուն մէջ, փախումը կը  
դադրի, և ջղային ախտանշաններ կ'երեւան, —  
զաւանցանք, խոր թմրութիւն ևւն: Հազարէն մէկ  
հազիւ վտանգաւոր հետեւանք կ'ուճենայ:

Այս տկարութեան դարձանները անհամար են.  
բայց ամէնէն կարեւորը բարոյական ոյժն է. յա-  
ճախ բժիշկը կրնայ հեղինակաւոր շեշտով մը յայտ-  
նել հիւանդին թէ փախումը պիտի դադրի այսինչ  
ժամուն, այնինչ դեղէն ետք, կամ կոնայ վախցնել  
ծննդականը, բացատրելով թէ վիժումի վտանգ  
կայ: Յետոյ կարելի է, ուսելիքէ և բժշկելէ բոլոր-  
ովին զրկել մէկ կամ նոյն իսկ երկու ամբողջ օր,  
թեթև բաներ տալ, — բայց այս կէտերը բժշկին  
հետ խորհրդակցաբար պիտի ճշդուին:

Պնդութիւնը խիստ յաճախադէպ է, թէ յղու-  
թենէն առաջ, և թէ անկէ ետք, երբ փորը մեծ-  
ցած բլլալով ծանրապէս կը ճնշէ: Նուազ յաճախա-  
դէպ է փորճարութիւնը:

Աւելի կարեւոր են ծննդամիջական գործա-  
բաններու խանգարումները, որոնց բուն պատճառը  
այն է որ աւելորդ արտադրութիւնները չեն կրնար  
դուրս ելլել պէտք եղածին պէս: Ամէնէն աւելի,  
հարիւրին 90 համեմատութեամբ, երկկամներն են  
որ կը վնասուին և մէզը կամ կը խցուի, կը նուազի  
կամ կը գունափոխուի: — Արդի բժշկութիւնն ալ  
կ'ընդունի թէ լնդհանրապէս յղութեան առաջին  
օրերուն երեւան եղած երկկամային ախտանշանները

աւելի դէշ են քան անոնք որ աւելի ետքը տեղի  
կ'ուճենան. որովհետեւ այն ատեն կինը աւելի եր-  
կար պիտի տառապի մինչև տղաբերք: Արդէն այս  
տկարութիւններն ալ յաճախ ինքնին կը դադրին  
ծննդաբերութեան հետ: Դարձանի համար, կարե-  
ւորն այն է որ արտահանումները դիւրացուին,  
համաձայն բժիշկին յանձնարարութեանց:

Շախարավիզութիւնն ալ յաճախադէպ է յղի  
կիններուն մէջ, և կրնայ դադրիլ աղաբերքէն կամ  
կաթնատուութենէն անմիջապէս ետք: Դարձեալ,  
չաքարախտի և թակայ կլիներ կրնան յղի բլլալ և  
յղութիւնը կը շարունակուի մինչև ծննդաբերու-  
թիւն, առանց ծանր արգելքի:

Առանց յիշելու այն բազմազան փոփոխումներն  
ու խանգարումները որոնց կ'ենթարկուի արգանդը  
յղութեան իսկ բերումով, — բանք անցողակի թէ՛  
յղութեան միջոցին սպիտակահանութիւնն ալ յա-  
ճախադէպ է. այսինքն շարունակ հոյզի հոսում տե-  
ղի կ'ուճենայ բունոյի անցքէն, գրգռելով զայն և  
մորմաք, քերուրտուք պատճառելով: Դարձեալ,  
յղութեան միջոցին բունոյը տարրեր պատճառնե-  
րով ալ ստատկապէս կը քերուրտի. կինը անդի-  
մադրելի փափաք մը կը զգայ շփելու այդ մասերը,  
երբեմն նոյն իսկ քունի միջոցին, ինչ որ պատճառ  
կ'ըլլայ սկրտուքներու, քոսի, ուռոյցքներու ևւն:  
Բերուրտուքը կրնայ տարածուիլ մինչև զիտերը,  
փորը և մարմինն ուրիշ մասերը: Ծանր պարագա-  
ներու մէջ, ցաւերը, անքնութիւնը և սրանհղու-  
թիւնը կրնան մենամոլութեան առաջնորդել:

Յղի արգանդը կ'ազդէ նաև սրտի բաբախումներուն վրայ, կա՛մ առաջին ամիսներուն, կամ աւելի ետք և ասկէ յաճախադէպ կը դառնան նաև նուազումները, որոնք օրը քանի մը անգամ կրնան պատահիլ:

Յղութեան ասին արիւնին կրամ բուն փոփոխութիւնները չեն ճշդուած տակաւին: Բայց հաստատուած է որ յղութիւնը ընդհանրապէս դէպի սակաւարիւնութիւն կը տանի, որ երբեմն, սասականալով դարման կը պահանջէ: Մեծամասնաբար վերջին ամիսներուն է որ տեղի կ'ունենայ այս երեւոյթը, երբ արիւնին կարմիր գնտիկները և սպիտը կը նուազին: Եթէ յղութիւնէն առաջ կայ սակաւարիւնութիւն, վիճակը ծանր է, և կրնայ պատճառել վիժում կամ կանխահաս երկունք, իսկ սաղմը կը միւսնի ծնունդէն առաջ, ապրելու անհրաժեշտ տարրերէն զրկուած լլլալով: Ծանրագոյն պարագաներու մէջ, տեղի կ'ունենան արիւնահոսութիւններ քիթէն, ստամոքսէն և ուրիշ գործարաններէ:

Իսկ արիւնաշատութիւնը հազուադէպ է յղութեան միջոցին, և ընդհանրապէս նախադոյ վիճակ մըն է, այսինքն յղութիւնէն առաջ եղած սկարութիւն մը: Բազմաթիւ շատարիւն կլինի նախապէս ալ առատահոս դաշտան ունեցած են: Այս պարագային ալ վիժումի կամ կանխահաս երկունքի վառնգներ կան, եթէ դարման չտարուի:

Հազր եւ դժուարաշնչութիւնը կը պատահին յղութեան առաջին ամիսներուն, իբրև ջղային

սկարութիւններ կամ հետեւանք ուրիշ խանգարումներու: Իսկ վերջին ամիսներուն յառաջ կուգան իբրև հետեւանք խոչորցած արգանդին, որ ճնշելով ստոծանին, արգելք կ'լլայ խոր շնչառութեան: Այս երեւոյթը շատ աչքի կը գարնէ երբ փորը չափազանց մեծ է, — օրինակ՝ երկուորեակներ եղած ասին:

Ջղային սկարութիւնները ամէնէն աւելի յաճախադէպ են երրորդէն եօթներորդ ամիսներուն: Այս երեւոյթին զլխաւոր դարմանն այն է որ հիւանդը հանդիստ քուն վայելէ նոյն իսկ դեղերու միջոցաւ, կատարէ չափաւոր մարզանք, ունենայ զուարթ շրջանակ, չէնչող ընկերակցութիւն, տեսարանի փոփոխութիւններ, կանոնաւոր մարտոցութիւն:

Նեղացուցիչ, ջղադրգիւ խանգարում մըն է նաև մորթի բնդիանուր ֆերուրտուր, երբ չկայ նոյն իսկ ո՛ր և է արտաքին սկրտուք կամ բորբոքում: Չափազանց ջղային կլինի մէջ այս վիճակը կրնայ յառաջ բերել նոյն իսկ վիժում: Թէև դժուարաւ բուժելի է, բայց մեծամասնաբար կը վերջանայ սղաբերքին հետ:

×

«Յղութիւնը փոթորկալից ծով մըն է որուն վրայ լման ինն ամիս կը լողան երեխան ու մայրը», — ըսած է գիտնական մը, Հետեւաբար, ո՛չ միայն ծննդականը ինք, այլ և իր շրջապատը, իր ամուսինը, ընտանիքին անդամները պարտին չա-

փաղանց զգոյշ, արթուն մնալ, առիթ չտալ աւելորդ սրանեղութիւններու, չդառնայնել անոր կեանքը, որ մարտիրոսի կեանք մըն է ինքնին: Յղի կինը այնքան արժանի է յարգանքի և ուշադրութեան, որ օրէնքներն իսկ կը հրամայեն մահապարտ ծննդականի մը պատիժը գործադրել տղաբերքէն ետ:

Մենք արդէն տուինք տարրական ծանօթութիւններ՝ ծննդականի առողջապահութեան և զգուշութիւններու մասին: Անոնց կը կցենք կարգ մը ընդհանուր մանրամասնութիւններ ալ, որոնք երբեք աւելորդ չեն, քանի որ ուղղակի կապ ունին երկու անհատներու՝ մօր և երեխային, կամ ուրիշ խօսքով՝ ամբողջ սերունդներու առողջութեան հետ:

Փորձուած է որ այնտեղ ուր կիները իրենց յղութեան շրջանը կ'անցընեն հեռու խոնար, ցած, վատառողջ տեղերէ, — կը ծնին քաջողջ ուշիմ զաւակներ: Զօրաւ որ հոտերը կրնան վիժում յառաջ բերել: Լոզանքներու և լուսցումներու ամէնէն յարմար ժամանակներն յղութեան սկիզբը և վախճանը: Իհնրորդ ամսուան միջոցին, երկու կամ երեք օրը անգամ մը 15—20 վայրկեան գաղջ ջուրով լողանքը կը կակղացնէ ծննդական գործարանները, զանոնք պատրաստելով տղաբերքի համար անհրաժեշտ ընդլայնումին: Ոտքի լողանքները — պաղ ըլլան թէ տաք — վստակար են, և միայն հարկը պահանջած ատեն պէտք է հարցնել բժիշկին: Բնական պէտքերը պիտի գոհացուին, անմիջապէս որ զգացուին: Մանաւանդ մէկը երբեք պետք չէ

պահուի անհոգութեամբ կամ կենցաղագիտական նկատումներով. որովհետեւ միզային փամփուշտը երբ երկար ատեն լեցուն մնայ, կրնայ չրջել արգանդը և աւելի եաքը տեղի տալ անընդհատ միզելու պէտքի մը:

Ամուսինը ո՛չ միայն հոգ պիտի տանի որ յղի կինը ո՛ր և է յուզում, երկիւղ, խելացնոր ուրախութիւններ, մտահոգութիւններ, անհամբերութիւններ և բարկութեան նուազներ չունենայ, այլև, անոր հետ պիտի խօսի հաճելի նիւթերու վրայ, քաղցր յիշատակներ արթնցնելով և փայլուն հեռանկարներ պարզելով: Պիտի զգուշանայ փխուր պատահութիւններէ, գոյժերէ, պտոյտի ատեն՝ հիւանդանոցներէ, գերեզմանատուներէ, յուղարկաւորութիւններէ, եղերական ակաբաններէ, կուրաներէ, հաշմանդամներէ կամ գարշելի հիւանդութեանց ենթակայ թշուառներէ: Պէտք չէ կնոջ միտքը ձգել մանաւանդ տաժանելի ծննդաբերութեան պատմութիւններ:

Դիակ տուինք արդէն թէ յղի կնոջ հետ զուգաւորութիւնը՝ բնախօսական այլանդակութիւն մըն է: Բայց որովհետեւ ոչ այլը, և ոչ ալ յաճախ կինը կը համակերպին բնութեան արգելքին, բժիշկները պատուիրած են զգուշանալ գոնէ առաջին և վերջին երեք ամիսներու միջոցին: Նաևոր գիտնականներ ուղղակի յղութեան միջոցին կատարուած զուգաւորութեան կը վերագրեն ինքնաբեր վիժումներու մեծ մասը: Հաշիւ եղած է թէ հարիւր բողբը հաղիւ մէկ ըման յղութիւն

կ'ունենան տարին : Իսկ եթէ ժուժկալութիւնը բացարձակապէս անկարելի է, և երկու ամուսինները մերձաւորութեան ձեւեր կը մտածեն, վիժումի տեղի չտալու հոգն ալ ունենալով, — լուսագոյն է բժիշկին խորհուրդ հարչել :

Հին բմբունումներու բերումով, անհրաժեշտ նկատուած է իւրաքանչիւր յղի կին արիւնստութեան ենթարկել երրորդէն չորրորդ ամսուն և յետոյ եօթներորդ ամսուն : Այսօր ամէն երկրի մէջ ընդունուած է թէ այս սովորութիւնը աւելի շատ անպատեհութիւններ ունի քան առաւելութիւններ : որովհետեւ, չափազանց կը տկարացնէ կինը, յաջորդ ամիսներուն համար, որ ասան ծննդկանները այնքան պէտք ունին իրենց բոլոր ուժին, սաղմը իր լրութեան հասցնելու համար : Այդ արհեստական միջոցներով յառաջ եկած սակաւարիւնութիւնը վիժումի ընդունակ կը դարձնէ կիները և կը տկարացնէ երեխային ոյժն ու կենսունակութիւնը :

Ծնելիք երեխային սեռը առաջուրնէ գուշակելու համար շատ ջանքեր են եղած, բայց ազարդիւն : Հին դարերու մէջ զիմում կ'ըլլար հեթանոս աստուածներուն, աստղերուն, գուշակներուն, կախարդներուն, — ի հարկէ միշտ յուսախարութեան մատնուելու համար : Հին հեղինակները, հիմնուելով այն սկզբունքին վրայ թէ արու սաղմը աւելի արագ կ'աճի քան էգը, կը կարծէին թէ կինը աւելի շուտ կը զգայ մանչու մը գործօն շարժումները : Վիեննացի բժիշկ մը փորձեց ասպացուցանել թէ երբ բազկերակի զարկը մէկ վայրկեանի մէջ, 40էն վար է,

ծնելիքը մանչ կ'ըլլայ, իսկ անկէ վերը՝ աղջիկ : Բայց այս փորձն ալ խաբուսիկ է :

Յաճախ խնդիր եղած է թէ կին մը կրնայ յղի ըլլալ առանց գիտնալու : Քանի որ արգասաւորումը կրաւորական է, անշուշտ ապուշ, միամիտ կամ թմրեցուցիչ դեղի մը ենթարկուած աղջիկը կրնայ չզգալ իր յղութիւնը : Այլապէս, այն որ առաջին անգամ զաւակ պիտի ունենայ, կրնայ իր յղութիւնը անգիտանալ կամ կասկածիլ առաջին երեք ամիսներու միջոցին, բայց ո՛չ անկէ անդին :

Բազմածնութեան երեւոյթն ալ, որ շատ բացառիկ է, թերթերու մէջ յայտարարուելու աստիճան, տակաւին անլոյծ մնացած խնդիր մըն է, թէեւ երկուրեակներու ծնունդը սովորական կը թուի : Աւելի հազուադէպ և անբացատրելի է, դարձեալ, երկրորդ սաղմի մը բեղմնաւորումը : որովհետեւ, բազմածնութեան մէջ, գոնէ նկատուելութեան կ'առնեն թէ ձուիկներուն արգասաւորումը միաժամանակ եղած է : Երբ արգանդը արդէն իր յարակից մասերով բռնուած է արտադրութեամբ մը, ինչպէս կրնայ ճամբայ տալ սերմնակենդաններուն : Շատ շատ, պիտի ընդունինք թէ կրկնակ արգանդ մը կայ, ինչպէս կարգ մը անասուններու մէջ : այլապէս, անկարելի է այդ : Եթէ պատահած են որ կիներ երկրորդ երեխայ մը ծնին առաջինէն քանի մը շաբաթ կամ քանի մը ամիս ետք, կը նշանակէ թէ կրկնակ յղութիւն մը տեղի ունեցեր է որուն արտադրութիւնները անհաւասար կերպով աճեր և տարբեր ժամանակներու մէջ ծներ

են, մանաւանդ որ այդպիսի ծնունդները հաղիւկապրին: Դիտուած է որ Ամերիկայի հնգիկ կամ սեւամորթ կիները յաճախ մէկը սե, մէկը սպիտակ երկուորեակներ կը ծնին: Այս երեւոյթին պատճառն այն է որ, միեւնոյն օրը կամ կարճ ընդհատումով, երկու յաջորդական արգասաւորումներ կատարուած են երկու սարբեր տղամարդերու կողմէ:

Տօքթ. Գինկ բացատրելով բազմածնութեան երեւոյթները, կ'ըսէ թէ՛ երկուորեակներ կը պատահին իբր 75 ծնունդին մէջ մէկ սնգամ, եռեակներ՝ չինգ հազարին մէկ համեմատութեամբ, իսկ քառեակ կամ հնգեակ ծնունդներ չափազանց հազւագէտ են, կամ հրէշտոյին: Բազմածին յղութեան պատճառն այն է որ մէկ կամ աւելի ձուիկներ կը մտնեն արգանդը, և կ'արգասաւորուին միեւնոյն ժամանակ: Մէկ ձուարանէն մէկ ձուիկ կրնայ ելլի, կամ երկու հատ: Դարձեալ, մէկ ձուիկը կըրնայ երկու սերմ պարունակել, ինչպէս հաւու կրկնակ դեղնուցով հաւկիթ մը: Ընդհանրապէս, երկուորեակներու մէջ, իւրաքանչիւր ձուիկ իր յարակից թաղանթներն ունի, որոնք իրարու հետ կը շփուին ածման միջոցին, բայց իրարու չեն միանար և անջատ կը մնան մինչեւ ծնունդ: Այս պարագային փլասէնթաներն ալ անջատ են:

Երկուորեակներու մէջ սաղմորուն ածումը քիչ անդամ ճիշդ հաւասար կ'ըլլայ. և երբեմն տարբերութիւնը շատ մեծ է. մէկ երեխան բոլորովին աճած կ'ըլլայ, մինչ միւսը շատ պզտիկ մնացած:

Մէկ սաղմը կրնայ կանխահասօրէն մեռնիլ և դուրս նետուիլ, մինչ միւսը կը մնայ մինչեւ իր լրումը. և կամ մեռածն ալ կրնայ մնայ արգանդին մէջ. և դուրս ելլել ողջին հետ, տղաբերքի ատեն:

Բազմածնութիւնները ընդհանրապէս տեղի կ'ունենան կանոնակաւ շրջանէն քիչ մը առաջ, որովհետեւ կանխահասութեան աստիճանը կ'աւելնայ սաղմորու թիւին հետ: Երկուորեակներու ծնունդին ատեն հաղիւ քանի մը շաբաթ մնացած կրնայ ըլլալ սովորականին շրջանին. երեքը-չորսը աւելի յաճախ վիժումներ են:



### 3. ԵՐԿՈՒՆՔ ԵՒ ՏՂԱՔԵՐՓ

Յղութենէն տասը լուսնական ամիս (280 օր) կամ ինը սովորական ամիս ետքն է որ տեղի կ'ունենան երկունքը և ծննդաբերութիւնը՝ իրերու բնական կարգով :

Ողջ երեխաներ կրնան ծնիլ աւելի կանուխ, կամ, բացառիկ պարագաներու մէջ, յղութիւնը կրնայ տեւել մինչև 11 կամ նոյն իսկ 12 ամիս : Այս վերջին պարագաներուն հաւանականութիւնը կարեւոր է բժշկական-իրաւաբանական տեսակէտով :

Որոշ պարագայի մը մէջ, «ազատում» ի կամ բուն տղաբերքի թուականը ճշդելու համար շատ մը մեթոտներ կան : Լաւագոյնն է Նակէլի դրութիւնը, — Ա. կը ճշդէք այն օրը ուր դադրեցաւ դաշտանը, Բ. ետ կ'երթաք երեք օրացոյցի ամիս, Գ. եօթը օր կ'աւելցնէք արդիւնքին վրայ :

Օրինակի համար, ըսենք թէ դաշտանը դադրեցաւ Օգոստոս 1ին. երեք ամիս ետ երթալով՝ կ'ունենանք Մայիս 1. եօթն օր աւելցնելով՝ կ'ըլլայ Մայիս 8, — որ է ծննդաբերութեան հաւանական օրը : Սովորութիւն եղած է ինը ամիս դէպի յառաջ հաշուել և եօթն օր աւելցնել. բայց առաջին ձեւը աւելի դիւրին է. Բոլորովին ճիշդ ըլլալու համար, աւելցուելիք օրերուն թիւը երբեմն պիտի տարբերի, և բժիշկները յատուկ աղիւսակ ունին ասոր համար, պատրաստուած՝ Շուլցելի կողմէ : Այսպէս, եթէ երեք ամիս դէպի ետ հաշուելով հասնինք Մարտ, Մայիս, Յունիս, Յուլիս, Օգոս-

տոս, Հոկտեմբեր կամ Նոյեմբեր ամիսներուն, բարդուելիք օրերուն թիւն է եօթը. եթէ Ապրիլ կամ Սեպտեմբեր ըլլայ՝ վեց, եթէ Դեկտեմբեր կամ Յունվար ըլլայ՝ հինգ, եթէ Փետրուար ըլլայ՝ չորս : Եթէ յղութիւնը պատահի նահանջ տարուան մը փետրուարին, նորէն տարբերութիւն կայ :

Երբ կարելի չըլլար ստուգել վերջին դաշտանի թուականը, կամ կին մը յլի կը դառնայ առանց դաշտան ունեցած ըլլալու, ինչպէս կը պատահի երկարատե կաթնատուութեան միջոցին եւն. , տղաբերքի թուականը միայն մօտաւորապէս կրնայ որոշուիլ քննելով արգանդին չափը և փորին մէջ անոր յատակին ստացած բարձրութիւնը : Այդ կերպով կը հասկցուի յղութեան արդէն անցած ժամանակը և լրումի համար անցնելիք շաբաթներու թիւը :

×

Բնական, կանոնաւոր պարագաներու մէջ, երկունքի տեւողութիւնն է իբր տասը ժամ, կրնայ վերջանալ մէկ-երկու ժամէն, կամ երկսրի մինչև քսանըչորս ժամ և աւելի, ստանց ծանր հետեւանքի :

Երբ բուն ցաւերն սկսին, այն մկանները որոնք յղութեան ամբողջ ընթացքին փակ պահած էին արգանդի ներքին բերանը, կը թուլան. նախ ներքին բերանը կը բացուի և յետոյ արտաքինը, — կամ, ուրիշ բացատրութեամբ, նախ դանշին ներքին և յետոյ արտաքին դուռը կը բացուի, «որպէս զի անցի Օգոստափառ Երեխան» :

Երկունքը սկսած ատեն, ցաւերը կարճ են

տեւոզութեամբ (երեսուն երկվայրկեան կամ աւելի պակաս), տկար՝ աստիճանով, իսկ ընդհատման միջոցները երկար են, — կէս ժամ կամ աւելի: Այդ միջոցին փորի մկաններու կծկում յատուկ ճիգեր չկան: Մինչ երկունքը յառաջ կ'երթայ իրերու բնական կարգով, ցաւերը աստիճանաբար կ'աւելնան տեւոզութեամբ, զօրութեամբ և մասնաւոր ճիգերով, իսկ ընդհատման անջրպետը աւելի կը կարճնայ մինչև տղաբերք: Ամէնէն երկար ցաւերը չեն անցնիր հարիւր երկվայրկեանը:

Երբ անհամեմատութիւն չկայ երեխայի գլխուն և մօր կոնքին միջև, և ամէն բան կատարելապէս բնական է ու կանոնաւոր, երկու խոշոր սեղմիչ դուռներ կան որ աստիճան մը կը խափանեն երեխային անցքը և որոնց դիմադրութեան պէտք է յաղթել, ազատում ստանալու համար, — առաջին՝ արգանդին բերանը, երկրորդ՝ խոռոճային բերանը:

Դիմադրող արգանդի բերանը ընդլայնելու և բանալու համար, բնութիւնը սահմանած է «Չուրի տոպրակ»ը, — կակուղ, պղտիկ և առածիգ, որ ցաւերու ատեն կը ճնշուի ամէն կողմերէ և՛ մղուելով շատ աւելի դիւրութեամբ կ'ընդլայնէ արգանդին բերանը քան սաղմին ո՛ր և է մասը. հետեւաբար, խիստ կարեւոր է այդ տոպրակը չպատուել երկունքի առաջին շրջանին: Չուրի տոպրակը միեւնոյն ատեն կը պաշտպանէ սաղմին մարմինը, փլասէնթան ու սրբաթի լարը՝ արգանդի կողերուն ուղղակի ճնշումէն:

Երկունքը ունի երեք շրջան. —

Առաջինը կը սխիտ ցաւերուն հետ և կը վերջանայ երբ արգանդին բերանը բայտրովին լայնցած է: Ծննդեկանը գլխուտորագէս կունակէն ցաւեր կը զգայ: Կրնայ քայլել, եթէ արգիլած չեն: Անհանգիստ է, ընկճուած, թերեւս ջղագրգիւ որ՝ գործողութիւնը այդքան դանդաղ կը կատարուի: Երբ ընդլայնումը կը յառաջանայ. կոնակի ցաւերը կը սաստկանան, աւելի յառաջանալով, սրտի խաւնուք և փսխում տեղի կ'ունենան, հաւանաբար օգնելով ընդլայնումին, քանի որ թուլացում կը պատճառեն: Երբ ընդլայնումը լրանալու մօտ է, թերեւս սարսուռներ, կամ նոյն իսկ ծանր ցնցումներ տեղի կ'ունենան, առանց տենդի: Արգանդի բերանին լիակատար ընդլայնումը սովորաբար կը ծանուցուի Չուրի տոպրակին պատառումով և հեղանիւթի լսելի ցայտումով մը: Խոռոճային քննած ատեն, բժիշկները կամ դայեակները կը հաստատեն միտջն յառաջացող ընդլայնումը և Չուրի տոպրակին յառաջ մղումը: Երեխային ներկայացող մասը — որ հազարին 963 համեմատութեամբ գլուխն է — կրնայ զգայելի դեռ չպատուած տոպրակով:

Այս առաջին շրջանի տեւոզութիւնը կը տարբերի համաձայն պարագաներուն. բայց զրեթէ միշտ աւելի երկար է քան միւս երկու շրջանները միացած: Հաստատուած իրողութիւն մըն է որ շատ աւելի երկար ժամանակ պէտք է որպէս զի արգանդի բերանը մէկ մէճիտի ծաւալով լայննայ, քան երկունքի յաջորդ բոլոր գործողութիւններուն



համար, հաւաքաչար: Առաջին չրջանը երկար կը տեւէ մանտուանդ անդրանիկ ծննդկաններուն համար, և ա՛լ աւելի՛ ա՛յն կիներուն համար որոնք երեսուն տարեկան են և առաջին անգամ զաւակ պիտի ունենան:

Երբեմն, ծննդաբերութիւնը կը յայտնուի յանկարծակի, առանց որ և է ազդարար նշանի: Իսկ սովորաբար, 8—15 օր առաջ, (անդրանիկ ծննդականներուն համար՝ երեք չորս շաբաթ առաջ) արգանդը, որ մինչև ստամոքսը կը բարձրանար, զգալապէս կ'իջնէ և հետզհետէ կը լայննայ: Ճընշումը կը նուազի, ստամոքսը աւելի դիւրութեամբ և աւելի շուտ կը կատարէ իր մարսողութիւնը:

Ծննդական գործարաններու արտանոսումները կ'արագանան և կ'աւելնան. կոնքին յօդերը կը թուլնան, և արգանդը, իբրև պատրաստութիւն գերագոյն ճիգի մը, խուլ կերպով կը կծկուի և տեղի կուտայ ցաւագին խիթերու:

Արգանդի այս կծկումը բոլորովին ակամայ է, մինչդեռ. որովայնի մկաններուն կծկումը կրնայ յառաջ գալ և՛ ճիգերով:


Երկրորդ շրջանին սասակապէս կ'աւելնան ցաւերը՝ թէ՛ յաճախումով, թէ՛ գորութեամբ և թէ՛ տեւողութեամբ: Բայց բժիշկները կը հաւաստեն թէ՛ այս շրջանը աւելի համբերութեամբ կը կրեն կիները, այն գիտակցութեամբ թէ՛ գործողութիւնը արագօրէն կը կատարուի և շուտով պիտի վերջանայ: Հիմա կը զգացուի որ երեխային գլուխը դէպի վար կ'իջնէ և կը յառաջանայ արգանդի բե-

րանն ի վար: Վերջը-վերջը գլուխը արդանդի բերանէն կը սահի խոռոճային, մաս մը մնացորդ հեղուկի հետ: Տառապանքը կրնայ դադրիլ վայրկեան մը և կիներ կրնայ բացազանչիլ:

— Բան մը կու գայ կոր...

Գլուխը հիմա կը ճնշէ խոռոճայի զգայուն մասերուն վրայ, և ցաւերը այ աւելի երկար են, սաստիկ, յաճախադէպ և վանողական: Երեխային խորշումած և ուռած գանկը յաջողապէս կը մօտենայ, կը դպչի և կը սկսի ընդլայնել բունոցն ու սրբանակը (բունոցին և սրբանին մէջտեղի մասը): Սրբանը կ'ընդլայնի, աղտեղութիւն դուրս կը մղուի, սրբանակը հետզհետէ աւելի կը լայննայ, մինչև որ յառաջակողմնան եղբրքը թուլթի մը բարակութեան կը հասնի. և վերջապէս, ցաւի ծայրագոյն նոպայի մը մէջ, գլուխը կ'անցնի երկրորդ դուռը, խոռոճային բերանը, և արդէն ծնած է: Վայրկեան մը հանգիստ կ'անցնի, և յետոյ, մէկ կամ երկու ցաւերով, երեխային մարմինը դուրս կը նետուի և այսպէս կը վերջանայ երկունքի երկրորդ շրջանը:

Երկրորդ շրջանին տեւողութիւնը մեծապէս կապ ունի սրբանակին ընդլայնուելու կարողութեան հետ: Բնական վիճակի մը մէջ, երբ միւս ամէն բաներն ալ կանոնաւոր են՝ կակուղ, խիտ, առաձիգ սրբանակ մը, երբ կայ հոյզի առատ հոսում, և երբ մանաւանդ կիներ երիտասարդ է և մէկէ աւելի անգամներ ծննդագործած, աւելի շուտ կ'ընդլայնի քան հակառակ պարագայի մը մէջ:



Նկար 6.— Յգուրեան վերջին ասիւնը

(Արգանքը բալցած)

Երեխային զլուխը մուրած տեղադրուած է կոնքին մէջ:—  
Թիւ 1. Սաղմ-երեխան.— 2. Պորի լարը.— 3. Արգանդին խո-  
ռոշը.— 4. Փլաստեթո.— 5. Արգանդի կողը.— 6. կոնքի

նսկորները:

(Բացատրութիւնները կ'սրդ սլ ներկայ պր.սկին մ.ջ)

Երրորդ շրջանն այն է ուր երեխան բոլորովին  
դուրս կը նետուի: Այդ պարագային փլաստեթան  
յաճախ կը բաժնուի արգանդի կողէն և թուլիկ կը  
մնայ արգանդի կծկուած խոռոչին մէջ: Փորը կար-  
ծես կարծր, անխանսն չունտ մը դարձեր է: Բա-  
ուորդ կամ կէս ժամուան դադարէ մը յետոյ, նո-  
րէն թեթե ցաւեր կը սկսին, փլաստեթան կը ծայ-  
լուի ուղղանայեաց և ծայրն ի վար կ'իջնէ խոռոճ-  
պին, ուրկէ վերջնապէս դուրս կը նետուի ուրիշ  
թեթե ցաւերով, մաս մը արիւն, թաղանթներ  
են. ալ քաշկ տանելով իրեն հետ: Յետոյ փորը  
կը կծկուի կը դառնայ որոշապէս կլոր գնտաձև մը,  
կարծր դանդուած մը, փակելով արգանդի արեան  
անոթները և արգիլելով արիւնահոսութիւնը: Այս-  
պէս կը վերջանայ երրորդ շրջանը:

Յաւի արտայայտութիւնները, աղաղակները  
կը տարբերին համաձայն երկուեքի զանազան շր-  
ջաններուն: Առաջին շրջանի բուն սկզբնաւորու-  
թեան ատեն, կինը հանդարտ նստած կամ թերեւս  
սենտակին մէջ քայելու վրայ ըլլալով, կանգ կ'առնէ  
քանի մը վայրկեան, յոնքերը կը պուտէ, ձեռքը  
փորին կամ կոնակին վրայ կը դնէ, պահ մը կը  
բռնէ շունչը, և յետոյ, հառաչանքով մը (ցան  
անցած ըլլալով) կը շարունակէ քաշիկ և խօտիլ ինչ-  
պէս քիչ առաջ:


Քիչ ատքը, երբ տառապանքը բաւական զո-  
րաւոր կ'ըլլայ լսելի մտունչ մը կամ աղաղակ մը  
պոռթկայնելու, — արգանդի բերանին ընդլայնումը  
սկսած պահուն, — ցաւի արտայայտութիւնը սուր

«Մ'սերխմ Զրոյցներ» — Փղօճացի

բարձր աստիճանի մը կը հասնի: Որքան ատեն որ այսպիսի աղաղակ մը կը շարունակուի, ընդհանրապէս գործողութիւնը շատ դանդաղ կը կատարուի: Աւելի ետքը և աւելի ներգործակիտն ցաւերու միջոցին, մասնաւորապէս երկունքի վերջերը, աղաղակը խոր պաւս մըն է, կամ կոկորդային: Բժիշկներու յայտարարութեան համաձայն, ամէնէն արդիւնաւոր՝ ներգործակիտն ցաւերը տնոնք են ուր իրապէս ձայն չի հանուիր. այլ կինը աչքերը փակած, չրթները ամրապէս սեղմած, դէմքի բնդհանուր մկանները կծկած, պարզապէս կը բռնէ շունչը, (մինչև որ դէմքը կը կայտանայ) և կը աքնի, մինչև որ ցաւերը կ'անցնին: Յետոյ, իր ձայնը վերստանալով, հապճեպ և սահուն արտայայտութեամբ կ'աղաղակէ իր տագնապին սասակութիւնը, օգնութիւն կը խնդրէ, կը ձուայ թէ ա՛լ չի կրնար դիմանալ եւն:

Յաի առաջին պահերուն ծննդկանին ձեռքերը սաստկապէս սեղմուած կ'ըլլան, իսկ թեկերը ուժգնօրէն ծռած, ձկած: Աւելի ետքը, և շարունակաբար մինչև աղաբերք, կինը զօրաւոր արամաղրութիւն մը կ'ունենայ բռնելու, քաշելու ինչ աւարկայ որ կը հանդիպի, — սովորաբար՝ անկողնի մասեր, կամ հիւանդապահին, բարեկամի մը ձեռքը, իսկ ոտքերը շարունակ դէպի վար կը հրեն, հաստատուն յենարան մը վնտուելով:

Իւրաքանչիւր աղաբերքի կը յաջորդէ չափաւոր յոգնութիւն մը, ուժասպառութիւն և ջղային ցնցում, որոնք աւելի կը չեւտուին երկարատե և



Նկար 7.— Ծնունդ.— Երեխային գլուխը դուրս կը մղուի գորաւոր կծկումով մը

տանջալից երկունքներու մէջ : Սովորական պարագաներու մէջ, հիւանդին վրայ մեծապէս կ'ազդեն հանգիստը և զաւակ մը ծնած ըլլալու երանութիւնը, մանաւանդ որ գլուխէ թէ ալ տազնապը վերջացած է :

Ծննդաբերութենէն ետք բազմերակի զարկը կ'իջնէ 70ի, 60ի, 50ի, նոյն իսկ աւելի վար : Յամբ զարկ մը լաւ նշան է, արագը՝ ոչ : Եթէ զարկի նուազում տեղի չունենայ, արիւնահոսութեան վտանգ կայ, սովորաբար մէկ վայրկեանի մէջ 100 կամ աւելի զարկ կրնայ արիւնահոսութիւն պատճառել, ուստի անհրաժեշտ է չնուայնել բժիշկը, կամ եթէ բժիշկ չկայ, կանչել անմիջապէս :

Ներքին գործարաններու արիւնին և մերթի արիւնին տաքութեան տարբերութեան հետեւանքով, որ տեղի կ'ունենայ երեսայի ծնունդէն անմիջապէս ետք, փլատէնթային կամ «բնկեր»ին արտաքսումէն առաջ, քրտինքի շոգիացումով, մկանային ճիգերու դադարումով ևւն. — ծննդկանը կրնայ բռնուիլ սարսուռներով, դողով, ալոսաներու կափկափումով : Այս բոլորը կ'անցնին քանի մը վայրկեանէն, առանց ծանր հետեւանքի, երբ տաք հազուսաներ գործածուին, և թերեւս գաւաթ մըն ալ գինի արուի : Ծննդաբերութենէն անմիջապէս ետք, կինը պէտք է փոխադրել յատկապէս պատրաստուած անկողինը, ուր պէտք է հանգիստ ձգուի կռնակի վրայ, գլուխը բաւական ցած, մանաւանդ եթէ արիւնահոսութիւն կայ : Փոխադրու-

թիւնը պէտք է ըլլայ մեծ զգուշութեամբ, առանց բուռն շարժումներու, գլուխը միշտ ցած : Եթէ երկունքը երկար տևած է, եթէ տղաբերքը բնական պայմաններու մէջ չէ կատարուած, լաւ է որ քանի մը ժամ յետաձգուի տեղափոխութիւնը : Բունոցը պէտք է պատասխի հակահեխական բամբակով : Հիւանդին հսկողը առաջին քանի մը ժամերու միջոցին ուրիշ գործ չունի ըլլայ միայն առանց անհրաժեշտ նայիլ բազկերակր, սրգանդին բարձրութիւնը, և բունոցին բամբակը, հասկնալու համար թէ արիւնահոսութիւն կայ թէ ոչ :

Տգարերքէն ետք արգանդը ամբողջա կը կուելով, իր արիւնն ալ մեծապէս կը նուազի և գործարանը արագ օրէն կը քաչուի, ներս կը դառնայ : Այդ միջոցին, նորագոտտ արգանդը — որ անհամեմատ թեթեւցած է զբեթէ կոյսի մը արգանդին չափ — կը գանուի ճիշդ պորտին ու ցալոսկրին մէջտեղը : Մէկ չարսթէն արգանդը կը կորսնցնէ իր ծանրութեան մէկ երրորդը և իրը տասը օրէն յատակը կոնքին խորերը կը մխուի ու այլևս կարելի չէ իր գոյութիւնն զգալ փոքր շոշափելով :

Տգարերքէն ետք, և անոր հետեւանքներու ամբողջ տեսողութեան միջոցին, բունոցէն տեղի կ'ունենայ բաւական առատ հոսում մը, որ կը կոչուի ճնկաղաղալուսն (lochies), և կը բխի արգանդէն : Առաջին օրերու միջոցին, այս հեղուկը պարզապէս արիւն է, քամուած՝ փլատէնթային : Վեցերորդ կամ եօթներորդ օրերուն, արիւնի գոյնը կ'անհետանայ և շճային կը դառնայ : Ութե-

րորդ օրէն մինչև զազարումը — որ տե ի կ'ունենայ երկու, երեք, նոյն իսկ չորս շաբաթէն, հոսումը կը նօսրանայ և ճերմութեան գոյն մը կը ստանայ: Պէտք է մասնաւոր ուշադրութիւն ընել ծննդազաշտանի հոսին, որ անսխորժ է ինչպէս սովորական զաշտանի հոսը, բայց եթէ թեթեւ վարակում մը տեղի ունենայ, կը գտանայ գորշելի:

Ծննդաբերութենէն յետոյ մայրը կը զգայ տեսակ մը ցաւեր, խոցտուկներ որոնք հետեւանք են արգանդի կծկումներուն և կը տեսնեն երկու կամ երեք օր, — հազուադէպ պարագաներու մէջ՝ չորս օր: Այս ցաւերը, որոնցմէ ընդհանրապէս ազատ են առաջին անգամ զաւակ բերողները, կը վերակախն իւրաքանչիւր քսան կամ երեսուն վարկիանը անգամ մը և կը խանգարեն քունը, բայց կամայ կամայ կը թեթեւանան և կը զաղրին:

×

Առաջին երկու օրերու միջոցին, ծնողիւնը շատ սնունդի պէտք չունի. արովհետև արդէն սնունդ կը ծծէ արգանդին հիւստածներէն և շատ կիներ ճարպ կապած կ'ըլլան յուսթեան միջոցին: Առաջին երկու օրերուն համար կը բաւեն հեղուկ ուտեստներ, զխանութարար կաթ և ազուր: Երբ կաթն սխաւ հոսիլ — ընդհանրապէս երրորդ օրէն ետք — աւելի սնունդի պահանջ կայ: Այն ատեն կարելի է սոյլ թեթեւ խաչուած հաւկիթ, ձուկ, փաթաթէս, վառեակի կուրծք և նման զիրամարս նիւթեր, նախ փոքր քանակութեամբ, բայց աս-

տիճանաբար աւելցնելով, երբ հիւանդը կրնայ մարսել զանոնք:

Ծիծերը մասնաւոր խնամք կը պահանջեն առաջին օրէն իսկ: Ընդհանրապէս ծիծերուն ծայրերն և կողերը կը ճեղքուին, ճաթուտած չրթուքներու պէս: Ծծուած ատեն մայրը ցաւ կը զգայ և արին կը հոսի: Ձեռք դպած ատեն ալ ծիծերը կը ցաւին. ճեղքերը տեսանելի են. ծանր պարագաներու մէջ տեսնուի ալ կը պատահի: Ծծելու տագնապը և հետեւաբար կաթ տալու չկամութիւնը պատճառ կ'ըլլան որ կաթը կուտակուի, և բորբոքումներ տեղի ունենան կուրծքին մէջ:

Ինչպէս ըսած ենք, յուսթեան միջոցին իսկ կիներ պիտի զգուշանայ ֆօքսէն եւն. իբրև կանխարգել միջոց, իսկ ամէնէն անմիջականը, տղաբերքէն գոնէ մէկ շաբաթ առաջ, ինչպէս և երկունքէն ետք, պէտք է չափազանց մաքուր պահել ծիծերը, յաճախ գործածելով սսիտ սյօռիքի լուծաջուր: Երեխան պիտի չէ ֆնանայ ծիծերը քերնին մեջ: Իւրաքանչիւր կաթնատուութենէ յետոյ, պէտք է ծիծերը լուսայ տաք ջուրով և չորցնել:

Կը պատահի որ ծիծերը շատ տափակ ըլլան, կարն կամ խորը մխուած, և նորածին երեխան, չկարենալով բանալ դայն, կուլայ, կը ճչայ: Այն ատեն կամ պէտք է երեխան պատրաստ պահել մինչ ծիծը առաջին անգամ կը քաշուի չափահասի մը բերանով կամ ձեռքով, և յետոյ անմիջապէս բերանը դնել: Ուրիշ ձև մը, — ապակիէ պարտու շիշի մը մէջի օդը տաքութեամբ նօսրացնելով, շիշը

զնել ծիծերուն վրայ, մինչև որ օղը պաղի: Այսպէս ծիծերը կը մանեն չիշին բերանը, և յետոյ կարիւր է զայն վերջնելով անմիջապէս երկխան զնել: Երբորդ միջոց մըն է, վերջապէս, մասներով քաշել ծիծերը և լաստիկ օղակ մը անցընել վրան, քանի մը վայրկեանի համար, առանց շատ ամուր ձգելու, և երկխան փակցնել ցցուած պտուկին են:

Երբ կաթը չափազանց առատ կը հոսի, կուրծքը կը յորդի, բորբոքման վտանգ կայ: Այն ատեն անհրաժեշտ է չափաւորել կնոջ ուտեստը, սահմանափակել չոր ուտելիքներու, արգիլելով հեղուկները: Իսկ երբ կաթը անբաւական է, իրբև հետեւը նք սակաւարխանութեան, ակարսութեան կամ արխանոսութեան, պէտք է հիւանդին կազմը զօրացնել երկաթով, քիմիկով, լիզի կազդուրիչներով և սննդարար ուտեստներով, մասնաւորապէս կաթով: Բժիշկները հաստատած են որ բոլոր կաթնատու ուտեստներուն մէջ, ամենէն արդիւնաւորն է խեչափառը (չաղանոյ): Օգտակար են նաև գրեթէ բոլոր խեցեմորթները, — ոսորէն, ստագօզը ևն. — կը բաւէ որ կինը չգանի մէկէն կամ միւսէն: Կարելի է նաև չափաւոր քանակութեամբ գլխի առնել ճաշի ատեն: Իսկ բուսական սնունդներէն լաւագոյն է թարմ բազուկը (փաղի), առանց քացախի: Վերջին տարիներս երկհարականութիւն ալ կը փորձեն, կաթ արտադրելու համար, ինչպէս և ներքին և արտաքին դեղեր:

Արհեստական դիւեցումն այնքան ընդհանրացած է այսօր, մանաւանդ Պօլսոյ մէջ, որ աւել

լորդ պիտի բլար ծանրանայ այս մասին: Տարաբաղդարար յաճախ ո՛չ թէ մարը կաթ չի կրնար սալ, ալ չուզեր սալ, և երկխան կը յանձնեն ըստնտուլն, կամ ծծակ (պիպոս) մը կը դնեն բերանը, և կը հանգստանան... Լուրջ պայտգաներու մէջ, երբ սանտու չգանուի կամ ընտանիքին միջոցները հետին, պէտք է սալ մէկ մաս կոլու կաթ երկու մաս ջուրով, և չաքար խառնուած: Չափը կ'աւելնայ տարիքին հետ մէկտեղ: Չափազանց կարևոր է որ ծիծերը, ծծակը, բոլոր ամանները միշտ մաքուր պահուին: Ատենք պէտք չէ երկու անգամ մաքուր պահուին առանց բոլորովին մաքրուած ըլլալու: Երկիւղին պէտք է սալ այնքան կաթ որքան որ կ'առնէ յօժարութեամբ. երբ կը սկսի մերժել, միւս անգամուն պակաս պէտք է սալ:

×

Մայրը քանի՞ օր պետք է անկողին մնայ. — Այս մասին ալ կարծիքները շատ կը տարբերին: Հինգէն մինչև քսան օր յանձնարարողներ կան. թէև ժողովրդական պայմանաւամբ մէկ շաբաթ կամ ինն օր է: Ծատ մը զօրաւոր կազմ, քաջառօղ և լաւ կը կուած արգանդ ունեցող կիներ կանուխ կ'ելլեն: Ուրիշներ շատ աւելի ժամանակ կը պահանջեն: Ամէն բան կախում ունի ծննդաբերութեան տեսակէն և տագնապներէն, կնոջ ոյժէն, արգանդի վիճակէն: Ծատ կանուխ ելլել, երբ փորը տակաւին լայն է և ծանր, երբ արգանդը չէ զբտած իր բնական վիճակը, կը նշանակէ երթարկուել շատ մը վտանգներու, — դաշտանի խախտման,

տեղափոխութեան, ծննդադաշտանի վերակաման են: Աւելի աղէկ է քիչ մը երկար մնալ անկողինը քան, աճապարանքով ելլել և փորձանքի հանգիստի: Երկու շաբաթ անկողինն մէջ՝ շատ լաւ կանոն է, բազմաթիւ բժիշկներու վկայութեամբ: Երրորդ շաբթուան միջոցին, եթէ ամէն բան լաւ երթայ, մայրը կրնայ պտտիլ սենեակին մէջ, իսկ չորրորդին՝ դուրս ելլել: — Մէկ խօսքով, շատ բան պարագաներն ու սովորութիւնները կ'ուսուցանեն: Բայց ամենամեծ ուշադրութիւն անհրաժեշտ է:

×

Դիտուած է որ ծնունդէն յետոյ երեխան օրօրօցին մէջ ալ կը ձգտի տեղաւորուիլ այնպէս, ինչպէս տեղաւորուած էր ծնունդէն առաջ, արգանդին մէջ:

Ինչպէս արդէն ըսինք, երեխան իր սնունդը կ'առնէր մօրմէն, փրստէն թային միջոցաւ: Հետեւաբար, ծնած ատեն իր մարտդական գործարանները չեն բանիր, բացի լեարդէն, որ մաղձ կ'արտադրէ: Ստամոքսը պարսպ կը մնայ. բայց աղիքը, և մասնաւորապէս մեծ աղիքը, կը պարունակէ մաղձի և յոյզի խառնուրդ մը (meconium), որ նորածին մանկիկին աղբն է, գորշ-դեղին մածուցիկ հեղուկի ձեւով: Այս արտադրութիւնը կը պարպուի ծնունդէն անմիջապէս ետք, երբեմն ալ՝ ծնունդէն առաջ մէկ մաս մը, սեւցնելով սաղմի թաղանթին հեղուկը: Ամէն պարագայի մէջ, իրրու ընդհանուր կանոն, աղիքները չեն գործեր ծնուն-

դէն առաջ. որովհետեւ, երբ ստամոքսը կերակուր չէ առած, կերակուրի մնացորդ ալ չի գտնուիր աղիքին մէջ:

Քանի որ երեխան ջուրի մէջ սուղուած է ծընելէ առաջ, չի կրնար գործածել իր թոքերը, որոնք բնականաբար փակուած կը մնան կուրծքին մէջ, առանց զարգանալու: Ծնած ատեն, երբ պորտի լարը կը կտրուի և կը կապուի, փրստէն թային արիւնի հայթայթումն ալ կը դադրի: Արդէն, նոյն իսկ այդ գործողութիւնէն առաջ, արիւնի հայթայթումը կ'ընդհատուի, փրստէն թային մասնակի բաժանումով: Այն ատեն երեխային ուղեղի շնչառական կեդրոնը կը գործէ և շնչառութիւնը կը սկսի, դադրելու համար միայն մահուան ատեն:

Երեկամները կանուխէն կը սկսին մէզ հաւաքել, որ կը լեցուի միզամանին մէջ և կը պարպուի ընդհատաբար, խառնուելով սաղմի հեղուկին հետ:

Մանկիկը ծնած ատեն անշուշտ բոլորովին զուրկ է մտային և զգայական կարողութիւններէ, որովհետեւ ատոնք զարգանալու համար կախում ունին զգայարաններու միջոցաւ արտաքին աշխարհէն ընդունուած սպաւորութիւններէ: Այդ զգայարանները թմբած կը մնան երբ երեխան արգանդին մէջ է. իր ջրային գոյութեան խաւարին և հանդստութեան մէջ, մանկիկը ոչինչ կը տեսնէ, ոչինչ կը լսէ, ո՛չ կը հոտոտէ, ոչ ալ կը ճաչակէ. բարեխառնութեան փոփոխութիւն չկայ որպէս զի մզում տայ իրեն. նոյն իսկ շօշափելիքը հազիւ չարժման մէջ կ'ըլլայ, որովհետեւ չըջապատող հե-

զանխիթը հաւասարապէս կը ճնշէ : Թերևս երբ յանկարծական շարժում մը տայ թեկերով կամ սրունքներով, տարաամ հպում մը կը զգացուի արգանդի կողերուն վրայ : Մկանային գրութիւնը աստիճան մը զարգացած կ'ըլլայ երեխայի ծնած պահուն : Փորձերով հաստատուած է որ նորածին մանկիկը բռնելու կամ կրթնելու բաւական ոյժ ունի, իր ձեռքերով կառչելով մատի մը կամ գաւազանի մը : Բայց այս տեսակէտով մարդկային ծնունդը այնքան զարգացած չէ որքան կենդանականը : Հաւկիթէն թուած վառեակը կը սկսի ցատկոծել և հատիկներ կտցել, տարէյ հաւի մը վարժութիւամբքուակը կամ գառնուկը գետին կոխելուն կը սկսին վազվզել : Նոյն իսկ կատուի ձագը կամ չուների յակօտը կը սկսին սողալ առաջին քանի մը ժամերու միջոցին : Բայց մարդկային մանկիկը կը մնայ անձար և չուտով պիտի կորսուի, առանց իր մօր գուրգուրալից խնամքին :

Յետոյ, ըսենք անցողակի որ ծննդարերութիւնը աւելի երկարատե և տաժանակի է մարդկային քան կենդանական տեսակին մէջ. որովհետե գլուխը աւելի խոշոր է, իսկ մօր կոնքը չուների այն առանցքը որով օժտուած են, օրինակի համար, չորքստանինները : Դարձեալ, մանչերուն ծնունդը աւելի երկարատե և տառապալից է ընդհանրապէս քան աղջիկներունը, որովհետե, մանչերը աւելի մեծ կ'ըլլան մարմնով և մանաւանդ գլուխով : Հետեաբար, իրենց մահն ալ աւելի յաճախողէպ է :

×

Ծնաւ թէ ոչ, երեխան սուր ճիչ մը կ'արձակէ՞ սրունքներն ու թեկերը անկարգ շարժումներ կը փորձեն : Այս կը ցուցնէ թէ չէ տառապած երկունքի միջոցին, և մարդիկ կ'ուրախանան որ սողլ երեխայ մը ծներ է : Դայեակը կամ ուրիշ կիներ կը տանին կը լուան զայն, հազար զգուշութեամբ, որովհետե ձարպային նիւթերով պատուած ըլլալուն, կրնայ սահիլ իյնալ :

Այս բոլոր գործողութիւնները պէտք է կատարուին 18 աստիճան տաքութեամբ սենեակի մը մէջ, տաք կրակի առջև, որպէս զի երեխան չպաղի : Չմոռնանք որ արգանդին մէջ մանկիկին ջերմութեան աստիճանն է 37—38. ծնունդէն ետք կեղրոնական ջերմութիւնը կ'իջնէ մինչև 36. բայց, եթէ երեխան երկար առեն բացը մնայ, տաքութիւնը աւելի կը պակսի և երբ 32էն վար իջնէ, մահ կը պատահի :

Տեղի և ժողովրդական բարքերուն համաձայն կը տարբերի երեխային հագուստ-կապուստը, հայկական խանձարուրէն մինչև անգլիական հագուստը : Կարեւորն այն է որ չնչառութիւնը ազատօրէն կատարուի : Լաւագոյն է գլուխը բայ պահել : Խանձարուրը նպաստաւոր է գիշերը, ձմրան եղանակին : Ծնունդին յաջորդող առաջին օրերու միջոցին, միայն մայրը պէտք է կաթ տայ երեխային : Բժիշկը և դայեակը պէտք է բացարձակապէս հակառակին այդ օրերուն երեխան սամտուի յանձնելու կամ ծծակով սնուցանելու սովորութեան : Անմիջապէս որ երեխան լուացուած, հագուած



պատրաստ է, պէտք է մօրը տալ, կը բաւէ որ ան չստիպուի յոգնած չլլայ: Հակառակ պարագային, կրնայ քանի մը ժամ հանգստանայ: Առաջին մէկերկու օրուան միջոցին, երեխան կրնայ կաթ ծծել իւրաքանչիւր չորս ժամը անգամ մը, մինչև որ կաթը սկսի հոսիլ: Անկէ ետք, աւելի յաճախ, երկու ժամը անգամ մը, բացի որոշ ժամանակէ երբ մայրը պէտք է հանդիստ քուն քաշէ: Երբ երեխան վեց ամսուան է, քսանըչորս ժամուան մէջ հինգ-վեց անգամը կը բաւէ: Կաթնատուութեան համար յատուկ աւանդութիւն չկայ: Կարգ մը նոր բժիշկներ այս առթիւ պատրաստած են հետեւեալ ցուցակը, որ շատ ընդհանրացած է Ֆրանսայի մէջ. —

Առաջին օրը՝ կաթ չտալ: Երկրորդ օրը՝ երկու անգամ, մէկը՝ առտուն, միւսը՝ իրիկունը, երրորդ օրը՝ երեք անգամ, — առտուն, կէս օրին և իրիկունը, Չորրորդ օրը՝ չորս անգամ, առտուն, (ժամը 7ին), կէս օրին, ժամը 5ին և 10ին: Հինգերորդ օրը՝ հինգ անգամ, — առտուն, ժամը 1<sup>1</sup>/<sub>2</sub>ին, 3ին, 6<sup>1</sup>/<sub>2</sub>ին և 10ին, Վեցերորդ օրը՝ վեց անգամ, երեք ժամը անգամ մը. գիշերը ոչինչ: Եօթներորդ օրը՝ եօթն անգամ, երեք ժամը անգամ մը, մէկ անգամ ալ գիշերը: Եօթներորդ օրէն սկսած, կարելի է պահել այս չափը, օրական վեց կամ եօթն անգամ: Երեխային մարտդութիւնը կը լրանայ երկու-քուկէս ժամէն, հետեւաբար պէտք է ստամոքսը պարագ ձգել կէս ժամ: Լաւ է չաքարոտ եռացած ջուր տալ ծիծերու ընդատման

միջոցին, որպէս զի երեխան հանգստանայ, քնանայ և սպասէ մինչև յաջորդ ծիծը:

Առաջին երեք չորս օրերու միջոցին, անդրանիկ ծննդկաններուն իւրաքանչիւր անգամ տուած ծիծի կաթին քանակութիւնն է 5—10 կրամ, բաղմածիններուն մէջ աւելի առատ է և ընդհանրապէս կը հասնի 40 կրամի: Հինգերորդ օրը, կաթի քանակութիւնը կը սկսի կանոնաւորուիլ, ըլլալով իբր 40 կրամ: Տասներորդ օրը միջին հաշուով կը դառնայ 50 կրամ: Երկու շաբաթ ետք իբր 80 կրամ:

Իւրաքանչիւր անգամուն երեխան պէտք է ծծէ հինգ վայրկեան ամէն մէկ ծիծէն: Բացասիկ պարագաներու մէջ, աւելցնելով կրնայ բարձրանալ 15 վայրկեանի: Անկէ անդին քամուած քանակութիւնը շատ աննշան է:

Ծիշդ է որ կաթի առաջին հոսումը սովորաբար տեղի կ'ունենայ ծննդաբերութեան երկրորդ կամ երրորդ օրը: Բայց առաջին օրերուն անկատար դեղնորակ հեղուկ մը կայ, դալ կամ նախակաթ անուշտով (colostrum), որ բաւական է երեխան սնուցանելու, առանց արհեստական նիւթեր խառնելու, և կը ծառայէ իբրև լուծողական՝ մաքրելու աղիքները:

Բոլոր գիտնականներն ալ կը հաստատեն թէ շատ հազուադէպ է որ մայր մը չկարենայ իր կաթով սնուցանել երեխան, առաջին երկու ամիսներու միջոցին: Հարիւրին երկու հազիւ կը պատահի որ մայրը կաթ չունենայ. այդ ալ՝ ծանր հիւան-

դուրբիւններու պարագային : Հետեւաբար, բժիշկն ու դայեակը պարտին իրենց բոլոր ջանքերը թափել, որպէս զի ծննդկանը ինք դիեցնէ երեխան, մանաւանդ օգտուելով իր ակամայ անգործութիւնէն : Պէտք է անոր բացատրեն կովու կաթին մարսողական դժուարութիւնները, անոր ծանր հետեւանքները, բնական կաթնատուութեան առաւելութիւնները՝ թէ երեխային և թէ մօր համար :

Երբ բացարձակապէս անկարելի է բնական կաթնատուութիւնը, այն ատեն պէտք է ղխմել արհեստականին, պահելով միեւնոյն կանոնը, — կանոնաւոր կաթնատուութիւն՝ երեք ժամը անգամ մը, աստիճանական յաւելում քանակի : Առաջին եօթը օրերու միջոցին՝ իւրաքանչիւր ծծակ պիտի պարունակէ 50 կրամ, ջրախառն : Տասներհինգերորդ օրէն սկսած, պէտք է բարձրացնել 80 կրամի, օրական եօթն անգամ տալու պայմանով :

Իշու կաթը—որուն բաղադրութիւնը կը մօտենայ կնոջ կաթին—կրնայ տրուել կանխահաս երեխաներու, որոնց ծանր կուգայ կովու կաթը :

Արդի բժիշկները համաձայն են որ մօր ծոցին մէջ կաթնատուութիւնը երկարաձգուի մինչև առաջին տարուան վերջը և նոյն խի քիչ մըն ալ աւելի, եթէ կաթէն կտրելը անզի պիտի ունենայ տաքերու միջոցին :

Նորածիններու աճումը հասկնալու համար, պարզ միջոց մըն է առաջին տարին բաժնել չորս քառամսեակներու : Առաջին քառամսեակին՝ երե-

խան կը չահի 30 կրամ, երկրորդին՝ 20 կրամ, երրորդին՝ 10 կրամ : Ինչ կը վերաբերի երեխային ծանրութիւնը ճշգրտու, որոշ տարիքի մը մէջ, բժիշկները կը յանձնարարեն հետեւեալ չորս համամատուութիւնները, — ծնած ատեն՝ երեխայ մը կը ունենայ հաշուով կը կշռէ 3 քիլօկրամ. 4—5 ամսուն՝ կը կրկնապատկուի և կը կշռէ 6 քիլօ. մէկ տարի ետք կը դառնայ 9 քիլօ, երկու տարեկանին՝ 12 քիլօ :

Առաջին ակումները կ'երեւան Երգ և Տրգ ամիսներուն մէջտեղ : Երեսներորդ ամսուն կը լրանայ ակուայ հասնելու առաջին շրջանը, որ կը բաղկանայ քսան ակուայ :

Երեխան կրնայ առանձին քաղել 12—14րդ ամիսներուն : Բայց երբ ձեռքէն բռնէք, աւելի կանուխ կրնայ սկսիլ :

Մօր ծոցին մէջ կանոնաւորապէս անած երեխան օրը մէկ կամ երկու անգամ արտաքսում կ'ունենայ, — խաչած հաւկթի ձեւով հիւթ մը որ աղբի հոտ չունի : Առաջին երեք ամիսներու միջոցին՝ օրական երկու անգամ, տարուան մնացորդ մասին մէջ՝ մէկ անգամ, գրեթէ որոշ ժամու մը : Իսկ միզարձակումները շատ աւելի յաճախաբէպ են :

Կաթը կտրելէն ետք—գործողութիւն մը որ պէտք է անելի ունենայ աստիճանաբար, և ոչ մէկէն ի մէկ — երեխային պէտք է տրուի ոչ թէ ապուր կամ ուրիշ նիւթ, ինչպէս կ'ընեն շատեր, այլ կովու կաթ : Անկէ ետքն է որ կրնաք ալիւր խառնել կաթին մէջ, նախ թեթև, յետոյ թանձր, ուտեստ պատրաստելու համար : Միսի գործածու-

թիւնը — սկսելով ուղեղէն — պէտք է սկսի շատ  
ուշ, երեք տարեկանին, համաձայն նոր առողջա-  
պահութեան:

Երբեմն մօր կաթն անբաւական գալով, հարկ  
կ'ըլլայ խառն կաթնատուութեան դիմել, — մաս մը  
մայրը կուտայ, մաս մըն ալ՝ ստնտուն. կամ ծծակ  
կը գործածեն: Ստնտու մը կրնայ օրը երկու երե-  
խայ դիւցնել, փոխն ի փոխը, կամ մէկը մէկ ծի-  
ծէն, միւսը՝ երկրորդէն:

Մենք ընդհանուր կիրպով ներկայացուցինք  
բոլոր այն հիմնական պայմանները, որ անհրաժեշտ  
են, մօր և երեխային առողջութիւնն ապահովելու  
համար: Դեռ կան հազարումէկ մանրամասնութիւն-  
ներ, որոնց մասին խօսիլ աւելորդ է, քանի որ  
իւրաքանչիւր մայր, մանաւանդ հայ մայրը — Պօ-  
լիս ըլլայ թէ յետին գիւղը—գիտէ բնազդաբար,  
կը սորվի ինքն իրեն, ուրիշ մայրերու հետ քով  
քովի:



#### 4. ՎԻԺՈՒՄ ԵՒ ԿԱՆԻԱՀԱՍ ԵՐԿՈՒՆՔ

Երբ սաղմը կ'արձակուի, տակաւին ապրելու  
սահմանին հասած, այսինքն 28րդ շաբթուան լը-  
րումէն առաջ, կ'ըսենք թէ վիժում տեղի ունե-  
ցու: Իսկ այդ ժամանակէն մինչեւ ծննդաբերու-  
թեան բուն շրջանի մէջտեղ պատահած ծնունդները  
կանխահաս կը կոչուին:

Արդի բժշկութիւնը կը խոստովանի թէ մինչ  
առաջ 12 յղութեան մէջ մէկ վիժում կը պատա-  
հէր, այսօր իւրաքանչիւր հինգ յղութենէ մէկը վի-  
ժում է, շնորհիւ արհեստական միջոցներու կիրառ-  
ման... Դարձեալ, նոյն հաշիւներուն համաձայն,  
ծննդաբեր կիներուն հարիւրին 90ը իրենց կեանքին  
մէջ վիժում կ'ունենան մէկ կամ երկու անգամ:

×

Վիժման պատճառները բազմազան են.—

Մեռած սաղմ մը ընդհանրապէս կ'արտաքսուի  
առանց երկար յայտադման: Մահը կրնայ յառաջ ե-  
կած ըլլայ վրասէնթային կամ թաղանթներուն հի-  
ւանդութենէն, պորտի խցումէն, կամ արտաքին  
վէրքէ մը, անբաւական սննդառութենէ կամ ժա-  
ւանդական սիֆիլիսէ, հանքային կամ ուրիշ թոյ-  
ներէ, կամ բորբոքիչ տենդերէ: Եթէ մայրը չափա-  
զանց տաքութիւն ունենայ, երեխան կը մեռնի:  
Տաքութեան բարձրացումը շատ աւելի վտանգաւոր  
է մանաւանդ երբ տեղի կ'ունենայ յանկարծակի, և  
ոչ թէ աստիճանաբար: Սաղմին տաքութիւնը միշտ  
աստիճան մը աւելի բարձր է մօր ջերմութենէն:

Մօր կողմէ վիժման պատճառներ են սիֆի-

լիսը, որովայնի կամ կուրծքի բորբոքումները, սակաւարիւնութիւն, շատարիւնութիւն, զանազան տենդեր, արգանդի հիւանդութիւններ և խախտումներ, բազմապատիկ, կանխահաս կամ չափազանց ուշացած յղութիւններ եւ այլն: Իսկ հօր կողմէ՝ կանխահասութիւն, ծերութիւն, սիֆիլիս, ցոփութիւն, մարմնական տկարութիւններ:

Վիժում յառաջ կը բերին մեքենական բռնութիւնները, ինչպէս հարուածներ, անկումներ, ճիգեր, արկածի հետեւանքով եղած ճմուռներ, ծայրայեղ ծովալողանք, սաինքներու բորբոքում, ակուայ քաշել են, կամ յուզումները ինչպէս սաստիկ վախ, ուրախութիւն, վիշտ, անձկութիւն, բարկութիւն են: Այս մասին մէկը միւսին պերճաբոս պատմութիւններ կը հասնին պարբերաբար Հոյսատանէն, ուր արիւնկզակ չարագործներ չեն խնայեր նոյն իսկ յղի կիներու, և վիժման պատճառ կը դառնան զանոնք ա՛ն ու դողի մասնելով, խոշտանգելով, բռնարարելով, կամ ամուսինները իրենց աչքին առջեւ մորթելով... Եւ ամենէն քստմնելին, յետոյ կը յայտարարուի թէ այդ կիները արդէն վիժելու ընդունակ էին...:

Շատ մը վիժումներ կը պատահին գիտակցաբար, զօրաւոր դաշտանարեր դեղերու գործածութեամբ, կամ գործիքներու միջոցաւ ձուիկը փճացնելով:

Այս բոլոր պատճառները կ'ազդեն մէկ կամ երկու ձևով, — կամ սաղմը մեռցնելով, և կամ արգանդի պրկում յառաջ բերելով: Իսկ վճռապէս

գրգռիչ պատճառները յաճախ ոչ մէկ ազդեցութիւն կ'ընեն, եթէ չկայ վիժելու ընդունակութիւն: Այսպէս շատ կիներու համար վիժումի պատճառ կ'ըլլայ ամենաթեթեւ գրգռումը, մինչ ուրիշներ ազատ կը մնան հակառակ ամէն տեսակ վէրքերու և վիրարութական գործողութիւններու, — նոյն իսկ ձուարանի, արգանդի գործողութեանց:

×

Վիժումը կը պատահի ընդհանրապէս կրկնորդ և երրորդ ամիսներուն, թէեւ առաջին ամսուան միջոցին իսկ պատահած վիժումներ յաճախ չեն զգացուիր:

Ախտանշաններն են՝ ընդհատական ցաւեր, — իրրեւ հետեւանք արգանդի կծկումներու. ուրիշ խօսքով, երկունքի մանրանկար ցաւեր, և արիւնահոսութիւն, որ տեղի կ'ունենայ երբ ձուիկը մասամբ կը բաժնուի արգանդի կողերէն:

Պաղութիւն, ջղայնութիւն, կերակուրէ խորշում, ձանձրոյթ, թեթեւ խուսափուկ ցաւեր՝ կանակին և փորին մէջ, յաճախակի միզում, ևն. կրնան պատահիլ և քանի մը օր շարունակուիլ «երկունքի ցաւեր»էն և օրինահոսութենէն առաջ, բայց ատոնք ընդհանրապէս երրորդ ամիսէն ետքն է որ կը յայտնուին:

Երբ սաղմի թաղանթները առանց պատուելամբողջովին դուրս կը նետուին իրենց պարունակութեամբ, կակուղ կճեպով հաւկիթի մը պէս, ինչ որ շատ հաւանական է առաջին երեք ամիսներու միջոցին, արիւնահոսութիւնը շատ չափաւոր

կ'ըլլայ: Բայց երբ տոպրակը կը պարպուի ու կը փրթի կ'իջնայ, սաղմը և ծանօթ հեղուկները դուրս թափելէ յետոյ, արիւնահոսութիւնը սովորաբար աւելի առատ է: Այս վերջին պարագաներուն արիւնահոսութիւնը և ցաւերը կրնան դաղըիլ ժամնորով, օրերով և նոյնիսկ շաբաթներով, բայց երբ «րնկեր»ը (վլասէնթան) և թաղանթը իրենց տեղերը մնան, այդ ախտանշանները ազանովաբար կը վերսկսին ուշ կամ կանուխ. և եթէ այդ «րնկերները» տարրալուծուին, հոսող արիւնն ալ նեխած հոտ մը կ'ունենայ, ինչպէս և յառաջ կուգան զօրաւոր դող մը, տենդ, փսխում, ընդհանուր թուլութիւն, — վերջապէս նեխային վարակումի մը բոլոր ախտանշանները:

×

Երբ ցաւ և արիւնահոսութիւն տեղի ունենան, վիժումի ախտաճանաչութիւնը յաճախ կրնայ կատարուիլ խոռոճալին քննութեամբ, որ ատեն երևւան կը հանուին արգանդի անցքին մասնակի կամ ամբողջական ընդլայնումը և ջուրի տաքակիւն, պորտի լարին կամ սաղմին ներկայութիւնը: Այն ատեն բժիշկները մասնաւորապէս ջուրին մէջ կը քննեն բոլոր արտահանումները, թաղանթի, սաղմի ևն. հետքեր գտնելու համար. ալապէս, վիժումը կրնայ տեղի ունենալ առանց գիացուելու: Եթէ արտահանումները նետուած ըլլալով կասկած ծագի և եթէ փորն ալ բոլորովին պարպուած ըլլայ, այն ատեն կարելի է ըսել թէ ախտանշանները հետզհետէ պիտի նուաղին. հակառակ պարագային, պիտի

շարունակուին և պիտի կրկնուին հաւանական թեթեւացումէ մը յետոյ:

Դաշտանի միջոցին արիւնահոսութիւնն ընդհանրապէս կը թեթեւցնէ ցաւը. վիժումի պարագային ալգպէս չէ. դաշտանը տեղի կ'ունենայ իր որոշ ասեկին. վիժումը անպատճառ այդ առաւելութիւնը չունենար: Վիժումին մէջ կրնան դեր ունեցած ըլլալ բունութիւն մը կամ ուրիշ պատճառներ, յղութեան կանխահաս նշաններ ևն, եթէ մատով քննութիւնը բաւարար ապացոյցներ չտայ կասկածները փարատելու, դրական ախտաճանաչում մը անկարելի է, մինչեւ որ արգանդին բերանը լայննայ մատի ծայրը ներս առնելու աստիճան, կամ մինչեւ որ ձուիկին մէկ մասը դուրս նետուի և քննուի:

Եթէ սաղմը արգանդին մէջ մեռած ըլլայ, հիւանդը կ'ունենայ նուազուն, ընկճուած երեւոյթ մը, դող, թերեւս տենդ ալ, սե ծիբրերով խորը ինկած աչքեր, սրտի խառնուք, ուտեստէ խորշում, գարշահոտ շունչ և գէշ համ մը բերնին մէջ, ծանրութեան, անհանգստութեան և պաղութեան զգացում մը՝ փորին մէջ. որովայնը կը թուլնայ, կը կորսնցնէ իր սովորական առաձգութիւնն ու հաստատութիւնը, իսկ մեծութիւնը կայուն կը մնայ կամ կը նուազի, արգանդը աւելի ազատօրէն կը թաւալի մէկ կողմէն միւսը. կուրծք կը թուլնայ և կը պղտիկնայ, կաթ կը հոսի: Այս ախտանշանները կը յայտնուին սաղմին մահէն ժամանակ մը ետք: Այս բոլոր տկարութիւնները կրնան ուրիշ պատ-

ճառներէ ալ յառաջ զալ, բայց երբ քանի մը խան-  
գարումներ միաժամանակ կը պատահին, քննու-  
թիւնն անհրաժեշտ է: Ախտաճանաչումը աւելի  
ապահով կ'ըլլայ, երբ գարշահոտ արտահոսումներ  
տեղի կ'ունենան խոռոճակէն:

Երբ դեռ աճապարելու պէտք չկայ, սաղմի  
ողջ ըլլալուն լաւագոյն նշանն է արգանդին աճու-  
մը. եթէ սաղմը մեռած ըլլայ, արգանդը պլեւս  
չաճիր և կրնայ պզտիկնալ:

Վիժումները յաճախ աւելի շատ ժամանակ կը  
սպառեն քան լման երկունքները. որովհետև ար-  
գանդին պարանոցը նեղ և երկայն կ'ըլլայ, իսկ  
մկրնները կատարելագոյն աճած չեն ըլլար: Երբ  
պէտք եղածին պէս դարմանուի, վիժումը շատ  
քիչ անգամ մահացու է. նուազ վտանգաւոր է  
քան լրացած տղարեքը՝ ապրելու հաւանականու-  
թեան տեսակէտով, բայց յաճախ կրնայ արգանդի  
քրոնիկ հիւանդութիւններ ձգել, ինչպէս և յառաջ  
բերել ընդհանուր ակարութիւն՝ արիւնահոսութեան  
հետեւանքով:

Արդէն վիժումին գլխաւոր վտանգն է արիւ-  
նահոսութիւնը և նեխումը՝ երբ «ընկերները» ներսը  
մնացած են:

Շատ մը պարագաներու մէջ բժիշկները կը  
թողուն որ վիժումի գործողութիւնը ինքնիրեն  
կատարուի, բնական ոյժերով, փոխանակ գիտու-  
թեան միջամտութեամբ պարպելու արգանդը: Այս  
ճիշդ է մանաւանդ յղութեան առաջին երկու ա-  
միսներու միջոցին. բժիշկին միջամտութիւնը ան-

հրաժեշտ է ա՛յն պարագային, երբ առատ արիւնա-  
հոսութիւն տեղի կ'ունենայ: Այն ատուն խոռոճ-  
ակն կը փակեն պատատով մը (tampon), որ գրեթէ  
միշտ արգիւնաւոր կ'ըլլայ, միանգամայն դիւրացը-  
նելով արգանդին կծկումը և ձուիկը բոլորովին  
բաժնելով արգանդէն: Եթէ հիւանդը թեթեւութիւն  
զգայ պատատը գործածուած ատեն, կը նշանակէ  
թէ արգանդը պարպուեր է:

Հիւանդանոցներու մէջ և ուրիշ տեղեր, երբ  
փորձառու բժիշկներ կան, ընդհանրապէս վիրարու-  
ժական մէթոտը կը գործադրեն վիժումի բոլոր  
ղէպքերուն ատեն: Անմիջապէս կը պարպեն ար-  
գանդը, մատով կամ դգալածե գործիքով ար-  
գանդին բերանը արհեստականօրէն ընդլայնելէ և  
հիւանդը թմբեցնելէ յետոյ: Բայց բոլոր բժիշկներն  
ալ կ'ընդունին թէ հարկ չկայ անպատճառ այդ  
արմատական միջոցներուն դիմելու, սովորական  
վիճակի մէջ, Շատ մը հեղինակութիւններ կը  
յանձնարարեն նաև հետեւեալ ձևեր, որու մա-  
սին ապահովարար գաղափար ունին դայնակները, —  
երբ արգանդին բերանը բաւական լայնցած է, եր-  
կու մասները խոռոճակին մէջ կը դրուին, իսկ  
միւս ձևերը՝ դուրսէն՝ արգանդի մարմնին վրայ,  
և սեղմելով կպած ձուիկը արգանդի խոռոչէն կ'իջ-  
նայ խոռոճակին: Այս ձևեր մեծ ճարտարութիւն կը  
պահանջէ, իսկ եթէ ձախողի, վնաս մը չկայ:

Չորրորդէն եթէ ներսը ամբողջութեամբ միջոցին  
պատահած վիժումներու մէջ («կեղծ տղարեք»),  
սաղմի տոպրակը քիչ անգամ ամբողջովին դուրս

կը նետուի . սովորաբար նախ սաղմը դուրս կու գայ . իսկ «ընկերները» բաւական ատեն ետք : Յաւերը աւելի ծանր են , աւելի շատ հեղուկ կը հոսի , արգանդին կծկումը աւելի սուր կը զգացուի , և կաթի հոսման աւելի շատ հաւանականութիւն կայ : Դարմանները նոյնն են :

Վիժուժն ետքն ալ , ինչպէս տղարեքի պահուն , կինը պէտք է կատարելագլխ հանգստանայ , գոնէ տաս օր անկողին մնալով :

×

Թիշկները մէկ տարի կամ աւելի ժամանակ ժուժկալութիւն կը պատուիրեն այն կիներուն որոնք մէկ անգամ կամ աւելի վիժած են և հաւանական է որ նորէն այդ դժբախտութեան հանդիպին : Պէտք է , նաև , վերցնել միւս ախտաւոր պատճառները : Եթէ նորէն յղութիւն պատահի , կինը պէտք է կատարելագլխ հանգիստ մնայ անկողնի մէջ , մէկ շաբաթ կամ տասը օր , դաշտանային շրջանին համապատասխանող օրերուն : Յղութենէն յետոյ , զուգաւորութիւնը բացարձակագլխ կ'արգելուի :

Կանխահաւ ծննդաբերութեան կամ եօթնութրորդ ամիսէն յետոյ պատահած տղարեքի պարագային , պէտք է շարժիլ այնպէս ինչպէս պիտի ըլլար լման երկունքի ատեն : Արգանդի բերանին ընդլայնումը դանդաղ տեղի կ'ունենայ , բայց երեխան ալ պզտիկ է : Փլասէնթան կրնայ ներսը մնալ , բայց ոչ այնքան որքան երկար վիժումի պարա-

գային : Գործողութիւնը փութացնելու համար , կը սեղմեն արգանդը փորին միջոցաւ . կամ , եթէ այդ փորձը ձախողի և արիւնհոսութիւն ալ պատահի , երկու կամ երեք մասներով , կամ ամբողջ ձեւաքով (նայելով արգանդի բերանին լայնութեան և յղութեան աստիճանին) կը փրցնեն «ընկերը» :

×

Վիժումի գլխաւոր պատճառներուն մէջ , մեծ դեր կը կատարեն արբեցութիւնն ու սեռային չափազանցութիւնները : Գիտնական մը հաստատած է թէ գինովութիւնը կը փճացնէ մարդկային ծննդագործութեան երկու երրորդ մասը : — Դիտուած է որ շատ կիներ պարբերաբար կը վիժեն միեւնոյն շրջանին , իրրեւ հետեւանք դաշտանի կամ ուրիշ արիւնհոսութեան , ինչպէս և արգանդի հեղութեան և կարծրութեան : Երբեմն ժառանգականութիւնն ալ պատճառ կրնայ ըլլալ : Ընտանիքներ կան ուր յաճախակի վիժումներ տեղի կ'ունենան սերունդներով : Յետոյ , առաջին վիժում մը շատ անգամ երկրորդ մը կը բերէ և այսպէս շարունակ : Կը յիշուի մանկամարդ աղջիկ մը , որ քանի մը անգամ վիժում կատարած էր ապօրէն միջոցներով , և երբ ամուսնացաւ , չկրցաւ ո՛չ իսկ մէկ կատարեալ յղութիւն ունենալ : Վիժումի համաճարակներ անգամ պատահած են հիւանդանոցներու մէջ , իբրեւ հետեւանք կլիմայական փոփոխութեանց , ինչպէս կը լինէ Տօք . Կառնիէ : Իսպիրատ անգամ զեւտած էր այս պարագան , երբ կ'ըսէր .

— «Եթէ ձմեռը հարաւային է, անձրիւաբեր և մեղմ, իսկ գարունը չոր և ցուրտ, այն կիները որ այդ եղանակին ծննդաբերութիւն պիտի ունենան, կը վիժեն ամենաթեթեւ պատճառով մը»:

Զուիցերիոյ մէջ նկատուած է որ բարձր լեռներու կատարը բնակող կիներ շատ տրամադիր են վիժելու. բայց երբ դաշտ իջնեն յղանալէ անմիջապէս ետք, կ'ազատին այդ դժբաղդութենէն:

Ճիշդ է որ յաճախ բժիշկները արուեստական վիժում յառաջ կը բերեն կինը տաժանկի ծննդաբերութենէ մը կամ վտանգաւոր հիւանդութենէ մը փրկելու համար. — բայց աւելի բնդհանրացած է այն արուեստական վիժումը որ կը կատարուի գիտակցաբար, մեղապարտ յարաբերութիւններ ծածկելու համար, կամ եսամոլական նկատումներով: Շատ մայրեր կը խուսափին նոր զաւակ ծնելէ, և երբ յղի մնացիր են, զանազան ապօրինի միջոցներու կը դիմեն սաղմը ոչնչացնելու, յաճախ վտանգելով իրենց կեանքն իսկ: Ահա թէ ինչու օրէնագէտները իրստ պատիժներ սահմանած են այդ մասին: Ֆրանսայի պատժական օրէնքը կ'ըսէ.

— «Ո՛վ որ, ուտեստներով, բմպելիներով, դեղերով, բռնութիւններով կամ ուրիշ ու է միջոցով մը յղի կնոջ մը վիժումը յառաջ կը բերէ, ան հաւանած ըլլայ թէ ոչ, կը պատժուի բանտարկութեամբ: Միեւնոյն պատիժը կը տնօրինուի նաև ա՛յն կնոջ դէմ որ ինքն երբ վիժում կը պատճառէ, կամ կը հաւանի դորձածել այդ նպատակով իրեն յանձնարարուած կամ տնօրինուած միջոցները, եթէ ատիկ վիժում յառաջ գայ:»

Միեւնոյն օրէնքին տրամադրութեամբ, տաժանակիր աշխատութեան կը դատապարտուին այն բժիշկները, դեղագործները և առողջապահական պաշտօնեաները, որոնք վիժման միջոցներ կը յանձնարարեն, — կը բաւէ որ վիժումը իրապէս տեղի ունենայ:





## Ծ. ԱՄԼՈՒԹԻՒՆ

Հին դարերէն ի վեր, ամուսթիւնը նկատուած է աղէտ մը, անէծք մը, որուն դէմ յուսահատական ճիգերով մաքաւած են մարդիկ: Մինչև այսօր մեր մէջ, ինչպէս ամէն տեղ, բաղմամբիւ անդաւակ մայրեր, և յաճախ այրեր իսկ, յուսախաբ ամէն կողմէ, վանքերու դուռը ափ կ'առնեն, երկար ու խտագնացութիւններ կը կատարեն, գէթ մէկ երեսայ ունենալու համար...: Բոլոր կրօնները փառարանած են բեղնաւուութիւնը, ամուսթիւնը նկատելով աստուածային անեղ պատիժ մը: Հեթանոսութիւնը աստուածացուց, իրբու դիցունքներ կայացուց արգասաւորումը. իսկ ամուսթիւնը խորհրդանշեց զանազան ձեւերով. — աւանց ստինքի կիներ, փուշերով լեցուած ակօսներ, ամուլ ջորի կամ անպտուղ ուռի են:

Շատ բժիշկներ կը հաստատեն թէ ամուսթիւնը աւելի յաճախ կ'ստի կողմէ կախում ունի քան տղամարդուն:

×

Տրամարդուն ամուսթեան պատճառներէն մէկն է սերմի չգոյութիւնը կամ այլափոխումը: Այս դժբաղդութիւնը յառաջ կուգայ ամորձիներու հիւանդութենէն: Երբ ամորձիները որովայնին մէջ մնացած ըլլան, բնականաբար սերմը կամ ոչինչ է, կամ անկատար արտադրութիւն մը: Ամորձիներու ծիրումն ալ նոյն հետեւանքներուն կը յանգի:

Այսպէս թէ այնպէս, կամ սերմնակենդան չի գոյանար, և կամ սերմնակենդանները մեռնելով, զուրկ կ'ըլլան արգասաւորելու կարողութենէն: Երբ երկարատե կամ ծանր ջերմամիզութեան մը հետեւանքով մէկ ամորձին բորբոքի, կարծրանայ, սերմը չկրնար չրջան ընել, և յառաջ կուգայ ամուսթիւն: Իարձեալ, յարաբերութիւնը ամուլ կը մընայ, երբ սերմը չկրնար բնական զօրութեամբ ցայտել: Բաղմամբիւ երկատարողներ, երևութապէս առողջ և առողջ, կատարելապէս ընդունակ են յուզաւորութեան. բայց և այնպէս զաւակ չեն ունենար, և ի զ՛ւր կը մեղադրեն իրենց կիները, աւանց անդրադառնալու թէ իրենց միզուկը նեղցած է, չնորձիւ սեռային հիւանդութիւններու:

Ամէնէն աւելի ջերմամիզութիւնն է աղբիւրը այս գրեթէ սովորական տկարութեան, երբ մանաւանդ չի բուժուիր կատարելապէս: Միզուկին անցքը իր ամբողջ երկայնութեամբ չի նեղնար, այլ տեղ տեղ, ուր բորբոքումը ամէնէն աւելի ազդած է, թանձրացում, կարծրացում յառաջ բերելով: Երբ միզուկը նեղցիր է, մէզը չկարենալով հետելի միզամանին կծկումով յառաջ եկած արագ հոսանքին, կը պտուտկի և կը կուտակուի խոչընդոտին ետև. այնպէս որ, վերջը վերջը անցքին այդ մասը կը լայննայ և կը կորսնցնէ իր կծկուելու յատկութիւնը: Մէզը ա'լ չի կրնար պահուիլ, ինքնաբերաբար կամ ակամայ կը հոսի, և այն պատճառը որ նախապէս կուտակում յառաջ կը բերէր, հիմա ալ չարունակ միզելու կը մզէ:

ձիչդ նոյն պատճառով, սերմն ալ կը կորսնցնէ իր ցայտումի արագութիւնը, այլ եւս չի կրնար շուտ և ուժգնօրէն արձակուիլ. յամրաբար՝ կը հոսի, կը կաթկթի կը ծորի, համաձայն արգելքի ձեւին և մեծութեան: Այս իսկ պատճառով շատ հեռու չարձակուիր և կը շարունակէ կաթկթիլ, կանգնումը դադարելէն ետքն ալ: Բնական է որ երբ սերմը արգանդին չհասնի, արգասաւորութիւն ալ տեղի չունենար. Եթէ միզուկը չափազանց նեղցած է, ոչ մէկ ցայտում կ'երեւայ ամէնէն զօրաւոր տուփանքի միջոցին, այլ սերմը կը հոսի պահ մը ետքը, իբրև ակամայ կորուստ: Երբեմն ալ ետ կ'երթայ և միզամանին մէջ կ'իյնայ, և յետոյ մէզին հետ դուրս կ'ելլէ:

Ամուսնեան պատճառ մըն է, դարձեալ, միզուկի բերանին անբաւական, անկանոն կամ թերի բացուածքը, երբ ծակը փոխանակ ծայրն ըլլալու, տակը կամ վրան կ'ըլլայ, և սերմը իր բնական ուղղութենէն զրկուելով, չի կրնար արգասաւորիլ:

Բայց մենք այստեղ կ'ուզենք քիչ մը աւելի մանրամասնել հիմնական պատճառները, համաձայն նորագոյն հեղինակութեանց — (չէնրի Մօրթըն, Ֆինկըր ևն.) —

Սերմի չորս տեսակ փոփոխութիւններ կան, որ ամէնէն աւելի ամուսնիւն յառաջ կը բերեն. —

Ա. Սերմնակենդանի չգոյութիւն (azoöspERMIA)

Բ. Նշանակելի նուազում սերմնակենդաններու (oligozoöspERMIA):

Գ. Սերմնակենդաններու մահ և անշարժութիւն (necrospERMIA):

Դ. Սերմի բացարձակ չգոյութիւն (aspermia):

×

Առաջին պարագային բնաւ սերմնակենդան չկայ: Սերմը սովորականէն տարբերութիւն չունի, հոսը, պնդութիւնը և գոյնը անփոփոխ են, և միայն մանրադէտով երեւան կը հանուի սերմնակենդաններու բացակայութիւնը: Ի հարկէ արբունքէն առաջ բնական վիճակ մըն է այս. բայց երբ հիւանդութիւն չկայ, նոյն իսկ ծերունիներ ալ ատ են այդ դժբախտութիւնէն. և կրնան քանի մը սերմնակենդան արտադրել:

Այս ախարութեան պատճառներն են, —

1. — Յանախակի սերմնահոսութիւնները, իբրև հետեւանք չափազանց գիջութեան կամ զուգաւորութեան, որոնք նախ կը նուազեցնեն սերմնակենդաններու թիւը, և եթէ շարունակուին, բոլորովին կ'անհետացնեն զանոնք. թէև քանի մը օրուան հանգիստէ ետք նորէն սերմնակենդան կը գոյանայ:

2. Խանգարում ամորթիներու սերմարտադրիչ գործուեկութեան, որ ընդհանրապէս կը պատահի սուր անդեբու միջոցին, և ապաքինութեան յաջորդող ախարութեան ատեն, և իբրև հետեւանք, սերմնակենդանները առժամապէս կ'անհետան: Քրոնիկ հիւանդութիւններու մէջ ալ յաճախ նոյնը կը պատահի. ինչպէս նաև թոքախտի և սիֆիլիսի ատեն, եթէ նոյն իսկ ամորթիները վարակուած չըլլան:

«Մտերիմ Զրոյցներ» — Փղգոսացի

(33) 7

3. Ամորձիներու հիւանդութիւններ: իրբև հետեւանք սիֆիլիսի, թոքախտի կամ վնասակար ախտի մը, մանաւանդ երբ երկու կողմէն ալ է և բոլորովին կը փճացնէ գործարանին սահագահիւս մասը, կը խափանէ սերմնակենդաններու կազմութիւնը և ուղղակի ամուլութեան կ'առաջնորդէ: Բայց պէտք է որ բոլորովին փճացած ըլլայ ամէն բան. որովհետև, եթէ սերմարտադրիչ գործարանի փոքր մաս մը իսկ մնայ, դարձեալ սերմնակենդան կրնայ կազմուիլ:

4. Բացակայութիւն երկու ամորձիներու, իրբև հետեւանք ներքինացման, հիւծումի, (բորբոքման հետեւանքով), բնական չգոյութեան: Մէկ կամ միւս պատճառը յառաջ կը բերէ տեւական և անդարմանելի ամուլութիւն, ինչպէս բացատրած ենք Անկարողութիւն գլխուն մէջ ալ:

5. Երկու կողմէն ալ խցում սերմնաբեր խողովակներու, որ ամենասովորական պատճառն է և յառաջ կու գայ մակամորձիներու բորբոքումէն, իսկ այս վերջինն այ՛ հարիւրին 90 հետեւանք է ջերմամիզութեան: Մնացած տասին պատճառներն են թոքախտը և սիֆիլիսը: Խցում յառաջ կուգայ երբ, բորբոքման հետեւանքով, սերմնաբեր խողովակները կը կծկուին և իրար կը սեղմուին: Ֆինկըր կը յիշէ 242 հիւանդներ՝ բոլորն ալ մակամորձիներու բորբոքումէ վարակուած, որոնցմէ 207ը սերմնակենդան չունէին:

6. Հաստատուած է նաև որ ամուլ կը գտնան Ք. Եառագայրներու ենթարկուած անձեր, երբ

պատահարս կամ հիւանդութիւն մը բուժելու համար ատեն մը կը մնան անոնց ազդեցութեան տակ:

Սերմնակենդաններու չգոյութեան դարձանու մը շատ հազուադէպ է: Մանաւանդ երբ ջերմամիզութեան հետեւանքով բորբոքած են մակամորձիները:

X

Երկրորդ պարագան, երբ նշանակելի կերպով կը նուազին սերմնակենդանները, ընդհանրապէս կրնայ առժամայ վիճակ մը նկատուիլ, և սկզբնապատճառին համաձայն, կա՛մ կը լուանայ, և կա՛մ կը յանգի սերմնակենդաններու բացարձակ անհետացման: Այս վիճակը բնական է ծերերուն, ինչպէս և արբունքի նոր հասնող երիտասարդներուն համար: Կը պատահի նաև իրբև հետեւանք հիւանդութեան մը կամ սեռային չափազանցութիւններու: Ամէնէն սովորական պատճառներն են ջերմամիզութիւն, սիֆիլիսի, թոքախտի, խլիրդի հետեւանքով յառաջ եկած բորբոքումներ: Որքան ատեն որ սերմնաբեր խողովակները բոլորովին խցուած չեն բորբոքումէն, քանի մը սերմնակենդաններ կրնան ճամբայ գտնել, եթէ սերմնակենդանները թուով նուազած են և միեւնոյն ատեն անշարժ, ամուլութիւնը անխուսափելի է. իսկ եթէ սերմնակենդանները կը պահեն իրենց շարժումը, միշտ ծննդագործական իարողութիւն մը կայ, թէև տկար աստիճանով:

X

Երրորդ պարագային, տղամարդը կրնայ զուգաւորութիւն կատարել և սերմ ցայտել. բայց մանրադիտական քննութիւն մը պիտի հաստատէ որ սերմնակենդանները մեռած են, անշարժ: Վաւերական փորձ մը կատարելու համար, անհրաժեշտ է սերմը քննել ցայտումէն մէկ կամ երկու ժամ ետք, և ոչ աւելի ուշ, ֆօնտօլի միջոցաւ զուգաւորութիւն մը կատարել տալով:

Այս տկարութեան պատճառները բազմազան են, — ինչպէս սեռային չափազանցութիւններ կամ յաճախակի սերմնահոսութիւններ, որոնք կը նուազեցնեն ամորձիներուն արտադրիչ կարողութիւնը: Նախ սերմը բնականին համաձայն է, բայց աստիճանաբար կը նոսրանայ, սերմնակենդանները կը նուազին թիւով և շարժնութեամբ, կը պզտիկանան, տձեւ, տհաս կը դառնան: Միւսնոյն աղդեցութիւնը կը գործեն նաև ալքոլամիութիւնը, մորֆինականութիւնը, թոքախտը կամ շաքարախտը, խանգարելով ամորձիներուն անդառութիւնը: Սերմնակենդաններու կազմութիւնը կ'ազդուի ուրիշ պատճառներէ ալ, — ինչպէս սիֆիլիս, խըլիթը, ծիրում — յետակով ծեփուկի սպիտակախտ մասերուն:

Սերմնակենդաններու մահուան աւելի յաճախադէպ պատճառ մըն է սերմի բաղադրիչ մասերուն խտտաբանական մէկ այլափոխումը: Սերմնային փամփուշտներու բորբոքումը, սուր ըլլայ թէ քրօնիկ, նկատելի այլափոխում կը պատճառէ: Այն ատեն սերմը կը դառնայ սովորաբար թարախալից

և երբեմն արիւնոտ, այդ օտար նիւթերն ստանալով սերմնային փամփուշտներու բորբոքած խոռոչներէն. իսկ սերմնակենդանները մեռած կ'ըլլան:

Սերմնակենդանները անշարժ կ'ըլլան նաև շագանակագեղձի հիւանդութիւններու հետեւանքով (փրօսթալթ): Գիտունները հաստատած են թէ սերմնակենդանները որքան ատեն որ սերմնային փամփուշտներուն մէջ կը մնան, անշարժ են, և շագանակագեղձի արտադրած հիւթին չփման կը կարօտին, իրենց բնական շարժունութիւնը ստանալու համար: Կը հետևի թէ կրը շագանակագեղձի հիւանդութիւն կայ, հիւթն ալ չի կրնար արտադրուիլ, և սերմնակենդանները կը զրկուին իրենց գործունէութեան անհրաժեշտ խթանէն:

Սերմնակենդաններու մահուան այս վտանգը կանխելու համար, պէտք է ամէնէն առաջ դարմանել սկզբնապատճառները:

×

Չորրորդ պարագան — սերմի չգոյութիւնը — երեւան կու գայ այն ատեն, երբ տղամարդը կարող է զուգաւորութիւն կատարել պէտք եղածին պէս, բայց սերմ չի ցայտեր, կա՛մ անոր համար որ սերմ չէ արտադրած, և կամ, միզուկին մէջ արգելք մը կայ որ կը խափանէ անցքը:

Այս տկարութիւնը կրնայ ըլլալ բացարձակ կամ առժամանայ բնածին կամ ստացական:

Բնածինը շատ հաղուագէտ է, իսկ ստացականը ընդհանրացած, և յառաջ կու գայ շագանա-

կազեղծի թարախարեր հիւանդութիւններէ, որոնք հետեւանք են ջերմամիզութեան կամ թոքախտի: Երբ ցայտեցուցիչ խողովակներէն մէկը բաց մնայ, սերմը կը նուազի. բայց ոչ նշանակելի կերպով. իսկ երբ երկու խողովակներն ալ խցուին, յառաջ կու գայ սերմի չգոյութիւն: Յայտեցուցիչ խողովակները երբեմն կը փճանան նաև քար հանելու գործողութեանց միջոցին, կա՛մ յետասկողմի միջուկը ծակած ատեն կտրուելով, և կա՛մ պատուելով՝ երբ խոշոր քար մը դուրս կը քաշեն միզամանէն, և վերքին մէջէն:

Յայտեցուցիչ խողովակները երբեմն կը խցուին գննազան նիւթերու թանձրացումով (սերմնակենդան, հոյզ են): Ծեփուկին անզգայութիւնն ալ պատճառ կ'ըլլայ ցայտուժի անյաջողութեան: Պատահած է որ ողնայարի վերքեր բոլորովին անզգայութեան մատնեն ծեփուկը: Ամենասովորական պատճառ մըն է, վերջապէս, միզուկին նեղնալը, որու մասին խօսեցանք նախապէս:

Սերմի առժամեայ չգոյութիւնը հազուադէպ պարագայ մըն է, որ կը պատահի այն մարդոց, որոնք ջղային անկարութեան կը մատնուին ծայրայեղ ցոփութեամբ, գիշութեամբ կամ ջերմամիզութեամբ: Այսպիսի տղամարդիկը սովորաբար անկարողներ են, բայց երբեմն ալ կրնան զուգաւորութիւն կատարել, միայն թէ սերմը չի հոսիր այդ պահուն, այլ քանի մը ժամ ետք, քունի միջոցին, իբրև ակամօյ հոսում: Այս կարգի տկարութիւնը յանկարծ կը սկսի, քանի մը շաբաթ կամ ամիս կը

տեւէ, և յետոյ կ'անհետանայ նոյն յանկարծակաշուութեամբ:

Դարմանը՝ — կախում ունի պատճառներէն:

×

Կնոջ ամլութեան պատճառներէն շատերը չիչեցինք արդէն Անկարողութիւն բաժնին մէջ, ինչպէս են կազմական թերութիւններ, — ձուարաններու չգոյութիւն կամ հիւանդութիւններ, դաշտանի խանգարումներ: Մնաց որ, ձուարանները և ձուանցքը կրկնակ ըլլալով, մէկը կրնայ միւսին տեղը բռնել, մինչդեռ արգանդին համար պարագան բոլորովին տարբեր է: Եթէ արգանդ չկայ, կամ անոր բերանը գոց է, նեղ կամ տեղափոխուած, սերմնակենդանը չի կրնար ներս մտնել և ամլութիւն յառաջ կուգայ: Արգանդի արիւնահոսութիւնները, ուռեցքները, խլիբղը (քանսէր) կը խափանեն արգասաւորումը, այլափոխելով սերմնակենդանը: Սպիտակահոսութիւններն ալ, մանաւանդ երբ թրթու են և թարախայից, խոռոճային ողողելով կամ արգանդին մէջ մնալով արագօրէն կը սպաննեն սերմնակենդանները, անմիջապէս որ հանդիպին: Երբ կուտական թաղանթը կարծր ըլլալով կը փակէ խոռոճային և կ'արգիլէ կանոնաւոր դաշտանը, դարձեալ կրնայ ամլութիւն յառաջ գալ: Ինչպէս տղամարդուն, կնոջ համար ալ ամլութեան պատճառներ են այրամոլութիւնը, խոզերին կամ արգանդային մոլեգնութիւնը, գուգաւորութեան կամ գիշութեան չափազանցութիւնները, կամ խիստ տքնաջան, նստակեաց կեանքը,

Չափազանց գէր կիները սովորաբար ամուլ կը մընան, ինչպէս հաստատուած է կենդանական աշխարհին մէջ ալ. որովհետեւ կնոջ կենսական ոյժերը ծննդական գործարաններէն հեռանալով կը կեղրոնանան ճարպոտ հիւսուածքին վրայ: Ահա թէ ինչո՞ւ շատ մը հարուստ կիներ ամուլ կը մնան շնորհիւ իրենց յոյ, փարթամ կեանքին, որովհետեւ յաճախ սերմը չի կրնար արգանդ հասնիլ: Ընդհանրէն հետեւանքը յառաջ կուգայ երբ միզային փամփուշտը կամ աղիքը լեցուն են: Այս պարագաներուն արգանդի խոտորումները սովորական են. բայց արգանդը կրնայ տեղափոխուիլ նաեւ զուգաւորութեան պահուն ծննդական գործարանի ստացած շարժումներով: Պարզ է որ բոզերը ամուլ կը մնան, որովհետեւ զանազան ծուռ ու մուռ շարժումներ և խորամանկութիւններ կ'ընեն, մանաւանդ ցայտման պահուն չեն թողատրեր այս կամ այն ձեւը. և սերմը չի կրնար արգանդ հասնիլ: Այս կարգի ամբողջեան ենթակայ են մասնաւորապէս ջղային, աւփոտ կիները:

Կարճ խօսքով, ամբողջութիւնը յառաջ կուգայ հազարումէկ պատճառներէ, որոնք երբեմն շատ պարզ են և դիւրաւ դարմանելի. կը բաւէ որ մարդիկ զազափար ունենան կացութեան մասին, սերնդագործական գիտութեան մասին, իրենց իրական վիճակի մասին: Աւելորդ պիտի ըլլար բացատրել թէ բեղնաւոր ամուսնութեան մը համար անհրաժեշտ է բնական ներդաշնակութիւն. մէկ սեռը պիտի լրացնէ միւսը. այր և կին իրարմով պիտի

ամբողջանան, համեմատութիւն պիտի կենայ իրենց ասարիքներուն, դիրքին, կրթութեան միջեւ, խառնուածքները պիտի յարմարին, ճաշակներն և նկարագրիները իրար չպիտի վանեն. աղբապէս, յաճախ յարաբերական ամբողջութիւններ յառաջ կուգան կամ ծնունդները կ'ուշանան, ինչպէս պիտի պատահէր երբ ծննդական գործարանները ո՛չ մէկ համեմատութիւն կ'ունենան: Յետոյ, նկատելի է որ կիները ընդհանրապէս կ'ախորժին առողջ, ուժեղ սղամարդէն, իսկ այրերը կը փնտռեն փափուկ, ձիւնաթոյր, քնքոյշ կիներ. երկուքը իրար կը քաշեն, իրար կ'ամբողջացնեն, և իրենց յարաբերութիւնները բնականաբար արդիւնաւոր կ'ըլլան: Մինչդեռ առնատիպ կին մը ո՛չ մէկ հրապոյր պիտի ունենար սղամարդուն համար, ոչ ալ կնամարդի այր մը՝ կնոջ համար: — Ամբողջեան դարմանները, երբ կազմական թերութիւններէ կամ հիւանդութիւններէ յառաջ կուգան, բնականաբար բժիշկէն կախում ունին: Բայց շատ անգամ, օրինակի համար երբ արգանդը տեղափոխուած է, բնական տեղէն խոտորեցնելով անցքն ալ, զուգաւորութեան զիրքի պարզ փոփոխութիւն մը — չըջած, յետսակողման, կողմնակի, ոքի վրայ, նստած, ծունգի եկած են. — կրնայ արդիւնաւոր ըլլալ. մանաւանդ երբ բժիշկին կարծիքն առնուած է: Օղափոխութիւնները, ծովու կամ լեռներու մաքուր օդը, զուարթ տեսարաններն ալ մեծապէս կ'օգնեն:

## 6. ՉԱԻԱԿՆԵՐՈՒ ՍԵՌԸ

Սեռային կեանքի մէջ, թերեւս ո՛չ մէկ խընդիր այնքան վէճի դուռ բացած է որքան այն հարցը, — թէ ծնողք մը կրնա՞յ իր ուղած սեռէն զաւակ ունենալ: Մինչև այսօր հետազոտութիւններ կը կատարուին այս մասին. եղած են նոյն իսկ քիչ-շատ յաջող փորձեր, ինչպէս Վեննացի Տօքդ. Շէնքի մէթոքը, բայց տակաւին վերջնական տեսութիւն մը չկայ:

Այս խնդիրը քրքրող նորագոյն գիտնականներէն մէկն է անգլիացի Տօքդ. Րըմֆի Տօսըն, անդամ Լոնտոնի Արքայական Բժշկական Ընկերութեան, միջազգային հեղինակութիւն մը, որ 1909ին հրատարակեց մեծադրորդ գիրք մը (The Causation of Sex), ամբողջովին նուիրուած «չծնած երեխային սեռը գուշակելու, կամ ուղած սեռէն զաւակ արտադրելու» հարցին: Իր հետազոտութիւնները հիմնուած են ամբողջովին գործնական փորձերու վրայ, և տոքդորը կը յաւակնի բնութեան մէկ նոր գաղտնիքն երեւան հանած ըլլալ, ինչպէս կը բացատրէ իր յառաջաբանին մէջ:

Մենք պիտի ջանանք ամփոփել այդ տեսութեան հիմնական կէտերը, որոնք ահագին ազմուկ յարուցին, մինչև ցարին պալատը հասնելով:

×

Բժիշկ Տօսընի տեսութեան կորիզն այս է, — Սաղմին սեռը կախում ունի ոչ քե՛ արու ծնողին, այլ սա իր ուղութեան քե՛ ո՞ր ձուարանը հայրայ-

քեց արգասաւորուած ձուիկը: Ան համոզուած է թէ կնոջ մը աջ ձուարանը արու սաղմ կ'արտադրէ, իսկ ձախը՝ եգ: Ուրիշ խօսքով, հայրը աղբեցութիւն չունի սեռի որոշման մէջ, որ բոլորովին կնոջ կը պատկանի: Կինը իր երկու ձուարաններուն մէջ պատրաստ կը պահէ սեռը՝ արդէն իսկ որոշուած ձուիկները, միայն սպասելով արու սերմին արգասաւորման. այրը կամ արուն կ'արգասաւորէ հասունցած ձուիկը, բայց չի որոշեր անոր սեռը:

Այս կերպով, անգլիացի բժիշկը բոլորովին նոր տեսութիւն մը կը պարզէ. որովհետև մինչև այն ատեն եղած յայտնութիւնները, ինչ ձեւով ալ ըլլար, դարձեալ հօր կը վերադրէին դեր մը, սեռի որոշման մէջ: Տօքդ. Տօսըն վճռապէս կը չեղփացնէ հայրը կամ արուն:

Իրմէ առաջ, հին դարերէն մինչև մեր օրերը, կարծիքները թէև այլազան, բայց մէկ ուղղութեամբ կ'երթային: Շատեր կ'ըսէին թէ սեռը բոլորովին կախում ունի արունէն, թէ սերմնակենդանները ո՛չ միայն կ'արգասաւորին, այլ և կ'որոշեն ձուիկին սեռը: Ի գոհրատ կը կարծէր թէ ապագայ սեռը կ'որոշուի արու կամ եգ սերմին յարաբերական գերակշռութենէն, կամ իրրև քանակութիւն և կամ իրրև ոյժ: Լիկէնհօք աւելի առաջ երթալով, կը հաւատար թէ բուն իսկ սերմնակենդաններն են որ տարբեր սեռեր ունին, և հետեւաբար անոնցմէ կախուած է սպագայ սաղմին սեռը:

Վերջապէս, ուրիշ տեսութեան մը համաձայն,

արգասաւորումը տեղի կրնայ ունենալ միայն մարմինս միեւնոյն մասի սերմնակենդանին և ձուիկին միացումէն. այնպէս որ, ձախակողմեան ձուիկը չի կրնար արգասաւորուիլ աջակողմեան սերմնակենդանէ մը և փոխադարձաբար: Այս տեսութեան ջատագով հանդիսացաւ Շէնքէ, որ 1786ին գիրք մը գրեց այդ մասին, հաւաստելով նաև թէ արուները կը ծնին միայն աջ սերմնակենդաններու և աջ ձուիկներու միացումէն. իսկ աղջիկները՝ միայն ձախ սերմնակենդաններու և ձախ ձուիկներու միացումէն:

Տօքդ. Տօքըն կը պնդէ որ արու ձուիկները միայն աջ ձուարաններուն մէջ կը գտնուին, իսկ էգ ձուիկները՝ ձախ ձուարաններուն մէջ: Խնդիր չէ թէ արգասաւորող սերմնակենդանը ո՞ր ամորձիէն ելած է. էականը այն է որ ձուիկներուն սեռը միշտ վերջնականապէս որոշուած է և անյեղի՝ նոյնիսկ ձուարտադրութենէն առաջ: Կը հետեւի ուրեմն թէ անմիջապէս որ ձուիկ մը կ'արգասաւորուի, տղայ մը կամ աղջիկ մը սկսած է աճիլ, և, ո՛չ մէկ արտաքին կամ ուրիշ ազդեցութիւն չի կրնար փոխել ապագայ երեխային սեռը:

Թէ ինչո՞ւ աջ կողմը ընտրուած է մանչերու արտադրութեան համար և ոչ ձախը, այնքան անօգուտ հարցում մըն է որքան հարցնել թէ ինչո՞ւ լեարդը մարմինն աջ կողմը դրուած է: իսկ մաղձը՝ ձախ կողմը:

Բայց բանաւոր է ենթադրել թէ ձախ ձուարանը էգ արտադրելու սահմանուած է անոր հա-

մար որ մարմնին տկար կողմն է, հետեւաբար տկար սեռին ծնունդ պիտի տար: Բոլոր գիտնականներն ալ հաստատած են որ մարդուն ձախ կողմը աջէն աւելի տկար է, ո՛չ միայն մկանային ուժով, այլ և ցաւագին տպաւորութիւններու դիմադրելու կարողութեամբ: Այս իրողութիւնը հաստատուած է նոյն իսկ խլիրդի ատեն, ուր ցաւը աւելի սովորական է ձախ կողմէն: Այդպէս է նաև արգանդի տեղափոխութիւններու ատեն:

Ընդունելով որ միայն մէկ ձուիկ կ'արտադրուի որոշ ժամանակի մը մէջ, հարցը այն է թէ ո՞ր ձուարանէն դուրս կ'ելլէ: Այս հարցումին ալ կը պատասխանեն գիտունները, բսկով որ արտադրութիւնը տեղի կ'ունենայ փոխն ի փոխը, առաջին անգամ մէկ ձուարանէն, երկրորդին՝ միւսէն. որովհետև, թէև երկու ձուարան կայ և երկուքն ալ ընական վիճակի մէջ գործօն են, բայց երկուքն ալ միաժամանակ չեն գործիր:

Միևնոյն երեւոյթը դիտուած է նաև այն կենդանիներուն մէջ որոնք իւրաքանչիւր անգամին մէկ յղութիւն կ'ունենան, — ինչպէս կապիկները, Անշուշտ սրաբազան տարբեր է բազմածին կենդանիներու համար, ինչպէս են խոզը, աղուէսը, շունը, կատուն, դաշտամուկը, ճագարը ևւն. որոնց մէջ իւրաքանչիւր ձուարան մէկէ աւելի ձուիկներ կ'արտադրէ և կ'արձակէ: Միայն ձուարաններու ձուիկ հայթայթած ատենն է որ կենդանին կը թոյլատրէ արգասաւորում. հետեւաբար, բազմածին կենդանիներուն մէջ երկու ձուարաններն ալ միաժամանակ կը գործեն:

×



Շատ հեղինակութիւններ, դանազան ձևերով և գաղափարներով, ընդունած են որ աջ կողմը արուններուն յատկացուած է, իսկ ձախը՝ էգերուն:

Աջ ամորձիքին հիւթը՝ խառնուելով աջ ձուարանի հիւթին՝ կ'արտադրէ մանչ, — ըսած են Իպոկրատ, Անաքսափորաս և նոր գիտուն մը՝ Հէնքէ:

Թէ մօր և թէ հօր աջ կողմը մանչ կ'արտադրէ, որովհետև աւելի տաք է, — կը յայտարարէ կալէն:

Զուգաւորութենէն կաք կինը աջ կողմը դառնալով, սերմն ալ արգանդին աջ կողմը կը հոսի, և մանչ կ'արտադրուի, ըսած է Ապահանցի Ալիսէննա:

Ինո 1870ին, Լոնտոնի բժշկական մեծ օրկանը, Lancet, կը բացատրէր թէ սովորաբար կնոջ աջ կողմին վրայ պառկելը մանչերու ծնունդ կու տայ:

Յետոյ, ուրիշ հոչակաւոր բժիշկ մը, Ալպէրթու Մակնուս դիտած է որ եթէ յղի կին մը քալած ասուն աջ ոտքը ձախէն առաջ շարժէ, մանչ մը պիտի ունենայ: Դարձեալ, եթէ յղի կնոջ մը աջ կտորձքը աւելի պինդ է և աւելի լայն, մանչ մը պիտի ունենայ:

Նորագոյն հեղինակութիւն մը, Հէյվլօք Էլիս, դիտած է որ տղամարդիկ աջ աչքով աւելի լաւ կը տեսնեն, իսկ կիները՝ ձախով: Այս պարագան ալ փաստ մը կը նկատուի կնոջ աջ կողմին՝ արուններու սահմանուած ըլլալու վարդապետութեան:

×

Ինչպէս պարզեցինք, այս նոյն վարդապետութեան համաձայն, տղամարդը կամ արուն ո՛չ մէկ ազդեցութիւն ունի ապագայ երեխայի սեռին որոշման մէջ: Արգասաւորման միջոցին, սերմը կը հոսի ցայտեցուցիչ խողովակներուն միջոցաւ, երկու ամորձիքներէն միանգամայն: Սերմնակենդաններու այս խառնուրդէն բաղդաւոր ունակենդան մը կ'արգասաւորէ խնաւով պատրաստուած և սեռը որոշ ձուիկ մը, որ ելած կ'ըլլայ մէկ ձուարանէ: Բոլորովին բազդի խնդիր է թէ ձուիկի մը շուրջը հաւաքուած սերմնակենդաններէն ո՞րը իսկապէս կ'արգասաւորէ ձուիկին կորիզը: Հարցը այն է որ տղամարդուն դերը կը վերջանայ մէկ պատահական սերմնակենդան հայթայթելով: Ուրեմն կարելի՞ է հաւատալ թէ այս սերմ-բջիջը, որ արագօրէն կազմուած է ամորձիքներուն մէջ, ուրիշ հարիւր հազարաւորներու մէջէն ընտրուած է ապագայ մանուկին սեռը որոշելու: Իր կեանքի պատմութիւնը շատ կարճ է, և ձուիկին հետ իր յաջող միացուէր՝ բոլորովին դիպուածական:

Տօքք. Լէնհուէք, անդամագննութեան փորձէսէօր Փէյթալի համալսարանին, իր կարգին կենսաբանական փորձերով հաստատած է որ զաւակներու սեռը կ'որոշուի ո՛չ թէ երկու ծնողներուն, այլ միայն մէկուն կողմէ. և այդ մէկը մայրն է, ոչ թէ հայրը: Ծիշդ է որ այսօրուան մանրադէտները չեն զօրեք արու ձուիկ մը հզէն դանազանելու. բայց գիտունները կը հաւատան թէ օր մը կարելի պիտի ըլլայ կատարելագործուած մանրադէտով մը, Ռէօնթ-Կէնեան կամ ուրիշ ճառագայթներով հաստատել այդ

տարբերութիւնը: Անգլիոյ բժշկական պաշտօնա-  
թերթը կը գրէ:

«Մարդկային տեսակին, ինչպէս և շատ մը կեն-  
դանիներու մէջ, ձուրիկները սեռային տարբերու-  
թիւն մը չեն ցուցներ իրենց հիւսուածարանական  
կամ քիմիական հանգամանքներով: Բայց այդ  
մանրամասնութիւններուն մէջ նմանութիւնը կրնայ  
միայն երեւութական ըլլալ, և ոչ թէ իրական: Բնութիւնը  
շարունակ կ'ուսուցանէ մեզ թէ տար-  
բերութիւն, աննմանութիւն կրնայ գոյութիւն ու-  
նենալ և մե'նք չենք կրնար նշմարել: Յանդուգն  
հիւսուածարան մը պիտի ըլլար այն որ պիտի պն-  
դէր թէ տարբերութիւն չկայ նախահիւթի երկու  
կոյտերու միջեւ, պարզապէս անոր համար որ իր  
մանրադէտը ոչ մէկ տարբերութիւն կը ցուցնէ:»

Այսպէս ուրեմն, սեռը որոշելը միայն  
կնոջ առանձնաշնորհն է: Ան ձուրիկ մը (արու կամ  
էգ) կը պատրաստէ ճիշդ այնպէս ինչպէս սպասուէր  
մը կրակ պիտի պատրաստէր և վառէր. կրակը  
կրնայ ըլլալ հանքածուխէ կամ փայտէ. լուցկի մը  
պէտք է որ կրակը բռնկցնէ: Լուցկին կրակարա-  
նին մօտենալով կը վառէ կրակը — փայտ ըլլայ  
թէ հանքածուխ—բայց հանքածուխի կրակը փայ-  
տի կրակի չի փոխեր, և փոխադարձաբար: Միեւ-  
նոյն եղանակով, սերմնակենդանի մը մուտքը  
պատրաստուած ձուրիկին մէջ յառաջ կը բերէ երե-  
խայի մը աճումը, և կը ծնի մանչ մը կամ աղջիկ  
մը, նայած թէ ո՞ր ձուարանը պատրաստեր է ձուրի-  
կը: Հետեւաբար, տղամարդուն դերը կը կայանայ

պարզապէս լուցկին բռնկցնելու մէջ: Տղամարդը  
կրակը վառողն է, ո՛չ թէ զնողը: Արիստօտէլ շա-  
տոնց կը հաստատէր թէ կինը նախնական նիւթ կը  
հայթայթէ ապագայ անհատին աճման համար. և  
տղամարդուն պաշտօնն է մզում տալ, որուն հե-  
տեւանքով ապագայ անհատը գոյութիւն կ'առնէ:  
Այր և կին մէկտեղ չը մասնակցին երեխային աճ-  
ման, անոր անհատականութեան, անոր ժառան-  
գականութեան, նախահայրական յատկանիշներուն  
և նմանութեան:

Շատ մը փորձերով հաստատուած է որ մէկէ  
աւելի անգամներ ամուսնացող կիներ շարունակ  
միեւնոյն սեռէն զաւակ ծնած են. մինչ եթէ տղա-  
մարդն ըլլար սեռը որոշողը, պէտք էր որ մէկին  
աղջիկ, միւսէն մանչ ծնէր: Կը նշանակէ որ այդ-  
պիտի կիներուն մէկ կամ միւս ձուարանը ամուշ  
կը մնար: Միեւնոյն իրողութիւնները երեւան հան-  
ուած են նաև մէկէ աւելի կիներու հետ ամուսնա-  
ցած այրերու պարագային:

Տօքզ. Տօքըն կենդանական աշխարհն ալ  
փաստեր կը յիշէ, իր տեսութիւնն ապացուցանելու  
համար: Դեռ 1809 թուականին, անգլիացի գիտ-  
նական մը կը գրէր. — «Ընտանի չորքոտանիներու  
հօտերուն մէջ, անսովոր բան չէ պատահիլ էգերու  
որոնց ծնունդները գր'թէ միշտ միեւնոյն սեռին կը  
պատկանին, թէև մէկէ աւելի զանազան արունե-  
րու զուգաւորութենէն սրբասաւորուած ըլլան:  
Միւս կողմէ, երբեք չեմ պատահած որ արունին  
ալ այդպէս միեւնոյն սեռէն ձագ արտադրեն տար-

բեր էգերու հետ զուգաւորուելով: Հետեւապար էգ ծնողն է որ գլխաւոր աղբեցութիւնը կը գործէ սեռի որոշման մէջ»:

Նորագոյն փորձեր շատ կան այս մասին: Գիտնական մը կը հաստատէ որ կով մը արգասաւորուեցաւ 15 զանազան ցուրերու կողմէ, և 17 հորթ ունեցաւ, բոլորն ալ էգ. այսինքն, 15 տարբեր արուներ չկրցան մէկ արու արտադրել: Դարձեալ, զամբիկ մը արգասաւորուեցաւ աւելի քան վեց տարբեր յովատակներու կողմէ, որոնց մէկ քանին յաճախ գործածուեցան — և ունեցաւ տասը արու քուռակ: Մէկէ աւելի արուներ չկրցան ազդել քուռակներու սեռին վրայ, և սպահովաբար մայրը ամուլ էր մէկ կողմէն, և միայն աջ ձուարանը կը գործէր:

Երբ ուռեցք մը կամ ուրիշ հիւանդութիւն մը կը պատահի, ձուարաններէն մէկը կամ միւսը կ'ուրելու անհրաժեշտութիւն կը ծագի: Ձուարանահատութեան այդ գործողութիւններու հետեւանքով ալ, որոշապէս յայտնի կ'ըլլայ երեխային սեռը: Այսպէս, եթէ ձախ ձուարանն է կտրուած իր բուրբ հիւսուածքով, կինը այնուհետեւ մտնել զուսկ պիտի ունենայ, ինչպէս հաստատած են բազմաթիւ փորձեր, և փոխադարձաբար: Իսկ երբ երկու ձուարաններն ալ կտրուին, բնականաբար ձուարտադրութիւնը բացարձակապէս կը դադրի, և յառաջ կու գայ տեւական ախութիւն, դաշտանն ալ դադրելով:

X

Ինչէն է որ ընդհանրապէս ամէն երկրի կամ ազգի մէջ՝ իրրեւ ամբողջութիւն, մանչերը աւելի բազմաթիւ կ'ըլլան քան աղջիկները:— Զանազան վիճակագրութիւններու համաձայն՝ այդ տարբութեան չափն է 106 մանչու դէմ հարիւր աղջիկ:

Եւ այս առաւելութիւնը պատահական բան մը չէ: Գիտուններ հաստատած են որ աւելի շատ մանչ կը ծնի Գերմաներուն, Յրանսացիներուն, Անգլիացիներուն և եւրոպական ուրիշ քաղաքակիրթ ցեղ'րու մէջ: Տարբերութիւնն աւելի մեծ է Սպանիոյ, Ռումանիոյ, Յունաստանի մէջ: Մեր երկիրը տարրական այս վիճակագրութենէն ալ զուրկ է, — թէև Սահմանագրութենէն ի վեր զանազան փորձեր կ'ըլլան հանրային պործիչներու կողմէ — որպէսզի կարելի ըլլար աւելի ծանօթ օրինակներ տալ: Միայն թէ, տարակոյս չկայ որ, գոնէ գաւառներու մասին խօսելով, մանչերը միշտ մեծամասնութիւն կը կազմեն. իսկ եթէ Պօլսոյ մէջ աւելի շատ աղջիկ կը տեսնուի, այդ չի նշանակիր որ աւելի շատ աղջիկներ կը ծնին, այլ ամուսնացողները ցանառ են, ցիր ու ցան են, և աղջիկներու բազմութիւն մը տունը կը մնայ շարունակաբար:

Մրու ծնունդներու առաւելութիւնը գիտուած և որձանագրուած է աւելի քան երկու հարիւր տարիէ ի վեր: Խնդիր է թէ ինչու ընտելունն աւելի մանչ կ'արտադրէ, քան աղջիկ:— Անշուշտ տեղը լեցնելու համար արուներու մահուան, որ աւելի շատ է, — կը պատասխանեն գիտնականները:

Ըսինք արդէն որ, մանչերու ծնունդին դժուարութիւններն ու վտանգները աւելի մեծ են, արու սաղմն աւելի խոշոր ըլլալով: Ո՛չ միայն մանչուն գլուխը աւելի մեծ է աղջկան գլուխէն, այլև սովորաբար ամբողջ մարմինը: Ահա թէ ինչո՛ւ մեռելածի՛ն մանչերու թիւը աւելի շատ է քան մեռելածին աղջիկներու թիւը, — 100ի դէմ 138: Վիժումները և կանխահաս ծնունդներն ալ աւելի յաճախ մանչեր են քան աղջիկներ: Այնպէս որ, ոչ միայն աւելի բազմաթիւ են կենդանի արուները, քան չծնած մեռնող արուները, այլ և արուներու յղացումը աւելի շատ է քան էգերունը, — 100ի դէմ 110: Նոյն իսկ ծնունդէն ետք, մասնաւորապէս կեանքի առաջին տարուան միջոցին, մեռնելու աւելի շատ հաւանականութիւններ կան արու երեխաներու համար. այնպէս որ, թէև աւելի մանչ կը ծնի քան աղջիկ, բայց համեմատութիւնը գրեթէ հաւասար գծի վրայ կու գայ առաջին տարուան վերջը, քանի որ մանչերու մահաթիւը աւելի մեծ է:

Կեանքի առաջին չորս տարիներու միջոցին, մանչերու մահուան համեմատութիւնը թէև աստիճանաբար կը նուազի, բայց դարձեալ աւելի մեծ է քան աղջիկներու թիւը, չնայելով որ երկու սեռերն ալ միեւնոյն հոգածութիւնը, միեւնոյն սրնունդը կը վայելեն:

Այս հայիւնները եղած են Եւրոպայի մէջ. սակայն շատ դիւրահասակնալի են մեզի համար ալ: Թուրքիան ըլլալով երկիր մը՝ ուր ընդհանրապէս

զարհուրելի է երեխաներու և մանչ երեխաներու մահուան համեմատութիւնը, մանաւանդ առաջին տարուան մէջ: Պատճառները բազմազան են, անշուշտ, մնուողի պակասէն մինչև անորակելի աղան ու կեղտը, ուր կ'աճին, «կը ծլին ու կը ծաղկին» մտմաւորապէս Հայաստանի գիւղերու թշուա՛ն մանկիկները...: Սեռերու առանձնայատուկ կեանքն ալ մեծ դեր կը կատարէ, մասնաւորապէս չափահասներու մէջ, Կնոջ կեանքը խկապէս տունին մէջ կ'օնցնի, մինչ տղամարդը աւելի շատ դուրսն է և սյս իսկ վիճակը զինքն աւելի կ'ենթարկէ մահուան վտանգներու, որոնցմէ ընդհանրապէս զերծ են կիները: Մանչերը և տղամարդիկը թէ՛ իրենց հաճութիւններուն և թէ՛ զբաղումներուն մէջ կը մատնուին շատ մը փորձանքներու, և կը հանդիպին ո՛չ միայն մահացու արկածներու, այլ և հիւանդութիւններու, և սչսպէս կ'աւելցնեն արուներու մահուան համեմատութիւնը:

×

Այս պակասին հակազդելու համար, բնութիւնը ստիպուած է աւելի շատ մանչ արտադրել քան աղջիկ, Բայց ի՞նչպէս կ'ապահովէ այդ առաւելութիւնը:

Աւելի արուներ արտադրելու համար, ամէնէն առաջ անհրաժեշտ է աւելի շատ արու ձուիկներ ունենալ. այսինքն աւելի ջաշակողմեան քան թէ ձախակողմեան: Իսկ ասոր համար ալ պէտք է որ աջ ձուարանը աւելի ընդարձակ լլայ ձախէն: Ար-

դէն սովորաբար ձուարանները միեւնոյն մեծութիւնը չունին . այլ ձախէն մեծ է :

Այս իրողութեան ուրիշ մէկ ապացոյցն ալ այն է որ երկւորեակ մանչերը աւելի բազմաթիւ են քան երկուորեակ աղջիկները : Քննութեամբ մը հաստատուած է որ 150,000 երկուորեակներէ 50,000ը մանչ էին , 46,000ը աղջիկ :

Բնութիւնը ո՛չ միայն բաղդատարար կ'աւելցընէ արու կամ աջակողմեան ձուրիկներու թիւը , այլ և , անոնց արգասաւորումը աւելի հաւանական կը դարձնէ , արգանդին աջ կատարը , աջ ձուանցքը , աջ ձուարանը այնպէս մը զետեղելով որ , սերմնակենդանը աւելի դիւրութեամբ կը հպի քան ձախ կողմէն : Նմանապէս , աջ ձուանցքը աւելի լայն է քան ձախը , այնպէս որ սերմնակենդանին անցքը կը դիւրանայ :

Գիտուած է որ Հրէաները աւելի շատ մանչ կ'ունենան քան քրիստոնեաները , Գիտունները այս պարագան ամբողջովին կը վերագրեն կրօնական և բնկերային պատճառներու : Հրէական կրօնը խստօրէն կը դատապարտէ .-- 1. Յղութեան արուեստական խափանումը . 2. Վիժումը . 3. Զաւակ «անցընելու» նպատակով դեղերու գործածումը :

Յայտնի է որ կիները աւելի դիւրութեամբ կը վիժեն արուն . հետեւաբար , երբ մարդիկ վիժումը կ'արգիլեն , պատճառ կ'ըլլան որ աւելի շատ արուներ ծնին : Դարձեալ հրէա կիները աւելի նախանձախնդիր են մանկատածութեան , իսկ մանկատապանութեան մասին շատ գաղափար չունին :

×

Ուրիշ տեսութեան մը համաձայն , երբ կին մը աջ կողմը դառնայ զուգաւորութեցեալ անմիջապէս ետք , արու զաւակ կ'ունենայ , իսկ երբ ձախ դառնայ , աղջիկ : Այս տեսութիւնը ջատագոված էր Սպահանցի բժիշկ Սվիտենա դեու տասներորդ դարուն , ինչպէս յիշեցինք , նաև Ալպէրթու Մակնուս՝ 1582ին : Ֆրանսացի բժիշկ Միյո ալ 1816ին նոյն գաղափարը կը յարսնէր : Բայց անոնք ծանօթ չէին անդամաղնեական պատճառներուն . որովհետև , դեու վերջերս էր որ հաստատուեցաւ թէ ձուանցքը կամ փալլոսկան խողովակները արգասաւորման ամէնէն սովորական տեղն են :

Սովորաբար կիները երեք աջ կողմն վրայ կը պառկին : Այդ իսկ պատճառով , արգանդը իր ծանրութեամբ կ'իջնէ դէպի աջ կողմի ստորին մակարդակը , Թափանն ալ իր կարգին աւելի դէպի աջ կը մղէ արգանդը : Արգանդին այս ձեւը , երբ աջ ձուանցքը աւելի ցած կ'իջնէ կոնքին մէջ քան ձախը (կինը կունակի վրայ պառկած ատեն) , պատճառ կ'ըլլայ որ աւելի մեծ քանակութեամբ սերմ հոսի աջ ձուրիկին մէջ , և հետեւաբար աւելի շատ են արու ձուրիկներու արգասաւորման հաւանականութիւնները : Արդ , երբ կինն իր աջ կողմը դառնայ զուգաւորութեանն անմիջապէս ետք , սերմին աջ ձուանցքը մտնելու և այսպէս աջ ձուրիկ արգասաւորելու հաւանականութիւններն անմը արգասաւորելու հաւանականութիւններն անգամ մըն ալ կ'աւելնան , որովհետև այն ատեն աջ ձուանցքին արգանդաբերանը կը զանուի ամէնէն ցած մակարդակին վրայ : Միեւնոյն պարագան

պիտի կրկնուի, երբ կինը ձախ կողմ դառնայ : Այսպէս որ, անդամազննական տեսակէտով ճիշդ է որ զուգաւորութենէն անմիջապէս ետք դիրքի փոփոխութիւն մը կ'օգնէ ուղուած սեւը արտադրելու :

Սակայն պէտք չէ մտնայ թէ, սեռի որոշման տեսակէտով յաջող արգասաւորման մը համար, առաջին էական պայմանը այն է որ, արգասաւորելի ձուիկը իր համապատասխան ձուարանէն ելած լլուայ : Ճիշդ է որ դիրքի փոփոխութեամբ մէկ կամ միւս ձուանցքը կրնայ աւելի շատ սերմ ընդունիլ, բայց սերմնակենդանները իրենց շարժնութեան շնորհիւ կրնան մեծ արագութեամբ չրջան ընել, ինչ գէս կը հաստատեն առանց իրական ներմուծման տեղի ունեցած յղութիւնները :

Կողմնակի դիրքի այս ձեւը շատ կը փորձեն անասնաբոյժները, որոնք դէպի վար կը հակն կովին կամ զամբիկին զլուխը, և կը կեցնեն մէկ կողմը դառիթափն ի վար, որպէս զի սերմնակենդանը ուղղուի արգանդին աջ կողմը որ դէպի վար կը գտնուի, և այսպէս իրենց ուզած սեռն արտադրուի :

Բազմաթիւ փորձերով հաստատուած է այս ձեւին յաջողութիւնը. իսկ երբ կը ձախողի, պատճառն այն է որ ուղուած սեւը արտադրող ձուարանը ձուիկ չէ արտադրած : Ըսինք արդէն թէ միածին կենդանիներուն մէջ ձուարտադրութիւնը տեղի կ'ունենայ մէկ կողմէն, և փոխն ի փոխը :

Կողմնակի պառկուածքը հետաքրքիր երևույթներ յառաջ կը բերէ նաև յգի կնոջ մէջ : Երբ

արու ձուիկը արգանդին աջ կէսին մէջ կը մանէ, գլխաւորաբար այդ կողմին վրայ կ'աճի. իսկ էգը ձախ կողմին վրայ, Ահա թէ ինչու յգի կնոջ մը դաւկին սեւը կ'ազդէ իր պառկելու դիրքին վրայ. որովհետև եթէ աղջիկով յգի կին մը իր ձախ կողմին վրայ պառկի, ցաւ չզգար, քանի որ սաղմին և «ընկեր»ին յարաբերութիւնը չի խանգարուիր. իսկ երբ միւս կողմը դառնայ, երեխան կ'իյնայ աջ կողմն ի վար, և պատճառ կ'ըլլայ որ յաչքչուի ձախ կողմը հաստատուած վրասնթման (ընկերը) : Ցաւը կը ստիպէ զինքը նորէն միւս կողմը դառնայ : Միեւնոյն երեւոյթը տեղի կ'ունենայ աջ կողմին համար ալ :

×

Իր տեսութեան բոլոր մանրամասնութիւնները պարզելէ ետք, Տոքթ. Տոսոն վստահաբար կը յայտարարէ թէ կրցած է ճշգորէն գուշակիլ իրեն ծանօթ յղիներու և ուրիշներու ծնելիք զտակներուն սեւը : Հարիւրին 97 յաջողած է. մնացած երեք ձախողանքին պատճառն այն է որ մայրը չէ կրցած ճշգորէն ըսել թէ ո՞ր ամսուն կը սպասէ ծննդաբերութիւնը : Այսպէս, երբ հիւանդ մը բռնէ որ Յուրտիսն սողաբերք պիտի ունենայ, և բժիշկը աղջիկ մը կանխատեսէ, բայց ծննդաբերութիւնն իրապէս տեղի ունենայ Մայիսին կամ Յուլիսին, բնականաբար, գուշակութիւնը սխալ կ'իլլէ : Միայն երբ կամ անկանոն ձուարտադրութեան պարագային. կամ այսինքն, երբ փոխանակ իւրաքանչիւր ձուարտա-

դրութեան միջև 28 օր կամ չորս շաբաթ անցնելու, 21 կամ 30 օր կ'անցնի: Հաշիւը կը խանգարուի նաև երբ երկուօրեակներ կը ծնին տարբեր սեռէ. կամ երբ յղութիւն կը պատահի կաթնատուութեան միջոցին, այսինքն երբ սովորաբար դաշտանը կը դադրի:

Գաշտանը ձուարտադրութեան արտաքին նշանն է: Արդ, 28 օր կամ չորս շաբաթ սահմանելով դաշտանի պարբերականութիւնը, տարուան 52 շաբաթներու միջոցին կ'ունենանք 13 ձուարտադրութիւն: Անշուշտ, եթէ դաշտանը անդի կ'ունենայ 21 օրը անգամ մը, աւելի շատ ձուարտադրութիւն պիտի ըլլայ: Իսկ եթէ 30 օրը անգամ մըն է, հազիւ 12 ձուարտադրութիւն, ի.բ.ք.քանչիւր վեց տարին 13 ըլլալու պայմանաւ:

Այս մանրամասնութիւններն աչքի առջև ունենալէ ետք, բժիշկը, ցուցակի մը համաձայն, կրնայ ճշգրտէն գուշակել զաւելին սեռը, յղի կնոջ ուղղելով հետեւեալ հարցումները. —

1. Քակի՞ օրը անգամ մը դաշտան կ'ունենաս:
2. Քակի՞ օր կը սեւ խտափակուի դաշտանը:
3. Միշտ կանոնաւոր է դաշտանը:
4. Ե՞րբ ծնաւ ձեր վերջին զուսակը (պէ՞տ է յայտնել տարին, ամիսը եւ օրը):
5. Աղջի՞կ եր քե մասէ:
6. Ո՞րքան ասկէ ծիծ տուիք երեխային, կամ արդե՞ք տուիք:
7. Ծննդաբերութենէ ետք, ե՞րբ վերական դաշտանը:
8. Երեխայի ծնանդէն ի վեր վիճակ տեղի ունեցա՞ծ է:

Բնական յղութեան շրջանն ըլլալով 280 օր, կամ 7 օրնոց 40 շաբաթ, երբ երեխայի մը ծնունդի

օրը գիտնանք, եւ կ'երթանք մինչև 40 շաբաթ, ձուարտադրութեան կամ արգասաւորման ամիսը գտնելու համար: Երեխային սեռը ծանօթ ըլլալով, յետոյ փոխն ի փոխը գէպի առաջ կուգանք այդ ձուարտադրութեան ամիսէն, մինչև որ կը հասնինք տասներորդ ձուարտադրութեան շրջանը, նոր երեխայի սպասուած ծնունդի ամիսէն առաջ, յաւելուածական կամ 13րդ ձուարտադրութիւն մը աւելի հաշուելով ի.բ.ք.քանչիւր Գեղեմեմբերի եւ յաջորդ տարուան Յունուարի միջև:

Որովհետեւ տարին 13 ձուարտադրութիւն տեղի կ'ունենայ, կը հետեւի որ եթէ մէկ տարուան Հոկտեմբերի ձուարտադրութիւնը արգասաւորուի, յաջորդ տարուան Հոկտեմբերի ձուարտադրութիւնը հակառակ սեռէն պիտի ըլլայ. որովհետեւ 13 թիւը կայ երկու հոկտեմբերներուն միջև. այնպէ՛, որ, եթէ յղի կի՛ն մը երեխայ մը ունայցեր է մէկ տարուան մէկ տեւուան միջոցին եւ ուրիշ մը՝ յաջորդ տարուան միեւնոյն ամսուան մէջ, սեռը հակառակը պիտի ըլլայ: Ասոր օրինակները հաստատուած են բազմաթիւ փորձերով. նոյն իսկ Անգլիոյ արքայական ընտանիքին մէջ (Վիքթորիա թագուհի եւն.): Մնաց որ, արքայական կամ ազնուազետական ընտանիքներու մէջ աւելի դիւրին է ճշգրիտ սեռերը. որովհետեւ, անոնց զաւակներուն ծնունդի թուականները մանրամասնօրէն կ'արձանագրուին տօմարներու մէջ:

Այսպէս ուրեմն, ծնող մը իր ուզած սեռէն զաւակ ծնելու համար, պէտք է արգասաւորումէ

խոսափի ա՛յն ամիսներուն որոնց միջոցին իր չու-  
զած սեռէն ձուարտադրութիւն մը տեղի կ'ունենայ:

Հետեւաբար վերջին անգամ ծնած զաւելին  
սեռէն տարրեր զաւակ մը ունենալու համար,  
անհրաժեշտ է նախ գտնել վերջին զաւելին ձուար-  
տադրութեան ամիսը. այսինքն այն ամիսը որու  
միջոցին արձակուած ձուիկը արգասաւորուեցաւ:  
Սեռը արդէն ծանօթ լլլալով, փոխն ի փոխը կը  
հաշուենք ամսէ ամիս և այսպէս կը գտնենք ա՛յն  
ամիսները որո՞նք սեռով կը համապատասխանին վեր-  
ջին ձուիկը արտադրող ամիսին: Այդ ամիսներու  
միջոցին ո՛ր և է յարաբերութիւն պէտք չէ ունե-  
նալ: Եթէ արգասաւորում տեղի ունենայ անկէ  
յետոյ, միւս ամիսներէ մէկուն միջոցին, ապահովա-  
բար պիտի ծնի վերջին նորածինի հակառակ սեռին  
պատկանող երեխայ մը:

Ինչէ՛ն է որ ցարուհին յաջորդաբար չորս  
աղջիկ ծնաւ, և վերջապէս մանչ մը, թէ և փրօֆ.  
Շէնքի պատուէրներուն կը հետեւէր: Տօքդ. Տօքըն  
գիտել կուտայ թէ ինք ճշգրտէն գուշակեց վերջին  
երեք զաւակներուն սեռը, և եթէ իր մեթոտին  
հետեւին, յուսախար չպիտի ըլլային: Այսպէս,  
ցարուհին աղջիկ որ ծնաւ (Օլկա) 1895 Նոյեմբեր  
15 ին: Ետ երթալով 280 օր կամ 40 շաբաթ, կը  
տեսնենք որ ձուիկի արգասաւորումը տեղի ունե-  
ցաւ 1895 Փետրվարի առաջին շաբթուն. հետեւաբար,  
1895 Փետրվարը էգ ձուարտադրութիւն ըլլալով,  
1895 Նոյ. 15 ին ծնունդ առաւ աղջկան մը:  
Երկրորդ զաւակը, Իշխանուհի Թաթիանա,

ծնած էր 1897 Յունիսին: Բառասուն շաբաթ ետ  
կ'ընէ 1896 Սեպտեմբեր, — ձուարտադրութեան  
թուականը: Որովհետև 1895 Փետրվարը էգ ձու-  
արտադրութիւն էր, 1896 Փետրվարը արու ար-  
տադրութիւն պիտի ըլլար. այսպէս 1896 Մարտը  
պիտի ըլլար էգ ձուարտադրութիւն, Ապրիլը՝ ա-  
րու, Մայիսը էգ, Յունիսը՝ արու, Յուլիսը՝ էգ,  
Օգոստոսը՝ արու, իսկ 1896 Սեպտեմբերը՝ էգ. որով  
աղջիկ մը ծնաւ 1897 Յունիսին:

Երրորդ զաւակը, Իշխանուհի Մարիա, ծնաւ  
1899 Յունիսին. այսինքն՝ երկու տարի ետք մի-  
եւնոյն ամսուն, սեռն ալ նոյնն ըլլալով: Զուար-  
տադրութեան ամիսը նորէն պիտի ըլլար 1898  
Սեպտեմբեր, և որովհետև 1896 Սեպտեմբերը էգ  
ձուարտադրութեան շրջանն էր, 1897 Սեպտեմբե-  
րը պիտի ըլլար արու, իսկ 1898 Սեպտեմբերը՝  
էգ, — ինչպէս եղաւ իրականին մէջ:

Վերջապէս, չորրորդ Իշխանուհին, Անասթա-  
սիա, ծնաւ միեւնոյն ամսուն, 1901 յունիսին,  
այսինքն Մարտայէն երկու տարի ետք: Այստեղ  
ալ ձուարտադրութեան ամիսը պիտի ըլլար 1900  
սեպտեմբեր, և որովհետև 1898 սեպտեմբերը էգ  
ձուարտադրութեան օր էր, 1899 սեպտեմբերը պի-  
տի ըլլար արու, իսկ 1900 սեպտեմբերը՝ էգ, — և  
անա ծնաւ Իշխանուհի մը:

Յանկալի գահաժառանգը ծնաւ 1904 օգոստո-  
սին: 40 շաբաթ ետ երթալով, կը տեսնենք որ  
ձուարտադրութեան ամիսը պէտք է ըլլայ 1903  
նոյեմբեր: Ուրեմն եթէ 1900 սեպտեմբերը էգ ձու-



արտադրութեան շրջան էր և ծնունդ տուաւ աղ-  
ջկան մը, 1901 սեպտեմբերը պիտի ըլլար արու :  
1902 սեպտեմբերը՝ էգ, իսկ 1903 սեպտեմբերը՝  
արու . հետեւաբար 1903 հոկտեմբերը էգ ձուար-  
տադրութիւն պիտի ըլլար և 1903 նոյեմբերը՝ ա-  
րու . և ձուիկը արգասաւորուելով, 1904ին ծնաւ  
առաջին արու զաւակը, իշխան Ալէքսի :

×

Գիտունները կը հաւատան թէ օր մը կարելի  
պիտի ըլլայ, Բ. ճառագայթներու կատարելագոր-  
ծումով, դիտել ձուարաններու ձուարտադրու-  
թիւնը, ինչպէս այժմ կը տեսնուին մարմինն մէջ  
եղած վէրքեր, ուռեցքներ, օտար նիւթեր, նաև  
ջախճախուած ոսկորներ :

Երբ այդ օրը հասնի, այն ատեն շատ դիւրին  
պիտի ըլլայ ուզուած սեռէն զաւակ ունենալ, և  
մասնաւորապէս արքայական տունները պիտի ազա-  
տին մտահոգութենէ, նոյն իսկ առաջին ծննդա-  
բերութեամբ մանչ մը ողջունելով : Բայց մինչեւ  
այն ատեն, ուրիշ միջոց չկայ, եթէ ոչ հաշուել ա-  
ռաջին զաւակի ծնունդին նախընթաց պարագաները :  
Տօքդ . Տօսըն կ'եզրակացնէ թէ իր մէթոտը կը  
յաջողի առաջին ծնունդներէն ետք . բայց չի կրնար  
գուշակել անդրա՛նիկ զաւակին սեռը :

## ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

### Հիւանդութիւններ

#### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Մեր «նահապետական» բարոյականը թող չի տար  
որ վէրքերը իրենց բովանդակ մերկութեամբ երե-  
ւան հանուին : Եւ ահա թէ ինչո՛ւ, չնայելով որ վի-  
ներական ատեմը ահաւոր համեմատութեամբ  
կ'աճին Պոլսէն մինչեւ Գասթէմունի, Խարբերդէն  
մինչեւ Խնուս, Թորթումէն մինչեւ Ատանա . բայց  
մարդիկ աւելի տրամադիր են ամէն բան ծածկե-  
լու, քան սրտցաւ աղդարարութեամբ մը մեր ա-  
րեւելեան քունը վրդովելու . . .

Ի՛նչ կասկած որ, «աւերեալներ»ը, կամ աւելի  
ճիշդ՝ մարդկային «աւերակներ»ը ահագին բազմու-  
թիւն մը կը կազմեն հայ ժողովուրդին մէջ, այ-  
սօր աւելի ստուարաթիւ են քան երէկ, և ներկայ  
ընթացքով, ապահովաբար երկիւղալի աղէտի մը  
համեմատութիւնները պիտի առնեն վաղը :

Պանդխտութիւնը, գաղթը, սեղական սեղմ  
ու ամեղուկ կենցաղը, գաղանի յարաբերութեանց  
անզգուութիւնները, անպաշտութիւնը, սոցիալու-  
թիւնն ու անտարբերութիւնը թերեւս ոչ մէկ պա-

րագայի մէջ այնքան քստմնելի հետեւանքներ կ'ունենան, որքան սեռային կեանքի մէջ: Եւ զարմանալի չէ որ Հայաստանի և Անատոլուի խորերը, ամէնէն անձանօթ, կեանքէ և հաղորդակցութենէ պրկուած գիւղերուն մէջ անգամ, այսօր ընտանի բաւ մը դարձեր է սիֆիլիսը: Դեռ անցեալ տարի, Ռնուսի մէկ գիւղին մէջ իրարու ետեւէ կը մեռնէին երեք սիֆիլիսիք երիտասարդներ, զարհուրելի տանջանքներ կրելէ յետոյ. իսկ 8—10 տարիէ ի վեր կառավարութիւնը յատկապէս շրջուն բժիշկներ կը կտրգէ Գասթէմուենի նահանգին համար: Չենք ուզիր կրկնել Ամերիկայէն վերադարձողներու պատմութիւնները, ոչ ալ Պոլիս, Իզմիր կամ ուրիշ կեդրոններու մէջ ճարակող ախտաւորութիւնները:

Եթէ մեր պատուարժան բժիշկները, քիչ մըն ալ ընկերաբանի մտահոգութիւններ խառնէին իրենց արհեստի պահանջներուն, անշուշտ պրծախօս պատմութիւններ պիտի պատմէին ծնունդներու նուազման, աւելի ճիշդ՝ խաբարման պատճառներու մասին, որովհետեւ, գաղանիք չէ որ այսօր աղագուն, հիւանդկախ, ցաւագար երեխաներու հայ սերունդ մը ունինք, իրրեւ ուղղակի հետեւանք սեռային հիւանդութիւններու:

×

— «Անդադար հալածեցէք այն հիւանդութիւնները որոնք կը տարածուին բողբոռն միջոցաւ. ձեզի կէտ նպատակի ըրէք զանոնք անհետացնել մարդկային տաղնապներու ցանկէն. մի տարակուսիք

որ ձեր ճիգերը վերջը-վերջը յաջողութեամբ պիտի պսակուին, թէև գործը քանի մը սիրունդ զբաղեցնէ»:

Այսպէս կը յանձնարարէր հռչակաւոր բժիշկ մը, տարիներ առաջ, 1840 թուականներուն: Բայց, ինչպէս դիտել կու տայ Տոքթ. Պոլիս, հարկ եղաւ որ լման երկու սերունդ անցնի, որպէս զի վններական հիւանդութիւններու դէմ պայքարը և զանոնք ջնջելու փորձերը հրատապ խնդիր մը դառնան, ինչպէս եղած են պայքարը՝ հիւժախտի դէմ, մանկասպան հիւանդութիւններու դէմ, ալքոլամոլութեան դէմ:

Վններական հիւանդութիւններու դէմ կազմակերպուած կանոնաւոր պայքարը՝ դեռ իր սկզբնաւորութեան մէջ է: Իսկապէս, այդ պայքարը կազմակերպուեցաւ 1899 Սեպտեմբեր 4—8ին, երբ Պրիւսէլի մէջ տեղի կ'ուննար առաջին միջազգային համաժողովը՝ սիֆիլիսի և ուրիշ վններական հիւանդութիւններու դէմ նախազգուշութիւններ սահմանելու նպատակով: Գրեթէ բոլոր քաղաքակիրթ երկիրները մասնակցեցան այդ համաժողովին. և ոչ միայն բժիշկներ և մորթաբաններ, այլ և օրէնսդէտներ, կղերականներ, դեպքանական կցորդներ, հեղինակներ, ու մարդասէրներ իրենց սեսութիւնները յայտնեցին: Ժողովէն յետոյ կազմուեցաւ Միջազգային Ընկերութիւն մը՝ սիֆիլիսի եւ ուրիշ վններական հիւանդութիւններու դէմ առողջապահական եւ բարոյական նախազգուշութիւններ պատուիրելու համար. Այդ ընկերութիւնը, որուն կեդրոնն է Պրիւսէլ, պարբերաբար միջ-

ազգային համաժողովներ կը հրաւիրէ: Այս կազմակերպութիւնը մասնաւորապէս հետաքրքրութիւն չարժեց Գերմանիոյ մէջ, ուր անմիջապէս ընկերութիւն մը կազմուեցաւ, Վեներական Հիւանդութիւններու Ձեռնարկ համար: Ընկերութեան առաջին ընդհ. փողովը տեղի ունեցաւ 1903ին, մասնակցութեամբ մէկէ աւելի ակնածելի հեղինակութիւններու: Անմիջապէս մասնաճիւղեր կազմուեցան բազմաթիւ գերմանական քաղաքներու մէջ: Ընկերութիւնը, դասախօսութիւններով, հրատարակութիւններով և հրապարակային վիճաբանութիւններով ընդարձակ ծանօթութիւններ սիրած է հասարակութեան լայն խաւերուն մէջ:

×

Տօքո. Պոլսոյ երէք միջոց կը յանձնարարէ վեներական հիւանդութիւններու դէմ. —

Ա. Անճնական նախազգուշութիւն՝ վարակման դէմ:

Բ. Յատուկ բժշկական դարմանում՝ վեներական հիւանդութեանց:

Գ. Հանրային առողջարարութիւն, պետական գործունէութիւն և կրթութիւն:

Վեներական հիւանդութիւններու դէմ անձնական նախազգուշութիւնը մեծ յառաջդիմութիւն ունեցած է, շնորհիւ գիտական յարաճուն ծանօթութիւններու, ախտերու ծագման և վարակման ձևերու պարզաբանութեան: Մարդիկ հիմա աւելի լաւ գիտեն թէ ո՞ր և ի՞նչպէս կրնան անձնական կանոններ սահմանել, գոնէ բաւարար ապահովու-

թիւն մը ստանալով վարակման դէմ: Բայց մանաւանդ զանազան միջոցներու միացումով է որ բարեք կը ծնի. միակ միջոց մը չի բաւեր:

Անճնական նախազգուշութեան տեսակետով, բոլոր փորձառու բժիշկները, հին թէ նոր, միաձայնութեամբ կը յայտարարեն թէ՛ վարակման դէմ առաջին, էական պայմանն է կատարեալ մաքրութիւն՝ երկու կողմէն ալ: Ան որ չափազանց բժշկներ է մարմնի, հազուադէպ և ճերմակեղէնի մաքրութեան, կրնայ վստահ ըլլալ թէ անմիջապէս պիտի սղատի յարաբերութեան միջոցին ստացած որ և է անմաքրութենէ: Մաքրութիւնն և առողջութիւնը յաճախ նոյն բաներն են (ոչ միշտ): Ամէն պարագայի մէջ, ամենամեծ կասկած կը յարուցանէ յայտնապէս անմաքուր, թափթփած վրայ-գլուխով մարդ մը, որովհետեւ սափկա նշան է թէ այդ մարդը չափ բարակը չի նայիր սեռային գոհացման պահուն:

Ամէն անմաքրութիւն գրգռիչ է, կը խաթարէ մորթին անաղարտութիւնը. այս պարագան ճիշդ է ծննդական գործարաններու որ և է անմաքրութեան, և մասնաւորապէս սղամարդու գործարաններուն համար. որովհետեւ, թլփատին տակ հոսած հիւթը յաճախ կը նեխի և ծնունդ կուտայ ձեւովի բորբոքման մը (balanitis), որ մեծապէս կը նպաստէ վարակման: Եթէ թլփատը հանուած է գործողութեամբ, այդ հոսումը ամբողջովին կը դադրի և ձեւովի ծածկող հուղաթաղանթը կը վերածուի թանձր մորթի մը, որ այնքան դիւրութեամբ չազ-

դուր Վարակման պատճառներէն: Բազմաթիւ բը-  
ժիշկներ կը խոստովանին թէ թլփատութիւնը որոշ  
չափով պաշտպանողական միջոց մէն է սիֆիլիսի  
վարակման դէմ, թէեւ որ և է ձեռով չի պաշտ-  
պաներ ջերմամիզութենէն: Գիտնական մը փորձի  
ենթարկեց Անթիլեան կղզիներու 15,000 բնիկ թլփ-  
փատուած և 18,000 չթլփատուած և որոպացի  
զինուորներ, որոնք բոլորն ալ միեւնոյն տեղական  
և առողջապահական պայմաններուն մէջ կ'ապրէին:  
Ու երեւան եկաւ որ մէկ տարուան մէջ թլփատ-  
ուած զինուորներէն վարակուած են հարիւրին 16,  
իսկ միւսներէն՝ հարիւրին 41 Սիֆիլիսաւոր զին-  
ուորներէն ոչ-թլփատուածները չ'ընդ անդամ ա-  
ւելի էին:

Նման հետազոտութիւններ կատարած է նաև  
սիֆիլիսի հուշակաւոր մասնագէտ մը, անգլիացի  
Ճօնաթան Հըչինսըն, որ ջերմապէս կը ջատագովէր  
ընդհանուր թլփատութիւնը՝ իրրեւ նախազգուշա-  
կան միջոց վերական չիւանդութիւններու, այլ  
մանաւանդ սիֆիլիսի դէմ: Բայց որովհետև իրա-  
գործելի պատուէր մը չէ այս, կը մնայ յանձնարա-  
բել որ ամենամեծ ուշադրութեամբ մաքուի բըլ-  
փատը, ամէն օր եւ մանրակրկիտ: Այս կերպով  
ազտ չի գոյանար, բորբոքումներ և պտտառումներ  
տեղի չեն ունենար, և նոյն իսկ առանց թլփատման  
ձեփուկը դիմադրական կարողութիւն մը կ'ըս-  
տանայ:

Առնանդամի այս մասին լուացման համար լա-  
ւագոյն է գաղջ ջուրը. յետոյ պէտք է խնամով

չորցնել, մորթը չչփելու, չգրգռելու պայմանով:  
Կիններուն համար ալ, արտաքին գործարաններու  
և խոռոճայի յաճախակի լուացումները մեծապէս  
կարեւոր են վերական չիւանդութիւններէ չվա-  
րակուելու համար: Զուգաւորութենէ առաջ և ետք,  
մանաւանդ, անհրաժեշտ են այս զգուշութիւնները  
ինչպէս բացատրած ենք առաջին հատրին մէջ.  
որովհետև, յաճախ պարզ գործողութեամբ կու-  
տակուած վարակիչ նիւթեր կրնան փոխադրուիլ  
ներսերը: Միեւնոյն նպատակին կը ծառայէ նաև  
միզելը, որ կրնայ սրբել տանիլ միզուկին մէջ մտած  
ջերմամիզութեան միկրոբները, երբ դեռ անոնք  
չեն տեղաւորուած հուզաթաղանթին մէջ: Բազմա-  
թիւ այրեր և կիներ սեռային խրախրութեան ա-  
տեն իրրեւ պաշտպանողական միջոց ուրիշ բան չեն  
ըներ, բայց միայն չափազանց մաքրութիւն պա-  
հել, լուացումներ կատարելով գործողութենէն ա-  
ռաջ և ետք, և անմիջապէս յետոյ միզելով: Այս-  
պիսիները ընդհանրապէս վարակումէ զերծ կը  
մնան. բայց կը վարակուին անմիջապէս որ զանց  
ընեն այդ տարրական զգուշութիւնները: Թերեւս  
արտառոց թուի, կ'ըսէ Տօքզ. Պոլսի, բայց ճիշդ  
է որ լուայն ու միզելը առաջին և ամենակարեւոր  
պաշտպանողական միջոցներն են սեռային վարակ-  
ման դէմ. թէև, բացարձակ ապահովութիւն մը  
չեն տար: Ի՛նչ որ ալ ըլլայ, թէ իրրեւ նախազգու-  
շութիւն, և թէ իրրեւ յաւելուածական միջոց  
բժշկական դարմաններու, — միշտ օգտակար են  
այդ ձեւերը: Օճառն ալ իր դերն ունի իրրեւ հա-  
կանիական:

Այս տեսակետով երկրորդ կարեւոր կէտն է ինքնազսպումի վարժութիւնը, զուգաբարութիւնէն թէ առաջ և թէ ետք, — որքան որ կարելի է սովորանքի պահուն, որ միշտ կը նուազեցնէ անձնական պատասխանատուութիւնը և կը նուաճէ բանակոնութիւնը: Ամէն պարագայի մէջ, ո՛չ մէկը պէտք է սեռային յարաբերութիւն ունենայ երբ խմած է, որովհետեւ, այդ վիճակին մէջ ինքնազսպումի կարողութիւնը բոլորովին կորսուած է: Մենք արդէն մասնամասնեցինք թէ սեռային յարաբերութիւնը որքան սուղի կը նստի գինով մարդու մը:

Յետոյ, եթէ սէրը մթութիւնէն կ'ախորժի, զգուշութիւնն ալ լոյս կ'ուզէ, արեւ կ'ուզէ: Նախապէս իրեն անձանօթ կնոջ մը հետ յարաբերութիւն ունենալէ առաջ, երիտասարդը պէտք է լոյսին սակ, կամ, ինչպէս կ'ըսեն, օրը ցերեկով քննէ զայն, անոր առողջական վիճակը հասկնալու համար, կասկածելի բիծեր՝ մորթին վրայ, մասնաւորապէս ճակտին և իրանին վրայ, ճերմակութիւններ՝ շրթներուն, լեզուին, կոկորդին և ծոճրակին վրայ, տեսանելի բշտիկներ, նշանակելի հստում մը ծննդական գործարաններէն, կեղեր (մորթը կրծող վէրքեր) եւն, չափազանց կասկածելի են և ազդարար նշաններ՝ սեռային յարաբերութիւններէ զգուշանալու: Փրանսայի բժիշկները աւելի առաջ երթալով, կը յանձնարարեն քննել աճուկի և պարանոցի գեղկէրը, իբրև թէ զգուշանքներ փորձելով: Բայց խնդիրն այն է որ բժշկական ծանօթութիւններէ

զուրկ անձեր չպիտի կրնան զանազանել գեղձի ուսեցընները:

Վտանգաւոր է նաև սեռային գործողութիւնը կրկնել իրարու ետեւէ քանի մը անգամ, որովհետեւ, փորձատուութիւնը կ'ուսուցանէ թէ վարակիչ նիւթը առաջին անգամ երեւան կու գայ զուգաբարութեան երկրորդ կամ երրորդ գործողութեան միջոցին, և ա՛յն ատեն միայն կը վարակէ: Այս է մէկ պատճառը, եթէ շատ անգամ կը պատահի որ երկու առողջ երիտասարդներ իրարու ետեւէ յարաբերութիւն կ'ունենան միեւնոյն վարակուած կնոջ հետ, և առաջինը առողջ կը մնայ, իսկ երկրորդը կը վարակուի:

×

Պաշտպանողական մասնաւոր միջոցներէն մէկն է պահպանակը, «քօնտոմ»ը, որ մինչև այսօր ալ կը նկատուի լաւագոյն և ամէնէն վստահելի արհեստական ապահովութիւնը: Հին դարերու մէջ երկար ատեն գործածուելէ յետոյ, քօնտոմը Ժ.Չ. դարուն նորէն յանձնարարուեցաւ իտալացի բժիշկ Փալլոպիոսի կողմէ, և հետեւաբար գիւտը չէ Conton անուն բժշկի մը: Կարգ մը գիտնականներ կը բացատրեն թէ բաւը ծագում առած է condomէն, — այսինքն բան մը որ կը պահպանէ կամ կը պաշտպանէ, — և պէտք է այդպէս կոչուի, և ո՛չ թէ condom:

Քօնտոմը պաշտպանողական թաղանթ մըն է, որով կը ծածկուի առնանդամը, գործողութիւնէն առաջ: Երկու զլիւաւոր տեսակներ կան, — քառ-

չու է քօնառմանը և այժի կամ ոչխարի կուրաղի-  
 թաղանթէն շինուած պահպանակներ: Այս վերջինը  
 աւելի բարակ է և աւելի փափուկ, որով այնքան  
 չի նուազեցներ զգայութիւնը: Բայց հեղինակաւոր  
 բժիշկներ կը խոստովանին թէ քաուչուէ քօնառմ  
 մը աւելի վստահելի է, որովհետեւ, աւելի կը դի-  
 մանայ, չի պատուիր, եթէ պաղ տեղ մը պահուի և  
 զերծ մնայ տեւական տաքութեան մը ազդեցութե-  
 նէն: Երբ քաուչուէ քօնառմ մը երկար առնն  
 կը պահուի գրպանին մէջ, այլեւս անվստահելի կը  
 դառնայ և շուտով կը պատուի: Կուրաղիէ պահ-  
 պանակներն ալ շուտով դիւրաբեկ և թափանցելի  
 կը դառնան, կըսէ Տօքթ. Պլօխ, — թէ և լնդհա-  
 նոր կարծիքը ճիշտ հակառակն է, և այս քօնառմ-  
 ները նախամեծար կը համարուին, այն հաւատքով  
 թէ սուղ բանը միշտ լաւ կ'ըլլայ: Շասախօս ծա-  
 նուցումներ անպակաս են այս մասին: Տօքթ. Պլօխ  
 կը պատմէ թէ Անգլիոյ մէջ ֆօնտումները կամ քա-  
 փօքները կը ծախուին յաճախ նրկեկի անձնաւո-  
 թութեան մը նկարով . . .

Պահպանակը ընդհանուր պաշտպանողական  
 միջոց մըն է, այսինքն կը պաշտպանէ թէ՛ ջերմամի-  
 ղութեան և թէ՛ սիֆիլիսի դէմ, — երբ այս վեր-  
 ջինը ծննդական գործարաններէն կը փոխանցուի,  
 ինչպէս կ'ըլլայ սովորաբար: Բոլոր առաջնակարգ  
 բժիշկները կը խոստովանին թէ քօնառմը, երբ ըն-  
 ափր տեսակէն է, երբ պէտք եղածին պէս կը գոր-  
 ծածուի և պէտք եղածին պէս կը հանուի (որով-  
 հետեւ հանուած արտաքին մակերեսին փակչող

նիւթը կրնայ վարակման տեղի տալ), ամէնէն լաւ  
 և ամէնէն ապահով միջոցն է, ճիշդ է որ միայն  
 տղամարդուն կողմէ կրնայ գործածուիլ. բայց  
 ատով իսկ, միաժամանակ կը պաշտպանէ կինը  
 ջերմամիղութենէ և երբեմն սիֆիլիսէն:



Առանձնապէս ջերմամիղութեան դէմ երկրորդ  
 նախազգուշական միջոց մըն է նաև արծաթային  
 աղիներու լուծուցիքը: Առաջին անգամ Պլօխուսէ-  
 վօքին էր որ յանձնախարեց հարիւրին 2 արծաթի  
 բորակատ (նիքրաք տ'արժան) գործածել: Աւելի  
 բորակատ (նիքրաք տ'արժան) գործածել: Աւելի  
 վերջերս, նախամեծար նկատուեցան արծաթի ալ-  
 պիւմինատները, ինչպէս protargol հարիւրին 10-20  
 լուծաջուրի մէջ, albargin հարիւրին 4-10 լու-  
 ծուցի մէջ, և կամ հարիւրին 20 protargol-gel-  
 atineի լուծուցիք: Արծաթային աղերու բոլոր լու-  
 ծուցիները պէտք է մութին մէջ պահուին, և առն  
 մը անցնելէ ետք, թարմ լուծուցիք մը պէտք է  
 խառնել, որովհետեւ ժամանակն ու լոյսին ազդե-  
 ցութիւնը կը ջնջեն անոնց արդիւնաւորութիւնը:  
 Զուգաւորութենէ և միզումէ անմիջապէս յետոյ,  
 լուծուցիքն մէկ կամ երկու կաթիլ կը կաթեցնեն  
 միզուկին մէջ, և քանի մը կաթիլ ալ կը թողուն  
 որ վազէ թլփաասին և ձեփուկին միջև:

Բժշկական հեղինակութիւններ տարակարծիք  
 են պաշտպանողական այս միջոցի մասին, որ նուազ  
 վստահելի կը նկատուի քան պահպանակը:  
 Յաճախ վարակում տեղի կ'ունենայ հակառակ այդ  
 դեղերու գործածութեան: Եւ յետոյ, այդպիսի

լուծոյթներու (solution) շարունակական գործածութիւնը անախորժ գրգռումներ կը պատճառէ միզուկին մէջ, և նոյն իսկ կրնայ բորբոքում յառաջ բերել և հետևաբար արհեստականօրէն աւելցնել վարակման ընդունակութիւնը: Ուստի բժիշկները կը յանձնարարեն որ այդ միջոցները պատահաբար միայն գործածուին. սովորականը՝ միշտ քօնտումը պիտի լլայ: Գերմանացի բժիշկ մը այս լուծոյթներուն տեղ կը յանձնարարէ գործածել պղտիկ դաւազաններ կամ մօմեր, որոնք հարիւրին 2 albargin կը պարունակին և կը հալին մարմնին տաքութենէն, երբ միզուկին մէջ ներմուծուին: Ասոնք ալ կը գործածուին զուգաւորութենէն անմիջապէս ետք, և աւելի տեւական են:

×

Երրորդ միջոց մըն ալ կայ, օծումը: Ինչպէս որ լուծոյթներ կաթեցնելը միայն ջեր Բամիզութեան դէմ կը զօրէ, առնանդամը պարզ ճարպոտ նիւթով մը կամ հականեխական օժանելիքով մը օժելն ալ— զուգաւորութենէն առաջ կամ ետքը— միայն սիֆիլիսի դէմ կը պաշտպանէ: Պարզ է որ առնանդամը ծածկող ճարպոտ նիւթի խաւ մը չի թողուր որ վարակիչ միկրօրներ մօրթէն անցնին: Բայց նոյնքան պարզ է նաեւ որ զուգաւորութեան պահուն ետ-առաջ շփուելով, մանաւանդ երբ գործողութիւնն երկար կը տեւէ, այդ ճարպոտ խաւը կը սրբուի կ'անցնի, այնպէս որ հիւանդութեան թոյնը ճամբայ կը գտնէ: Հետևաբար, այս միջոցին

արդիւնաւորութիւնը չստիպանց յարաբերական է. թէև սեռային հիւանդութեանց խոչոր մասնագէտներ, ինչպէս Նէյսէր, Մաքս Եոզէֆ, Լօպ, Քամբանեօլ գոհացուցիչ փորձեր կատարած են օժանելիքով, սիֆիլիսի դէմ: Այս նպատակին համար կը յանձնարարուին պարզ վազելիմ, կամ Շլայխի Բուկը: Ի հարկէ այս միջոցը՝ աւելի լաւ է քան բնաւ բան մը չգործածել, անհոգ ու անտարբեր մնալ: Տօքթ. Պլօխ դիտել կուտայ թէ ան որ ուրիշ պաշտպանողական միջոց չի գտներ իր արամադրութեան տակ, պէտք է յիշէ թէ ամէն տան մէջ միշտ կայ ճարպ մը կամ օժանելիք մը և կրնայ գործածուիլ այդ նպատակին համար:

Նոյն այս միջոցով ջերմամիզութեան դէմ պաշտպանուելու համար, յանձնարարուած է զուգաւորութենէն առաջ հականեխական օժանելիք դնել միզուկին մէջ. բայց նորագոյն հեղինակութիւններ խիստ անգոհացուցիչ և անվստահելի կը գտնեն այս ձևը: Այս առթիւ ուշագրաւ է փրօֆ. Մէչնիքօֆի յանձնարարած միջոցը, անդիկէ մասնաւոր օժանելիք մը, որ կը գործածուի զուգաւորութենէն ետք, սիֆիլիսի թոյնը ջնջելու համար: Այս նպատակին համար նոյն պատկառելի գիտնականը փորձեց ոչ թէ զօրեղապէս զրգոհիլ կապոյտ օժանելիք, ալ սպիտակ enesolի կամ 30 աւ 100 calomelի օժանելիք: Ո՛ր և է կասկածելի զուգաւորութենէն ետք, այս օժանելիքը չորս հինգ վայրկեան կը քսուի հաւանական վարակման տեղին վրայ, առանց ժամանակ կորսնցնելու. թէև 18—

24 ժամ անցնելէ ետքն ալ փորձեր կատարուած եւ յաջողած են : Մասնաւորապէս փորձի ենթարկուեցան կապիկներու, նաեւ բժշկական ուսանողի մը վրայ որ յօժարութեամբ ինքզինքն ենթարկեց սիֆիլիսի թոյնին ներարկման :

Ինչ որ ալ ըլլայ, այս միջոցները կը պահանջեն մեծ զգուշութիւն, և մանաւանդ բժշկական խորհրդակցութիւն :

Հականեխտիկան լուացումներն ալ շատ են ընդհանրացած, իբրև չորրորդ նախազգուշական միջոց : Այս նպատակին համար կը գործածուին sublimé, lysol, permanganate de potasse, բոլորն ալ զուգաւորութենէ ետք : Նոր բժշկութիւնը շատ ալ վատահելի չի գտներ այս միջոցները . որովհետեւ, սիւլպիլմէն կամ ուրիշ որ և է բազադրութիւն անպատճառ չի երնար համիլ հաւանական պատառուածքներու . և յետոյ, որովհետեւ արական և իգական գործարաններուն ճարպային գեղձերը առատ հոսումներ ունենալով, գործարանները կը ծածկուին ճարպոտ նիւթի խաւով մը, որ կ'արգիլէ հեղանիւթերու հաղորդակցութիւնը, բայց նոյն աստիճանով չի խափաներ սիֆիլիսի թոյնին մուտքը : Զուգաւորութենէն ետք եղած հականեխտիկան լուացումները նոյնքան անարժէք են, որքան անկէ առաջ եղածները :

×

Վեներական Ախտերու Զննման Ընկերութեան երրորդ համաժողովին մէջ, որ տեղի ունեցաւ 1905ին, Միւնիխ, բուռն վիճարանութեան դուռ

բացաւ պաշտպանողական միջոցները հանրութեան յանձնարարելու հարցը . որովհետեւ, մինչև այսօր ալ, բարոյականի տեսակէտով, «անպատշաճ», «անվայել» կը նկատուի այդպիսի յանձնարարութիւն մը : Երկու խոշոր դէմքեր, Նէօսթաթէր և Կէօրկ Պէրնարտ, ուժգնօրէն բողոքեցին այդ բռնուժին դէմ : Պէրնարտ առաջարկեց փոփոխել Գերմանիոյ պատժական օրէնքին 1847-ը յօդուածը, որ պատժելի յանցանք կը նկատէ «վաճառման հաճար ցուցադրել անպատշաճ գործածութեան մը սահմանուած իրեր, կամ այդպիսի նիւթեր յանձնարարել և կամ ծախել հանրութեան» : Գիտնականը կը պահանջէր այդ յօդուածին կցել թէ «այն նիւթերը որոնք կը գործածուին կա՛մ վեներական հիւանդութիւններ կանխելու և կամ յղութիւնն արգիլելու համար, անպատշաճ գործածութեան սահմանուած չեն նկատուիր» : Իսկ Նէօսթաթէր կ'առաջարկէր փոխել արդի օրէնքը, այնպէս որ վեներական հիւանդութիւններու արգելման և բուժման միջոցներու հրապարակային յանձնարարութիւնը օրինապէս թոյլատրուի, միայն կարգ մը սեղմումներ հաստատելով շարլաքանցիկներու, շանքամեկերու և ուրիշ զեղծումներու դէմ : Իսկ լաւագոյն միջոցները ճշգրտու և յանձնարարելու համար, կ'առաջարկուէր կազմել առողջապահական բարձրագոյն խորհուրդ մը, որուն պարտականութեան մէջ մասը պիտի ըլլայ քննել այդ կարգի յանձնարարութեանց ձեւն ու բովանդակութիւնը : Բուռն վիճարանութեան նիւթ եղած է



նաև ուրիշ հետաքրքիր հարց մը, — Օրինական պաշտպանութիւն՝ վարակման դէմ: Մինչև վերջերս Գերմանիոյ մէջ երբ մէկը անհոգութեամբ կամ գիտակցաբար սեռային հիւանդութիւն փոխանցէր, միայն անձնապէս կը տուժէր: պատժական օրէնքիս մէջ ուղղակի տրամադրութիւն մը չի կար այդ մասին: Միայն 1884ին էր որ Օլտէնպուրկի պատժական օրէնքը այդպիսի պատիժ մը սահմանեց, յայտարարելով թէ «վարակուած անձի մը մերձաւորութիւնը առողջի մը հետ կը պատժուի, առանց նկատողութեան առնելու յետագայ վարակումը»: Ուրիշ երկիրներու մէջ ալ օրէնքը պատիժներ սահմանած է անոնց որ գիտակցաբար ափրողիտեան հիւանդութիւններ կը փոխանցեն սեռային յարաբերութիւններով: Գերմանիոյ մէջ այս իմաստով առաջարկ մը մերժուեցաւ 1900ին, Բալխասթակին կողմէ: Նշանաւոր հեղինակութիւն մըն էր որ կ'առաջարկէր աւելցնել պատժական օրինագրքին մէջ:

Այն մտողը որ, գիտելով հակոտնեմ քե կը ստուպի սեռային վարակիչ հիւանդութիւն մը, զուգարուորիսն կը կասարէ, կալ ուրիշ ու ե կ կերպով վարակման վտանգին կենթարկե ուրիշ մարդկային արտած մը, պէտք է պատժուի երկուսէն երեք սարի բանտարկութեամբ, եւ միևնոյն ատեն գրկուի իր բաղախոյն իրաւունքներէն:

Ուրիշ մը պաշտպանելով այս առաջարկը, պահանջեց անոր կցել յետև տրամադրութիւն մը՝ հիւանդութիւն սերմանող բոզերը պատժելու համար: Բայց նոյնքան հզօր հեղինակութիւններ առարկեցին թէ այսպիսի պատժական կանոններ

զերծ չեն անպատեհութիւններէ: մասնաւորապէս, անոնք չհաղորդման դուռ պիտի բանան դրամաշորթներու համար, և միւս կողմէ պիտի ստիպեն որ բժիշկները խզեն արհեստին գաղտնիքը պահելու յանձնառութիւնը: Յետոյ, փաստարանեցին նաև թէ դժուար է ապացուցանել որ ամբաստանեալը գիտէր իր վարակուած ըլլալը, կամ թէ հիւանդութիւնը այսինչ անձէն փոխանցուած է: Իսկ ջերմամիջութեան միջազգային մասնագէտ մը, Նէյսէր, պաշտպանեց պատիժի դրութիւնը, ըսելով թէ այն ատեն գոնէ հանրութիւնը պիտի գիտնայ որ ուրիշի մը վարակման պատճառ եղողը խտորէն կը պատժուի, խայտառակ մարդ է, հետեւաբար, պատժական տրամադրութեան մը պարզ գոյութիւնն իսկ կը թիւն ազդեցութիւն մը կը գործէ:

×

Վենետիկան ախտերու ջնջման երկրորդ կարևոր միջոցն է անոնց դէմ մաքառել բժշկական դարմաններով, արագօրէն բուժել հիւանդները, որպէսզի անոնք աղբիւր չդառնան նոր վարակումներու: Մարդասէր բժիշկներ կ'առաջարկեն որ ինչպէս այսօր սիստեմատիկ և ուժգին պայքար կը մղուի հիւանդացիներու դէմ, նոյն կազմակերպութեամբ հալածուին նաև վիներական հիւանդութիւնները, — բուժուելու միջոցն առաւելութիւններն ընծայելով անճար աղքատին, ինչպէս հարուստ ցոփակեացին:

Յաջորդ գլուխներով մանրամասնօրէն պիտի

խօսինք իւրաքանչիւր ախտի ծագման, զարգացման և բուժման պարագաներու մասին. հետեւաբար, կ'անցնինք սննդի մասին երրորդ մեծ միջոցին — պետական և հանրային գործունէութեան, ընկերային առողջապահութեան:

×

Պետութեան առաջին պարտականութիւնն այն է որ կազմէ ճշգրիտ վիճակագրութիւններ վննարական հիւանդութիւններու ճարակման մասին, Համաձայն վաւերական տեղեկագիրներու, Եւրոպայի մեծ քաղաքները, ճարտարագործական կեդրոնները, զօրաքաղաքները և համալսարանական քաղաքները ամենէն աւելի կը տառապին սևուցին հիւանդութիւններէ. սղտիկ զաւառական քաղաքներն այնքան չեն նեղուիր, հողագործ ժողովուրդը համեմատաբար զերծ է, բայց Ռուսիոյ և Պալքանեան երկիրներու զաւառական անմշակ շրջաններէն, ուր զիւղացիները սարսափելի առտիճանով մը կը տառապին սիֆիլիսէ: Իւրաքանչիւր երկրի համար առանձին ճշգրիտ վիճակագրութիւններ չկան թէև, բայց զանազան բանակներու մասին քաղուած տեղեկութիւնները մեծ լոյս եր սփռեն: Այդ տեղեկութիւններուն համաձայն, Տանրմարքա, Գերմանիա, Գերմանական Աւստրիա և Զուիցերիա ամենէն նպաստաւոր կացութիւնը կը ներկայացնեն. յետոյ կուգան Պելժիա, Ֆրանսա, Սպանիա, Փորթուկալ, Հիւսիսային և Միջին Իտալիա: Իսկ ամենէն գէշ վիճակին մէջ կը գտնուին՝ Հարաւային Իտալիա, Յունաստան, Թուրքիա, Ռուսիա և... Անգլիա: Բայց այս տեղեկութիւնները անբաւարար

կան են և ոչ այնքան վստահելի. որովհետև, բոլորն ալ կը խոստովանին թէ Անգլիա բազում քար նպաստաւոր վիճակ ունի:

Ամէնէն ճիշդ վիճակագրութիւններն ունին Սկանաինաւեան երկիրները, Տանրմարքա և Նորվեկիա, որոնց մէջ տարիներէ ի վեր բոլոր բժիշկները մաւնաւորապէս կը պահեն իրենց դարմանած վարակիչ հիւանդութիւններուն ցուցակները, որովհետև պարտաւոր են ամէն շաբթու տեղեկագիր մը դրկել Հանրային Առողջապահութեան Խորհուրդին: Այդ տեղեկագիրներուն համաձայն, Քոփէնհակի մէջ վննարական հիւանդութիւնները կը կազմեն ամբողջ իրկրին մէջ ճարակող վարակիչ ախտերու մեծագոյն մասը. բայց 1876—1895 շրջանին այդ հիւանդութիւնները մեծապէս նուազած են: Զերմամիդութիւնը կը կազմէ բոլոր վննարական ախտերուն հարիւրէն 70ը: Ինչ կը վերաբերի վարակման աստիճանին, Քոփէնհակի տեղեկագիրը կը շարակէ որ մեկ հիւանդ կին չորս տղամարդ կը վարակէ. իսկ չորս հիւանդ տղերէ միայն մեկը կնոջ մը կը փոխանցէ իր ախտը: Միջին հաշուով, ամէն տարի վննարական հիւանդութիւններով կը վարակուին 20—30 տարեկան բոլոր երիտասարդներու հարիւրին 16—20ը, Զերմամիդութիւնէ կը բուժուին 8էն մէկը. սիֆիլիսէ՝ 55էն մէկը: Հաշիւ եղած է որ, տասը տարուան միջոցին հարիւր երիտասարդներու վրայ 119 վարակում եղած է. այսինքն, միջին հաշուով բոլորն սլ վարակուեր են անգամ մը, իսկ շատերն ալ՝ մէկէ աւելի անգամներ:

«Մտերիմ Զրոյցներ» — Փրոֆ. Գալի

Գերման գիտնական մը իրեն բան գործ ընելով 1898 թին համեմատական վիճակագրութիւն մը հանեց, — միայն Պերլինի մասին, — սեռային հիւանդութիւններու տարածման ասթիւ: Այդ տեղեկագրին համաձայն, վիենրական հիւանդութեանց կենթակայ էին գաղանի բոզերու հարիւրին 30ը, ուսանողներու հարիւրին 25ը, խանութի պաշտօնեաներու հարիւրին 16ը, գործաւորներու հարիւրին 9ը, և զինուորներու հարիւրին 4ը: Այսինքն, մեծամասնութիւն կը կազմեն գաղանի բոզերը (սպասուհի, պաշտօնեայ ևն.) վաճառատան պաշտօնեաները և ուսանողները: Նոյն տեղեկագիրը կը բացատրէր նաև թէ՛ առաջին անգամ ամուսնացող և երեսունէն վեր այրերէն իւրաքանչիւրը միջին հաշուով ջերմամիզութենէ բռնուած էր երկու անգամ, իսկ չորս-հինգէն մէկը՝ սիֆիլիսէ: Նոյն արդիւնքը երեւան հանուեցաւ Հայտելյէրկի մէջ:

Իսկ աւելի հետաքրքիր վիճակագրութիւն մը կազմուեցաւ 1900 թին, ամբողջ Փրուսիոյ մէջ, Կըրթակոն նախարարութեան կողմէ: Այդ տեղեկագրին համաձայն, իւրաքանչիւր 10,000 չափահաս այրերէ 142ը վիենրական ախտերէ բռնուած էին Պերլինի մէջ, 100 հոգի՝ միւս մեծ քաղաքներուն մէջ, իսկ ամբողջ Փրուսիոյ մէջ, 10,000էն 28: Անշուշտ իրական հաշիւն աւելի մեծ է. որովհետեւ բժիշկներէն հազիւ 100 թին 63ը պատասխանեցին իրենց եզրած հարցումներուն: Անհատական ուսումնասիրութիւն մը երեւան հանեց թէ Փրուսիոյ մէջ ամէն օր աւելի քան հարիւր հազար անհատներ

այսինքն հազարին Յը կը տառապին վիենրական փոխանցելի հիւանդութենէ մը: Ու հաշիւ եղաւ որ մինչ աղագային հարստութիւնը տարին 8 միլիոն մարք (4—5 միլիոն ոսկի) վնաս կը կրէ ժանտատենդի հետեւանքով, վիենրական հիւանդութիւնները ինքնուրու միլիոն մարք վնաս կը պատճառեն:

×

Որո՞նք են վարակման գլխաւոր աղբիւրները, թէ այրերուն և թէ կիներուն համար:

Գարձեալ ստիպուած ենք դիմել գերման վիճակագիրներուն, բաղդատական հաշիւ մը գտնելու և գաղափար մը կազմելու համար: Համաձայն Պլաչքոյի կատարած հետազոտութիւններուն, 487 սիֆիլիսիքներէ 395ը, այսինքն հարիւրին 81ը վարակուած էին արհեստով բողբէ (պաշտօնապէս արձանագրուած կամ գաղանի), 23ը շուկայի արձանագրուած կամ կապելայի ծառաներէ, 23ը՝ սպասուհիներէ և կապելայի ծառաներէ, 23ը՝ իրենց «մտերիմ»ներէն, 45ը՝ պատահական ծանօթներէ, խանութի աղջիկներէ կամ գործաւորուհիներէ: Հետեւաբար, բողբէիւնը, պաշտօնական ըլլայ թէ գաղանի, կը կազմէ վիենրական հիւանդութիւններու գլխաւոր կեղբոնը: Թէ սանձարձակ բողբարածութիւնը ինչ համեմատութեամբ կ'աղղէ բողբարածութիւնը ինչ համեմատութեամբ կ'աղղէ ընտանեկան քայքայման վրայ, — կրնանք հասկնալ նոյն այդ տեղեկագրէն, որուն համաձայն, 67 սիֆիլիսիք կ'իներէ — գրեթէ բոլորն ալ գործաւորներու կ'իներ — 64ը վարակուած էին իրենց իսկ ամուսիններէն, 106 ամուսիններու

րէ միայն Նը այդ հիւանդութիւնը ստացած էին իրենց կիներէն: Մնացորդ 99ը վարակուած էին տունէն դուրս մշակուած յարաբերութիւններով, ամուսնութենէն առաջ կամ ետքը:

Վերջապէս, 1904ին պատրաստուած ուրիշ վիճակագրութիւն մը կը հաստատէ որ գաղտնի բողոքեան գլխաւոր տիպարները, շուկայի սպասուհիները և գինետան կամ գրասենեակի աղջիկները գլխաւոր դերը կը կատարեն վարակման մէջ (442 դէպքէն 155), յետոյ կուգան տան սպասուհիները, իրենց բիւր տեսակներով, կարուհիները, այրիները (4) գելդացի աղջիկները (3), հոմանուհիները (3) եւն:

Բայց ասիկա չի նշանակեր թէ հանրային՝ պաշտօնական բողոքիւնը նուազ վտանգաւոր է, Հաղուադէպ է որ բոլ մը վարակուած չըլլայ սեռային հիւանդութենէ: Պաշտօնական բողերը, մանաւանդ երբ դեռ երիտասարդ են, վարակիչ վիճակ ունին և նոյնքան կը ծառային հիւանդութեանց ծառայման որքան գաղտնի բողերը: Մանկամարդ բողերը աւելի վտանգաւոր են քան անոնք որ երկար ատենէ ի վեր բողութիւն կ'ընեն. որովհետեւ, առաջինները աւելի կամ պակաս նոր վարակումէ մը կը տառապին. և թէ ջերմամիզութիւնը ու թէ սիֆիլիսը անոնց մէջ ունին ճիշդ այն շրջանները ուր զօրեղապէս վարակիչ են: Գիտնական մը, Տոքթ. Պէրկէր դիտել կուտայ թէ չէկ մազերով աղջիկները ամէնէն փափուկ վերնամաշկն ունին, աւելի շուտ և աւելի մեծ թուով կը հիւանդանան. մինչ սե մուծ մազերով կիները՝ առաջին անգամ շատ չեն

ազդուիր: Երկար ատեն բողութիւն ընելէ յետոյ, կարեւոր տարբերութիւն մը չի տեսնուիր խարտեաչ, թոխ և սե մազերով կիներուն միջև. բայց իրողութիւնն այն է որ սե մազերով կիները քանի առաջ երթան իրենց ասպարէզին մէջ, այնքան աւելի հակամէտ են վարակման, որովհետեւ աւելի շատ կը վնասուին:

Այսպէս ուրեմն, բողութիւնը է և կը մնայ գլխաւոր աղբիւրը՝ սեռային ախտերու, որոնք կը ճարակին զարմանալի համեմատութեամբ, դառնալով ընկերային ճշմարիտ աղէտ մը: Ինչ որքան է ազգերու պետական ուժը, այս չարիքը ջնջիլու կամ սահմանափակելու համար:

Քաղաքակիրթ երկիրներու մեծ մասին մէջ, ոստիկանութիւնը ցուցակներ ունի, ուր կ'արձանագրուին բոլ նկատուած աղջիկներուն և կիներուն անունները: Արձանագրուածները կը ստանան վկայական մը, որ իրենց «արտօնութիւն կուտայ արհեստով պրոնկութիւն ընելու ոստիկանութեան շարունակական հսկողութեան տակ»: Այդ հսկողութիւնը կը պարտադրէ կարգ մը պատուէրներ. արգելքներ և կանոններ, բայց մանաւանդ՝ կը պահանջէ բժշկական քննութեան և դարմանի ենթարկուիլ որոշ ատեններ: Անոնք որ չեն արձանագրուած, չեն կրնար հրապարակաւ բողութիւն ընել:

Այս խնդիրն ալ մէկն է այն կնճիռներէն, որոնք լրջօրէն կը զբաղեցնեն արդի ընկերաբանները, առանց գոհացուցիչ լուծում մը ստանալու: Բոլորովին հակասական, հակոտնեայ կարծիքներ կը

տիրենն այս մասին : Կարգ մը գիտուններ , բժիշկներ և բնկերաբաններ խստօրէն կը դատապարտեն բողանոցներու դրութիւնը , կամ բարբարոսութիւն , անձնական ազատութեան բռնաբարում կը նկատեն պաշտօնապէս քննութեան ենթարկել հաղարատ որ մանկամարդուններ : Անոնք կ'ըսեն թէ պարտաւորիչ արձանագրութիւնը , որ Ֆրանսայէն մտաւ շատ մը երկիրներ , իրապէս պոռնկութեան կը մղէ շատ մը ազլիկներ , որոնք տրամադրութիւն չունէին արձևատով բոզ դառնալու : Ինչքան սխալներ կը պատահին շնորհիւ պօրաւորիչ արձանագրութեան , — մասնութիւններ , չարաշահութիւններ : Քանի մը տարի առաջ , Նիւ Եորքի մէջ մասնախումբ մը կազմուեցաւ 15 նշանաւոր անձերէ , պոռնկութեան խնդիրն ուսումնասիրելու համար : Մասնախումբը իր տեղեկագրին մէջ դիտել կու տար թէ անձնական ազատութեան ամէն սահմանափակում ինքնին չարիք մ.ն է : « Դրութիւն մը որ ոստիկանութեան արտօնութիւն կու տայ պարզապէս կասկածով ձերբակալել քաղաքացի մը , վիրաւորիչ քննութեան մը ենթարկել զայն , միայն կասկածուած հիւանդութիւն մը գտնելու համար , և յետոյ բանտարկել զայն , ա՛յն կասկածով թէ կրնայ անբարոյական յարաբերութիւններ մշակել եթէ ազատ ձգուի , ապահովաբար չի հաշտուիր անձնական ազատութեան սկզբունքներուն հետ : »

Այսպէս մէկէ աւելի հեղինակութիւններ , որոնց մեծ մասը կենդանի են դեռ և անոնց կարգին Աննա Փափրեց կը դատապարտեն այս դրութիւնը՝

մարդկային և բարոյագլխական տեսակէանրով : Ինչ կը վերաբերի բժշկական-առողջապահական տեսակէտին , — այսինքն թէ այդ տնօրինութեամբ կարելի է սահմանափակել , ջնջել վեներական ախտերը , — դարձեալ կարծիքներու մեծ տարբերութիւններ կան : Կարգ մը գիտնականներ կը նկատեն թէ ոստիկանական այդ հսկողութիւնը կը վերաբերի բողերու շատ փոքր մէկ մասին , սովորաբար աւելի տարէցներուն , մինչդեռ սկսնակները , որոնք ամէնեւ աւելի վտանգաւոր են վարակման համար , ինչպէս և գաղանի բողերու , կէս-բողերու , պատահական բողերու և կիսաշխարհիկներու բանակը ազատ կը մնան հսկողութենէ . թերեւս դիտմամբ ազատ կը ձգուին , վերջապէս չեն կրնար քննութեան ենթարկուիլ , որովհետեւ այդ դործը անագին աշխատանք , դժուարութիւն և ծախք պիտի պահանջէր : Այսպէս , Տօքթ . Պլօխ դիտել կու տայ պահանջէր : Այսպէս , Տօքթ . Պլօխ դիտել կու տայ որ ընդհանրապէս ձերբակալուած ազլիկներուն մէկ հինգերորդը կանոնագրութեան կ'ենթարկուի . մնացած չորս հինգերորդը միայն աղղարարութիւն կը ստանայ և կ'արձակուի : Եւ յետոյ , նոյն իսկ այդ մէկ հինգերորդէն մեծ մաս մը իրապէս հսկողութեան տակ չէ , որովհետեւ ցուցակագրութենէ խուստեմբար անկարելի կը դարձնէ տեւական քննութեամբ անկարելի կը դարձնէ տեւական քննութիւն : Բժիշկ մը կ'ապացուցանէ որ Պերլինի մէջ 4000 բողերէ աւելի քան 50% ը խոյս տուած էին քննութենէ :

Միւս կողմէ , դիտելի է որ հսկողութեան տակ մնացող բոզը շարունակ վախնալով հիւանդանոցի

մէջ փակուելէ և պարտաւորիչ դարմանումի ենթարկուելէ, պիտի ջանայ իր հիւանդութիւնը ծածկել որքան կարելի է երկար ատեն, կամ առժամարար խուսափիլ ամէն բժշկական քննութիւնէ և Յետոյ, բժշկական քննութիւնն ալ անբաւական է, յատկացուած բժիշկները սակաւաթիւ և ժամանակը կարճ ըլլալով: Եւ զարմանալի չէ որ հսկողութեան ենթակայ բողբրուն մէջ վարակուածները անհաւատալի կերպով քիչ կ'երեւան: Մինչդեռ ընդհանրապէս իւրօքանչիւր երեք բողբ մէկը ջերմամիզութիւն ունի, Պերլինի մէջ պաշտօնական քնննութիւնը անգամ մը 200 պոռնիկէ միայն մէկը, և ուրիշ ատեն մը 1873էն միայն մէկը վարակուած հոգի կ'էր: Դարձեալ, շատ մը վարակուած բողբր բժշկական պարտաւորիչ դարմանի ենթարկուած ըլլալով հանդերձ, կ'արտօնուին իրենց սրհետքը շարունակելու դեռ չդարմանուած, և իրենց հիւանդութիւնները անգամ մըն ալ տարածելու ազատութիւն:

Այս նկատումներով, կարգ մը երկիրներ ջնջած են ոստիկանական հսկողութիւնը: Այսպէս, Նորվեգիա 1888ին ջնջեց այդ կանոնը, և կը հաւատեն թէ այնուհետեւ սիֆիլիսը նուազեցաւ. նախորովհետեւ իրենց ազատ կամքով բժիշկին զիմողներու թիւն աւելցաւ, մինչդեռ առաջ խոյս կուտային, իրենց հիւանդութիւնը կը ծածկէին, որպէսզի ոստիկանութեան ձեռքը չիջնան. երկրորդ, որովհետեւ հիմա շատ մը երիտասարդներ կը զգուշանային բողբրէն, հիւանդութիւնէ վախնալով:

մինչդեռ առաջ այն միամտութիւնն ունէին թէ «հսկողութիւնը», բժշկական քննութիւնը վտանգէ կ'ազատէ զիրենք...: Միեւնոյն պարագան յայտնուեցաւ Լոնտոնի մէջ, ուր ոստիկանական կանտդրութիւն չկայ. այնտեղ ալ վննրական ախտերու ծաւալումը նուազած է, որովհետեւ հիմա երիտասարդները կ'արելի եղածին չափ կը զգուշանան բողբրու հետ գործ ունենալէ: Յրանսայի մէջ ալ, ուր առաջին անգամ հաստատուած է հսկողութեան դրութիւնը, մասնաւոր յանձնաժողով մը վճռեց ջնջել զայն:

Մնաց որ, ոստիկանական հսկողութեան անբաւականութիւնն ապացուցանելէ շատ առաջ, մարտակոչ մը արձակուած էր կազմակերպուած պոռնիկութեան դէմ, «կորչի՛ն բողանոցները» ազազակ մը: Պոռնկանոցներու թիւը շարունակ կը նուազի մը: Պոռնկանոցներու թիւը շարունակ կը նուազի մը: Քաղաքներու մէջ: Վիճակագրութեան մը համաձայն, 1841ին Փարիզի մէջ կային 235 բողբամաձայն, 1841ին Փարիզի մէջ կային 235 բողբամաձայն, 1,200,000 բնակչի համար. իսկ 1900ին՝ նոցներ, 1,200,000 բնակչի համար. իսկ 1900ին՝ միայն 48 հաստատութիւն, 3,600,000 բնակչի համար: Փեթերսպուրկի և ուրիշ մեծ քաղաքներու մէջ ալ նոյն երևոյթը կը տեսնուի, թէև ամէն տեղ բնակչութիւնը կը մեծապէս աւելցած է, կը հետեւի թէ բողանոցները այլեւս իրական պէտքի մը չեն համապատասխաներ, չյիշելով իրենց բիրտազան վտանգները: Արդէն մեր օրերուն, շնորհիւ հազարավազութեան միջոցներու լայն զարգացման, բողբազակցութեան միջոցներու լայն զարգացման, և ո՛չ նոցները հանրային աղէտ մը դարձած են. և ո՛չ միայն կը վարկարեկեն իրենց գտնուած թաղը,

այլ և չըջակաները կը որկեն իրենց դրամական արժէքէն: Եւ յետոյ, գոնէ եւրոպական շատ մը երկիրներու մէջ, գերուհիներ պահելու ժամանակն անցած է: Բողանոցներու գոյութիւնն է որ կը քաջալերէ սպիտակամորթ աղջիկներ գնել-ծախելու բարբարոսութիւնը, կը քաջալերէ սեռային մոլութիւնները, և կը նպաստէ վեներական հիւանդութիւններու ծաւալման: Բողանոցի մէջ փակուած պոռնիկը ստիպուած ըլլալով մէկ օրուան մէջ 10—12 մարդու հետ յարաբերութիւն ունենալ, գերազանցապէս ենթակայ է վարակման, մանաւանդ որ պէտք է համակերպի ամէն հանդիպողի գրկախառնութիւններուն, քանի որ ան դրամ կը վճարէ տանտիրոջ . . . :

Կան հեղինակութիւններ ալ, որոնք կը ջատագովեն բողանոցներու դրութիւնը արդի վիճակին մէջ, առաջարկելով բժշկական քննութեան ենթարկել ո՛չ միայն պոռնիկները, այլեւ այցելու այրերը: Բայց ուրիշներ իրաւամբ դիտել կուտան թէ անգործնական է այդ ծրագիրը, քանի որ նախ՝ շատ քիչ այրեր պաշտօնական բողանոցը կ'երթան. երկրորդ՝ այնտեղ ամէն բան աճապարանքով կ'ըլլայ, և հետեւաբար կարելի չէ կանոնաւոր քննութիւն կատարել. երրորդ՝ շատ դժուար է գտնել բժիշկներ որոնք յանձն առնէին այդպիսի պաշտօն մը, իսկ պոռնկանոցի տէրն ալ չի կրնար քննութեան ենթարկել այրերը, քանի որ չունի բժշկական հրմտութիւն, բայց մանաւանդ չպիտի ուզէ դժուարութիւններ հանել իր չահու աղբիւրներուն դէմ:

Այսպէս կամ այնպէս, բողութիւնը և վեներական ախտերը այսօր կը կազմեն մեծագոյն «ընկերային վէրքը», ինչպէս պիտի ըսէին Ֆրանսացիները, և դեռ բժշկութիւնը, բնկերաբանութիւնը, մարդասիրութիւնը իրենց վերջին խօսքը չըսած, կեանքն իր ճամբան կ'ընթանայ արշաւատոյր, աւերն իր գործը կը կատարէ, իսկ իւրաքանչիւր անհատ իր գլխուն ճարը կը նայի հազար ձեւերով . . . :

Մենք կ'անցնինք ուղղակի վեներական հիւանդութիւններու մանրամասնութեանց, ներկայացանելով բժշկական ամենանոր հեղինակութիւններու լուսարանութիւններն ու թեւաբութիւնները: (\*)

\*Հիւանդութիւններու այս գլուխը կազմած ենք հետեւողութեամբ սօքթ. Պլօխի, սօքթ. Մորշալե, անգլիացի մասնագէտ մորթի հիւանդութեանց (Syphilology and Venereal Disease), սօքթ. Ֆօրէլի, որ Պօլսոյ մէջ ալ ծանօթ է, Ֆրէտրիք Պօմանի, փրօֆէսէօր Զիքալօյի վեներական հիւանդութեանց քօլէճին (Gonorrhea, its diagnosis and treatment), սօքթ. Մաքնօթըն ձօնսի և սօքթ. Մօրթընի (Genito-urinary Diseases of men, of women, Տօքթ. Պալլէրի (Maladies Vénériennes), սօքթ. Լէօն Պեդաուի (La Préparation 606) ևւն.:



## 2. ՋԵՐՄԱՄԻՉՈՒՅԻՒՆ

Գլխաւորաբար երեք տեսակ սեռային հիւանդութիւններ կան, որոնց ամէնէն տարածունն է այն որ ընդհանրապէս կը կոչուի Ջերմամիզութիւն (պէլ սոուզլըդի), թէև բուն բառը չէ: Կարգ մը բժիշկներ կ'անուանեն մզկատապ, որ uréthritis է, իսկ Ռուսահայերը՝ սուսանակ; որ թերեւս աւելի արտայայտիչ է:

Վերջին երեսուն տարուան միջոցին, կարծիքներու մեծ փոփոխութիւն մը տեղի ունեցած է ջերմամիզութեան մասին (այս բառը տառական թարգմանութիւնն է ֆրանսերէն *chaude-pisse*, տաք մէզ բառին): Մինչդեռ առաջ այդ հիւանդութիւնը (*gonorrhée, blennorrhagie*) կը նկատուէր անվրաս ախտ մը — ինչպէս դեռ տիրապետող կարծիք մըն է մեր մէջ ալ — այսօր հաստատուած է որ ան տղամարդուն, բայց մանաւանդ կնոջ կը պատճառէ տաղտկալի վտանգներ և ցաւագին ախտաւոր երեւոյթներ, դառնալով աղբիւր անպատմելի դժբախտութիւններու և բաղձաթիւ կիներու ախտոսալի վատառոյշութեան: Ջերմամիզութիւնը ամբողջութեան գլխաւոր պատճառն է երկու սեռին համար ալ:

Ջերմամիզութեան գլխաւոր կեղրոնն է տղամարդու և կնոջ ծննդաժիղական գործարաններու հուզաթաղանթը, տղամարդուն մէջ՝ գլխաւորաբար միզային գործարաններն են որ կ'ազդուին, իսկ կնոջ մէջ՝ ծննդական գործարանները (խոռոճակ,

արգանդի բերան, միզուկ): Իսկական ջերմամիզութեան պատճառը միշտ վարակումն է, մէկէն միւսին փոխանցումը թարախալից բորբոքումի մը, որ կը ծնի *gonocoque* կոչուած միկրոբէն: Առաջին անգամ նէյսէրն էր որ 1879ին գտաւ այդ մանրէն:



Ջերմամիզութեան բարախ-մանրէն  
(Չափազանց մեծցուած)

Միզուկի պարզ բորբոքումներ ալ կրնան պատահիլ թարախալից հոսումներով, առանց մանրէներու գոյութեան, դարձեալ իբրև հետևանք վարակման, բայց ասոնց բուն սկզբնապատճառը տակաւին անյայտ կը մնայ: Սակայն այս կարգի բորբոքումները ընդհանրապէս մեղմ են և կը դարձանուին քանի մը օրէն կամ շաբաթէն, ինքնաբերաբար կամ իբրև արդիւնք թեթև ներարկումներու:



Իսկական ջերմամիզութիւնը բոլորովին տար-  
բեր բան է: Տղամարդուն մէջ կը սկսի վարակիչ  
յարաբերութենէն երկու կամ վեց օր ետք: Հի-  
ւանդը միզած ատեն այրուցքի զգայութիւն մը,  
եռք մը կ'ունենայ միզուկին բերանը, որ անմիջա-  
պէս կը կարմրի, և ահա, ինքնաբերաբար կամ  
միզուկը սեղմուած ատեն, կը հոսի թանձր հեղուկ  
մը, նախ՝ խնոս, մաղասային, յետոյ՝ թարախալից,  
և վերջապէս դեղին կամ կանաչորակ գոյնով:  
Բորբոքումը, հոտումը և ցաւը — մանաւանդ մի-  
զած ատեն — կը սաստկանան յաջորդ շաբաթներու  
միջոցին: Յաճախ յառաջ կու գայ նաև թեթև  
տենդ մը, յոգնածութիւն, մտային անկում, և  
հիւանդը մասնաւորապէս գիշերը կը տանջուի զօ-  
րաւոր, ցաւառիթ կանգնումներով: Բացառիկ  
պօրագաններու մէջ, միզուկէն արիւնահոտութիւն-  
ներ սլ տեղի կ'ունենան: Կարգ մը պարագաներու  
մէջ հիւանդութիւնը նպաստաւոր վախճան կ'ունե-  
նայ, — մասնաւորապէս երբ առաջին վարակումն  
է: Երրորդ շաբթուն յիշուած ախտանշանները  
կը թեթևանան, իսկ չորրորդ կամ վեցերորդ շաբ-  
թուն՝ ախտաւոր երևոյթները կրնան վերջանալ,  
հոտումը կը դադրի, մէզը նորէն յստակ գոյն մը  
կ'առնէ: Ջերմամիզութիւնը կ'անցնի: Ուրիշ խօս-  
քով, երբ լաւ դարմանուի, ջերմամիզութիւնը կը  
բժշկուի երկու շաբաթէն, անշուշտ բոլոր տան-  
ջանքները պատճառելէ յետոյ: Բայց մեծամասնա-  
բար բորբոքումը երկար կը տևէ, քրոնիկ կը  
դառնայ և յարակից գործարաններուն կ'անցնի:  
Այն ատեն վա՛յ հիւանդին:

Իսկապէս, բաղդաւորները շատ քիչ են այս  
փորձանքին մէջ: Տարիներ առաջ, գիտնական մըն  
էր որ դիտել կուտար:

— Երբ մէկը անգամ մը ջերմամիզութենէ  
բռնուած է, Աստուած գիտէ թէ մէկ մըն ալ ե՛րբ  
պիտի աղէկնայ...

Նոյն իսկ այսօր, բժշկական գիւտերու այնքան  
կատարելագործութեան մէջ, ջերմամիզութիւնը  
շատ յամառ հիւանդութիւն մըն է, «տուրկալի  
ախտ մը, երկարատև բնու մը ո՛չ միայն հիւանդին,  
այլ և բժշկին համար»: Մանրէները կը ծլարձակ-  
ուին հուզաթաղանթներու ամենախոր խաւերուն  
մէջ և կ'անցնին դէպի վեր, միզուկի ետեւի մա-  
սին մէջ — որ ատեն տեղի կ'ունենայ մասնաւորա-  
պէս յաճախակի և ցաւառիթ միզակաթում: Յե-  
տոյ, կրնան վարակուիլ միզային փամփուշտը,  
սերմնային փամփուշտը, շագանակագեղձը և մա-  
կամորձիկները: Երբ երկու ամորձիկներն ալ վարակ-  
ուին, յառաջ կուգայ ամլութիւն, նոյն իսկ 50%  
համեմատութեամբ:

Ջերմամիզութիւնը կրնայ փոխանցուիլ նաև  
վարակուած ճերմակեղէններով, սրբիչներով, գոր-  
ծիքներով եւն: Այս հիւանդութիւնը մասնաւորա-  
պէս կը սպառնայ աչքերուն, թափանին, քիթին,  
բերանին:

Նախապէս ջերմամիզութիւնը կը շփոթուէր  
սիֆիլիսին հետ. բայց իբրև առանձին ախտ մը  
հուշակուեցաւ Բիբրրաի կողմէ, որ զայն կը վե-  
րագրէր զանազան գրգռումներու, — ինչպէս դաշ-

տանային հոսում, տղաբերքի հոսում, սպիտակահոսում թիւն, գրգռիչ ներարկումներ, զօրաւոր ըմպելիներ, սեռային չափազանցութիւններ եւն:

Նէյսէրի գիւտէն ետքն էր որ բազմաթիւ փորձեր կատարուեցան և ամէն բան ճշդուեցաւ: Յետոյ առաջին անգամ Պուժ արհեստական ներարկում կատարեց և յաջողեցաւ հիւանդութիւն արտադրել, մանրէն անյնկով կնոջ մը միզուկին մէջ: Զերմամիզութեան մանրէն խահուէի ձև ունի, և կրնայ դիւրաւ ներկուիլ անիլինի բոլոր գոյներով: Թէև թոյն է կենդանիներուն համար, բայց չի կրնար վարակել զանոնք: Զի դիմանար ժանտատենդի, քոլերայի և ուրիշ կարգ մը ախտերու մանրէներուն: Յետոյ, կօնօօֆի ներկայութիւնը յետագայ վարակումէ զերծ չի պահեր ենթական. թէև, ատեն մը մնալէ ետքը, կը կորսնցնէ իր կենսունակութիւնը իր տեղաւորուած թաղանթին մէջ: Երբ մանրէն ուրիշ միզուկ մը տեղափոխուի, ջերմամիզութիւն կ'պատճառէ, սովորաբար սուր տեսակէ:

Զերմամիզութեան մանրէն կրնայ աարիներով պահել իր ոյժը: Կրնայ գտնուիլ բազդատաբար աննշան հոսումներու մէջ, և բացակայիլ՝ ծանր պարագաներու մէջ: Սուր ջերմամիզութիւնները մեծամասնաբար ծնունդ կ'առնեն քրոնիկ դէպքերէ:

Արական միզուկին մէջ թմրած մնացող մանրէներ կրնան ներգործել երբ փոխադրուին կոյս խոռոճակի մը, և վարակել այն արական միզուկը ուրկէ դուրս ելան: Այսպէս, տղամարդ մը կրնայ

կրկին վարակուիլ իր իսկ մանրէներով երբ զանոնք կը վերակենդանացնէ կոյս խոռոճակի մը վըրայ: Եւ հազուադէպ չէ որ ինքզինքը իր հինաւորաց ջերմամիզութեանէն բժշկուած կարծող ամուսին մը ամուսնութենէն յետոյ իր կինը ամբաստանէ, մինչդեռ ինքն իսկ է բուն պատասխանատուն: Եւ անա ընտանեկան կուլաներ, գայթակղութիւն, ամուսնալուծում . . .

×

Զերմամիզութեան մանրէն կ'աճի հուղաթափազանթի բոլոր մասերուն մէջ: Կը մանէ բլիչնեբուն խորը, վերնամաշկերուն մէջ, արիւնի ձերմակ գնախներուն մէջ և կը բազմանայ հոն, չէնք-չրնորք գաղութ մը կազմելով: Թարախումներ կը պատճառէ հիւսուածքներուն մէջ: Կը մանէ նաև միզուկի խոռոչներուն և գեղձերուն մէջ, ուր կըրնայ երկար ատեն մնալ թաքուն՝ թմրած վիճակի մէջ, բայց ընդունակ կրկին աճելու, միզուկը նորէն վարակելու: Մանրէն աչքան կենսունակութեամբ չաճիր չափահաս կիներու խոռոճակի հուղաթափանթին մէջ, որքան տղամարդու միզուկին մէջ. բայց զխաւորապէս կը բազմանայ արգանդի պարանոցին, Պարթօլէնի գեղձերուն և միզուկին մէջ: Սակայն մանկամարդ աղջիկներու և երեխաներու խոռոճակին հուղաթափանթը աւելի փափուկ ըլլալով, աւելի ծանրապէս կ'ազդուի կնօքօքէն:

Տօքօ. Ծ. Պայլէր այսպէս կը մանրամասնէ վարակման սկզբնաւորութիւնը. —

«Մտերիմ Զրոյցներ» — Փղօսացի

Երբ մանրէն ներս մտաւ, քիստուկի շրջանը կը տեսէ երկուքէն հինգ օր, երբեմն 6—7 օր, իսկ բացառիկ պարագաներու մէջ՝ 14 — 20 օր:

Սկզբնաւորութիւնը կը յարմարուի հոյզի աւելի կամ նուազ անթափանց հոսումով մը, որ կը շորնայ միզուկին բերանը: Հիւանդը թեթեւ խաղաղութեամբ մը, տաքութիւն մը կը զգայ ծննդական գործարաններուն խորերը: Շատ չանցած առնանդամին բերանը կը կարմրի և կ'ուռի, շրթները իրարու կը փակին և միզումը քիչ մը ցաւաւթ կը դառնայ: Մէզը տակաւին յստակ է և գնտիկներ կը պարունակէ: Այս սկզբնական շրջանը կը տեսէ հինգ օրէն մինչև մէկ շաբաթ, յառաջատար անցելով: Երբ հիւսուածարանական քննութիւն մը կատարուի, պիտի տեսնուի որ միզուկին հոսումը կը պարունակէ թարախի գնտիկներ և բազմաթիւ վերնամաշկային բջիջներ, տափակ և բազմանկիւն, որոնք ծածկուած են ջերմամիզութեան մանրէներով:

Այնուհետև, երբ հիւանդութիւնը տեղաւորուեցաւ, հոսումը կը դառնայ բարախալից, և բոլոր ախտանշանները կը շեշտուին: Առատ հոսում տեղի կ'ունենայ մանաւանդ գիշերը: Հոսումը, որ նախ դեղին է, յետոյ կանաչօրակ դեղին, և երբեմն աքրիւնագոյն, տեղի կ'ունենայ ինքնաբերաբար, բայց կ'աւելնայ երբ միզուկը սեղմուի երկայնքն ի վար: Ճերմակեղէններուն վրայ կը գոյանան դեղին կամ կանաչօրակ բիծեր, օպայտուած ձև մը առնելով: Երբ հոսումը խիստ առատ է, միայն մէկ գաւաթի

մէջ լեցուած մէզը ամբողջովին կը պղտորի և կը տեսնուին թարախի գնտիկներ: Յաւերը աւելի կամ նուազ սաստիկ են. կարգ մը հիւանդներ չեն տառապիր հիւանդութեան ամբողջ տեւողութեան միջոցին: Սովորաբար ամէնէն կակծալի ցաւերը կը զգացուին միզած ատեն, կանգնում եղած ատեն, մանաւանդ գիշերը: Կրնան այդ բոլորէն անկախաբար ալ ցաւեր պատահիլ: Հիւանդը տեսակ մը տաժանելի ծանրութիւն կը զգայ միզուկին երկայնքն ի վար, ու անոր հետ մէկտեղ՝ տաքութիւն և կոտտանք: Յաճախ գործարանային խանգարումներ ալ տեղի կ'ունենան, համաձայն ջերմամիզութեան աստիճանին և յետասկողման միզուկի աւելի կամ նուազ կանխահաս վարակման: Եթէ միայն յառաջակողման միզուկն է վարակուած, երբ հիւանդը երկու գաւաթի մէջ միզէ, միայն առաջին գաւաթին մէջը պղտոր կ'ըլլայ, իսկ երկրորդ գաւաթինը յստակ է: Իսկ եթէ յետասկողման միզուկն ալ վարակուած է, ինչ որ կը պատահի սովորաբար երկրորդ շաբթուն, և յաճախ առաջին շաբթուն վերջերը, ցաւաւթ երեւոյթները ալ աւելի կը շեշտուին և երկրորդ գաւաթին մէջն ալ պղտոր կ'ըլլայ: Կարգ մը հեղինակութիւններ կը հաստատեն թէ յետասկողման մեղատապ կը պատահի հարիւրին 75—80 համեմատութեամբ:

Երբեմն միզելը կը դժուարանայ, որովհետև միզուկին հուզաթաղանթը կը կծկուի և կ'ուռի: Կը պատահի նոյն իսկ որ մէզը բոլորովին խցուի, որ ատեն արհեստական միջոցներու կը դիմեն: Շատ

հիւանդներ ալ շարունակ միգելու պէտք կը զգան : Յաճախ կրկնուած միզումները վերջը-վերջը կը յանգին ցաւառիթ կծկումներու , և երբեմն միշտ վերջին կաթիլները արիւնով ներկուած են : Յետ-սակողման սաստիկ մղկատապերու պարագային , ցաւերը միշտ միզուկին երկայնքը չեն սահմանա-փակուիր , այլ և կը տարածուին սրբանակին կող-մերը , մինչև թափանը , և կղկղանքի արտաքսումն անգամ բուռն ցաւերով տեղի կ'ունենայ , Կարգ մը հիւանդներու քով , երբ վարակումը հասած բլլայ մինչև սպիւզային հիւսկէնը , կանգնումները խիստ ցաւառիթ են , խիստ յաճախադէպ . առնանդամը կանգուն վիճակի մէջ կը մնայ զրեթէ շարունակ , երբեմն կամարածեւ ծուած (չուտնածեւ ջերմամի-զութիւն) , և գիշերանց կանգնու մը կը սաստկանայ և ցաւազին երազափործութիւններ տեղի կ'ունե-նան : Միզարեանը միշտ կարմիր է , ուռած . եր-բեմն կարծրացած , թլփատը ուռած : Միզուկը շո-շափելը սաստիկ ցաւ կը պատճառէ : Կարգ մը պարագաներու մէջ , երբ թափանը չօշափեն , կը տեսնուի որ շագանակագեղձը (փրօսթաթ) կը ցաւի և երբեմն ծաւայով մեծցած կ'ըլլայ : Սեղմելով կարելի է պարպել վարակուած շագանակագեղձի փողիկներուն և բշտիկներուն պարունակութիւնը , Յաճախ կ'ուռին նաեւ թլփատը և առնանդամի ամբողջ պատեանը (Ֆիւսոգիս եւ փաօրաֆիւսոգիս) : Յետոյ , կը պատահի որ բորբոքին առնանդամին երակները , — ինչ որ շատ յաճախադէպ է , — կամ աւշային անոթները և աճուկի ջլային կծիկները :

Երբեմն աւշային անոթներուն և գեղձերու բորբո-քումը թարախի կը յանգին : Այս հաղուողէպ ծանրացումները երբեմն ծուռեղ են երկրորդական վարակումներու , բայց ջերմամիզութեան մանրէն ալ իր դերն ունի :

Ծանրագոյն պարագաներու մէջ , երբեմն տենդ ալ կը պատահի . յոգնած՝ ցաւերէն , անքնութե-նէն , ընկճուած՝ բարոյապէս , հիւանդը սակաւա-րիւն կը դառնայ , կը գունատի , կը նիհարնայ , ա-խորժակ չունենար , կերածը դիւրաւ չի կրնար մար-տել , Այն ատեն յաճախ ընդհանուր վարակում մըն է որ տեղի կ'ունենայ :

Երկու երեք շաբաթ այս վիճակը շարունակ-ուելէ ետք , որ ատեն հոսումը աստիճանաբար կը բարեփոխուի , հիւանդութիւնը կը մանէ իր անկ-ման շրջանը : Այլ եւս հոսումը շատ նօսը չէ . թէեւ միշտ լեցուն մանրէններով . թարախը առաջ-ուան չափ թանձր և և գունաւոր չէ , բայց դարձեալ կը պարունակէ վերնամաշկի բջիջներ , կը դառնայ ձերմկորակ , խշոտ , մեղմահոս : Մէլը այնքան պղղ-տոր չէ , գնտիկներ չի պարունակիր , այլ աւելի ման-րաթիկեր : Միզելու գործողութիւնը շատ ցաւ չի պատ-ճառեր . կանգնումները և բոլոր ցաւառիթ ախտա-նշանները կը մեղմանան : Այս շրջանն ալ կը տես-նուի երկու երեք շաբաթ , և այնուհետեւ ալ հոսում երկու երեք շաբաթ , այլ միայն առաւօտուն , տեղի չունենար ցերեկը , այլ միայն առաւօտուն , առաջին մէջը շարձակուած : Հոսումի վերջնական դադարումէն առաջ , յաճախ տեղի կ'ունենան հի-ւանդութեան վերադարձներ , որոնք քանի մը օր

կը տեւեն : Ասոնք յաճախ տեղի կ'ունենան առանց յայտնի պատճառի մը . կամ սխալ ընթացքի մը , սերմնահոսութեան , յոգնութեան հետեւանքով : Վերջապէս , երբ միզանցքը չոր է , երբ այլեւս կաթիլ չի տեսնուիր առտուն , դեռ երկար ատեն մէջին մէջ կը տեսնուին թեթեւ , թափանցիկ մանրաթելեր , և սովորականէն աւելի շատ հոյզ :

Սակայն բուժումը վերջնական պէտք է նկատել , երբ մանրաթելերը այլեւս արեան ճիրմակ գընտիկներ և ջերմամիզութեան մանրէներ չեն պարունակիր . և եթէ այդ նշանները չեն երեւիր նոյն իսկ զանազան զրգուումներէ ետք , — ինչպէս են կամաւոր կամ ակամայ սերմնահոսութիւն , զուգաւորութիւն , ոգելից բմպելիներ , նիքրաք տառժանգի կամ սիււալիմեի ներարկումներ : Հսկողութիւնը պէտք է ատեն մըն ալ շարունակուի երեսութեան բուժումէն ետք , հիւանդը պէտք է քննել տայ առտուն մէջին մանրաթելերը , և չիփսէ դարմանումի համար բռնած ուղղութիւնը , եթէ մանաւանդ մանրաթելերը մանրէ չգարունակեն , բայց տակաւին թարսխալից բլան :

Մանրէներու կատարեալ անհետացումէն ետքն ալ , յաճախ վաանգ կայ երկրորդական վարակումներու համար , եթէ անզգուշութիւններ բլան :

Բազդաւոր պարագաներու մէջ և կարգ մը անհասանելի համար , հիւանդութիւնն կրնայ վերջանալ 30—35 օրէն , մեծամասնութեան համար 6—8 շաբաթ , և երբեմն երեք ամիս պէտք է : Ետտեւորուն համար սուր շրջանը կրնայ երկարիլ , ու

բիշներու համար՝ անկման շրջանը : Միշտ հարկ է ուշադրութիւն լինել հիւանդներու կենցաղին , յոգնութեան , սերմնահոսումներուն , պզտիկ անզգուշութիւններուն : Բազմաթիւ են այն անհասանելի , որոնց ջերմամիզութիւնը երկար ատեն կը շարունակուի թմրած վիճակի մէջ : Հազուադէպ չեն նաև անհոգ հիւանդներ , որոնք երբեք չեն զգացած իրենց ջերմամիզութիւնը և բժշկական քննութեամբ միայն համոզուած են :

X

Երբ ծանր տենդ մը պատահի ջերմամիզութեան շրջանին — ինչպէս . կարմրախտ , թոքատապ , ժանտատենդ են . — հոսումը կը դադրի ատեն մը , բայց սովորաբար կը վերսկսի երբ տենդն անցնի : Պատճառն այն է որ ջերմամիզութեան մանրէն իր կենսունակութիւնը կը կորսնցնէ 39 աստիճան ջերմութեան մէջ և կը չքանայ 40 աստիճանին : Հետեւաբար , սուր ջերմամիզութիւն մը կրնայ դարմանուիլ , եթէ մէջտեղը տենդ մը պատահի , և ջերմութիւնն ալ բարձրանայ , մանրէն սպաննելու աստիճան :

Բժիշկները հաստատած են որ եթէ քննութեամբ մէջին մէջ մանրէ չտեսնուի , այլ միայն թելեր , հիւանդը դարձեալ վարակիչ է , որովհետեւ մանրէները կրնան երկար ատեն ծածկուած մնալ միզուկի բշտիկներուն խորը , և նորոգուած գործուանութիւն մը սկսիլ զանազան առիթներու մէջ , նէութիւն մը սկսիլ զանազան առողջական վիճակին և ապահովանայ իւանդի առողջական վիճակին և ապրելու ձեւերուն : Հետեւաբար , որքան ատեն որ թել կայ , հիւանդը բժշկուած չէ :

Եթէ ջերմամիզութիւնը բրոնխի դառնայ, միզուկի հուզաթաղանթին զանազան մասերը կը պնդանան. մէկը պղտոր կը մնայ երկար ատեն, հոսումը կը նօսրանայ, բայց տաղտկալի յամառութեամբ մը կ'երեւի ամէն առտու («առտուան կաթիլներ»), կը վնասուի նաև շագանակագեղձը, և հիւանդը ցաւագին զգայութիւններ կ'ունենայ, մասնաւորապէս արտաքսման ատեն. շատ անգամ միզուկն ալ կը նեղնայ, իսկ աւելի յաճախ յառաջ կուգան յարարերական անկարողութիւն և ջղային անկարողութիւն: Ամէնէն գէշն է վարակման երկար տեւողութիւնը: Միշտ վառանգ կայ որ այսպէս կամ այնպէս ջերմամիզութեան մանրէներ ծածկուած ըլլան և երբ առիթը ներկայացաւ, ամէն բան ծայրէն կը սկսին, կամ ուրիշի մը կը փոխանցեն վարակուի մը: Բժիշկները կը յիշեն ազամարդ մը որ ջերմամիզութեամբ վարակուելէ տասերեք տարի ետք վարակեց իր կինը:

Քրոնիկ ջերմամիզութեան բնորոշ ախտանշանն է «առտուան կաթիլներ»ու (goutte militaire) անսահման շարունակութիւնը, որ իրարու կը փակցնէ միզանոցքին շրթները: Այս հոսումը ուրիշ նիւթերու հետ կը պարունակէ նաև ջերմամիզութեան մանրէներ: Ախտանշանները սովորաբար թեթեւ են, և սաստկացումներ կրնան պատահիլ երբ զուգաւորութիւն կը կատարուի կամ ոգելից բնագիւններ կը գործածուին: Կրնայ պատահիլ որ առտուան կաթիլը թումները ալ եւս չկրկնուին մինչև իրիկուն, կամ ընդհակառակն օրուան մէջ քանի մը անգամ

կրկնուին: Ճիշտ է որ հիւանդը ցաւ չզգար կամ միայն աննշան ցաւեր կ'ունենայ. բայց երբեմն կսկիծներ, տեսակ մը տաքութիւն կը զգայ, ծանրութիւն մը՝ միզուկին երկայնքը, սրբանակին վրայ. միզումները աւելի յաճախադէպ կը դառնան, երբեմն ցաւ պատճառելով վերջացած պահուն: Հազուադէպ չէ նաև որ, ջերմամիզութեան դարմանումէն ետք, աւելի կամ նուազ սաստկութեամբ շարունակուին միզուկի ցաւերը, երբեմն կոտուանքի ձեւով: Այդ ցաւերը չափազանց կը նեղեն ենթական և սեւամաղձութեան կը մղեն գայն: Կը նշանակէ թէ շագանակագեղձը կամ մզային փափուշան ալ բորբոքած են: Փրօսաքիթի կամ շագանակագեղձի բորբոքման նշանն է այն ընդհատ ընդհատ հոսումը որ տեղի կ'ունենայ տեսակ մը ցայտումով, մէկը կամ կրկնանքի արտաքսումէն ետք, երբեմն նոյն իսկ անոնց միջոցին, և կրնայ արատ ձգել ճերմակեղէնին վրայ:

Այս կարգի հիւանդները յաճախ կը կղանքէն կամ նոյն իսկ մէզէն յետոյ կը ձգեն հոյլի թանձր և պղտոր զանգուած մը, որ շագանակագեղձէն կու գայ և որ յաճախ շատ կը նեղէ զիրենք: Սերմնակենդաններ ալ կը գտնուին այս հոյլին մէջ:

Քրոնիկ ջերմամիզութեան պարագային, երբեմն մանրէները անհետացած կ'ըլլան, բայց պակաս չեն երկրորդական վարակման միկրօրներ: Երբեմն նոյն իսկ կարգ մը հոսումներ կը շարունակուին, միկրօրներու երեւութեան կամ իրական անհետացումէն ետք:

Քրոնիկ մղկատապը (կամ Չերմամիզութիւնը) միայն յառաջակողմեան միզուկին մէջ կ'ըլլայ. բայց կը պատահի նաև յետակողմեան միզուկին մէջ: Այն ատեն կը տեսնուին սուր Չերմամիզութեան նշանները զանազան ձևերով, — յաճախակի միզում՝ երբեմն ցաւառիթ, ջղային տագնապներ, ցաւեր՝ փոշտամաշկին մէջ, տկարութիւն՝ ստորին անդամներու՝ երբ բժիշկը շօշափէ թափանք, կրրնայ հասկնալ շագանակագեղձին և սերմնային փամփուշաներուն վիճակը և յաճախ կը դիտէ որ շագանակագեղձը ուռած է կամ կը ցաւի: Երբեմն շագանակագեղձէն հոսում մըն ալ տեղի կ'ունենայ:

Հիւանդին մէզը յաճախ թանձր է, չնորձիւ միզուկի նոյզին որ առատօրէն կը հոսի: Եթէ հիւանդը քանի մը ժամէ ի վեր չէ միզած, այն ատեն բժիշկները միզել կու տան երեք գաւաթի մէջ, առաջին գաւաթին մէզը կը պարունակէ երկու միզուկներէն քամուած նոյզն ու մանրաթելերը, վերջին գաւաթն ալ աւելի կամ նուազ բազմաթիւ մանրաթելեր կը պարունակէ, եթէ յետակողմեան միզուկն ալ վարակուած է: Իսկ եթէ միայն յառաջակողմեան միզուկն է վնասուած, վերջին գաւաթին մէջ թափուած մէզը միշտ յստակ է: Երբեմն ալ առաջուրնէ կը լուան յառաջակողմեան միզուկը, յետոյ միզել կու տան հիւանդին: Այն ատեն մէզին մէջ երեւցած մանրաթելերը յետակողմեան միզուկէն կու գան: Ֆինկրրի կարծիքով, քրոնիկ Չերմամիզութեան ատեն, առտուան մէզին երեւոյթը երբ քննուի սասակութեան պարագաներէն անկախարար,

յաճախ գաղափար կու տայ հիւանդութեան հնութեան մասին: Եթէ մէզը պղտոր է և շատ նոյզ կը պարունակէ, քրոնիկ մղկատապը տակաւին մակերեսային է, ցրուն և նոր: Ընդհակառակն, եթէ առտուան մէզը յստակ է, և ուրիշ բան չի պարունակեր բայց միայն մանրաթելեր և շատ քիչ նոյզ, կը նշանակէ թէ քրոնիկ Չերմամիզութիւնը խորպէս տեղաւորուած է, և շատ աւելի հին է, իսկ իր պատճառած վնասները աւելի լուրջ են:

Քրոնիկ մղկատապի տեւողութիւնը միշտ կ'երկարածուի և մեծ համբերութիւն կը պահանջէ թէ՛ բժշկին և թէ՛ հիւանդին կողմէ: Համաձայն եւրոպացի և ամերիկացի բազմաթիւ մասնագէտներու փորձառութեան, միջին հաշուով վեց ամիս կը տևէ դարմանումը, իսկ հարիւրին երեք ալ կը պատահի որ բոլորովին անդարմանելի ըլլայ: Հիւանդը բուժուած կրնայ նկատուիլ այն ատեն, երբ ալեւս ո՛չ թարախ կայ միզուկի արտահոսումներուն մէջ, ոչ ալ Չերմամիզութեա՛ մանրէ:

Հաշիւ եղած էր որ կնոջական ախտերու մէկ ութերորդը յառաջ կու գայ Չերմամիզութենէ, որ կը վարակէ խոռոճային կամ արգանդի խոռոչը, յետոյ անցնելով փայլոպեան խողովակներուն և ձուարաններուն: Հետեւաբար, բժիշկները պարտաւոր են Չերմամիզութենէ բռնուած ազամարդու մը ամուսնութեան հրաման տալ այն ատեն, երբ քննութիւնը կը հաստատէ որ . ա . Չերմամիզութեան մանրէ չկայ. — Բ . թարախի բջիջ չկայ. — Գ . Միզուկը չէ հեղցած . — Դ . Աւողջ բնականոն վիճակ

ունին շագանակագեղձն ու սերմնային փամփուշտները :

Շատ անգամ ջերմամիզութիւնը քրոնիկ կը դառնայ դարմանումի ծայրայեղութիւններուն հետեւանքով, գործիքներու կիրարկումով են : Այնպէս որ, բժիշկներ կը յանձնարարեն հիւանդ մը երկու ամիս դարմանելէ յետոյ, ներարկումները դադրեցնել տաս օր մը, որպէս զի հաստատութիւն բուժման բնական ընթացքը չէ յազաղած դարմանումի չափազանցութիւններէն :

×

Գարմաններ. — Ինչպէս դիտել տուինք մեր ընդհանուր տեսութեան մէջ, ջերմամիզութիւն չստանալու համար առաջին պայման է՝ շատ շերկարած գել զուգաւորութիւնը և գոհանալ մէկ գործողութեամբ, անմիջապէս յետոյ միզելով և աւանդամբ լուարով, որպէս զի խոռոճակին արտահոսումներ չտեղաւորուին միզուկին մէջ : Յետոյ, ամէնէն ապահով միջոցն է պահպանակը, կը բաւէ որ գործողութեան ատեն չպատուի :

Վարակումէն յետոյ, բնականաբար ձեր առաջին գործը պիտի ըլլայ դիմել բժշկին : Զննմամբութիւնը տեսակ մը ինքն իր մէջ սահմանափակուած հիւանդութիւն է, իսկ թարախը կը նկատուի հիւսկէններուն մէկ ճիզը՝ արչաւող միկրոբները դուրս հանելու : Այնպէս որ երբ վերջին մանրէն արտաքսուի, թարախն ալ կը դադրի, կը բաւէ որ ուրիշ վարակումներ կամ վերաւորումներ տեղի ունեցած չլլան ներսերը :

Բացարձակապէս կանոնաւոր դարմանում մը տեղի կրնայ ունենալ միայն հիւանդանոցներու մէջ : Այսպէս, հաստատուած է որ երբ հիւանդ մը փակուի զինուորական հիւանդանոցին մէջ և միայն թեթեւ անունդով կերակրուի — զլիւսւորապէս կաթով — ընդհանրապէս 45 օրէն մանրէները կ'արտաքսուին և թարախը կը դադրի : Բայց արդի ընկերային և գործի պայմաններուն մէջ, դարմանումի այդպիսի ձեւ մը գործնապէս անկարելի է, հետեւաբար, մէթոտիկ դարման մը կը փորձեն :

Հին ժամանակներէ ի վեր ջանքեր եղած են ջերմամիզութեան ընթացքը վիժեցնելու, զօրաւոր ներարկումներ կատարելով : Բայց նոր գիտութիւնը հաստատեց թէ այս բոլոր փորձերը ոչ միայն ապարդիւն են, այլ և, գրգռումը սաստիկացնելով, վնասակար ազդեցութիւն կը գործեն ջերմամիզութեան ընթացքին վրայ. թէև արծաթի ալպիւմինատներու ներմուծումէն ի վեր, երբեմն այդպիսի փորձերն ալ կը յաջողին վեց-ութ օրէն, և թէ դարմանումը անմիջապէս սկսի : Եթէ մանրէները չափազանց շատ են և վարակումը երեք չորս օրուան նութիւն ունի, այդ ձեւով յաջողելու շատ հաւանականութիւն չկայ :

Սովորական մէթոտիկ դարմանումի համար, կարգ մը առողջապահական կանոններ կան որոնց ուշադրութեամբ պիտի հետեւի հիւանդը, — պէտք է հանգիստ մնայ, կարելի եղածին չափ տունը կենալով, բազմոցի կամ անկողնի վրայ պառկելով : Աւելորդ է ըսել թէ պիտի զգուշանայ սևոպին



կամ տափական որ և է գրգռումէ, զուգաւորութենէ: Պէտք է մասնաւոր աշաղրութիւն ընէ որ ձեռքերը աչքերուն չդպչին, առնանդամը կամ դայն չըջապատող ճերմակեղէնները բռնելէ ետք, բացարձակապէս անհրաժեշտ է միշտ օճառով լուալ, եթէ ոչ աչքի ցաւ կը ծագի, մինչեւ իսկ կուրութեան առաջնորդելով:

Ուտեալը պիտի ըլլայ չափազանց պարզ, ոչ գրգռիչ. հիւանդը պիտի զգուշանայ շատ միտ ուտելէն. աւելի լաւ է որ բնաւ չուտէ: Վնասակար են չափազանց համեմատոր կամ աղի կերակուրները. զօրաւոր թէյը կամ խահուէն, ամէն տեսակ հա-մններ, թացան (սալցա), ծներեկ (ապիերժ), թթուաչ (թուրչու), տոմաթէս, ոգելից բմպելիներ, մասնաւորապէս գարեջուր և գինի:

Անհրաժեշտ է մասնաւոր լաթերով չէզոքացնել արտահոսումը, որպէսզի ճերմակեղէնները չաղտտան և թարախը ամէն կողմ չտարածուի: Կուտագոյն միջոցն է կարելի զուլպայի մը ծայրը, և յատակին մէջ հականկիտական բամպակ դնել, և անցընել առնանդամին, մէջքէն կապելով: Արդէն հանրածանօթ է փոշտակալը (suspensoire), որ ամէն տեղ կը ծախուի: Առնանդամը ամուր փաթաթելը վնասակար է: Եթէ հոսումը աննշան է, բամպակի կտոր մը կրնայ դրուիլ թլիփաախն տակ: Բայց երբ հոսումը առատ ըլլայ, բամպակէն զգուշանալու է, որովհետեւ կ'արգիլէ թարախին ազատ հոսումը և ետ կը մղէ դոյն:

Անհրաժեշտ է շարունակ լուալ ծննդական գործարանները և միշտ փոխել բամպակը: Շատ մը բժիշկներու յանձնարարութեամբ, իրրեւ ըմպելիք, կարելի է խմել օշարակներ, լեմոնատ, բայց ոչ կազեօզ կամ նման կազային բմպելիներ:

Պէտք չէ ձի կամ հեծանիւ նստիլ, շատ քալել, յուզուիլ, բարկանալ:

Սուր ջերմամիզութեան պարագային, առնանդամը կը պատեն շատ տաք ջուրի մէջ թաթխուած փաթաթներով, որոնք շարունակ պիտի փոխուին: Բացարձակ պայման մը չկայ բազնիքի համար. լուգանքները խիստ մեղմացուցիչ և կազդուրիչ են շատերու համար, բայց գրգռիչ կ'ըլլան ուրիշներու, արիւնախոռոմ յառաջ բերելով ծննդական գործարաններուն մէջ և կանգնում պատճառելով: Առնանդամի տաք ջուրով լուայումները շատ օգտակար են: Քառասուն աստիճանէն վեր՝ ջերմամիզութեան մանրէն կը մեռնի: Ահա թէ ինչո՞ւ կարգ մը բժիշկներ մետաղէ թիկ մը կը ներմուծեն միզուկին մէջ և երկարական հոսանք մը կ'արձակեն, ջերմութիւնը բարձրացնելով մինչեւ 37 կամ 50 կամ 55 աստիճանի:

Դարմանումի համար մենք գրեցինք միայն տարրական անհրաժեշտ ծանօթութիւնները: Բժիշկին կը մնայ սահմանել զեղերն ու միւս պատուէրները՝ համաձայն իւրաքանչիւր անհատական պարագայի: Դիտելի է որ շատեր կը խուսափին բժշկական դարմանէ, և ասոր-անոր յանձնարարութեամբ առանին գարմաններ կը փորձեն, անշուշտ

աւելի երկար տառապելու կամ նոր կնճիւններ յառաջ բերելու համար: Տօքդ, Պլօխ դիտել կուտայ թէ ջերմամիզութիւնն է որ, նոյն իսկ սիֆիլիսէն աւելի, կը պահանջէ անդամազննական և արտաբանական խոր և ճշգրիտ ծանօթութիւններ:

X

Կնոջ համար ջերմամիզութիւնը ճշմարիտ մարտիրոսութիւն մըն է, և աւելի դժուար կը բուժուի. իսկ հետեւանքները շատ աւելի ազիտարեր են: Գերման-ամերիկացի բժիշկ Նօկլրաթ էր որ 1872ին առաջին անգամ հաստատեց թէ կանացի յամառ հիւանդութիւններուն մեծ մասը պարզապէս հետեւանք է ջերմամիզութիւնի վարակման:

Ջերմամիզութիւնը մասնաւոր նախապատուութեամբ մը կ'ընտրէ կնոջ ծննդական ներքին գործարանները, կր մանէ անոնց ծայքերուն մէջ. իբ մանրէները հանգիստ կը տեղաւորուին անոնց լայն հուզաթաղանթներուն վրայ, ածելով և բազմանալով, ներսը հազարամէկ անմատչելի անկիւններ և թաքըստոցներ կան, ուր չի կրնար հասնիլ բժշկական ճարտարութիւնը: «Անոնք չքաղուած անպիտան, վնասակար խոտերու պէս առատօրէն կ'աճին ծնունդական հուզաթաղանթի ամբողջ տարածութեան վրայ, միեւնոյն կենսունակութեամբ յարձակելով արգանդի և ձուանցքի հուզաթաղանթներուն վրայ: Այդ մանրէները կնոջ մէջ ալ յառաջ կը բերեն ուռեցքներ և ամլութիւն: Բայց կիները բան մըն ալ աւելի կը քաշեն. այդ հիւանդութիւնը խիստ ջլատիչ ազդեցութիւն մը կը գործէ անոնց

վրայ, և հաւանական է որ տարիներով սաստիկ ցաւեր քաշեն: Ամէն անգամ որ կարգ մը մարմնական շարժումներ կատարեն — և այս կրնայ տեւել տասը տարի յաջորդաբար — ցաւեր կը զգան, երբեմն ստակալի, և շատ մը պարագաներու մէջ զսասպարտուած են զրկանքի և թշուառութեան, սովորաբար առանց մեղք մը ունենալու. որովհետեւ շատ կիներ բուն իսկ իրենց ամուսիններէն կը վարակուին:

Կնոջ մէջ ջերմամիզութիւնը յաջորդաբար վարակելով խուռճային, արգանդը, ձուանցքը, ձուարանները և սրբանակը, երբ մանաւանդ քրոնիկ հանգամանք ստացիր է, սովորաբար ամլութիւն կը պատճառէ. երբ արգանդը և ձուարանները վնասուած են, զոհը կրնայ հիւանդ պտուկիլ տարիներով: Կնոջ պարագային, միզուելի նեղացում և մզային փամփուշտի վարակումներ շատ յաճախադէպ չեն:

Կնոջ ջերմամիզութիւնը միայն երկու չափահասներուն վրայ չի սահմանափակիր իր աւերքը: Իր մանրէները կը սպառնան նաեւ անմեղ երեխային, որ մօր բունոցէն պիտի անցնի. կը վարակեն անոր աչքերուն ճերմկուցը և յառաջ կը բերեն խիստ ծանր թորախալից բորբոքում մը, որ կը կոչուի նորածին մանկան ջերմամիզութիւն կամ աչացաւ (ophthalmie): Եթէ երեխան բորբոքվին չի կուրանայ, յաճախ աչքին անկիւնը կը մնան սպիտակ խոշոր բիծեր, որոնք մեծապէս կը վնասեն

«Vierteljahrtschrift für Ophthalmologie»

(38) 12

տեսողութեան : Առաջ բաղմամբիւ էին անոնք որ  
կը կուրանային այսպիսի վարակումներէ : Բայց մեծ  
զիանական մը . Բրէտէ , յանձնարարեց Երբրաք  
ա՛նաթանի լուծոյթ ներարկել նորածիններու աչ-  
քերուն , և անկէ ի վեր աչքերու ջերմամիզական  
բորբոքումը մեծապէս նուազած է :

Կնոջ համար ուրիշ դժբախտութիւն մըն ալ  
այն է որ հիւանդութիւնը յաճախ անճանաչելի կը  
մնայ , որովհետեւ ախտանշանները մեղմ են կամ  
քնաւ չեն երեւար : Կրնայ կակիծներ զգալ մրդած  
ատեն , բունոցի շիթները կ'ուռին , զանազան ան-  
հանգստութիւններ պատճառելով . բայց ազամար-  
դուն զգացած սուր ցաւերը սովորաբար չեն երե-  
ւիր կնոջ վրայ : Նէյտէր փորձեր կատարեց 527 բու-  
ղերու վրայ , որոնք ջերմամիզութեան տեսանելի  
նշան մը չէին ցուցներ , և հաստատեց որ 12ձը  
ջերմամիզութեան մանրէներ ունին : Բայց այս չի  
նշանակեր թէ բոլորն ալ վարակուած են . որովհե-  
տեւ , ինչպէս գիտուած է բժշկական փորձերով ,  
ջերմամիզութեան թարախը կրնայ քանի մը ժամ  
մնայ խոտճպիին մէջ , առանց դաշն վարակելու :  
Այս կերպով , ազամարդ մը կրնայ ջերմամիզու-  
թիւն առնել ուրիշ ազամարդէ մը , և կլինը միայն  
իրբիւ միջնորդ ծառայած կ'ըլլայ , թէեւ սովորա-  
բար մեղադրանքը իր վրայ կը ծանրացնեն . . . :

Եւ որովհետեւ սկզբնաւորութիւնն աննշմար  
կ'անցնի , ամուսնացած կլինն ալ շատ ուշադրու-  
թիւն չընէր առաջին հոտումներուն և իր զգացած  
ցաւերուն : Եթէ քննութեան ենթարկուի այդ մի-

ջոցին , յաճախ կը տեսնուին թեթեւ կարմրութիւն-  
ներ , ուռեցքներ և սպիտակահոտութիւն , որոնք  
ապահովաբար հեռեւանք կ'ըլլան ամուսնական ա-  
ռաջին յարաբերութեանց : Բժիշկը պարտաւոր է  
հարցաքննել ամուսինը՝ հասկնալու համար թէ ջեր-  
մամիզութիւն ունեցե՞ր է . թեկեր կա՞ն մէզին մէջ :  
Անշուշտ կիւնն ալ քննութեան կ'ենթարկուի :

Մեր սահմանէն դուրս ըլլալով մանրամասնել  
այն տկարութիւններն ու վարակումները որոնց  
կ'ենթարկուին կնոջ ծննդական գործարանները՝  
ջերմամիզութեան հեռեւանքով , կը փակենք այս  
գլուխը : Կնոջ համար ալ դարմանումի նախնական  
միջոցները գրեթէ նոյնն են , — հանգիստ անկողնի  
մէջ , թեթեւ ճաշ , յաճախակի սաք լողանքներ ,  
փերմանկանաք տը փօքասով լուացում բունոցի  
և խոտճպիի , օրական զէթ երկու անգամ են :

Չմոռնանք յիշել որ ջերմամիզութիւնը , թէեւ  
նախապէս տեղական հիւանդութիւն է , բայց կր-  
նայ րնդիւանուր վարակում ալ պատճառել , իր  
մանրէները կամ ժանրը սիւսելով մարմնին մէջ :  
Բնականաբար ծանրագոյն կամ քրոնիկ դէպքերու  
ատեն է որ այդ վտանգը անխուսափելի կը դառ-  
նայ : Բժիշկիւնը ջերմամիզութեան մարնէներ գտած  
են մարդու արիւնին մէջ :

Ընդհանուր վարակման դիտաւոր երեւոյթներն  
են ջերմամիզական յօդացաւը , սրտի ներքին թա-  
զանթներու բորբոքում , խանգարումներ ջգային  
դրութեան , բորբոքում լանջքի թազանթին , և  
կարգ մը մորթային տկարութիւններ : Մասնաւու-

բապէս նկատելի է որ յօդացաւի շատ դէպքեր ուղղակի ծնունդ են անխնամ ձգուած կամ ծածկուած ջերմամիզութեան: Միշտ կտակածելի են երկտասարդներու «յօդացաւերը», այսինքն՝ պէտք է ջերմամիզութեան վերագրել զանոնք: Միևնոյնը կարելի է ըսել ա՛յն մանկամարդ կիներուն համար, որոնք յաճախակի վարակուած են իրենց ամուսիններուն կողմէ՝ իբրեւ թէ բուժուած, այլ միշտ թաքուն մնացած ջերմամիզութեամբ: Այս հիւանդութեան մանրէն յաճախ գտնուած է ջերմամիզական յօդացաւի դէպքերու մէջ, այնպէս որ, բժիշկներ հաւանական կը նկատեն թէ ան կրնայ բորբոքում յառաջ բերել, առանց ուրիշ թարախացին միկրոններու օգնութեան:

Ջերմամիզական յօդացաւը աւելի սովորական է այրերուն քան կիներուն մէջ: Դիտուած է նաև նորածին երեխաներու վրայ: Մասնաւորապէս յառաջ կուգայ տղամարդու յետակողմեան միզուկի վարակումէն, և կ'երեւի սուր մղկատապի երկրորդ կամ երրորդ շարժուն, նաև քրոնիկ դէպքերու ատեն, կամ թաքուն ջերմամիզութեան մը արծարծման պարագային: Ամէնէն աւելի և ամէնէն առաջ կ'ազդուին խոշոր յօդերը, մասնաւորապէս ծունգը:



### 3. ՍԻՖԻԼԻՍ

Վեներական հիւանդութիւններու երկրորդն է Սիֆիլիսը:

Դիտուենները դեռ տարակարծիք են Սիֆիլիսի հնութեան և ծագման մասին:

Կարգ մը հեղինակութիւններ կը կարծեն թէ այդ հիւանդութիւնը առաջին անգամ երեւցաւ ժնդարուն, և Ամերիկայէն Եւրոպա ներմուծուեցաւ շնորհիւ Քրիստափոր Գոլոմպոսի: Ուրիշներ մինչև հասապատմական չրջաններու կը վերագրեն:

Երկար ատեն մարդիկ այնպէս կը հաւատային թէ — և այսօր ալ բազմաթիւ են այդ կարգի միամիտներ — սեռային յարաբերութիւնը մեղք մըն է որուն համար պատիժ սահմանուած է, — վեներական հիւանդութիւն մը, օրինակ՝ սիֆիլիսը: Ապահովաբար այս ըմբռնումն ալ ծնունդ էր հասապատմական չրջաններու ոգեպաշտութեան, որ բոլոր հիւանդութիւնները կը նկատէր դեւերու գործը: Մինչև այսօր միաքերու վրայ կը տիրապետէ այս հոգեբանութիւնը, և պատկառելի թօյլութն անգամ, ու իր տարաբաղբ աշակերտներէն Տօբդ՝ Վայնինկէր մոլեռանդօրէն կը դատապարտէին սեռային յարաբերութիւնը: Բազմաթիւ բժիշկներ և պատմաբաններ ըսած են թէ սիֆիլիսը այնքան հին է որքա՛ն սեռային յարաբերութիւնը. կամ թէ, ո՛ր որ Աստուիկ կը գտնուի, հոն սիֆիլիս կայ: Բայց

տօքդ. Պօլս զխաղ կու տայ թէ ատոնք ալ անդգ-  
գալարար աղղուած են վեներական հիւանդու-  
թիւնները աստուածային պատիժ նկատելու նախա-  
պաշարումէն: Այսօր փաստ է որ հազարաւոր մար-  
դիկ, կամ օրինակ Ռուսիոյ կարգ մը մասերուն մէջ  
հարիւրին 90 սիֆիլիսէ կը վարակուին, առանց  
սեռային յարաբերութեան, պարզ հպումով:

Երկրորդ, հանրածանօթ իրողութիւն մըն է թէ  
այն մարդիկը որոնք դեռ ըտրորովին չի վարակուած  
անմեղ սկսնակներ են, սիֆիլիսէ կը վարակուին  
սեռային յարաբերութեան առաջին առիթով իսկ.  
մինչդեռ նշանաւոր ցոխակեացներ, չորհիւ իրենց  
փորձառութեան և վտանգի գիտակցութեան,  
պաշտպանողական արդիւնաւոր միջոցներ ձեռք  
կ'առնեն, որոնք անշուշտ չպիտի զօրէին, եթէ սի-  
ֆիլիսը երկնային պատուհաս մը ըլլար: Եւ վեր-  
ջապէս, յայտնի է որ երեխաներ անգամ սիֆիլիսէ  
կը վարակուին, մաս մը՝ ժամանգութեամբ, մաս  
մըն ալ պարզ հպումով:

Գիտական բացատրութեամբ, սիֆիլիսը վարա-  
կիչ ժահր մը, թոյն մըն է, որ մէկ անհատէն  
միւսին կրնայ փոխանցուիլ նոյն իսկ առանց սեռա-  
յին յարաբերութեան: Սիֆիլիսը միայն սիֆիլիսէն  
կը ձգէ: Հետեւարար, անոր դէմ պէտք է մաքա-  
ռիլ այնպէս ինչպէս կը մաքառին ուրիշ ափրողխա-  
եան հիւանդութիւններու դէմ: Պատմութիւնը կը  
կը ցօղցնէ թէ վեներական հիւանդութիւններու  
ամէնէն ահարկուն Եւրոպա մտաւ ըտրորովին պա-  
տահարար, և եթէ այն ատեն մարդիկ ունենային

ներկայ փորձառութիւնը, շատ զիւրին էր իր սաղ-  
մին մէջ իսկ խղիւղ պիտար:

×

Սիֆիլիսը ունի իր պատմութիւնը, ունի  
սկզբնաւորութիւն մը կամ, — ինչպէս կ'ըսէր Վօլ-  
թէր սուր հեգնութեամբ — ազգահամար մը: Ծիշտ  
է որ երկար ատեն մութին մէջ մնացած է այդ  
պատմութիւնը, և դեռ այսօր իսկ լուսարանու-  
թեան կարօտ կէտեր շատ կան: Շատ մը հեղինա-  
կութիւններ կը հաստատեն թէ Եւրոպայի մէջ նոր  
համաճարակ մը ծագեցաւ ժՆ. դարու վերջերը և  
թէ այդ ախտին տարածման մեծապէս նպաստեցին  
Ֆրանսայի Շարլ Ը. Թագաւորին զինուորները,  
որոնք Նախօրի վրայ արշաւեցին 1494—1495 ին:  
Բայց միւս կողմէ ապացոյցներ կան թէ սիֆիլիսը  
Եւրոպայի մէջ ծանօթ էր Քրիստափոր Բոլոմպոսի  
վերադարձէն առաջ, և շատ հաւանական է որ ա-  
նոր նաւատիկներուն կողմէ փոխադրուեցաւ հա-  
կառակ ծայրը, Եւրոպայէն Ամերիկա: Փուլիօզէ  
կը նկարագրէ նոր համաճարակ մը, որ ծագեցաւ  
1492 ին, Բոլոմպոսի վերադարձէն երեք տարի ա-  
ռաջ, Ապահովարար սիֆիլիսն էր այդ, թէև կարգ  
մը գիտուններ քոս ու ժանտատենդ կը նկատեն:

Ընդհանուր կարծիք մը կայ թէ սիֆիլիսը գո-  
յութիւն չունէր, Եւրոպայի մէջ, ժՆ. դարու  
վախճանէն առաջ: Այս համոզման պատճառը այն  
է որ Իպոկրատ և ուրիշ հելլէն կամ լատին գրող-  
ներ որ և է յիշատակութիւն չեն ըներ այդ հիւան-  
դութեան: Բայց նորագոյն հեղինակութիւններ կը  
հերքեն այդ կարծիքը, զիտեղ տալով թէ Իպոկրատ

կը նկարագրէ բերնի և ծննդական գործարաններու կեղեր, աչքի ցաւ և աճուկի ուռեցքներ: Ուրիշ հին մատենագիր մը կը յիշէ ծեփուկի չոր և թարախալից կեղեր որոնք ապահովաբար ծանօթ կարծր և կակուզ կեղերն են: Այդ նոյն մատենագիրը կը նկարագրէ նաև կրծող վէրքեր, բերնի, քթի, կոկորդի կեղեր, ինչպէս և կարգ մը բորբոքումներ, որոնք հաւանաբար սիֆիլիսի հետ կապ ունէին:

Այսպէս կամ այնպէս, զօրաւոր ապացոյցներ կան որ կակուզ և կարծր կեղերը և սիֆիլիսի ուրիշ կարգ մը նշաններ ծանօթ էին հելլէն և հռոմէական բժիշկներուն: Ապահովաբար երգիծաբան բարաստեղծներն ալ գաղափար ունէին սիֆիլիսի մասին, և անոնցմէ մէկը ակնարկութիւն կ'ընէ վերակիշ հիւանդութեան մը փոխանցման: Թիւկէտիտէս կը յիշէ սեռային գործարաններու, ձեռքերու և ոտքերու հիւանդութիւն մը որ ծագեցաւ Աթէնքի «ժանտախախն» ասան: Շատ բժիշկներ պարզապէս սիֆիլիսի համաճարակ մը կը նկատեն այդ ժանտախախն:

Նշաններ կան թէ Հնդկներն ալ ծանօթ էին սիֆիլիսի, Քրիստոսէ առաջ 1000 թուականին: Հնդկական հին գրքի մը մէջ, որ լատիներէնի թարգմանուեցաւ, կը յիշուին ջերմամիզութիւն, փամփուշտի և ամորձիքի բորբոքում, ուտիչ վէրքեր կեղեր, աչքի ցաւեր, բշտիկներ՝ դէմքի և կոկորդի վրայ, ոտքի և ձեռքի հերթափութիւն, ուռեցքներ: Իսկ 1795ին կատարուած ուսումնասիրութիւն մը կը քաջատրէ թէ Հնդկները սնդիկ

կը գործածէին սիֆիլիսի բուժման համար:

Աստուածաշնչական շրջանի Հրէաներն ալ ծանօթ էին այս ահաւոր ախտին:— Գիտունները որոշ բան մը չէն կրնար բանի, և միայն ցանցաւ ու անատոյգ փաստեր կը յիշեն Ս. Գրքէն: Ղեւտացիներու ՔԳ. գլուխին մէջ կը նկարագրուի բորտաութեան համաճարակ մը: Բայց կտրելի չէ եղած ճշդել թէ իրապէս բորտութիւն էր այդ ախտը. թէ սիֆիլիս: Հին ժամանակներու մէջ երկու հիւանդութիւնները կը շփոթուէին իրարու հետ. և գիտունները սիֆիլիսի ոսկորներ զտած են բորտաներու գերեզմաններուն մէջ: Զամպաքօ ալ Գահիրէի մեռելաստաններուն մէջ գտաւ սիֆիլիսի նշաններ մասնող ոսկորներ, որոնք կը ցուցնեն թէ սիֆիլիսը հաւանաբար գոյութիւն ունէր Եգիպտացիներուն մէջ:

Բժշկական հեղինակութեան մը՝ Տապրիի համաձայն, սիֆիլիսի ամենահին ապացոյցը կը գտնուի Չինաստանի մէջ: Քրիստոսէ առաջ 2367 թուականին, Հոանկ-թի կայսրը հաւաքեց բոլոր բժշկական գրքերը, որոնք թարգմանուած են եւրոպական լեզուներու և կը ցուցնեն թէ Չինացիները ծանօթ էին սիֆիլիսի, զոր կը դարձանէին սնդիկով: Անոնք գիտէին սիֆիլիսի և ջերմամիզութեան տարբերութիւնը. գիտէին նաև թէ սիֆիլիսը ժառանգաբար կը փոխանցուի: Սակայն ճափոնական նորագոյն հեղինակութիւն մը, Օքամարա, վիճելի հոչակից այս ենթադրութիւնը, յայտնելով թէ՛ ճափոնցի և ջինացի հին հեղինակներ մեծամասնաբար կը հաստատեն որ սիֆիլիսը անձանօթ

էր Չինաստանի և Ճափոնի մէջ՝ մինչև ժ.Չ. դարու կէսերը: Թէև յրիստոնէական ՏՍՕ թուականէն մնացած Ճափոնական գործ մը, որ ծննդական գործարաններու հիանդութիւնները կը նկարագրէ, ենթադրել տուած է թէ սիֆիլիսը շատնոյ ծանօթ էր Ճափոնի մէջ. բայց այս փաստն ալ մինչև այսօր կը մնայ վիճելի:

Այսպէս արեւմտ. սիֆիլիսի հաս թեան խնդիրը չի կրնար լուծուիլ վերջնապէս: Առնէն բանաւոր տեսութիւնն այն է թէ՛ Ա. սիֆիլիսի ճիւղը հիանդութիւններ նկարագրուած են շատ հին ժամանակներու մէջ, բայց դանազան երկուցիւններու կտակցութիւնը կատարելապէս յայտնի չէր մինչև ժ.Յ. դարու վերջերը. Բ. սիֆիլիսը կրնայ համաճարակ դառնալ կարգ մը պարագաներու մէջ. և միեւնոյն սասակութեամբ չի ճարակիր բոխանդակ երկրագունդին վրայ: Գ. 1495թ. համաճարակը աճեցաւ այնպիսի ասուն մը երբ չափազանց յոգնութիւնը, անմաքրութիւնը, ցոփութիւնը և ցեղերու խառնուրդը միացեր էին ախար ծանրայնելու: Տարակոյս չկայ որ սիֆիլիսը և ջերմամրդութիւնը վնասեալ տմէնէն հին հիւանդութիւններն են. և եթէ ժ.Յ. դարէն յետոյ լաւ նկարագրուեցան, պատճառն այն է որ այդ թուականը մտաւոր գործունէութեան շրջան մըն էր:

Ժ.Չ. դարու առաջին կիսուն սիֆիլիսը յաջողապէս նկարագրուեցին ժամն ար վիկո և ուրիշներ. իսկ 1530 թն՝ Ֆրաքասթօր, իտալացի բանաստեղծ, փիլիսոփայ և բժիշկ, որ հաշակաւոր քերթուած մը

գրեց, «Սիֆիլիսիս կամ գաղղիական ախտ», որմէ ծագում առաւ սիֆիլիս անունը: Մինչ ուրիշներ՝ Նափօլի 1494—95 թ արշաւանքին կը վերագրէին հիւանդութիւնը, իտալացի բանաստեղծը կը կարծէր թէ սիֆիլիսը գոյութիւն ունէր հին ժամանակներու մէջ, թէ անոր անունն ու նկարագրութիւնը կորսուեցան դարերու ընթացքին, և թէ այն հանգամանքները որոնք նախապէս ծնունդ տուեր էին իրեն, վերերեցան իր ժամանակին և նորէն պատճառ եղան ախտին տարածման:

Ինչ կը վերաբերի սիֆիլիս բառին ստուգաբանութեան, կարծիքները դարձեալ համաձայն չեն. բայց ամէնէն հաւանական բացատրութիւնն այն է թէ սիֆիլիսը կազմուած է երկու յունական բառերէ, որոնք միասին կը նշանակեն սիրոյ ընկերը: Ֆրաքասթօրի քերթուածին հրատարակութեանն առաջ, հիւանդութիւնն ունէր զանազան անուններ, որոնց զլիսաւորներն էին «ֆրանսական ախտ», «ֆրանկախտ», «Նափօլիական ախտ», «գաղղիական ախտ»: Աւելի ետքը՝ կոչուեցաւ «մեծ ծաղկախտ» և «վնասեալ փորուեցաւ» «մեծ ծաղկախտ» և «վնասեալ փորուեցաւ»: Մինչև այսօր ալ, պահուած են, այդ անունները, և մեր մէջ, մանաւանդ, չափազանց հանրածանօթ է Ֆրանկախտը (ֆրէնկի), թէև սիֆիլիսի համար հայերէն արարակ բառ մըն ալ կը զանուի բառարաններու մէջ:

×

Տօքդ. Պլոխ կը յայտնէ թէ սիֆիլիսը, որ առաջին անգամ մտաւ Սպանիոյ մէջ 1493—1494թն և անկէ փոխադրուեցաւ Իտալիա, — համաճարակի ձեւ մը առնելով, յետոյ Եւրոպայի միւս երկիրները.

իր ծագման օրերուն չափազանց ժահրալից էր։ Հիւանդութեան բոլոր ախտաւոր երեւոյթները աւելի արագ և աւելի ուժգին ընթացք մը ունէին, քան այսօր։ Մահերու թիւը շատ աւելի բարձր էր հետեւանքները՝ շատ աւելի ծանր, նոյն իսկ երբ դարման իր փորձուէր։ Ժողովուրդին բոլոր դասակարգերը և բոլոր ազգերը կը վարակուէին հաւասարապէս և միեւնոյն սաստկութեամբ։

Նոյն իսկ այսօր դիտուած է որ, երբ սիֆիլիսը առաջին անգամ կը մտնէ այնպիսի չրջաններու մէջ որոնք մինչև այն ատեն զերծ էին այդ հիւանդութենէն, կ'ոսկնայ նոյն արագ ընթացքը, ախտաւոր արտայայտութիւններու նոյն սաստկութիւնը։ Իր Եւրոպա մտնելէն ի վեր անցած չորս տարիներու միջոցին, ժահրը աստիճանաբար մեղմացեր է, կամ գոնէ Եւրոպայի բնակչութիւնը աստիճան մը ապահովութիւն ստացած են այդ հիւանդութեան գէժ։

Երկար ատեն ջերմամիզութիւնը և սիֆիլիսը չփոթուած են իրարու հետ։ 1792ին էր որ Պէնձէմին Պէլ հերքեց այդ տեսութիւնը, ներարկումներ կատարելով բժշկական ուսանողներու վրայ։ Բայց այդ վարդապետութեան վերջնական հարուածը արուեցաւ 1831—1838ին, ֆրանսացի բժիշկ Ֆրիլիի Բիքուսի կողմէ, որ բազմաթիւ ներարկումներ կատարեց և նոր դարազրուիս մը բացաւ վերական հիւանդութիւններու ուսումնասիրութեան համար։ Այդ գիտնականն էր որ հաստատեց սիֆիլիսի երեք չրջաններու վարդապետութիւնը, և վեր-

ջապէս սորվեցուց կակուզ, ոչ-սիֆիլիթիք կեղը (chancroid) զանազանի չոր, կարծր կեղէն (chancre)։ Վիրխով իր կարգին լոյս մը սփռեց կազմական սիֆիլիսի մասին։ Բայց բուն վերական ախտերու գիտական ուսումնասիրութիւնն սկսաւ 1879ին, երբ Նէյսէր գտաւ ջերմամիզութեան մանրէն։ 1886—1892ին գտնուեցան chancroid ի մանրէները, որոնց շնորհիւ վերջնապէս հաստատուեցաւ կակուզ և կարծր կեղերու տարբերութիւնը։ Եւ վերջապէս 1903—1906 երևք տարիները նշանաւոր հանդիսացան սիֆիլիսի ժահրի մասին եղած կարգ մը գիւտերով։ 1903ին, հռչակաւոր գիտնական Մէչնիքօֆ յաջողեցաւ սիֆիլիսի մանրէն փոխանցել կապիկներուն։ Ռուս գիտնականը այսպէսով հիմ դրաւ նոր ուսումնասիրութիւններու։ Իրմէ ետքը Լասար ալ փորձեր կատարեց, սիֆիլիսի թոյնը մէկ կապիկէն ներարկելով ուրիշ կապիկի մը։ Հետագրքիւր ուսումնասիրութիւններ եղան նաև ջերմամիզութեան մանրէն գտնուին՝ Նէյսէրի կողմէ, ճավայի մէջ, և Եւ վերջապէս 1905ին, գերմանացի գիտնական Ֆրից Շաուսին իր առաջին ուսումնասիրութիւններն հրատարակեց սիֆիլիսի իսկական սկզբնապատճառին՝ պտուտակաւոր կամ ոլորուն մանրէի մասին (spirochaete pallida), որ այնուհետև կոչուեցաւ իր անունով, Տարաբախտ գիտնականը մեռաւ իր գիւտէն տարի մը ետք։ Յետագայ բազմաթիւ զննութիւններ հաստատեցին թէ սերտ կապակցութիւն մը կայ այդ պտուտակաձեւ մանրէին և սիֆիլիսի հիւանդու-



թեան միջեւ, թէեւ տակաւին շատերու կարծիքով լուսարանուած չէ սիֆիլիսի թոյնին բուն էութիւնը: Առէն պարագայի մէջ, Շաուաինի գիւարը աստիճան մը աւելի դիւրացուց սիֆիլիսի դարմանումին հնարաւորութիւնները, և անկէ ետքն էր որ հնարուեցան 606ր կամ սարվարսանը են:

Եւ սօքը. Պլօխ իրաւունք ունի գոչելու.

— Երբ որ մը մարդկութիւնը փրկուի սեռային ժանտախտէն, վնասակարան հիւանդութիւններու հիւղբայէն, և երբ յիշատակարան մը կանգնուի փրկիչներուն համար, չորս անուններ պիտի յիշատակուին, — Բիքօս, Նէյսէր, Մէչնիքօֆ և Շաուաին —: (Այս տողերը գրուած ատեն, սոփուէրլիսի գիւարը, 606ր չէր եղած տակաւին):

×

Ի՞նչպէս տեղի կ'ունենայ սիֆիլիսի վարակումը:

Հիւանդութեաի առաջին նշանները կը յայտնուին վարակումէն երեք չորս շաբաթ ետք, վարակուած անդին վրայ, որ անսպասձառ ծննդական գործարանները չեն: Ճիշդ է որ սիֆիլիսը ամէնէն շատ կը փոխանցուի սեռային յարաբերութեան միջոցաւ. բայց յաճախապէս են նաև ուրիշ ձեւերով վարակումներ. — ինչպէս համբոյրը, կնախտարուժական կամ վիրաբուժական գործողութիւններ սիֆիլիսաւորի մը գործածած գաւաթէն ջուր խումիլ, սիֆիլիսաւորի մը պատկանող աղտոտ թաշկիւնակներ, սրբիչներ, անկողնի կաղձածներ, ծխափող, փչելու գործիքներ, ակուայի խողանակներ և



Երկուրդ աստիճանի սիֆիլիս

քչփորիկներ (քիւրտան) ևն. գործածել, մատիտի մը ծայրը լզել, մատիտը բերան տանիլ, լեզուով թրջել դրոշմաթուղթերը, մասները թքոտելով գիրք թղթատել, վէրքեր լզել, երեխան դիկցնել սիֆիլիսաւոր սանտուի մը ծիծերով:

Համբոյրի միջոցաւ գիրութեամբ կը վարակուին մանաւանդ երեխաները, որոնց մորթը փափուկ է: Հետեւաբար, արթուն մնալու է, որ հանդիպողը չհամբուրէ այս կամ այն երեխան: Չափահասներ իրարու մէջ ալ անհաշիւ և աջ ու ձախ համբոյրներ փոխանակելու մոլութիւն մը ունին, որ երբեք վտանգէ զիրք չէ:

Գիտական քննութեամբ հաստատուած է որ թղթաղբաճները մանրէներու բոյներ ևն, իսկ նուազ աստիճանով՝ ոսկի և պղինձ դրամները: Գիրքեր համբուրելն ալ ունի շատ անպատեհութիւններ:

Այնտեղ, ուր քաղաքակրթութեան մակարդակը այնքան բարձր չէ, — ինչպէս Ռուսիա և Թուրքիա — վարակումներու հարիւրին 50—60ը տեղի կ'ունենայ առանց սեռային յարաբերութեան:

Արդի գիտութիւնը կը յայտարարէ թէ սիֆիլիսի բոլոր աստիճաններուն մէջ ալ, հիւանդութեան վէրքերուն բոլոր արտահոսումները վարակիչ են: Առաջ կը կարծէին թէ երբորդ աստիճանի սիֆիլիսը չի վարակեր. բայց հիմա հերքուած է այդ կարծիքը: Արիւնն ալ վտանգաւոր է, թէև ոչ այնքան յաճախ: Անշուշտ զուտ բնախօսական ար-

տահոսումները, ինչպէս լորձուէքը, արցունքը չեն վնասեր, եթէ վարակուած չեն ախտաւոր արտազրուարիւններով: Սիֆիլիսը ամէնէն շատ կը փոխանցուի սերմի միջոցաւ:

Վարակումը տեղի կ'ունենայ մարմնին ա՛յն մասերուն մէջ ուր մորթը կամ հուզաթաղանթը վնասուած են, այսինքն երբ կայ սկրտուք մը կամ մակերեսի վէրք մը, ուրի՛ն թոյնը կրնայ ներս մտնել: Այսպէս, երեւութաբար առողջ սիֆիլիսաւոր մը երբ պղտիկ սկրտուք մը ունենայ առնանդամին (կամ բունոցին) վրայ, կրնայ հիւանդութիւնը փոխանցել ուրիշի մը, եթէ ան ալ ունի սկրտուք մը:

Ինչպէս լսինք, վարակումն երկու կամ չորս շաբաթ ետքն է որ կը յայտնուին սիֆիլիսի առաջին նշանները, երբ պղտիկ բշտիկ մը կամ խոյլ մը, ուռեցք մը կ'երևայ վարակուած տեղին վրայ. երբեմն ալ պարզապէս մասնաւոր կարմիր գոյնով սկրտուք մը կը տեսնուի: Այդ բշտիկը աստիճանաբար կը լախնայ և շարունակ կը կարծրանայ յատակէն, մինչդեռ մակերեսը յաճախ կեղի կը փոխուի և շափազանց վարակիչ թարախ մը դուրս կուտայ, որ կը կոչուի կարծր կամ կոշտ կեղ (chancre dur) կամ առաջին խոց: Շատ մը պարագաներու մէջ, այս կարծրացումը ստոյգ նշան մըն է թէ սիֆիլիսի թոյնը արդէն մարմնին մէջ մտած է: Շատ քիչ անգամ պատահած է որ կոշտ կեղը կտրելով կամ այրելով սիֆիլիսը արիւնին մէջ չմտնէ: Հակառակ այդպիսի փորձերու, գրեթէ միշտ բնագիտութեամբ վա-

բակման նշաններն անմիջապէս կ'երևան :

Սիֆիլիսի ժահրը տեղ մը կեղրոնայած չի մընար, ինչպէս է ջերմամիդութեան մանրէն, այլ աստիճանարար կը թափանցէ ամբողջ կազմին մէջ, աւելի և արիւնի միջոցաւ : Քանի մը շարժումն միջոցին, բորբոքումներ կը տեսնուին դէմքին և ամբողջ մարմնին վրայ : Այսպէս, ժահրը իր վարակման վայրէն կ'անցնի աճուկի գեղձերուն, որոնք կարծր կեղի երևումէն երևա կամ չորս շաբաթ ետք կը սկսին ուռիլ և կը սնդանան : Գեղձերու այդ ուռեցքը ցաւ չի պատճառեր, ինչպէս սիլիսի բլբար կակուզ կեղի պարագային :

Այդ տեղէն թոյնը կը շարունակէ իր թափառումները ամբողջ մարմնին վրայ, և պարագային համեմատ երեւան կուգան անութի, արմուկի, վզի են, աւշային գեղձերու ուռեցքներ : Երբեմն ընդհանուր վարակման տրիշ ախտանշաններ ալ կը դիտուին, — ինչպէս տենդ, որ տեղի կ'ունենայ վարակումէն քառասուն օր ետքը, ցաւեր՝ մկաններուն, յօդերուն, ջիղերուն մէջ. սաստիկ գլխացաւ, յոգնածութեան շնորհաբեր ասպարոթութիւն մը, սոճոնութիւն և անդառութեան ակարացում : Այլևս Դամոկլէսի սուր մը կախուած է հիւանդի գլխուն. վասնզ մը որ երբեմն մեղմ ու թաքուն, երբեմն սաստկացած կը տանջէ զինքը տարիներով : Յաճախ ինք բան մը չզգար, և թոյնը իր գերը կը կատարէ, հանդիստ մը տեղաւորուելով մարմնին մէջ : Առաջին շրջանի այդ վերքը կը նմանի հում մսի, երեսը փալուռն և երբ սեղմենք, կլիսելային

նման հիւթ մը կը քամուի : Սկզբնաւորութեան երեւան կուգայ մէկ, և բացառիկ ստրագաներու մէջ երկու հաս :

×

Սիֆիլիսի երկրորդ շրջանը կը յայանուի մորթի բազմաձև բորբոքումներով, որոնք բացարձակապէս ասպնով կը դարձնեն ախտաճանաչումը : Այնպէս որ, եթէ առաջին շրջանի մասին կատարեալ ըլլան ծննդական գործարաններու մասին, հիւանդը պէտք է քանի մը շաբաթ կամ ամիս ուշադրութեամբ զննէ իր մորթը, և կարմիր բիծեր կամ բշտիկներ փնտռէ : Վերջին շրջաններուն մէջ ալ սիֆիլիսի բորբոքումները հիւանդութեան ամէնէն ստոյգ և յտեկանշական ասպնոցներն են :

Բորբոքումները ընդհանրապէս առաջին անգամ կ'երևան մարմնի կոճղին վրայ, վարդագոյն բիծերու ձևով. անկէ կը տարածուին ամբողջ մարմնին վրայ և շատ անգամ, բժաւոր բորբոքման հետ միաժամանակ կամ բորբոքումէն քիչ յետոյ, բշտիկներ կ'երևան մորթին վրայ և նշաւ ակելի թանձրացումներ կը կազմուին հուզածաղանթներուն մէջ, մասնաւորապէս սրբանին, բերնին և լեզուին կողմերը : Հիւանդին ուշադրութիւնը ինքնարեարար այդ վերքերուն կը դառնայ, որովհետեւ ցաւազին զգայութիւններ կ'ունենայ բերնին մէջ կամ քերուրաւոր սրբանին կողմը : Յաճախ այս ցաւազին զգայութիւններն են, և անոնց հետ ալ կոկորդի զանազան մասերուն սաստիկ բորբոքումները, որ կը ստիպեն հիւանդը բժեշկին դիմել, երբ արդէն անշմար անցեր են առաջին ախտանշանները :

Երկրորդ չրջանի սկզբնաւորութեան հետ է որ կը սկսին սաստիկ գլխացաւերը, ընդհանուր տկարութիւն, անքնութիւն ևն. : Վարդագոյն բիծերը կամ բշտիկները երբ սեղմուին մատով, գոյնը չի փոխուիր. մինչդեռ եթէ բորբոքումը ուրիշ տկարութիւններու հետեւանք է, սեղմուած ատեն գոյնը կ'անհետանայ : Այդ բիծերը ընդհանրապէս կիսաբոլորակ են. կամ բոլորովին կոր, զնտասելի գլխու մեծութիւնէն մինչև ոսպի չափ և աւելի մեծ : Իբրև երկրորդ աստիճան սիֆիլիսի յատկանշական ձևեր, կը յիշուին վեներական պսակը, այսինքն այն բորբոքումը որ տեղի կ'ունենայ ճակատին վրայ, մասնաւորապէս մազերուն երկայնքը, և որ ընդհանրապէս կը շփոթուի ուրիշ տկարութիւններու հետ : Աստղիկի մանեակը, որ ասան կոկորդի և ծոծրակի մորթին վրայ կը գոյանան թուխ բշտիկներ՝ սպիտակ ծիրերով : Այս նշանը, որ գրեթէ միշտ կլինեալ կը պատահի, բացարձակապէս ստոյգ ապացոյց մըն է սիֆիլիսի : Յատկանշական են ձեռքի փերուն և ոտքի ներքաններուն վրայ եղած բշտիկներն ու թանձրացումները, երբ գլուխը յանկարծ ճաղատ կը դառնայ տեղ տեղ : Հազուադէպ չէ նաև որ մարմնի մորթին վրայ թարախապից բորբոքումներ տեղի ունենան մասնաւորապէս աղտոտ պահուած մասերուն մէջ : Եզունգն ալ կ'ազդուի սիֆիլիսին, կրօնցնելով իր փայլը և դառնայով խորտուբորտ : Եթէ հիւանդութիւնը վերք ձգած է եզունգի արմատին շուրջն ալ, սաստիկ ցաւեր կը ծագին, որոնք վերարուժական գործողութիւն կը պահանջեն : Յա-

ճախ կը պատահի որ սիֆիլիսի բշտիկները, երբ կը գտնուին շարունակ շփման կամ քրտինքի ենթակայ մասերու մէջ (ծիծ, ածուկ, յետոյք, անութ, ծննդական գործարաններ, ոտքի մասներու մէջտեղը ևն.) բացուելով հեղուկ մը դուրս կուտան որ շատ վտանգաւոր է, որովհետև, իսկապէս սիֆիլիսի մանրէներ կը պարունակէ :

Մորթի սիֆիլիսաւոր բորբոքումը միայն հիւանդութեան արագին արտայայտութիւնն է : Բայց չմոռնանք որ ներքին գործարաններն ալ կ'ազդուին : Այսպէս, լեարդին վարակումը կը յայտնուի գեղնութեամբ : Գլխու ցաւերը և մանաւանդ յիշողութեան տկարութիւնը կը ցուցնեն թէ ուղեղն ու խելագատն ալ վնասուած են : Երկկամուցին վարակումը կը հասկցուի երբ մէկին մէջ ալպիւմին կայ : Դարձեալ, փայծաղը (տալագ) կ'ուրի, ոսկորները խիտ ցաւաօրթ բորբոքուն ունայներ կ'ունան. աչքերու ցանցին կը բորբոքի : Մէկէ աւելի հեղինակութիւններ կը հաստատեն որ ցանցինի (rétime) բորբոքումներուն հարիւրին 60ը սիֆիլիսէ յառաջ կու գան : Քրիկ մէջ տեղի կ'ունենան բորբոքումներ, շնչափողն ալ կ'ազդուի, ձայնը կը խուպտի. իսկ երբ ուսեցքներ կան լարերուն վրայ, արդէն ձայնը կը մարի : կ'ազդուին, վերջապէս, ստամոքսը, աղիքները, ծննդական գործարանները և մասնաւորապէս ամորթիքները, մկանցները, ողնաձուծը, երակները, սիրտը, ջիղերը : Եւ զարմանալի չէ որ սիֆիլիսաւորները շուտով կը դառնան գունատ, սակաւարուն :

Եթէ հիւանդութիւնը անինամ ձգուի, նկարագրուած խանգարումները աւելի կ'ընդհանրանան և կը սաստկանան. և ասին մը ետք, բոլորովին նոր անտապից երեւոյթներ յառաջ կու գան, յաճախ երբորդ տարուան մէջ, իսկ միջին հաշուով վարակումէն հինգ կամ տասը տարի ետք:

×

Երրորդ շրջանն է այս: Հիմա այլևս վերքերը առաջուան պէս համաչափ չեն: Հին նշաններուն վրայ կ'աւելնան խոշոր ուռուցքներ մարմին և ուրիշ գործարաններու մէջ, որոնք ուշ կամ կանուխ կը փոխուին կեղերու, խոցերու, սիֆիլիսի կուլմաներու (խէժ): Կովկասահայ բժշկապետ Մինաս Մուրատեան նկարագրելով այս շրջանի վերքերը, կը գրէ.

«Երրորդ շրջանի ուռեցքները երկու տեսակ են, կա՛մ առփակ, տարածուած հաստ շերտի նման, լեցուն գնտիկներով, և կամ հատիկ-հատիկ ուռեցքներ են: Մեծութիւնը այլազան է, — ցորենի հատիկէն մինչեւ հաւկիթի չափ և աւելի մեծ: Ուռեցքը նախ կ'ըլլայ ամուր, բայց հետզհետէ կը փափկանայ, և եթէ կտրէք, մէջը կը տեսնեք գորշ կարմիրի նման հիւսուածք մը, որ մտի կը նմանի: Գնտակներու կոյտն է այս: Կայ նաև ջրալից հիւթ մը, որ կը նմանի պարզ խէժի (կոմ կամ կուլմայ: Ահա թէ ինչո՛ւ այս երրորդ շրջանը կը կոչեն կուլմայի շրջան:»

Եթէ երրորդ շրջանը կը գրգռէ, կը բորբոքէ, երրորդն ալ կ'աւերէ, կը քայքայէ:

Այս շրջանին մէջ ամենամեծ ալանդակումներ

քու կ'ենթարկուի մարմինը, չհաշուելով մահուան վտանգները: Օրինակի համար, սիֆիլիսի ուռեցքը ուտելով քիմքին փակած ոսկորը, պատճառ կ'ըլլայ որ քիմքը ծակի. որով «պատուհան մը կը բացուի բերանին և քթին միջև»: Գլխի ոսկորը մաշկով, կը կքի՞ և թամբի ձև կը ստանայ: Կը քայքայուին վերջապէս գանկի, աղիքի, լեարդի, թոքերու, ամորձիքներու, արեան անոթներու, ուղեղի և ողնայարի ոսկորները կամ զոնազան մասերը: Սիֆիլիսի ուռեցքները մասնաւորապէս վտանգաւոր են ուղեղի արեան անոթներուն համար: Մեծ մասով սիֆիլիսի հետեւանք են բազդատարար երիտասարդ անձերու կոտրուածահարութիւնները, բիւրազան ջղային անդամալուծութիւններ, ինչպէս և յանկարծական խլութիւն եւ կուրութիւն: Լեարդի, իրիկամուռքի և ջղային զրութեան շատ մը հիւանդութիւններ հետեւանք են նախընթաց սիֆիլիսի: Ինչպէս նաև չնչերակներու կիրքի նման պնդանալը, արեան մեծ անոթներու և մասնաւորապէս մայր կրակին չափազանց կարծրանալը յաճախ սիֆիլիսի վարակումներէ կը ծնին:

Սիֆիլիսի ամենէն ծանր հետեւանքներէն մէկն է ողնայարի խանգարում, ծիրում կամ կարծրացում (ataxie locomotrice կամ tabes dorsalis) որ յամրաբար կը ջլատէ սրունքներու և թիւերու շարժումները, կակծալի ցաւեր պատճառելով: Ուրիշ նոյնքան սարսափելի հետեւանք մըն է յիմարներու ընդհանուր անդամալուծութիւնը, որ աստիճանաբար ծիրելով ուղեղը, իրարու ետեւ կը ջնջէ

զգայութիւնները, չարժումները և բոլոր մասային կարողութիւնները: Այս երկու հիւանդութիւնները որոնք այնքան յաճախադէպ են այսօր, ընդհանրապէս կը պատահին վաղեմի սիֆիլիսաւորներու, վարակումէն 5—20, աւելի յաճախ 10—15 տարիէ ետքը, և սովորաբար այնպիսի անձերու, որոնք իրենք զիրենք բոլորովին բուժուած կը նկատեն: Երկու հիւանդութիւններն ալ մահացու են: Բայց մեղցնելէ առաջ, ողնուղեղի կազմալուծումը տարիներով անտանկի ցաւեր կը պատճառէ, իսկ ընդհանուր անդամալուծութիւնը մասնիկ մասնիկ կազմալուծելով, քայքայելով անհասարկ, վերջը վերջը դրն կը վերածէ աւերակի մը, շատ աւելի ստորքուն անասունը, միևնոյն ատեն թշուառ ու նողկալի:

Գիտութիւնն հաստատած է որ ջղային կեդրոնական զրութեան այս երկու անաւոր հիւանդութիւնները գրեթէ միշտ, հարիւրին 95 համեմատութեամբ հետեւանք են հին սիֆիլիսի: Սիֆիլիսի մեծագոյն մասնագէտը, Ալֆրէտ Ֆուլնիէ իր քննած 5749 սիֆիլիսի դէպքերուն մէջ գտաւ 758 ուղեղի սիֆիլիս, 631 ողնայարի, իսկ 83 դէպք ալ ուղեղի կակղացում: Յիշուած երկու հիւանդութիւնները վտանգաւոր են մանաւանդ անոր համար որ այլևս բռնով «սիֆիլիսաւոր» ակարութիւններ չեն կրնար նկատուիլ, այլ ջղային կեդրոնական զրութեան ծանր ալլափոխումներ, քայքայումներ են, որոնց դէմ չեն զօրեր սիֆիլիսի դարմանները:

×

Աւելի վտանգաւոր են սիֆիլիսին հետեւանքները՝ ընտանիքին, սերունդին, ցեղին համար: Ֆուլնիէ երկու խոշոր աշխատութիւններ ունի այս մասին, «Սիֆիլիս և ամուսնութիւն» և «Սիֆիլիսը իրրեւ ընկերային վտանգ»: Հռչակաւոր գիտնականը հաշիւ լրած է թէ միջին հաշուով սիֆիլիսէ տառապող հարիւր կիներէն 20ը վարակուած էին իրենց ամուսիններէն, կամ ամուսնութեան սկիզբէն իսկ, կամ աւելի ետքը, և կամ արգասաւորման միջոցաւ: Սիֆիլիսի հետեւանքով ամուսնալուծումները այսօր շատ յաճախադէպ են Եւրոպայի մէջ:

Սիֆիլիսը կրնայ ժառանգաբար երեխային փոխանցուիլ հօրը կամ մօրը միջոցաւ: Երբ երկուքն ալ սիֆիլիսաւոր են, վարակումը անգիկ կ'ունենայ բացարձակ ստուգութեամբ: Փոխանցման հազար ձեւեր ու հետեւանքներ կան: Եթէ մայրը ինք ալ վարակուած է, կամ եթէ առաջուրնէ սիֆիլիս ունէր, կամ երեխան յղութեան լամն չըջանին չի հասնիր, վիժում, կանխանա ծնունդ անգիկ կ'ունենայ, և կամ եթէ ճիշդ ժամանակին ծնի, ժառանգական սիֆիլիսի նշաններ կ'ունենայ, թէև յաճախ ոչ մէկ կասկածելի բան կը տեսնուի:

Երբ ընտանիքի մը մէջ յաճախադէպ են կանխանա կամ մեռելածին ծնունդները, ապահովաբար ծնողներէն մէկը կամ միւսը սիֆիլիսէ կը տառապի: Սիֆիլիսաւոր հայրը երեխաներու մահուան պատճառ կ'ըլլայ հարիւրին 28 համեմատութեամբ: Երբ իսկ մայրը՝ հարիւրին 60 համեմատութեամբ, Երբ

Կրկուքն ալ վարակուած են, երեխաներու մահուան համեմատութիւնը կը բարձրանայ հարիւրին 68ի: Պարզապէս ապշեցուցիչ է սիֆիլիսաւոր բողբուս զաւակներուն մահաթիւր, — հարիւրին 84—86:

Իսկ սիֆիլիսաւորներու ողջ զաւակները ընդհանրապէս տխրոյժ, ազազուն էակներ են, մարմնի պակասաւոր ծանրութեամբ: Անոնք յաճախ կ'ունենան թուլիկ, խորշոմած մորթ՝ ծածկուած սիֆիլիսի յատկանշական բորբոքումներով և յաճախ խոշոր թարախալից, բշտիկներով, մասնաւորապէս ձեռքի ակերուն և ոտքի գարշապարին վրայ: Ներքին գործարաններն ալ, փայծաղը, լեարդը և ոսկորները ախտաւոր փոփոխութիւններ կը ցուցնեն: Մասնաւորապէս կը խանգարուին սննդաւորութեան գործարանները: Յատկանշական են քիթի հարբուխները: Տեսակ մը ջուր կու գայ քիթէն, յետոյ թարախանման հիւթ մը, որ կը գոցէ ունդը և երեխան չի կրնար կաթ ծծել: Ժառանգական սիֆիլիսը մեծապէս կը խանգարէ երեխային աճումը: Տարաբախտ մանուկը տեսականապէս տկար, վատոյժ կը մնայ, իր աճումը կը կասի, հետզհետէ երեան կ'ելլեն զանազան այլատեսակ և աճութիւններ. ինչպէս վերին կղակի կեղրոնական ակուններու (հերձատամներու) ծայրերը կը ստանան սղոցի կամ կիտալունի ձև. կ'այլանդակուին քիթը, ականջները, քիմքը, ծննդական արտաքին և ներքին գործարանները, յառաջ կուգայ ոսկրաթեքութիւն, լուսնաստութիւն, մտային տկարութիւն, կամ երեխան կը մնայ թղուկ մը, խուլ և համր են:

Ամենանոր հեղինակութիւններ հաստատած են որ մեծ հօր սիֆիլիսը տակաւին կրնայ աղետալի աղբեցութիւն գործել թոռան վրայ և տեղի տալ յիշուած վատասերումներուն: Դիտուած է որ երկրորդ սերունդի ժառանգական սիֆիլիսը յաճախ երեան կու գայ նոյն սաստկութեամբ, որքան առաջին սերունդինը: Ինչպէս ստացական սիֆիլիսը, ժառանգականն ալ կիներ ընդունակ կը դարձնէ վիժման, կանխահաս կամ արդէն մեռած ծնունդներու:

Սիֆիլիսի 11,000 դէպքեր (10,000 ը այր, 1000 ը կին) քննուելով, հաստատուած է թէ ազամարդերու մէջ վարակումը ամէնէն աւելի տեղի կ'ունենայ 20—26 տարիներուն. իսկ կիներուն մէջ՝ 18—21 տարիքին: Սիֆիլիսաւոր այրերու հարիւրին 8 ը և կիներուն հարիւրին 20 ը վարակուած կ'ին քսան տարեկանէն առաջ: Ուրիշ խօսքով, սիֆիլիսը մեծ չափով մը անխորձ երիտասարդութեան մէկ հիւանդութիւնն է:

×

Ամիոփելով, կը տեսնենք որ սիֆիլիսը ճշմարիտ սուսմ մը կամ ողբերգութիւն մըն է — Յուսնիէի բացատրութեամբ — իր արարներով և դաղարներով:

Առաջին շրջան: Կ'ընդգրկէ վարակումէն մինչև ընդհանուր ախտանշաններու ծագումը (բորբոքուումներ, բշտիկներ, ևն.): Այս շրջանը կը տևէ 8—10 շաբաթ: Առաջին երեք շաբաթներու միջոցին որոշ նշան մը չկայ թէ սիֆիլիսի թոյնը մտած է մարմնի հիւստումքներուն մէջ: Երեք շաբաթէն

հաք առաջին կեղը (chancre) կ'երեւայ և յարակից գեղձեր կը մեծանան : Այս է վարակման միակ նշանը :

Յուսուիէ թխտումի շրջանը կը հաշուէ նուազագոյն 15 օր, և առաւելագոյն՝ 42 օր, վիճելի նկատելով աւելի առաջ կամ աւելի ետքը պատահած դէպքերը : Պէտք է գիանալ որ վարակիչ զուգաւորութեան թուականը բուն վարակման թուականը չէ : Թոյնը կրնայ ատեն մը թլփատին տակ մնալ, աւշային գեղձերուն թափանցելէ առաջ : Փէլլիժարի սիֆիլիսի թոյն ներարկեց անողջ մարդու մը, և կեղի առաջին նշաններն երեւցան 25րդ . օրը : Հետեւաբար, շատ մը բժիշկներ սիֆիլիսի թխտումին շրջանը կը նշանակեն միջին հաշուով քսանըկինգ օր :

Երկրորդ շրջանը կը սկսի երբ բորբոքում, հերաթափութիւն և խնձոս բշտիկներ երեւան կուգան : Բորբոքումներու կանոնաւոր զարգացման շրջանն է այս, որ ատեն տեղի կ'ունենան, փոխնի փոխը, մեղմացում և սաստկացում : Երկրորդ շրջանը, որուն յատկանշական մէկ պատկերը հրատարակեցինք նախորդ պրակով, կը տեսէ 6էն 18 ամիս, կամ միջին հաշուով իբր մէկ տարի :

Երրորդ շրջանը երեւան կու գայ թմրութեան, թաքնութեան երկար միջոցէ մը ետք, երբ կ'ըսկրսին ուռեցքներ, կոււմաներու կազմուիլ : Կրնայ ըլլալ որ այդ շրջանը բնաւ տեղի չունենայ, և հիւանդը կա՛մ բժշկուի և կամ կորսուի երկրորդ շրջանէն իսկ : Այս շրջանը աւելի ախտակիր երեւոյթի մը կը նմանի, քան գործոն հիւանդութեան :

մը : Ընդհանրապէս կը կարծուի թէ երրորդ շրջանի արտահոսումները չեն վարակեր : Բայց ներկայ բժշկութիւնը բոլորովին համաձայն չէ այս անտութեան : Երրորդ շրջանը հետեւանք չէ այն կենդանի թոյնին որ կը գործէ առաջին և երկրորդ շրջաններուն մէջ, այլ հիւսուածային բջիջներու և արեան անօթներու մէկ ախտաւոր վիճակը, որ կը ծնի բուն վարակումն և պատճառ կ'ըլլայ բջիջներու ծարձակման, ուռեցքներու կազմութեան : Անոնք որ քաջող են, լաւ մնունք կ'անեն և կանոնաւոր զարմանի կ'ենթարկուին բաւական երկար ատեն, ընդհանրապէս զերծ կը մնան երրորդ շրջանէն : Ուրիշ խօսքով, երրորդ շրջանը գրեթէ ամբողջովին հետեւանք է պակասաւոր զարմանի կամ ազդեցութեան : Այդ շրջանի զէրքերը հազուադէպ է որ երկրորդ տարիէն առաջ տեղի ունենան . բայց իթէ պատահի, մեծամասնաբար կ'ենեւան վարակումն երեք-չորս տարի յետոյ, իսկ այնուհետեւ աւելի հազուադէպ են, մինչև 10—12րդ տարին . 12—20րդ տարին չափազանց հազուադէպ են : Երրորդ շրջանի վէրքերը ամենէն շատ կը ծագին նախ մորթին, յետոյ՝ ջլային դրութեան, սակորներուն, հուզաթազանթներուն և փորոտին մէջ :

×

Սուր սիֆիլիս (syphilis maligne) կը կոչուի այն ֆրանկախոր որ արագ, քայքայիչ և անզուսպ ընթացք մը կ'ունենայ առաջին օրէն իսկ : Ընդհանրապէս կը պատահի թոքախտէ, ալքոլամոլութենէն կամ անբաւարար մնունքէ և զրկանքէ տկարացած անհասներու : Երբեմն այդ մոլեգին



հիւանդութիւնն ազատ չին մնար նաև զօրաւոր, աւողջ մարդիկ: Այս սեռակի սիֆիլիսին առնն աւշային գեղձերը թեթեօրէն կ'ուսին, և դուրս չին տար թոյնը, որ արագօրէն կ'անցնի արիւնին մէջ:

Այս սիֆիլիսին սաստկութիւնը կ'աւելնայ մանաւանդ անով որ, կր դիմադրէ սովորական դարմանումին. որովհետև այդ կարգի հիւանդները չին դիմանար սնդիկի և սրիչ գեղերու ներարկման: Սոր սիֆիլիսը սովորաբար կը սկսի ջերմով, և ուղեղը կեղրոն կը դառնայ ուռեցքներու կամ չընչերակները կը բորբոքին: Առաջին կեղերը ընդհանրապէս կը տարածուին ամբողջ մարմնին վրայ և խոշոր խաղաւարի (չիպան) ճանգամանք ունին: Արեան կարմիր գնտիկները փճանալով, սակաւարիւնութիւն յառաջ կու գայ: Մորթին սակ գրանուած ճարպը կը սպառի և հիւանդը արագօրէն կի ծիրի:

Երբեմն երկրորդ չրջանը բոլորովին տեղի չուննար, և ուռեցքները կը գոյանան կանխահասօրէն, այնպէս որ վարակումէն չորս-հինգ ամիս, կամ շատ շատ մէկուկէս տարի յետոյ, մարմինը ամբողջովին կը ծածկուի խոշոր, համասփիւռ կեղերով: Մահ կրնայ յառաջ գալ կենսական գործարանի մը քայքայումով, կամ վէրքերու փտութիւնով, փորոտիքի ճարպացումով կամ վերջապէս իբրև հետեւանք ընդհանուր հիւժումի: Եթէ մարմինը բաւական զօրաւոր ըլլայ երկու տարի դիմանալու ծիրումին, հիւանդութեան մահաւարութիւնը կը

սպառի և հիւանդը կրնայ ապրիլ, բայց տկար, անզօր վիճակի մէջ:

×

Գարնաններ. — Բուժելի՞ է սիֆիլիսը: Այո, կը պատասխանեն մէկ աւելի հեղինակութիւններ, իրենց զուլն ունենալով Ալֆրէտ Ֆուսիէն, սիֆիլիսի հետազօտութեան նահապետ: Քանի որ այդ հիւանդութիւնը կը կազմէ վնասական ակտիւ հարիւրին 25ը, և քանի որ վերջին չորս դարու միջոցին հիւանդութեան թոյնը բնական ձգտում մը ցուցուցած է մեղմանալու, արմատական յաջողութեան մը յոյսերը շատ մեծ են, — կ'եզրակացնէ սօքզ. Պօլի: Ատոր կարծիքով, մեր նախահայրերը արդէն մեղի համար մղած են հայասիֆիլիսի տեղի պայքարին մեծագոյն մասը: Պարզ սիֆիլիսի բազմաթիւ դեմքերը ընթացքէն կը հետեւի որ հիմա համեմատական աղանարկութիւն մը կայ սիֆիլիսի թոյնին դէմ: Այդէն Ռէպմէյը գիտիլ կու տայ թէ «վերջին 400 տարուան միջոցին, հիմա Եւրոպայ բնակող իւրաքանչիւր անհատ ունեցած է իբր 4000 նախահայր, որոնց ստուար մէկ մասը մաքառած ըլլալու է սիֆիլիսին դէմ»: Այսինքն, իւրաքանչիւր Եւրոպացի աստիճան մը «սիֆիլիստտեր» է: Եւ այս շատ նպաստաւոր պարագայ մը կը նկատուի այսօրուան պայքարին յաջողութեան տեսակէտով, քանի որ կրնա բաւական յառաջացած և թոյնը իր սաստկութիւնը կորսնցուցած է, գոնէ սովորական պարագաներու մէջ:

Դեռ 1906ին, Ալֆրէտ Ֆուսիէ վստահօրէն

Կը յայտարարէր թէ սիֆիլիսը այն հիւանդութիւնն է որ «կրնայ լաւագոյն կերպով, մեծ գիւրութեամբ և մեծ արագութեամբ բուժուիլ: Սիֆիլիսին դէմ ունինք հրաշալի դեղ մը, սնդիկը, որ եթէ ճիշդ ժամանակին արուի և յարմար ձևով, հրաշք կը գործէ:» «Շօփէնհաուզը անգամ «բժշկութեան յաղթանակը» հոչակեց սնդիկը, անձամբ փորձելով իր մարմնին վրայ: Տօքդ. Պլօխ իր «սիֆիլիսի Ծագումը» անուն գրքին մէջ կը գրէ.

«Սնդիկը է և կը մնայ աստուածային միջոց՝ սիֆիլիսը դարմանելու. սնդիկը ա՛յն է սիֆիլիսին համար, ինչ որ է ջուրը կրակին համար, — սնչուշտ ա՛յն բժիշկին ձեռքը որ գիտէ պէտք եղածին պէս գործածել զայն, ճի՛շդ ժամանակին և ճի՛շդ ձևով, որ մօտէն կը հսկէ հիւանդութեան ընթացքին, և որ սնդիկի դարմանին կը միացնէ ուրիշ դարմանական միջոցներ»:

Բայց միայն բժիշկը, միայն գիտնականապէս մարդուած մարդը կրնայ բուժել սիֆիլիսը, Ա.մէնէն փորձառու և գիտնական բժիշկներ բազմաթիւ գէպքերով հաստատած են թէ առանց սնդիկի դարմանուած սիֆիլիսը շատ ծանր ընթացք մը կը բուրդէ, ամէնէն վտանգաւոր ախտանշաններով, ինչպէս լայնասիւիւս քայքայիչ վէրքեր մորթին վրայ, ներքին գործարաններուն մէջ, ուղեղի սիֆիլիս, ոսկորներու հիւժոււմ, քթի կորուստ են: Իսկ այն գէպքերուն մէջ որոնք նախ առանց սնդիկի, իսկ յետոյ անմիջապէս սնդիկով դարմանուած են, դադրած է ախտին քայքայիչ ընթացքը, հիւանդը վեր-

կուելով մահուրնէ, կամ ծանր տաղնապնէ և ֆիզիքական ալլանդալուում:

Սնդիկը, երբ չսխալուորութեամբ բայց բաւարար քանակութեամբ արուի, ոչ միայն կը ջնջէ սիֆիլիսի թոյնը, այլ և, շատ նպաստաւոր ազդեցութիւն մը կը գործէ ընդհանուր վիճակին վրայ, և երբեմն նոյն իսկ կ'աւելցնէ արիւնի կարմիր գընտիկները, որոնք այնքան կենսական են: Այնպէս որ, սնդիկը ոչ միայն թոյն չէ, այլ թանկագին կազդուրիչ մը, կենդանարար միջոց մը:

Ինչ կը վերաբերի գործածութեան ձևին, բրժիշկին կը մնայ ճշդել այդ մանրամասնութիւնը՝ համաձայն իւրաքանչիւր պարագայի, — քսելով, մորթին մէջ ներարկելով կամ ներսէն գործածել տալով: Տօքդ. Պլօխ կը հաստատէ թէ յաճախ սոսկական սնդիկի գործածութիւնը կը բաւէ բարձրովին բուժելու սիֆիլիսը: Բայց շատ պարագաներու մէջ, առաջին տարիներու միջոցին, կրկին սաստկացու մնիւր կը պատահին, և այն ատեն դարձեալ կը յանձնարարուի մեծ ուշադրութեամբ, աւնոր կցելով մըս բոլոր յուելուածական դարմանները, որոնց զլխաւորներն են կարգ մը դեղեր և ջրարու ժութիւն, ազալտրով կամ իոտուր տը փօրսպիւմով լողանք, պտոյտ գէպի ծովափը կամ դէպի լեռները: Բայց ամէն բանէ առաջ ուշադրութիւն ընելու է հիւանդին անդաւուրութեան: Այս մասին յանձնարարելի են երկաթի կամ ուրիշ անդարար բաղադրութիւններ, ինչպէս են սաւնարօտեն, կաթնաբուժութիւնն են: Սիֆիլիսի դարմանման համար բացարձակ պայման է հրաժարիլ պթորամոլութենէ: Այգօլը խիստ աննպաստ ազդեցութիւն կը գործէ

սիֆիլիսի ընթացքին վրայ, և շատ անդամ միակ պատճառն է այդ ախտին յաճախադէպ սաստկացման :

Սիֆիլիսի լիակատար բուժումը տարիներ կը պահանջէ, և այդ միջոցին հիւանդը պարտաւոր է յաճախակի ներկայանալ բժիշկին, քննուելու համար : Եթէ հիւանդութիւնը վերսկսած է, պէտք է նոր դարմանի ենթարկուի : Խիստ օգտակար է ուշադրութիւն ընել ամէն մանրամասնութեան : Սիֆիլիսը, կ'ըսէ դարձեալ Ֆուսնիէ, դժբաղդութիւն մըն է . բայց դարմանելի դժբախտութիւն մը : Այն օրէն որ հիւանդը կը հասկնայ թէ սիֆիլիսէ բրուտուած է, պէտք է կայսութիւնը դիմաւորէ «հանդարտ և առնական» եղանակով մը, և պէտք է ըսէ ինքնիրեն .

— «Հիմա կախ մը պիտի մզուի սիֆիլիսին և իմ միջև : Հետեւարար գործի սխիւնք և բլլանք արիւտաիրտ : Քաջութիւն պէտք է ունենամ, որովհետեւ գիտութիւնը կ'ապահովէ թէ սնդիկի, առողջապահութեան և ժամանակի օժանդակութեամբ, պիտի վերջանայ սիֆիլիսը, և թէ ես նորէն պիտի կրնամ հայր դառնալու ազատութեան և երջանկութեան հասնիլ :»



Ինչպէս բացատրեցինք, յաճախ փորձեր կ'ըլլան սիֆիլիսի մանրէն ալ վիժեցնելու, կարծր կեղը կարելով . բայց այս փորձերէն ո՛չ մէկը վերջնապէս յաջողած է : Սիֆիլիսը նորէն կը շարունակէ իբրն թացքը : Պատճառը այն է որ սիֆիլիսը մեծ արագութեամբ կը վարակէ կազմը, թէ աւշային գեղձերուն և թէ արեան անօթնորուն միջոցաւ :

Երբ կեղը երեւան կուգայ, մարմինը արդէն ամբողջովն վարակուած է, կամ գոնէ վարակումը այնքան ընդարձակ սահմանի մը վրայ տարածուած է որ, վէրքը կտրելը օգուտ չունի :

Ուրիշ խնդիր, երբ կանուխէն, — հարիւրին 30 համեմատութեամբ — քաղցով կը քսուի : Բայց այս կարգի կանխարգել միջոցները այնքան ալ դիւրին չեն, որովհետեւ . նախ ճշդօրէն չի գիտցուիր պատուաստման կէտը, եթէ սկրաուք մը չըլլայ : Յետոյ, շատ քիչ անգամ կը պատահի որ հիւանդը բժիշկին դիմէ հաւանական վարակումէ մը անմիջապէս, օրինակ մէկ ժամ ետքը :

Ընդհանուր կարծիք մը կայ թէ սնդիկը կը սպաննէ սիֆիլիսի մանրէն : Որովհետեւ ինքնին թոյն է . պիտի գործածուի այնպիսի համեմատութեամբ մը որ չլնասէ մարմին : Միւս կողմէ, սրնդիկը յառաջ կը բերէ ալեքսէններ, այսինքն այնպիսի նիւթեր որոնք կը չեղարացնեն ախտածին թոյնը և պաշտպանութեան միջոցներ կ'ընծայեն մարմին : Սնդիկը մաս մը դուրս կ'ելլէ մէզին հետ և մաս մըն ալ կը պահուի հիւսուածներուն մէջ, յետոյ յաջորդարար արտաքսուելու համար : Եթէ հիւսուածներուն մէջ մնացած սնդիկը թողաորելի սահմանէն աւելի կուտակուի, թունաւոր հետեւանքներ կ'ունենայ

Չորս ձեւով կը գործածուի սնդիկը . Ա. բերանէն . Բ. մորթին քսելով կամ ձեփելով . Գ. մորթին տակէն ներարկելով . Դ. ծխումով :

Առաջինը ամենապարզ ձեւն է, և շատ մը պարագաներու մէջ միակ գործնականը : Այդ մէթոտը բաւական է սիֆիլիսի դէպքերու մեծ մասին

սիֆիլիսի ընթացքին վրայ, և շատ անգամ միակ պատճառն է այդ ախտին յաճախագէտ սաստկացման:

Սիֆիլիսի լիակատար բուժումը տարիներ կը պահանջէ, և այդ միջոցին հիւանդը պարտաւոր է յաճախակի ներկայանալ բժիշկին, քննուելու համար: Եթէ հիւանդութիւնը վերակաճ է, պէտք է նոր դարմանի ենթարկուի: Խիստ օգտակար է ուշադրութիւն ընել ամէն մանրամասնութեան: Սիֆիլիսը, կ'ըսէ դարձեալ Ֆուսնիէ, դժբաղդութիւն մըն է. բայց դարմանելի դժբախտութիւն մը: Այն օրէն որ հիւանդը կը հասկնայ թէ սիֆիլիսէ բըւնուած է, պէտք է կայտ թիւնը դիմաւորէ «հանդարտ և առնական» եղանակով մը, և պէտք է ըսէ ինքնիրեն.

— «Հիմա կ'սիւ մը պիտի մզուի սիֆիլիսին և իմ միջև: Հետեւաբար գործի սիսինք և բլանք արիւսաիրա: Քաջութիւն պէտք է ունենամ, որովհետե գիտութիւնը կ'ապահովէ թէ սնդիկի, առողջապահութեան և ժամանակի օժանդակութեամբ, պիտի վերջանայ սիֆիլիսը, և թէ ես նորէն պիտի կրնամ հայր դառնալու ապատութեան և երջանկութեան հասնիլ: »



Ինչպէս բացատրեցինք, յաճախ փորձեր կ'ըլլան սիֆիլիսի մանրէն ալ վիժեցնելու, կարծր կեղը կարելով. բայց այս փորձերէն ո՛չ մէկը վերջնապէս յաջողած է: Սիֆիլիսը նորէն կը շարունակէ իր ենթացքը: Պատճառը այն է որ սիֆիլիսը մեծ արագութեամբ կը վարակէ կազմը, թէ աւշային գեղձերուն և թէ արեան անօթներուն միջոցաւ:

Երբ կեղը երեւան կուգայ, մարմինը արդէն ամբողջովին վարակուած է, կամ գոնէ վարակումը այնքան ընդարձակ սահմանի մը վրայ տարածուած է որ, վէրքը կարելը օգուտ չունի:

Ուրիշ խնդիր, երբ կանուխէն, — հարիւրին 30 համեմատութեամբ — Բալթիկ կը քսուի: Բայց այս կարգի կանխարգել միջոցները այնքան ալ զիւրին չեն, որովհետեւ, նախ ճշդօրէն չի գիտցուիր պատուաստման կէտը, եթէ սկրտուք մը չըլլայ: Յետոյ, շատ քիչ անգամ կը պատահի որ հիւանդը բժիշկին դիմէ հաւանական վարակումէ մը անմիջապէս, օրինակ մէկ ժամ ետքը:

Ընդհանուր կարծիք մը կայ թէ սնդիկը կը սպաննէ սիֆիլիսի մանրէն: Որովհետեւ ինքնին թոյն է. պիտի գործածուի այնպիսի համեմատութեամբ մը որ չմտատէ մարմինն: Միւս կողմէ, սընդիկը յառաջ կը բերէ ալեխեհներ, այսինքն այնպիսի նիւթեր որոնք կը չեղոքացնեն ախտածին թոյնը և պաշտպանութեան միջոցներ կ'ընծայեն մարմինն: Մնդիկը մաս մը դուրս կ'ելլէ մէզին հետ և մաս մըն ալ կը պահուի հիւսուածներուն մէջ, յետոյ յաջորդաբար արտաքսուելու համար: Եթէ հիւսուածներուն մէջ մնացած սնդիկը թողաորելի սահմանէն աւելի կուտակուի, թունաւոր հետեւանքներ կ'ունենայ

Չորս ձեւով կը գործածուի սնդիկը. Ա. բերանէն. Բ. մորթին քսելով կամ ձեփելով. Գ. մորթին տակէն ներարկելով. Դ. ծխումով:

Առաջինը ամենապարզ ձեւն է, և շատ մը պարագաներու մէջ միակ գործնականը: Այդ մէթոտը բաւական է սիֆիլիսի դէպքերու մեծ մասին

համար, և ամէնէն յարմարն է երկարատեւ դարմանի պարագային: Բայց երբ ծանր ախտանշաններ կը տեսնուին և արագ «անդիկայում» պէտք է, օժուժի կամ ներարկումի կը դիմեն:

Այս ձեւ դարմանումի պարագային անդիկ կը տրուի կամ խառնուրդի մը ձեւով և կամ իբրեւ դեղահատ, — կապոյտ դեղահատը, որ շատ գործածական է:

Օժուժը անդիկային դարմանումի ամենահին ձեւն է, ու նաև ամենէն օգտակար ձեւերէն մէկը այսօր իսկ: Բժիշկները անդիկային օժանկելք մը կը քսեն մորթին մէջ, 15—20 վայրկեան: Մնդիկը կը թափանցէ մորթային գեղձերէն ներս և կը ծծուի արիւնէն:

Այս ձեւին մէկ անյարմարութիւնն այն է որ անհանգստութիւն կուտայ և կ'ազատէ ձերմակեղէնները. ինչ որ կը մատնէ հիւանդութիւնը: Էքս լա Շափէլի մէջ միջոցներ հնարած են հիւանդութիւնը գաղտնի պահելու և գայթակղութիւնէ ազատելու: Բազմաթիւ հիւանդներ այդ եւրոպական ջերմակները կ'երթան իրենց «յօղացաւը» բուժելու, և կրնան դարմանի ենթարկուիլ, առանց արարալախարհի հաղորդելու իրենց հիւանդութիւնը: Այս դարմանին տեսողութիւնը, օժանկելքին չափը են. կախում ունին հիւանդութեան սաստկութիւնէն և հիւանդին համբերութիւնէն: Սովորական պարագայի մը մէջ, երեք շաբաթ ամէն օր կարելի է փորձել, և մէկ շաբաթ ընդհատելով, յետոյ նորէն սկսիլ դարձեալ երեք շաբաթ և ամէն օր:

Մորթին տակէն ներարկումը ամէնէն նոր ձեւն է, և 1864ին հաստատուեցաւ Սկարէնցիօի կողմէ:

Մնդիկը կը գործածուի լուծելի ներարկումներով ամէն օր կամ երկու օրը անգամ մը, կամ անլոյծ ներարկումներով, շաբաթը մէկ անգամ:

Այս կերպով ներարկուած անդիկէն մաս մը անմիջապէս կը ծծուի և կը խառնուի արիւնին կամ հիւսուածներուն, մաս մը կը մնայ ներարկման կեդրոնին մէջ և կամայ կամայ կը ծծուի աւելի ետքը, երրորդ մաս մը կը տեղաւորուի կազմին մէջ, — լեարդին, երիկամունքին, աղիքներուն և միւս փորտիներուն մէջ. իսկ չորրորդ մաս մը ամէն օր դուրս կ'ելլէ մէզին հետ, ինչ որ ալ բնայ ներարկումին չափը, կամ անդիկի գործածութեան ձեւը:

Ծխումի ձեւը՝ (քիւբիւ) որ շատ գործածական էր հին ատեն, իր արժէքը կորսնցուցած է այսօր, թէև կը հաստատեն թէ ասիական կը տիրէ կարգ մը արեւելեան բազմիքներու մէջ, ուր առանձին սենեակներ կան այդ նպատակով: Հիւանդը կը նստեցնեն փայտէ աթոռի մը վրայ, և կը փաթթեն սաւանով մը, որ կ'երկարի վիզէն մինչև տախտակամածը: Շոգիացնող գործիքը որ կը բաղկանայ ալքոլի լամպի մը, կուտանիէ մը և ջրեփոցէ մը, կը դրուի աթոռին տակ: Ջրեփոցին ներքին մէկ ամանին մէջ կը դրուի որոշ չափով calomel, որ կը ցնդի լամպին տաքութիւնէն: Բանի մը վայրկեանէն հիւանդը կը շրջապատուի չոգիի և չոգիացած calomelli մթնոլորտի մը մէջ: Սաւանը խնամով կը կապուի հիւանդին վիզին շուրջը, որպէսզի չոգին չհնչէ: Գործողութիւնը կը վերջանայ իբր քսան վայրկեանէն, որմէ ետք հիւանդը անկողին կը դրուի սաւանով փաթթուած:

Ծխումը կրնայ կրկնուել ամէն օր, կամ երկու օրը անգամ մը, մինչև որ պահանջուած արդիւնքը ունենայ: Այս ձեւին միակ առաւելութեանն այն է որ կ'անհետացնէ մորթի նեղացուցիչ և վտանգաւոր բորբոքումները. իսկ անյարմարութիւնները չաան են. արդիւնաւորութիւնը ազանով չէ, և միշտ վտանգ կայ Բայօլէյի չոզին շնչելու, ինչ որ կրնայ մահ պատճառել:

Կան ուրիշ զանազան ձեւեր ալ, հիմնուած՝ անդիլի չոզին ծծել տալու սկզբունքին վրայ. ինչպէս են անդիլաւոր օծանելիքի տեսակ մը տուրակ կրել, անդիլով թաթախուն բամբակ պահել հիււանդի սնարին տակ: Բայց ասոնք շատ ազդեցիկ միջոցներ չեն:

Երկար ատեն վէճի նիւթ եղած է դարմանի սկսման խնդիրը: Այսօր այլևս տարակոյս չկայ թէ գիտական դարմանները պիտի գործադրուին անմիջապէս որ ախտաճանաչումը կատարուած է: Պարով դարմանի տեւողութեան, 15—20 տարի առաջ սովորաբար մէկ տարին բաւական կը նկատէին, վեց ամիսը միայն անդիլի դարմաններ փորձելով: Բայց արդի բժշկութիւնը բոլորովին անբաւական կը նկատէ այդ տեւողութիւնը, մէկէ աւելի հեղինակութիւններ մինչև երեւ — չորս տարի դարմանում կը յանձնարարեն, փոխն ի փոխ բնդհատումներով:

Մեղիկէն յետոյ, երկրորդ կարեւոր դեղն է iodure de potassiumը, որ սիֆիլիսի հիւսքերը ծծել տալու դորաւոր յատկութիւն մը ունի, բայց ինքնին բաւական չէ սիֆիլիսի բուժման համար: Հետեւաբար, զլսաւորապէս օգտակար է սիֆիլիսի

աւելի վերջին շրջաններուն՝ բորբոքումի ատեն: Կը գործածուի միշտ բերանէն, բացի այն պարագաներէն որ չկրնար կլուել (ուղեղային սիֆիլիս): Այս դեղին գործածութիւնը բազաւատարար նոր է, սկսած ըլլալով 1812էն:

X

**606ը.**— Երկար հետազոտութիւններէ, ձիերու, էշերու, շուներու, այծերու և կապիկներու վրայ կատարուած փորձերէ ետքը, որոնց նպատակն էր տեսակ մը շիճուկ գտնել սիֆիլիսը բուժելու համար, քանի մը տարի առաջ, 1910 յունիսին հրոչակուեցաւ նոր գիււս մը, այլևս հանրածանօթ 606ը, կամ Երլիխ-Հաբա բազադրուիւնը, որ կը կոչուի նաև սալվարսան:

Երկու բժիշկներ էին, գերմանացի Էրլիխ և ճափոնցի Հաթա, որոնք մեծ չափով միջուկ (arsenic) խառնեցին ուրիշ նիւթերու և կազմեցին նոր բազադրութիւն մը: Արդէն միջուկի մէկ բազադրութիւնը (atoxil) կամ անդիլի և միջուկի խառնուրդ մը (enesol) կը գործածուէին սիֆիլիսի դէմ: Բայց շատ մը վտանգներ ունենալով, մէկ կողմ ձգուած էին: Էրլիխ և Հաթա անլիլն խառնեցին արօֆուիլին և ներարկեցին սիֆիլիսաւոր կենդանիներու: Քանրչորս ժամուան մէջ, սիֆիլիսի մանրէները բնաջինջ եղան: Փորձերը յաջողեցան նաև մարդոյ վրայ, և 606ը դարձաւ սովորական դեղ մը, հասնելով մինչև Պօլսոյ բժիշկներուն: Բժիշկները 606 կը գործածեն ներարկելով մորթին, մը կանի մը կամ երակի մը մէջ:

Հակառակ բոլոր քննադատութիւններուն, մէկէ աւելի հեղինակութիւններ կը խոստովանին որ

606p եթէ մէկ հարուածով չի ջնջէ սիֆիլիսի բոլոր մանրէները, բայց խեղապէս կատարեալ և արագ ազդեցութիւն մը կը գործէ շատ մը պարագաներու մէջ. ան աւելի շուտով կը ներգործէ քան մինչեւ այսօր ծանօթ դեղերը. և կը ներգործէ սինսպիտի պարագաներու մէջ ուր այդ դեղերը մ'չ մէկ ազդեցութիւն ունին: Անշուշտ պէտք չէ եղբակացնել որ բոլորովին մէկ կողմ պիտի ձգուին սնդիկն ու միւս դարմանական միջոցները. անոնք ալ իրենց դերն ունին շատ մը պարագաներու մէջ: Բայց, ինչպէս դիտել կուտայ էրլիխ ինք, պէտք չէ ուրիշ մեղիկաւոր դեղ մը միաջնել իր բազազրութեան (arséno-benzol): Սնդիկը կայ ու կը մընս, իրբեւ հակասիֆիլիսական դարման. բայց այլ եւս միակը չէ, «գահրնիկց կղամ է» 606/ն կողմ: Յետոյ էրլիխ-Հախաի բազազրութիւնը վաճառու էր չէ, երբ խոհեմութեամբ գործածուի. մինչդեռ սնդիկը շատ մը անպատեհութիւններ ունի: Յաճախ կը ձերմընէ սիֆիլիսի վերքերը քան վըբուժէ: Կը պատահի նաև որ յաճախ կատակածելի բուժում մը ստանալու համար, հարկ ըլլայ տարիներով սնդիկ ներարկել հիւանդներու, որոնք մեծամասնաբար կը վնասին և կը հրաժարին ամէն դարմանէ:

Ի հարկէ, միամտութիւն պիտի ըլլար կարծել թէ 606ի միակ ներարկում մը կը բուժէ սիֆիլիսը. բայց բազմաթիւ գիտնականներ անձնական փորձերով կը խոստովանին թէ նոր բազազրութիւնը «չանթահարիչ յարձակում մըն է սիֆիլիսի թուլանին դէմ, և անկէ յետոյ հիմնական դարման մը դիւրաւ կրնայ լրացնել գործը:» Փորձի շրջաններ

էն տակաւին, և ամէն խնդիր լուսարանուած չէ: Բայց ճշդուած է որ «եթէ 606p երբեմն անգոր է կարծրացած վերքերու դէմ, ճշմարտագէտ հերոսական դեր մը կը կատարէ, երբ ուղղուի սիֆիլիսի բոլոր բորբոքուն վերքերուն, երրորդ շրջանի ուսեցքներուն և մասնաւանդ երկրորդ շրջանի վարակիչ փորձանքներուն դէմ»: Այնպէս որ, արամարանական է ենթադրել թէ սիֆիլիսի դէպքերը շուտով պիտի նուաղին նշանակելի համեմատութեամբ: Իսկ սիֆիլիսի նախազուգու թեան տեսակէտով, 606p կը կազմէ «անարկու գէնք մը, որուն հետ ուրիշ ոչ մէկ դեղ կրնայ բաղդատուիլ»:

Ինչպէս ըսինք, 606p կը գործածուի մօրթին, երակի մը կամ մկանի մը մէջ ներարկելով: Երբ ներարկումը պիտի կատարուի մօրթին տակ կամ մկանին մէջ, աւելի մեծ տօզ մը կը գործածուի, քան եթէ երակին մէջ ըլլար: Սկիզբները չափը 0,30—0,40 կրամը չէր անցնել. բայց հիմա շատ աւելի է, թէև կը տարբերի համաձայն հեղինակներու, տարիքի և հիւանդի վիճակին: Էրլիխ ինք կը յանձնարարէ 0,45—0,50 կրամ կէներուն, 0,50—0,60 կրամ այրերուն համար:

Պէտք է գիտնալ որ 606p շատ չի գլխանար և կը տարրալուծուի, երբ բարձր ջերմութեան մը ենթարկուի:

Մօրթին տակ կամ մկանին մէջ ներարկում կատարելու համար, կը գործածեն փլաթինէ տակ մը, 4—5 սանդիմէզը երկայնութեամբ, 8—9 միլիմէզը արամագծով, և 10 խորանարդ սանդիմէզը բնոյ գրեխ մը: Մօրթը քեկիւտ ա՛ իստով հականիսել յետոյ, կը սեղմնն ձախ ձեռքի բթամա-

տին և մասնեմատին մէջտեղի պատեանք և ասեղը կը մխեն վերէն վար: Երբ տեանն որ ասեղը ազատ, չարժուն է մորթին տակ, գրեխը ձեռք կ'առնեն և յամբարար կը կատարեն ներարկումը: Իսկ երբ արգելքի մը հանդիպի, ասեղն իր ասեղը պահելով մէկտեղ, արձաթ լայալաւ թիկ մը կ'անցընեն:

Մկանէն ներարկելու համար ալ նոյն գործիքները կը գործածուին: Ընդհանրապէս ներարկման ասեղն է յետոյքը, ինչպէս մողիկի համար: Հիւանդը փորին վրայ կը պառկի և հականկիւմէն յետոյ, ասեղը կը մխեն մկանին մէջ և քանի մը երկվայրկիան կը սպասեն, որպէսզի վտան ըլլան թէ երակի մը հանդիպած չէ. յետոյ յամբարար կը կատարուի ներարկումը:

Խնդիրը կը փոխուի երակային ներարկման համար: Նախ, այս պարագային չափը նուազ է, 0,30—0,40 կրամ կնոջ համար, 0,40—50 կրամ ազաւարդուն համար. (մինչև 0,70—0,80 կրամ յանձնարարողներ այ կան, բայց այդ չափազանցութիւն է: ) Գործիքներն ալ տարբեր են: Ներարկումը կը կատարուի արմուկի ծալքի մեծ երակներուն մէջ: Գործողութիւնը կատարելու համար, թիւք կը ճնշեն քառւոյնէ խողովակով մը, որպէսզի երակները աւելի լաւ երեւան. և մորթը հականկիւմէն կտր. 4 սանդիմէզը երկայնութեամբ ասեղը կը մխեն մորթին տակ, ծակելով ընտրուած երակին ուղղութեամբ: Երբ արիւնն սկսի դուրս հասիլ, կը նշանակէ թէ բուն խակ երակին մէջ մըտած է ասեղը: Յետոյ կարգ մը մանրամասնութիւններով կը կատարուի ներարկումը կամայ կա-

մայ, և 10—15 վայրկեան տեւելու պայմանով:

Այս ներասկումը չափազանց փափուկ է, մասնաւորապէս կիններուն համար. երակները յաճախ պղտիկ են և դժուար կ'ըլլայ ասեղ ներմուծել: Յետոյ կը պատահի որ երակը մէկ կողմէն միւսը ծակի, և հեղուկը հոսի յարակից հիւսուածներուն մէջ, ինչ որ ջրուռեց մը կը կազմէ և սաստիկ այրուածքի զգայութիւն մը կը պատճառէ հիւանդին: Այդպիսի արկածի մը պարագային, անմիջապէս կը հանեն ասեղը և կարելին կ'ընեն որպէսզի մորթին տակ ներարկուած հեղուկը դուրս թափի: Յաւրաւական երկար կը տեւէ և զեղոտած հիւսուածները կրնան նեխիլ, վէրք կապել:

Երեք տեսակ, բայց մանաւանդ երակի ներարկումներէն կտքը, հիւանդը պէտք է անկողին մնայ. առաջին օրը բայարձակ հանգիստ պահելու և միայն կաթնեղէններ ուտելու պայմանով: Երկրորդ օրը կ'արածեն որ հիւանդը ուտէ, բայց նորէն կաթը անհրաժեշտ է: Եթէ ներարկումը երակէն եզած է, հիւանդը չորս օրէն կ'ելլէ անկողնէն. իսկ աւելի կանուխ՝ միւս պարագաներուն:

606ը արագ ազդեցութիւն մը կը գործէ կեղի՛ շանէրին սպիացման համար, որ միջին հաշուով ասեղի կ'ունենայ չորս հինգ օրէն. արդէն երկրորդ օրէն կը սկսի սպիացումը, թէև և երբեմն աւելի ուշ կը մնայ: Իսկ մորթին տակի կարծրացումը բաւական ատեն կը տեւէ. և յաճախ երկրորդ ներարկումէ մը ետքը ասեղի կու տայ:

Սիֆիլիսէ կատարելապէս բուժուած ըլլալը հաստատուելու համար, ներկայ գիտութիւնը կը գոր-



ծածէ՛ վասէրմանի փորձը , որ տարրապուժման կ'ըն-  
թարկէ հիւանդին արիւնը :

×

Գարմանուժէն հտք ո՛րքան ատեն պէտք է  
անցած ըլլայ , որպէսզի սիֆիլիսաւոր մը կարենայ  
ամուսնանալ : Կարծիքները մեծապէս կը տարբե-  
րին : Անգլիոյ մէջ ընդհանուր համոզում մը կայ թէ  
երկու տարուան միջոցը կը բաւէ : Դեռ 1906ին ,  
Հըչինսըն , սիֆիլիսի տաղանդաւոր մասնագէտ մը ,  
կը պնդէր որ , «եթէ դարմանումը կանոնաւորապէս  
չարունակուած է կեղի երեցած թուականէն սկսե-  
լով երկու տարի , աղամարդ մը կրնայ ամուսնա-  
նալ ապահովապէս . բայց առելի երկար պայմանա-  
ժամ պէտք է կնոջ համար» :

Իսկ միւս աւելի մեծ հեղինակութիւնը , Ֆուռ-  
նիէ , կ'ազդարարէ թէ ո՛չ մէկ սիֆիլիսաւոր պէտք  
չէ ամուսնանայ հիւանդութեան սկզբնաւորութենէն  
մինչեւ առ նուազն երեք չորս տարի հտք : Իսկ  
այնուհետեւ ալ , պայմանաւ որ . 1 . Սիֆիլիսի վեր-  
քեր չզսնուին . 2 . երկարատեւ դարման գործադ-  
րուած ըլլայ . 3 . Առ նուազն մէկու կէսէն մինչեւ  
երկու տարի դարմանում չկատարելով ո՛ր և է ախ-  
տանչան չերեւի . 4 . Սիֆիլիսը թեթեւ տեսակէն  
ըլլայ : Ֆրանսացի բժիշկը իր անձնական փորձա-  
ռութեամբ կը յիշէ քսան սիֆիլիսաւորներ , որոնք  
ամուսնացած էին վարակումէն երկու տարի հտք :  
Իրրեւ հետեւանք այդ կանխահասան ամուսնութիւն-  
ներուն , կիներէն 19ը վարակուեցան , իսկ 28 յղու-  
թիւններ տեղի ունենալով , 13ը վիժեցան , 6ը

կանխահաս մահով վերջացան , 6էն սիֆիլիսաւոր  
երեխաներ ծնան , և միայն երեք առողջ երեխայ :  
Գերմանացի գիտնական Լէտերման իր կարգին դի-  
տել կուտայ .

— Ընդհանրապէս խօսելով , սիֆիլիսաւորի մը  
ամուսնութիւնը կրնայ արտօնուիլ , եթէ առնուազն  
հինգ տարի անցած է վարակման սկզբնաւորութե-  
նէն ի վեր , եթէ այլևս կասկածելի նշան երեւ-  
ցած չէ վերջին երկու տարիներու միջոցին , և եթէ  
հիւանդը մաղիկի ազդեցիկ և կանոնաւոր դարման  
մը ընդունած է :

Պաղէր ալ այս տեսութիւնը կը պաշտպանէ ,  
յայտարարելով թէ ամուսնութիւնը կրնայ արտօ-  
նուիլ հինգերորդ տարին , պայմանաւ որ ախտա-  
նշանները թեթեւ եղած ըլլան , դարմանը՝ կանոնա-  
ւոր , իսկ չորրորդ տարուան միջոցին ո՛ր և է ախ-  
տանչան երեցած չըլլայ :

Ուրեմն , Հըչինսընի սահմանած պայմանաժամը  
բացարձակապէս անբաւական է , նախորդներուն կէ-  
սը : Մնաց որ , վարակիչ բորբոքումներ կրնան պա-  
սանիլ կեղի երեւումէն տասը կամ աւելի տարիներ  
հտք , նոյնիսկ լաւ դարմանումով պարագաներու մէջ :

Ամուսնացողները իրենք պարտաւոր են , ամէն  
բանէ առաջ , կշռել հետեւանքները , խորհուրդ  
հարցնել բժիշկին , փոխանակ թեթեւ սրտով կամ գի-  
տակից չարակամութեամբ մը ընտանեկան դժոխք  
մը բանալով ցաւազար սերունդ մը արտադրելու :

## 4. ԿԱԿՈՒՂ ԿԵՂ

Վեներական գլխաւոր Նիւանդութիւններու երրորդն է կակուզ կեղը (chancro mou կամ chancrelle), որ այդպէս կոչուած է սիֆիլիսի կարծր կեղէն զանազանուելու համար:

Չուտ տեղական Նիւանդութիւն մըն է այս, դարձեալ ծնունդ մանրէի, վէրք մը որ կը կրծէ, կ'ուտէ, բայց ընդհանուր վարակում չի պատճառեր, թէև երբեմն ծանրանալով կամ խառնակուելով սիֆիլիսի կ'առաջնորդէ: Վարակումը տեղի կ'ունենայ ուղղակի չփումով՝ զուգաւորութեամբ, կամ երբ թարախը դպած է գործիքի մը, սրբիչի մը, որ և է ստարկայի մը ևն: Թարախը կծու է և զրգոխ է կը կակուզցնէ ու կը կրծէ առողջ վերնամորթը. այնպէս որ, անպատճառ մարքին երեսը սկրտուք բլլալու չէ, որպէսզի մանրէն ներս մտնէ:

Կակուզ կեղը աւելի սովորական է ստորին խաւերուն, քան մարուր և լաւ սնանող մարդոց մէջ, որովհետև, ազատ սովորութիւններն և կեղտոտ չըջապատը կը նպաստեն վէրքին աճման, զրկանքի և թշուառութեան հետ մէկտեղ:

Վարակումէն երկու երեք օր յետոյ, սղախի խաղաւարտ մը (գապարճը կամ չիպան) կը կաղմուի ընդհանրապէս ծննդական գործարաններուն վրայ, և բացառաբար մասներու վրայ:


Այդ խաղաւարտները չուտով կը սղայթին, և երեան կու գայ անամէջ կեղ մը, որ սովորաբար արագօրէն կ'աճի, և այնքան որ յաճախ, հորհրութարախի վարակիչ հանգամանքին, տեղի կուտայ

նոր կեղերու: Եւ ահա թէ ինչու կակուզ շամբը ընդհանրապէս մէկէ աւելի վէրքեր կը ձգէ:


Երբ պէտք եղածին պէս դարմանուի հակահետախան փոշիով և այրումով, կակուզ կեղը սովորաբար չուտ կը բուժուի: Բայց կան նաև խիստ վտանգաւոր տեսակներ. ինչպէս օձային կեղը, որ անդիմադրելի կերպով կը յառաջանայ, և կրծող, փտեցնող կեղը, որ չարաչար կը յոգնեցնէ բժիշկը: Նուազ վտանգաւոր, բայց և չափազանց անախարժ մէկ տեսակն այ աճուկի գեղձերու բորբոքումն է, որ սովորաբար տեղի կ'ունենայ միայն մէկ կողմին վրայ: Այս ցաւառիթ բորբոքումը (սիֆիլիսականը ցաւ չի պատճառեր) նեխելու ձգտում մը ունի: Եթէ նեխում յառաջ գայ և թարախը բացուի մորթի մակերեսին վրայ, նոր վէրքեր (մարխա) կրնան բացուիլ:

Մինչև 1852, կակուզ կեղը սիֆիլիսի նշան մը կը նկատուէր: Բայց երկու Նիւանդութիւններուն իսկական տարբերութիւնը չուտով հաստատուեցաւ խառն վերբերով:— Կը պատահի որ միեւնոյն անձաւոր սիֆիլիս ունենայ և դիպուածաբար վարակուի նաև կակուզ կեղէ: Իրբև հետեանք երկու թոյներու չփման — որ տեղի կ'ունենայ սովորաբար զուգաւորութեամբ — ուրիշ մը կրնայ կրկնակ վարակում ունենայ. այսինքն սիֆիլիսի փաճը և կակուզ կեղի թոյնը միաժամանակ կը ներարկուին: Կակուզ կեղը երեւան կու գայ 24 ժամէն. մինչ սիֆիլիսի վէրքը հազիւ երկու երեք շաբաթէն:

Կակուզ կամ պարզ կեղը ծննդական գործարաններու փասխախն գլխաւոր պատճառներէն մէկն է:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ Բ. ՀԱՏՈՐԻ



### ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

	Էջ
1. Արգասաւորում	8
2. Յղութիւն	24
3. Երկունք եւ տղաբերք	58
4. Վիժում եւ կանխահաս երկունք	83
5. Ամլութիւն	94
6. Զաւակներու սեռը	106

### ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

#### ՍՏՈՒՑԻՆ ՀԻՒՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ընդհանուր ակնարկ	127
2. Զերմամիզութիւն	156
3. ՍիՖիլիս (Դարմաններ, 606 ԼՆ.)	181
4. Կակուղ կեղ	222



ՀՀ Ազգային գրադարան



NL0755084

ՀՀ Ազգային գրադարան



NL0271243

2859

2860